ՂԱԶԻՆՅԱՆ Գ., ՎԱՂԱՐՇՅԱՆ Ա.

ՀԱՍԱՐԱԿԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ
9-րդ դասարան

ԵՐԵՎԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԵԾ
2013

Սիրելի՛ աշակերտ

Մենք ապրում ենք հասարակության մեջ: Հասարակական կյանքի ցանկացած ոլորտում և ցանկացած մասնագիտության տեր մարդուն անհրաժեշտ են իրավական գիտելիքներ: Այսինքն՝ ինչ իրավունքներ ունեք դուք, ինչ է հասարակությունը և պետությունը, ինչպես են դրանք կառավարվում: Այս հիմնահարցերի իմացությունը պարտադիր է ամեն մի քաղաքացու համար: Այդ իմացությունն ինքնանպատակ չէ: Այն կոչված է սովորողի՝ ձեզանից ամեն մեկի մեջ ձևավորել հոգեբանական վճռականություն՝ պայքարել ձեր իրավունքների և ազատությունների համար: Այսպիսով, դասագրքի նպատակն է դաստիարակել իր իրավունքներն իմացող, դրանց համար պայքարող, իր պարտականություններն ու պատասխանատվությունը գիտակցող, իրավական մշակույթ ունեցող իսկական քաղաքացի: Ի՞նչ է անհրաժեշտ դրա համար: Անշուշտ, սովորե՛լ և սովորե՛լ:

Իրավական դասանյութի յուրացումը որոշակի բարդություններ ունի, ինչը պայմանավորված է իրավաբանական լեզվի յուրահատկությամբ: Այդ լեզուն ձևական, ոչ զգացմունքային է, լի հատուկ եզրույթներով և հասկացություններով: Խուսափել դրանցից հնարավոր չէ, ինչպես մաթեմատիկայում՝ բանաձևերից: Բայց դա չի նշանակում, որ այն անհասանելի է:

Որպեսզի նյութը դուք լավ յուրացնեք, այն լրացված է մտորումներով, հանձնարարություններով, քննարկումներով, խաղերով և խնդիրներով: Դրանք կոչված են ուսուցումը դարձնել հետաքրքիր, հիմնախնդիրային, խաղային: Սակայն այդ ամենին պետք է նախորդի դասանյութի յուրացմանը նպատակամղված ձեր ջանասեր, համառ աշխատանքը՝ ուսուցչի օգնությամբ և տնային աշխատանքի միջոցով: Առանց դրա դասավանդումը կվերածվի սովորական բանավեճային խոսակցության: Մի՞թե կարելի է գրել բանաստեղծություն առանց այբուբենի իմացության: Իհարկե՝ ո՛չ:

Տարատեսակ առաջադրանքներն ավելորդ չեն: Դրանցից ամեն մեկն ուղղված է ձեզանում որոշակի հմտության և ունակության ձևավորմանը: Հատկապես կարևոր են սոցիալական նախագծերը, հարցումները և հանրօգուտ աշխատանքները: Շատ կցանկանայինք, որ ձեզանից ամեն մեկը դրանք դիտարկեր որպես իր բարոյական պարտքը և անպայման կատարեր՝ իր փոքրիկ ներդրումն անելով հասարակական հիմնախնդիրների լուծման գործում:

Համոզված եղեք, որ համառ աշխատանքը ձեզ կսովորեցնի իրավունք՝ բարու և արդարության արվեստ, որը շատ անհրաժեշտ է մեզանից յուրաքանչյուրի և մեր հայրենիքի բարգավաճման համար:

Եվ իմացե՛ք ուրեմն, որ ո՛չ մի աշխատանք
Տքնաջան չէ այնքան, որքան ոգու հերկը.–
Ի սկզբանն էր բանը, և բանն էր ճիգ ու ջանք,
Եվ ջանքին առընթեր էր – երգը:

Ե. Չարենց

Հայաստանի Հանրապետության
ՕՐՀՆԵՐԳԸ

Մեր Հայրենիք, ազատ, անկախ
Որ ապրել է դարեդար,
Յուր որդիքը արդ կանչում են
Ազատ, անկախ Հայաստան:

Ահա, եղբայր, քեզ մի դրոշ,
Զոր իմ ձեռքով գործեցի,
Գիշերները ես քուն չեղա
Արտասուքով լվացի:

Նայիր նրան՝ երեք գույնով,
Նվիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դեմ,
Թող միշտ պանծա Հայաստան:

Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնի,
Բայց երանի, որ յուր ազգի
Ազատության կզոհվի:

ԳԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

§ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Մի ժողովուրդ, որի զավակները հավասար չեն օրենքի
և մահվան առջև, հաղթական հայրենիք չի ունենա:
Գ. Նժդեհ (1886-1955)

1. «ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

«Դեմոկրատիա» բառը ձևավորվել է Հին Հունաստանում: Թարգմանաբար նշանակում է ժողովրդի իշխանություն կամ ժողովրդավարություն: «Ժողովրդավարություն» հասկացությունը շատ ընդգրկուն է և բարդ: Գոյություն չունեն համընդհանուր ճանաչում գտած պատկերացումներ, որոնց հիման վրա հնարավոր կլիներ բնորոշել այն: Տարբեր մոտեցումներ շեշտադրում են ժողովրդավարության առանձին կողմերը, օրինակ՝ մեծամասնության իշխանությունը, ընտրությունները, իշխանության սահմանափակումը, գաղափարների, կարծիքների բազմազանությունը և մրցակցությունը, մարդու իրավունքները: Ուստի ժողովրդավարությունը մեկնաբանվում է մի քանի իմաստներով: Դրանցից մեկը հետևյալն է:

Ժողովրդավարությունը ժողովրդի իշխանության քաղաքական կազմակերպությունն է, որն ապահովում է քաղաքացիների հավասար մասնակցությունը պետական և հասարակական գործերի կառավարմանը, պետության հիմնական մարմինների ընտրովիությունը և հասարակության քաղաքական համակարգի բոլոր սուբյեկտների գործողության օրինականությունը, մարդու և քաղաքացու, փոքրամասնությունների իրավունքների կենսագործումը, պահպանությունը և պաշտպանությունը՝ միջազգային չափանիշներին համապատասխան:

Ժողովրդավարությունն առաջին հերթին պետության ձև է: Դեռևս Հին Հունաստանում ժողովրդավարությունը հասկացվում էր որպես պետության հատուկ ձև, որի դեպքում իշխանությամբ օժտված էր ոչ թե մեկ անձը (միապետը, բռնապետը) կամ անձանց խումբը (արիստոկրատիան, օլիգարխիան), այլ պետության կառավարմանը մասնակցելու հավասար իրավունք ունեցող բոլոր քաղաքացիները:

Մտորումներ: *«Յուրաքանչյուր ազգ ընտրում է ժողովրդավարության իր տեսակը՝ կախված իր պատմության և հանգամանքների զարգացումից, հետևաբար՝ նրանցից յուրաքանչյուրը ժողովրդավարական է յուրովի»: Ժողովրդավարությունը բարիք է միայն այն ժամանակ, երբ այն համապատասխանում է ժողովրդի մշակույթին և հոգեմտակերպին:*

Ժողովուրդը չի կարող իր ,բան ու գործը թողածե իրականացնել իրեն պատկանող իշխանությունը: Այդ պատճառով նա իր իշխանությունը փոխանցում է պետությանը: Սակայն ժողովուրդը շարունակում է մասնակցել հասարակության և պետության գործերի կառավարմանը ինչպես անմիջականորեն (ինք-

նակառավարում), այնպես էլ իրեն ներկայացնող պետական մարմինների միջոցով: Հետևաբար՝ պետությունն ինքը պետք է լինի ժողովրդավարական:

Ժողովրդավարական պետությունը սահմանափակ, իրավական պետություն է: Իդեալական վիճակում պետությունը պետք է ծառայի մարդուն և ժողովրդին: Սակայն իրականում երբեմն պետությունը և ժողովուրդն օտարանում են: Դրանից խուսափելու համար անհրաժեշտ է, որ պետական կառավարումը լինի ժողովրդավարական: **Ժողովրդավարական է այն պետական կառավարումը, որը կառուցվում ու գործում է ժողովրդաիշխանության սկզբունքով:** Համաձայն այդ սկզբունքի՝ իշխանության տերը, աղբյուրը ժողովուրդն է: Պետական իշխանությունն ածանցված է ժողովրդի իշխանությունից, պայմանավորված է ժողովրդի կամքով ու պահանջմունքներով: Սակայն պետությունը շատ հաճախ վնաս է հասցրել հասարակությանն ու անհատին, եղել է հակաժողովրդավարական, բռնապետական: Նման պետությունը կառավարում է մեծամասամբ բռնի ուժի և հարկադրանքի միջոցով: Հիշե՛ք հայ ժողովրդի վիճակը Օսմանյան կայսրությունում և ցեղասպանությունը, 20-րդ դարի մարդկային աղետները՝ ստալինյան բռնությունները և ֆաշիստական գազանությունները:

Պատմությանը հայտնի են բազմաթիվ բռնապետություններ: Ճանաչե՛ք նկարներում պատկերված բռնապետներին: Ի՞նչ գիտեք նրանց գործունեության մասին:

Հարցում շրջապատին: *Հարցման ենթարկե՛ք ձեր շրջապատի 5 տարեց մարդկանց և կազմե՛ք վիճակագրություն, թե նրանց քանի տոկոսն է կողմնակից ժողովրդավարությանը և քանիսը՝ դիկտատուրային: Արդյունքներն ամփոփե՛ք և վերլուծե՛ք դասարանում:*

2. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ազատություն և իրավահավասարություն: Ժողովրդավարական հասարակության անդամներն ազատ մարդիկ են: Ուստի ժողովրդավարությունը ենթադրում է անհատների իրավունքների ճանաչում, պահպանում, ապահովում, կենսագործում, այսինքն՝ մարդու երաշխավորված անձնական ազատ գոյություն և քաղաքացու քաղաքական ազատություն: Ժողովրդավարական հասարակությունում բոլորը հավասար են օրենքի և դատարանի առջև, ունեն հավասար պաշտպանության իրավունք, կատարած իրավախախտման համար կրում են հավասար պատասխանատվություն: Իրավահավասարությունը ենթադրում է. չեն կարող լինել արտոնություններ և սահմանափակումներ ռասայական, մաշկի գույնի, քաղաքական, կրոնական և այլ համոզմունքների, սե-

ռի, էթնիկական և սոցիալական ծագման, գույքային դրության, բնակության վայրի, լեզվական և այլ հատկանիշներով:

Մտորումներ: *Ազատությունն ունի առաջնային նշանակություն, առաքելություն: Սակայն նրա հիման վրա կարող է ծագել նաև անհավասարություն: Ժողովրդավարությունը միշտ ենթադրում է իրավական հավասարություն: Մեկնաբանե՛ք այս մտքերը: Ինչո՞ւ է ազատությունը ծնում նաև անհավասարություն: Ի՞նչ տարբերություն հավասարության և իրավահավասարության միջև:*

Պետության հիմնական մարմինների ընտրովիություն և նրանց մշտական շփում բնակչության հետ: Ժողովրդավարական ընտրություններն ապահովում են նրանց փոփոխելիությունը, վերահսկելիությունը, յուրաքանչյուրի հավասար հնարավորությունը՝ իրականացնել իր ընտրական իրավունքները: Ժողովրդավարական հասարակության մեջ նույն մարդիկ չպետք է երկար և անընդհատ զբաղեցնեն պաշտոններ իշխանության մարմիններում: Դա առաջ է բերում այդ մարմինների հանդեպ վստահության կորուստ:

Որոշումների ընդունում մեծամասնության կամքով՝ փոքրամասնության իրավունքների պարտադիր պահպանմամբ: Ժողովրդավարության հիմնարար սկզբունքը ձայների մեծամասնության սկզբունքն է: Մեծամասնությամբ ընդունված որոշումները ժողովրդի կամքի արտահայտությունն են: Դեռ հին ժամանակներում գիտեին և կենսագործում էին մեծամասնության սկզբունքը: Նոր ժամանակներում հարաբերակցությունը մեծամասնության և փոքրամասնության միջև իրենց իրավունքների հարցում ձեռք բերեց քաղաքական սկզբունքայնություն:

Մեկնաբանե՛ք հետևյալ մտքերը: *Թ. Ջեֆերսոն. ,Բոլորը պետք է հիշեն սուրբ սկզբունքը. միշտ պետք է գերակայի մեծամասնության կամքը, սակայն այդ կամքը պիտի լինի օրինական, բանականե: Ա. Համիլտոն. «Տվե՛ք ամբողջ իշխանությունը շատերին, և նրանք կսկսեն ճնշել քչերին: Տվե՛ք իշխանությունը քչերին, և նրանք կսկսեն ճնշել շատերին»:*

Ռուս մտածող Բերդյաևի կարծիքով՝ «Համարյա հրեշավոր է, թե ինչպես մարդիկ կարողացան հասնել գիտակցության այնպիսի վիճակի, որ մեծամասնության կարծիքում և կամքում տեսան ճշմարտության և արդարության աղբյուրը և չափանիշը»: Այստեղից հետևում է, որ փոքրամասնության ենթարկումը մեծամասնությանը ոչ միշտ է ժողովրդավարական: Ուստի ժողովրդավարական հասարակության մեջ մեծամասնության կամքը պետք է զուգակցվի անհատի իրավունքների երաշխիքների հետ, որոնք իրենց հերթին ծառայում են փոքրամասնությունների իրավունքներին՝ էթնիկական, կրոնական կամ քաղաքական: Այսպիսով՝ փոքրամասնության իրավունքները կախված չեն մեծամասնության բարի կամքից և չեն կարող վերացվել ձայների մեծամասնությամբ: Նշանակում է՝ մեծամասնության կամքը պետք է զուգակցվի որոշումներ ընդունելիս փոքրամասնության մեջ մնացած անհատների իրավունքների երաշխիքների հետ՝ բացառելով խտրականությունը, իրավունքների վրա բռնանալը, անհանդուրժողականությունը:

Հրապարակայնություն և թափանցիկություն: Պետությունը, հանրային իշխանության մարմինները, հասարակությունը պետք է գործեն բաց և թափանցիկ: Բնակչությունը պետք է տեղեկացված լինի ներպետական և միջազգային կյանքի դեպքերի մասին, անհրաժեշտության դեպքում ստանա իրեն հետաքրքրող տեղեկությունները: Շատ կարևոր է հետադարձ կապը, այսինքն՝ պետությունը պետք է ոչ միայն գործի թափանցիկ, այլև կառավարելիս հաշվի առնի հասարակական կարծիքը, տրամադրությունները:

Ժողովրդավարությունը ենթադրում է օրինականություն: Այն հասարակական-պետական կյանքի հիմնարար սկզբունք է, պահանջ՝ ուղղված բոլորին՝ հասարակությանը, քաղաքական միավորումներին, պետական մարմիններին՝ գործել իրավունքի (օրենքի) նորմերի խիստ և անշեղ կատարմամբ: Պետության ամեն մի մարմին ու պաշտոնյա պետք է ունենա այնքան լիազորություն, որքան անհրաժեշտ է մարդու իրավունքների իրականացման և պաշտպանության պայմաններ ստեղծելու համար:

Բազմազանություն և մրցակցություն: Ժողովրդավարությունն իրական է, երբ նրա հիմքում ընկած է հասարակական երևույթների բազմազանությունը: Դա նախադրյալ է մրցակցության համար: Ժողովրդավարությունը, ինչպես և շուկայական տնտեսությունը, անհնարին է առանց մրցակցության, օրինակ՝ առանց դիմության և ընդդիմության, որոնք բազմակուսակցության հետևանք են: Բազմազանությունը բնորոշ է Ժողովրդավարական հասարակության գրեթե բոլոր ոլորտներին: Օրինակ՝ տնտեսական ոլորտում բազմազանությունը ենթադրում է սեփականության տարբեր ձևերի առկայություն և դրանց իրավահավասարություն: Գաղափարների բազմազանությունը հնարավորություններ է բացում հասարակական հիմնախնդիրների լուծման տարբեր մոտեցումների, մտքի ազատության համար: Բացառվում են պետական գրաքննությունը և գաղափարական թելադրանքը:

Մտորումներ: *Արդյո՞ք ժողովրդավարությունը հնարավոր է միայն բազմակարծության դեպքում: Բազմակարծությունը միշտ և բոլոր դեպքերո՞ւմ է ժողովրդավարական: Ո՞ր պայմաններում է այն ձեռք բերում համընդհանուր նշանակություն: Ժողովրդավարությունը բացառում է պետական գաղափարախոսությո՞ւնը, թե՞ գաղափարական մենաշնորհը:*

3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Դեռևս անտիկ աշխարհում ժողովրդավարությունը համարում էին ,կառավարման վատագույն ձևե, որովհետև երբեմն այն վերածվում էր ամբոխի իշխանության, իսկ սա էլ իր հերթին ծնում էր բռնապետություն: Արիստոտելը տարբերություն չէր դնում ժողովրդավարության և ամբոխավարության միջև: Այդպիսի գնահատականն ազդեց, որ ժողովրդավարությունը դուրս մղվի քաղաքական առօրյայից: Արդի աշխարհում ևս դրա կենսագործման ճանապարհին առաջանում են բազում դժվարություններ: Այս առիթով հետաքրքիր միտք ունի Ու. Չերչիլը. «Ժողովրդավարությունն ունի բազում թերություններ, սակայն դրա գլխավոր արժանիքն այն է, որ մինչև հիմա ոչ ոք չի հայտնաբերել դրանից ավելի լավ կառավարման ձև»:

Ժողովրդավարությունը՝ որպես իդեալ և իրականություն: Դրանք երբեք չեն համընկնում: Ժողովրդավարությունը համամարդկային իդեալ է, որին ձգտում են մարդիկ, քաղաքակիրթ հասարակությունը և պետությունը: Սակայն կատարյալ ժողովրդավարություն գոյություն չի ունեցել երբեք: Իրական կյանքում չկա ժողովրդավարության վերջնական փուլ, որը կբավարարի բոլորին: Դա պայմանավորված է նաև մարդու բնույթով, որի ձգտումներն անընդհատ փոփոխվում են՝ արդարության մասին իր պատկերացումներին համապատասխան: Երբ մարդը զգում է սահմանափակումներ, օրենքներում չի գտնում իր պատկերացմամբ արդարությունը, երբ հաշվի չեն առնվում նրա բնական ընդունակություններն ու արժանիքները, երբ բացակայում է ճանաչումը՝ կախված հմտությունից, փորձից և այլն, նա բախման մեջ է մտնում պետության հետ: Այդպիսով՝ արդարության ցանկությունը (որի նշանակությունը մեծ է ժողովրդավարության համար) երբեք լրիվ չի բավարարվում: Ուստի ժողովրդավարությունը (իրական, ոչ թե ձևական) ոչ մի պետության մեջ չի կարող լրիվ կենսագործվել:

Ժողովրդավարության ամենամեծ դժվարությունն այն իրական դարձնելն է: Միայն հռչակված իրավական ինստիտուտներն անբավարար են ժողովրդավարությունն իրական դարձնելու համար: Դրանց միշտ սպառնում է ձևական շղարշի վերածվելու վտանգը: Օրինակ՝ մարդը կարող է ունենալ հնարավորություն՝ ընտրություն կատարելու «վատի», «սարսափելիի», «անտանելիի» միջև: Արտաքուստ ժողովրդավարությունը պահպանված է: Սակայն իրական ժողովրդավարությունը շեշտադրում է նաև ընտրության որակական կողմերը: Այսինքն՝ մարդը պետք է հնարավորություն ունենա ընտրելու «լավը», «ավելի լավը» կամ «ամենալավը»: Ընտրվածն ինքը պետք է արժեքավոր լինի:

Ժողովրդավարության ուղին բռնած շատ երկրներում կտրուկ աճել են եկամտային անհավասարությունը և աղքատությունը, մարդու իրավունքներն ամրագրված են օրենքներով, սակայն դրանց իրականացման, ապահովման մակարդակը բարձր չէ: Մեկ այլ վճռորոշ խնդիր է փողը քաղաքականության մեջ, որը ջլատում է ժողովրդավարական ինստիտուտները, երբ շահարկում է իր ազդեցությունն ընտրություններում, օրենսդիր մարմինների քվեարկություններում: Դրա արդյունքում դասական քաղաքական կուսակցություններն անկում են ապրում, կամ էլ հրապարակ են գալիս ,փուչիկե կուսակցությունները՝ որպես «սոցիալական ձեռնածության» միջոց:

Ժողովրդավարությունն ունի տարօրինակություն (պարադոքս): Ժողովրդավարությունը ժողովրդի իշխանությունն է, սակայն դրա գոյատևման համար պատասխանատվությունն ընկած է ընտրախավի ուսերին, քանի որ մարդիկ մեծամասամբ անտարբեր են, ապակողմնորոշված և զարմանալիորեն քիչ նվիրված ժողովրդավարական արժեքներին: Իսկ եթե փոքրաթիվ ընտրախավն իշխելով չի բարելավում անզորների վիճակը, ժողովրդավարության նպատակները խաթարվում են: Նույնիսկ զարգացած երկրներում երբեմն պետությունը հայտնվում է ֆինանսական օլիգարխների վերահսկողության տակ: Այդ պայմաններում ընտրելու և ընտրվելու իրավունքը, խոսքի ազատությունը վերածվում են ձևական իրավունքների:

Պետությունների միջև հարաբերությունների ոլորտում ևս Ժողովրդավարությունն ունի բազում դժվարություններ: Չէ՞ որ այն պարտադիր է ոչ միայն ազգային մակարդակում: Օրինակ՝ գերտերությունների երկակի չափա-

նիշները՝ հանուն իրենց շահերի ապահովման, պետությունների անհավասար ներկայացուցչությունը միջազգային կազմակերպություններում:

Մտորումներ: *Ժողովրդավարության ուրիշ ի՞նչ ներպետական և միջազգային թերություններ, հիմնախնդիրներ կարող եք նշել:*

4. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԻՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ

Ժողովրդավարությունը համամարդկային առաջադիմական արժեք է: Դրա շատ հիմնախնդիրների լուծումը ոչ թե վերադարձն է հակաժողովրդավարական կառավարմանը, այլ ժողովրդավարության անընդհատ խորացումը, ընդլայնումը, խթանումը: ,Դիկտատուրա՞, թե՞ ժողովրդավարությունե երկընտրանքը պետք է լուծել հօգուտ վերջինի: Ընտրությունը հիմնված է ոչ թե ,ժողովրդավարության արժանիքների վրա, որոնք երբեմն նաև կասկածելի են, այլ դիկտատուրայի թերությունների վրա, որոնք կասկածելի չենե:

Ժողովրդավարությունը նպաստում է առաջադիմությանը և զարգացմանը: Պատմությունը վկայում է, որ քաղաքակրթության առաջադիմությունը գնում է ժողովրդավարության զարգացման ճանապարհով: Ժողովրդավարությունն ամեն մի երկրի բարեկեցության և բարգավաճման անհրաժեշտ պայմանն է: ժողովրդավարությունը երաշխավորում է քաղաքական և քաղաքացիական ազատությունները, ստեղծում է լավագույն պայմաններ տնտեսական և սոցիալական զարգացման համար: Ուստի անհրաժեշտ է ընդլայնել և խորացնել ժողովրդավարությունը:

Ժողովրդավարությունը գործիք է մարդու և ժողովրդի ձեռքին: Գործիք, որի միջոցով մարդիկ և ժողովուրդը լուծում են հասարակական և պետական գործերը կամ մասնակցում են դրանց լուծմանը: Ժողովրդավարությունը ծառայում է անհատի, հասարակության օգտին, բացառում է, որ պետությունը գերակայի և բռնանա ժողովրդի ու մարդկանց վրա:

Ժողովրդավարությունը երաշխավորում է մարդու հիմնական ազատությունները, օրինակ՝ անձի, տեղաշարժման, խոսքի, մտքի և այլ ազատությունները: Իհարկե, ժողովրդավարությունը չի կարող երաշխավորել, որ դուք իրականում կլինեք երջանիկ, հաջողակ, հարուստ և այլն: Այն միայն հնարավորություններ է բացում ձեզ համար՝ ձեր ջանքերի գնով և համառ աշխատանքով ձեռք բերելու այդ բարիքները:

Ժողովրդավարությունն օգնում է մարդկանց՝ պաշտպանվելու հասարակական ցնցումներից՝ հեղափոխությունից, քաոսից, տնտեսական աղետներից: Այն, քաղաքացիական հակամարտությունները տեղափոխելով սահմանադ-

րական հարթության վրա և դրանց տալով փոխզիջումային լուծումներ, կանխում է քաղաքական ցնցումների կորստաբեր հետևանքները, նպաստում է քաղաքական կայունությանը, ինչպես նաև իշխանափոխությանը:

Ժողովրդավարությունը դրդում է իշխանավորներին խթանել մարդկային զարգացումը: Ցանկացած երկրում մարդիկ ակնկալում են այնպիսի քաղաքականություն, որը նրանց կբերի իրավունքներ, տնտեսական բարգավաճում, կապահովի անհատի զարգացումը: Իսկ ընտրությունները և ազատ մամուլն այդ հույսերի արդարացման միջոց են:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

դեմոկրատիա / պետության ձև / իրավահավասարություն / փոքրամասնություն / հրապարակայնություն / թափանցիկություն / սոցիալական ձեռնածություն / ժողովրդավարության պարադոքս / ընտրախավ:

Պատասխանե՛ք հարցերին

1. *Ո՞րն է ժողովրդավարության բնորոշումը:*
2. *Որո՞նք են ժողովրդավարության սկզբունքները:*
3. *Ո՞րն է ընտրովի մարմինների և ժողովրդավարության միջև կապը:*
4. *Ո՞րն է փոքրամասնության կարծիքը հաշվի առնելու կարևորությունը:*
5. *Ի՞նչ է օրինականությունը:*
6. *Ինչո՞ւ է ժողովրդավարությունը վերածվել հավերժ իդեալի:*
7. *Ժողովրդավարության ի՞նչ դժվարություններ և թերություններ գիտեք:*
8. *Ինչու՞ է ժողովրդավարությունը համամարդկային արժեք:*
9. *Ժողովրդավարության ի՞նչ արժանիքներ կարող եք նշել:*

Ինքնուրույն գրավոր աշխատանք: Օգտվելով հանրագիտարանից կամ ինտերնետից՝ պատրաստեք զեկուցում ,Սոցիալական ձեռնածությունե թեմայով:

Գործնական աշխատանք: Ծանոթացե՛ք ,Դասարան. պետություն Սահմանադրության օրինակելի նախագծինե, մշակե՛ք ձեր առաջարկները, որպեսզի հաջորդ դասին ակտիվ մասնակցեք Սահմանադրության ընդունմանը:

§ 2. ԺՈՂՈՎՐԴԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ

Այո՛, ծով է ժողովուրդը: Դա հոգու միասնություն է:
Ով չգիտի, ու չի զգում այդ՝ թող հեռու մնա նրանից:
Գ. Նժդեհ (1886-1955)

1. ԺՈՂՈՎՐԴԻԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴՐԱ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Ժողովուրդն է իշխանության միակ աղբյուրը և տերը: Հայաստանի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Իշխանության յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից հանցագործություն է» (ՀՀ Սահմանադրություն, հոդվ. 2-րդ):

Ժողովրդի ինքնիշխանությունից բխում է, որ Հայաստանում իշխանության գերագույն կրողը ժողովուրդն է: Այսինքն՝ ժողովուրդը ոչ մեկի հետ չի կիսում իր իշխանությունը, իրականացնում է այն ինքնուրույն, անկախ այլ սոցիալական ուժերից, և օգտագործում է միայն իր սեփական շահերից ելնելով: Ժողովրդական ինքնիշխանությունն անբաժանելի է և ունի միայն մեկ սուբյեկտ՝ ժողովուրդը: Ոչ ոք, բացի ժողովրդից կամ առանց ժողովրդի համաձայնության, չի կարող հավակնել իշխանության Հայաստանի Հանրապետությունում: Չկա իշխանություն, որ չի բխում ժողովրդից:

Ժողովրդաիշխանությունը ողջ իշխանության պատկանելությունն է ժողովրդին, ինչպես նաև ժողովրդի կողմից այդ իշխանության ազատ իրականացումը՝ իր ինքնիշխան կամքին և շահերին լրիվ համապատասխան:

Ժողովրդաիշխանությունը ժողովրդավարական հասարակության հիմնասյուներից մեկն է: Ժողովրդաիշխանության պայմաններում իշխանության իրականացումը հիմնագրվում է, օրինականացվում (լեգիտիմացվում) է և վերահսկվում է ժողովրդի կողմից, այսինքն՝ պետության քաղաքացիների: Ժողովրդաիշխանությունը հանդես է գալիս ժողովրդի ինքնորոշման և ինքնակառավարման ձևերով, որին հավասար հիմքերով կարող են մասնակցել բոլոր քաղաքացիները:

Պետական իշխանությունն ածանցված է ժողովրդի իշխանությունից: Ժողովրդավարական է պետական կառավարման այն ձևը, որում հաստատված է, կամ որը կառուցվում ու գործում է ժողովրդաիշխանության սկզբունքի հիման վրա: Ժողովրդի կամքով ձևավորված իշխանության համակարգը պետք է լինի թափանցիկ և ժողովրդին հաշվետու: Պետությունը իշխանությունն ստանում է ժողովրդից, իրականացնում է ժողովրդով, հանուն ժողովրդի: Այսպիսով՝ ժողովրդավարությունը ենթադրում է, որ ոչ թե պետությունն է գերիշխում հասարակության (ժողովրդի) վրա, այլ, ընդհակառակը, հասարակությունն է գերիշխում պետության վրա:

Ժողովրդի իշխանության յուրացումը հանցագործություն է: Ժողովրդի իշխանության արտահայտման անմիջական բարձրագույն ձևերն են հանրաքվեն և ընտրությունները: Իշխանության գալու միակ օրինական և հնարավոր ձևը ազատ և

արդար ընտրություններն են՝ որպես ժողովրդի կամքի իսկական և միակ դրսևորում: Այլ կերպ իշխանության նվաճումը և յուրացումը որևէ կազմակերպության կամ անհատի կողմից համարվում է հանցագործություն: Ժողովուրդն իրավունք ունի ապստամբել կամ ցուցաբերել քաղաքացիական անհնազանդություն բռնատիրական, ոչ օրինական իշխանության դեմ:

Ժողովրդի իշխանությունն իրականացվում է որոշակի ձևերի և ինստիտուտների միջոցով: Դրանք որպես հասարակական և պետական գործերի լուծմանը ձևեր բազմազան են և կազմում են ժողովրդավարության համակարգը: Կախված ժողովրդի կամքի արտահայտման ձևից՝ ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է ժողովրդաիշխանության **անմիջական և ներկայացուցչական** ձևերը:

2. ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Ժողովրդաիշխանության անմիջական, ուղղակի ձևը ենթադրում է ժողովրդի ուղղակի կառավարում. ժողովուրդն ուղղակիորեն արտահայտում է իր կամքը պետական կամ հասարակական կյանքի այս կամ այն հարցի վերաբերյալ: Եթե ներկայացուցչական ժողովրդաիշխանության դեպքում որոշումներն ընդունում են պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինները, ապա ուղղակի ժողովրդաիշխանության ձևերի դեպքում որոշումներն ընդունում է ինքը՝ ժողովուրդը: Ժողովրդի կամքը՝ արտահայտված համապատասխան ձևերով, համարվում է հիմք պետության գործունեության համար: Ժողովրդաիշխանության այս ձևի սուբյեկտները քաղաքացիներն են, որոնք որոշումներն ընդունում են համապատասխան ինստիտուտների միջոցով:

Անմիջական ժողովրդաիշխանությունը ժողովրդին հնարավորություն է տալիս համապատասխան լծակների միջոցով իր ձեռքում պահել իշխանության ղեկը, ուղղորդել և վերահսկել պետության գործունեությունը: Հենց դրանում է նրա կարևոր նշանակությունը: Անմիջական ժողովրդաիշխանությունն իրականացվում է համապատասխան ձևերով, որոնք օրենքով ամրագրված, ձևակերպված են: Օրենսդրական ամրագրումը ժողովրդաիշխանության երաշխիք է: Ժողովրդաիշխանության անմիջական ձևերն իրենց հերթին ժողովրդավարության ամենակարևոր երաշխիքներն են, առանց որոնց ժողովրդաիշխանությունը կմնա ուտոպիա:

Անմիջական ժողովրդաիշխանության ձևերն են՝ հանրաքվե, ընտրություններ, ժողովրդական օրենսդրական նախաձեռնություն, ընտրված ներկայացուցիչներին հետ կանչել, ժողովրդական հարցում, ժողովրդական քննարկում, բռնապետությանը դիմադրելու և անհնազանդության իրավունք:

***Հարցում շրջապատին**: 5 մեծահասակների շրջանում անցակացրե՛ք հարցում, թե թվարկված անմիջական ժողովրդաիշխանության ձևերից որին է նա մասնակցել: Արդյունքներն ամփոփե՛ք և վերլուծե՛ք դասարանում:*

3. ԺՈՂՈՎՐԴԱԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ՁԵՎԸ

Ներկայացուցչական, անուղղակի ժողովրդաիշխանությունն անհրաժեշտ է: Իշխանության կրողը՝ ժողովուրդը, չի կարող բոլոր հասարակական հիմնախնդիրները քննարկել և լուծել ինքն անմիջապես, քանի որ դա արդի պայմաններում օբյեկտիվորեն անհնարին է: Այդ իսկ պատճառով առաջ է գալիս

ներկայացուցչական ժողովրդաիշխանության անհրաժեշտությունը: Եթե անմիջականի դեպքում իշխանության կրողն ինքն է իրականացնում իր իշխանությունը, ապա ներկայացուցչականի դեպքում ժողովուրդն ընդամենը իշխանության աղբյուրն է:

Մտորումներ: *Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է բոլոր հասարակական ու պետական գործերը, հարցերը լուծել անմիջական ժողովրդաիշխանության միջոցով: Մի՞թե ներկայացուցչական ժողովրդաիշխանությունն այդքան անհրաժեշտ է:*

Ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը ժողովրդի իշխանության իրականացումն է Սահմանադրությամբ նախատեսված պետական կառավարման (խորհրդարանի) և տեղական ինքնակառավարման մարմինների (համայնքի ավագանի և ղեկավար), պաշտոնատար անձնաց (նախագահ) միջոցով:

Ժողովուրդն այս դեպքում իր կամքն արտահայտում է ոչ թե ուղղակիորեն, այլ իր կողմից ընտրված ներկայացուցիչների միջոցով, որոնց հանձնարարում է իր լիազորությունների իրականացումը որոշակի ժամկետով: Ներկայացուցչական մարմիններն արտահայտում են ժողովրդի կամքը և շահերը: Ներկայացուցչական մարմինների, պաշտոնատար անձանց ու ժողովրդի միջև հարաբերությունները կառուցվում են լիազորությունների և վստահության վրա և սահմանվում են Սահմանադրությամբ: Սահմանադրությունն ամրագրում է այն լիազորությունների շրջանակը, որոնք ժողովուրդը հանձնում է իր ընտրյալներին և որոշում է պատասխանատվության չափը նրանց կողմից կայացված որոշումների համար:

Ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը ձեռնահաս, պատասխանատու և ժամկետային կառավարում է: Մի կողմից՝ կառավարմամբ զբաղվում են հատուկ պատրաստված մարդիկ, իսկ մյուս կողմից նրանց գործունեությունն արդյունավետ է այնքանով, որքանով որ այն հենվում է ժողովրդի մեծամասնության վրա: Այդպիսով՝ ժողովուրդը՝ որպես ընտրող, որոշում է նպատակը, իսկ նրա կողմից ընտրված արհեստավարժ ներկայացուցչական մարմինը կամ պաշտոնատար անձը որոշում է նպատակին հասնելու ամենից հարմար միջոցները, կենսագործում նպատակը:

Ներկայացուցչական կառավարման կարևորագույն գիծը ընտրովիությունն է: Այսինքն՝ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններն ընտրվում են, ընդ որում ոչ թե ցմահ, այլ որոշակի ժամկետով:

Ներկայացուցչական մարմինները հաշվետու են ժողովրդի առջև: Ընտրովի մարմինները հաշվետու են իրենց ընտրողների առջև: Նախ՝ ընտրությունները պարբերական են. դա նշանակում է, որ ընտրվողները պարբերաբար հաշվետու են իրենց ընտրողների առջև: Սակայն միայն ընտրությունները բավարար չեն հաշվետու լինելու համար: Անհրաժեշտ են նաև հաշվետվության կոնկրետ ձևեր: Օրինակ՝ ընտրվածներին հետ կանչելու հնարավորությունը:



Հայաստանի երրորդ հանրապետության նախագահները

Ներկայացուցչական՝ ընտրովի մարմինների առջև պատասխանատու են գործադիր մարմիններն ու պաշտոնատար անձինք: Ներկայացուցչական ժողովրդավարությունը ժողովրդի իշխանության իրականացումն է ընտրովի մարմինների միջոցով (խորհրդարան, նախագահ, տեղական ինքնակառավարման մարմիններ): Ընտրովի մարմինները, որպես կանոն, ունենում են կենսական կարևոր նշանակության խնդիրների լուծման իրավունք: Օրինակ՝ խորհրդարանը ընդունում է օրենքներ, հաստատում է բյուջեն: Մնացած պետական մարմիններն ու պաշտոնատար անձինք ածանցված են ներկայացուցչական մարմիններից: Ներկայացուցչական մարմինների գործառույթների մեջ կարևոր տեղ է զբաղեցնում վերահսկողությունը գործադիր իշխանության մարմինների նկատմամբ: Օրինակ՝ Հայաստանում և՛ Ազգային ժողովը, և՛ Հանրապետության Նախագահն ունեն ազդեցության լուրջ լծակներ, որոնցով ազդում են գործադիր իշխանության մարմինների՝ կառավարության վրա:

 Գ. Նժդեհ (1886-1955)	*«Ժողովրդից է ամեն հաղթանակ, անկարող ղեկավարից՝ ամեն պարտություն»: Մտորե՛ք մեծ հայրենասերի այս դատողության շուրջ: Ո՞րն է դրա խորքային իմաստը:*

4. ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ընտրությունները ժողովրդի իշխանության արտահայտման անմիջական բարձրագույն ձևն են, որի միջոցով ժողովուրդն ուղղակիորեն մասնակցում է պետության կառավարմանը՝ ձևավորելով Ազգային ժողովը, ընտրելով Հանրապետության նախագահին և տեղական ինքնակառավարման մարմիններին:

Քաղաքացիական հասարակության և իրավական պետության կազմավորման գործում շատ կարևոր է ընտրությունների միջոցով արտահայտված ժողովրդի կամքը: Այդ պատճառով ընտրությունները համարվում են պետական և հասարակական կյանքի ժողովրդավարականության արտահայտությունը: Այսօր արդեն աշխարհում չկա պետություն, որտեղ չլինեն ընտրություններ: Ազատ և արդար ընտրություններն իրական ժողովրդավարության պարտադիր հատկությունն են և ապահովում են քաղաքացիների մշտական ու ակտիվ մասնակցությունը հասարակության կարևորագույն հարցերի լուծմանը:

Ընտրություններն ունեն մեծ քաղաքական և իրավական հասարակական նշանակություն: Ընտրությունները սահմանադրական կարգերի հիմնարար ինստիտուտներից են: Լինելով ժողովրդաիշխանության ուղղակի ձև, ժողովրդի կամքի բարձրագույն անմիջական արտահայտություն՝ ընտրություններն ապահովում են ժողովրդի մասնակցությունը պետության գործերի կառավարմանը:

Իրավական իմաստով ընտրությունները ժողովրդի (ընտրողների) կողմից իրեն պատկանող իշխանությունն իրականացնելու իրավունքն իր ներկայացուցիչներին՝ Հանրապետության նախագահին, պատգամավորներին, տեղական ինքնակառավարման մարմիններին հանձնելու ձև է:

Ընտրությունները ներկայացուցչական մարմինների ձևավորման ժողովրդավարական ձև են և թույլ են տալիս քաղաքակիրթ կերպով, առանց ցնցումների ու հեղափոխության պայքարել իշխանության համար, օրինական ճանապարհով փոխել կառավարողներին, բարենորոգել իշխանությունը:

Ընտրություններն ունեն մեծ կարևորություն ձեր կյանքում: Ընտրություններում քաղաքացիների ակտիվ մասնակցությունից է կախված մեր երկրի ժողովրդավարական ապագան: Մասնակցությունը ընտրություններին և ճիշտ ընտրությունը թույլ են տալիս վերահսկել ինչպես երկրի, այնպես էլ ձեր սեփական ճակատագիրը: **Արդար, ճիշտ կատարված ընտրությունների միջոցով պետք է կայանա իրավական, սոցիալական, ժողովրդավարական պետությունը Հայաստանում, առանց որի անհնար է հայրենիքի հզորացումը, ժողովրդի բարգավաճումը**: Այդպիսի Հայրենիքը բոլորիս երջանկության նախադրյալն է:

Բոլոր տեսակի ընտրություններում մի եղե՛ք անտարբեր, որովհետև անտարբերությունը հասարակական չարիք է, ազգի կործանման նախանշան: Իշխանության աղբյուրը, տերը ժողովուրդն է: Ժողովրդն պատկանող իշխանության չարաշահման և յուրացման միտումը հատուկ է ցանկացած պետության: Ազատ ընտրությունները միակ լծակն են ժողովրդի և Ձեր ձեռքին, որի միջոցով ժողովուրդը

և դուք կարող եք ազդել պետության վրա, այն դարցնել իրականում ժողովրդի շահերի արտահայտիչ:

Արդի աշխարհում իշխողները հորինել են նաև ընտրախաղ երևույթը, որպես ընտրական ռազմավարության և մարտավարության, ընտրախոստումների ու ընտրակեղծիքների մի ամբողջական փաթեթ՝ ժողովրդին խաբելու և նրա իշխանությունը յորացնելու միջոց: Մի՛ հավատացեք ասեկոսներին ու քաղաքական շարժառիթներով հորինված զանազան ստերի, թե իբր ընտրություններում արդեն ամեն ինչ որոշված է: Դրանց հիմնական նպատակն է վհատեցնել ու հուսախաբ անել ժողովրդին. պատգամավորին, քաղաքապետին, գյուղապետին ոչ թե նշանակում են, այլ ընտրում:

Ընտրական գործընթացներում հնարավոր են նաև զանազան ճնշումներ, բայց հիշեք՝ քվեարկությունը գաղտնի է, ուստի ազատություն տվեք Ձեր կամքին և ընտրեք թեկնածուի, որ չզղջաք, այլ հպարտանաք, որովհետև նա ընդունակ է արտահայտելու ժողովրդի պահանջները, ցավերը, շահերը:

Թույլ մի՛ տվեք, որ խաբեն Ձեզ: «**Եթե մարդուն մի անգամ են խաբում, ամոթը խաբողին է, իսկ եթե երկրորդ անգամ են խաբում, ամոթը՝ խաբվողին է**»: Հետևաբար մի՛ շտապեք ձեր ձայնը խոստանալ հարևան-բարեկամներին, «լավ տղերքին», չինովնիկներին, կուլ մի գնացեք այսրոպեական օգուտներին, սին և անիրականանալի խոստումներին: Սառնասրտությամբ ու կշռադատված, հաշվի չնստելով ոչ մի ճնշիչ հանգամանքի հետ, հիշելով, որ քվեարկությունը գաղտնի է, ազատություն տվեք Ձեր կամքին, խղճին, և որպես Հայաստանի ազատ քաղաքացիներ կատարե՛ք ճիշտ ընտրություն:

Հաշվի առե՛ք յուրաքանչյուր թեկնածուի կենսագրությունը, սոցիալական կապերն ու շրջապատը, պատրաստվածությունը, կախվածությունը գործադիր իշխանությունից, ինչ-ինչ խմբերից, կուսակցական պատկանելությունը: Ահա այն գործոնները, որոնք պետք է ընտրություններում չափանիշ լինեն Ձեր համար և պայմանավորեն ընտրվելիք թեկնածուի ապագա անկախությունը, նրա ընդունակությունն արտահատելու ժողովրդի ցավերն ու պահանջները: Հիշե՛ք ժողովրդական իմաստուն ասացվածքը՝ «**Ինչ ցանեցիր, այն էլ կհնձես**»:

5. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Ընտրությունների դերը և նշանակությունը նկատի ունենալով՝ ցանկացած երկրի օրենսդրություն մանրամասն կարգավորում է ընտրությունների նախապատրաստման և անցկացման գործընթացում առաջացող հարաբերությունները: Այդ կարգավորումը երաշխիք է ազատ, արդար և թափանցիկ ընտրությունների կայացման համար: Հայաստանում ընտրական հարաբերությունները կարգավորում են Սահմանադրությունը և ընտրական օրենսգիրքը: Արդի աշխարհում ընտրությունները կարգավորվում, կազմակերպվում և անցկացվում են համընդհանուր ճանաչում գտած, կայացած սկզբունքներին համապատասխան: Այդ սկզբունքները լինելով ընդհանուր, ելակետային դրույթներ, ընկած են նաև մեր ընտրական օրենսգրքի հիմքում:

Համընդհանուր ընտրություններ: ՀՀ 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի ունի ընտրելու (ակտիվ ընտրական իրավունք) և Սահմանադրությամբ սահմանված տարիքին հասնելու դեպքում՝ Հանրապետության նախագահ, խորհրդարանի պատգամավոր, տեղական ինքնակառավարման մարմիններում ընտրվելու իրավունք (պասիվ ընտրական իրավունք):

Սահմանադրությունը ընտրելու և ընտրվելու իրավունքը սահմանափակել է միայն դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիների համար: Օրենքը արգելում է նաև զինծառայողների մասնակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ու Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով ընտրություններին: Այլ հատկանիշներով, օրինակ՝ գույքային, կրթական, սեռային և այլն, ընտրական իրավունքների սահմանափակումն արգելվում է:

Ինտերնետային այցելություն: *Այցելե՛ք ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի www.eiections.am կայքը և ծանոթացե՛ք նրա գործունեությանը: Փորձե՛ք կայքում զետեղված ընտրողների ցուցակում գտնել ձեր հարազատների տվյալները և ստուգե՛ք դրանց ճշգրտությունը:*

Հավասար ընտրական իրավունք: Ժողովրդավարության սկզբունքային հիմքերից մեկը բոլոր քաղաքացիների քաղաքական հավասարությունն է՝ «մեկ մարդ՝ մեկ ձայն» սկզբունքով: Դա նշանակում է, որ բոլոր քաղաքացիները ընտրություններին մասնակցում են հավասար հիմունքներով, և յուրաքանչյուր ընտրողի ձայնն ունի նույն կշիռը: Նույն անձը կարող է ընդգրկվել միայն մեկ համայնքի ընտրողների ցուցակում և միայն մեկ անգամ: Ազգային ժողովի ընտրություններում քաղաքացին ունի մեկ ձայնի իրավունք՝ բազմամանդատ ընտրատարածքում և մեկ ձայնի իրավունք՝ միամանդատ ընտրատարածքում:

Ուղղակի ընտրություններ: Ընտրողները պատգամավորին, Հանրապետության նախագահին, տեղական ինքնակառավարման մարմիններին ընտրում են անմիջապես, այլ ոչ թե ընտրիչների միջոցով: Օրինակ՝ անցյալ դարի 20-ական թթ. Հայաստանում ընտրություններն անուղղակի էին: Բնակիչները ընտրում էին իրենց բնակավայրի խորհուրդները, սրանք իրենց կազմից՝ գավառային խորհուրդների պատգամավորներին, իսկ վերջիններս՝ խորհուրդների համահայկական համագումարի պատգամավորներին: Արգելվում է նաև լիազորված քվեարկությունը:

Գաղտնի քվեարկություն: Քվեարկությունը կազմակերպվում է այնպիսի ձևով, որ ընտրողների կամքը մնա գաղտնի, որ նրանք առանց որևէ մեկի տեղյակության և վերահսկողության կատարեն իրենց ընտրությունը: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլև պարտականություն: Գաղտնի քվեարկությունը ընտրությունների ազատության և արդարության կարևորագույն երաշխիքներից է: Քվեարկողի ազատ կամքի նկատմամբ վերահսկողությունը հետապնդվում է օրենքով:

Ազատ, մրցակցային և կամավոր ընտրություններ: Յուրաքանչյուր ընտրող ազատ է կատարել ինքնուրույն ընտրություն՝ ելնելով թեկնածուների անձից, իր համակրանքից կամ հակակրանքից, իր քաղաքական և տնտեսական շահերից: Ողջ ընտրական կառուցակարգն ուղղված է ընտրությունների ազատության ապահովմանը: Պետությունը խթանում է, որպեսզի բոլոր տեսակի ընտրություններն անցակացվեն մրցակցության և այլընտրանքի սկզբունքներով: Առանց մրցակցության ընտրություններն իմաստազրկվում են:

Հայաստանում մասնակցությունը ընտրություններին կամավոր է: Ոչ ոք իրավունք չունի ընտրողին պարտադրելու կամ արգելելու մասնակցել ընտրություններին: Ինքը՝ ընտրողն է ընդունում այդ որոշումը՝ որպես իր քաղաքացիական դիրքորոշման արտահայտություն: Չէ՞ որ ընտրություններին չմասնակցելը ևս քաղաքական դիրքորոշում է: Ընտրություններին չմասնակցելը կարող է պայմանավորված լինել անտարբերությամբ, ընտրական գործընթացների

խճճվածությամբ, որը մարդկանց զրկում է հնարավորությունից կատարել մտածված ընտրություն: Երբեմն էլ ընտրախաղերը կարող են դառնալ չմասնակցելու պատճառ:

Մտորումներ: *Աշխարհի շատ երկրներում ընտրություններին մասնակցելը պարտականություն է: Այս դեպքում, որպես կանոն, առկա է «բոլորին դեմ» քվեարկելու տարբերակը: Չմասնակցելու դեպքում ընտրողները ենթարկվում են տուգանքի: Ի՞նչ եք կարծում, արդյոք ճիշտ չէ՞ր լինի Հայաստանում ևս ներմուծել համապարտադիր մասնակցություն: Ինչո՞վ դա կնպաստի ընտրությունների արդարությանը: Բաժանվե՛ք խմբերի և քննարկե՛ք:*

Ընտրական հանձնաժողովների անկախությունը և գործունեության թափանցիկությունը: Ընտրական հանձնաժողովներն իրենց լիազորություններն իրականացնելիս անկախ են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, կազմակերպություններից և քաղաքացիներից: Նրանք գործում են օրինականության, կոլեգիալության, հրապարակայնության սկզբունքների հիման վրա:

Ընտրությունները նախապատրաստվում և անցկացվում են հրապարակայնորեն: Ընտրական հանձնաժողովի նախագահն ապահովում է վստահված անձանց, դիտորդների և ՁԼՄ-ների ներկայացուցիչների մասնակցությունը հանձնաժողովի աշխատանքներին: Ընտրական հանձնաժողովների նիստերին, ինչպես նաև քվեարկության ամբողջ ընթացքում՝ տեղամասային կենտրոնում իրավունք ունեն ներկա գտնվել թեկնածուների վստահված անձինք, հավատարմագրված դիտորդները, ՁԼՄ-ների ներկայացուցիչները:

Ընտրությունների պարտադիրությունը և պարբերականությունը: Սահմանադրությամբ սահմանված բոլոր տեսակի ընտրությունները պարտադիր են և պետք է անցկացվեն համապատասխան պարբերականությամբ: Օրինակ՝ Ազգային ժողովի ընտրությունները կազմակերպվում են 4 տարին մեկ: Դա իշխանության օրինականության երաշխիք է և միաժամանակ արգելք իշխանության յուրացման համար: Ընտրությունների պարբերականությունը ներկայացուցչական մարմինների պարբերական նորացման միջոց է, ժողովրդի տրամադրությունների և տեսակետների հաշվառման երաշխիք:

Ընտրությունների համամասնական և մեծամասնական եղանակները: **Համամասնական ընտրությունների** դեպքում ընտրողները քվեարկում են քաղաքական կուսակցությունների օգտին: Յուրաքանչյուր կուսակցություն ներկայացնում է թեկնածուների իր ցուցակը: Կուսակցության ստացած ձայների քանակով որոշվում է այդ կուսակցության պատգամավորական տեղերը խորհրդարանում: **Մեծամասնական ընտրությունների** դեպքում առաջադրվում են անհատ թեկնածուներ՝ որոշակի ընտրատարածքներում: Ընտրված է համարվում այն թեկնածուն, ով ստանում է ձայների մեծամասնությունը: Որոշ երկներում, մեր հանրապետությունում ևս, կիրառվում է **ընտրությունների խառը համակարգը**, երբ պատգամավորների մի մասը ընտրվում է համամասնական, մյուս մասը՝ մեծամասնական կարգով:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

սոցիալական ուժ / իշխանության յուրացում / հանրաքվե / ձեռնահաս կառավարում / ժողովրդի կամք / հանընդհանուր ընտրություններ / հավասար ընտրական իրավունք / ուղղակի ընտրություն / գաղտնի քվեարկություն / մրցակցային ընտրություն / ընտրությունների պարբերականություն:

Պատասխանե՛ք հարցերին

1. Ի՞նչ է ժողովրդաիշխանությունը:
2. Ո՞վ է իշխանության աղբյուրը և տերը:
3. Ո՞րն է անմիջական ժողովրդաիշխանության ձևերի նշանակությունը:
4. Ինչու՞ է անհրաժեշտ ներկայացուցչական ժողովրդաիշխանությունը:
5. Որո՞նք են ներկայացուցչական կառավարման առանձնահատկությունները:
6. Ի՞նչ են ընտրությունները և ո՞րն է դրանց նշանակությունը:
7. Ի՞նչ է նշանակում ընտրությունների ազատությունը և կամավորությունը:
8. Ի՞նչ են համամասնական և մեծամասնական ընտրաեղանակները:

Ինքնուրույն հետազոտական գրավոր աշխատանք

Ուսուցչի բաշխմամբ պատրաստեք զեկուցում հետևյալ թեմաներով՝ «Հանրաքվե», «Ընտրություններ», «Ժողովրդական օրենդրական նախաձեռնություն», «Ընտրված ներկայացուցիչներին հետ կանչելը», «Ժողովրդական հարցում», «Ժողովրդական քննարկում», «Բռնապետությանը դիմադրելու և անհնազանդության իրավունք»:

Գործնական աշխատանք

Ուսուցչի կողմից սահմանված կանոնակարգով կազմակերպեք «Դասարանի Սահմանադրության» նախագծի քննարկման և ընդունման ժողովրդավարական գործընթաց: Իմացեք, որ Սահմանադրությունն ընդունելուց հետո կարող եք առաջադրել Ձեր թեկնածությունը դրանով նախատեսված դասարանական պաշտոնյաների ընտրություններին:

§ 3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Արդարությունն առանց ուժի անօգնական է.
ուժն առանց արդարության՝ բռնակալ:
Պասկալ (1623-1662)

1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՀԱՍՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ

Կարևոր է ոչ միայն ժողովրդավարության հռչակումը, այլև դրա փաստական կենսագործման ապահովումը: Հասարակության ժողովրդավարականացումը երկարատև, մշտական գործընթաց է: Անհրաժեշտ է, որպեսզի հասարակությունը և պետությունը ստեղծեն բարենպաստ պայմաններ ժողովրդավարությունը կյանքում իրագործելու համար, ապահովեն դրա պահպանությունը և պաշտպանությունը, վերացնեն արգելքները, որոնք խանգարում են մարդկանց՝ օգտագործելու իրենց հնարավորությունները: Այլ կերպ ասած՝ ժողովրդավարությունը պետք է լինի երաշխավորված:

Ժողովրդավարության երաշխիքները պայմաններ, կառուցակարգեր, եղանակներ ու միջոցներ են՝ ուղղված դրա կենսագործմանը, դրա պահպանությանը և պատշաճ պաշտպանությանը:

Առանց երաշխիքների ժողովրդավարությունը կմնա բարի ցանկություն, պատվիրան և չի կարող կատարել իր հասարակական առաքելությունը: Օրինակ՝ խորհրդային սահմանադրությունները ձևականորեն ամրագրում էին ժողովրդաիշխանության սկզբունքը: Սակայն իրականում չկային դրա կենսագործման ձևերը: Երկրի կառավարման քաղաքականության մեջ ամեն ինչ որոշում էր կոմկուսը: Օրենքով սահմանված էր պատգամավորին ետ կանչելու կարգը, բայց իրականում այն չէր գործում:

Ժողովրդավարության կարևորագույն երաշխիքը դրա օրենսդրական կարգավորումն է: Ժամանակակից աշխարհում ժողովրդավարության կենսագործումը կատարվում է օրենսդրական ամրագրման և այդ օրենքները կիրառելու միջոցով:

Օրենքը հանրաքվեով կամ պետության օրենսդիր մարմնի կողմից ընդունված հասարակական առավել կարևոր հարաբերությունները կարգավորող իրավական ակտ է, որում ամրագրվում են բոլորի համար պարտադիր և միատեսակ կանոններ:

Մարդիկ և պետությունը պարտավոր են լինել օրինահպատակ: Օրենքները կոչված են հաստատելու իրավունքների հավասարություն, կարգուկանոն, պաշտպանելու անհատների ազատությունը, անվտանգությունը, պայմաններ ստեղծելու նրանց ներդաշնակ համակեցության համար: Դրա համար պետությունը, բացի օրենքներ սահմանելուց, հետևում է, որ դրանք կենսագործվեն: Օրինակ, ոստիկանությունը ջանքեր է թափում հանցանք կատարած անձանց հայտնաբերելու և պատասխանատվության ենթարկելու համար:

Այսպիսով ժողովրդավարության առաջին և հիմնական երաշխիքը դրա գաղափարական դրույթներն իրավական պարտադիր կանոնների վերածելն է: **Ժողովրդավարության իրավական երաշխիքները Սահմանադրությամբ և օրենքներով ամրագրված ժողովրդավարական կառուցակարգերն ու ինստիտուտներն են, օրինակ՝ մարդու իրավունքները, դրանց իրականացման**

կարգը, պահպանության և պաշտպանության իրավական միջոցները: Եթե ժողովրդավարության այլ երաշխիքներն ուղղված են ընդհանուր բարենպաստ մթնոլորտի ստեղծմանը, կատարում են նախադրյալի դեր, ապա իրավական երաշխիքները կոնկրետ են, ուղղակի, ազդեցիկ ու գործուն: Ենթադրենք, չնայած բոլոր պայմաններին ընտրությունների օրը Ձեր հայրը պարզում է, որ իրեն չեն ներառել ընտրողների ցուցակում: Նա կարող է հենց նույն օրը դատարանի միջոցով շտկել սխալը և ընտրել:

Մտորումներ: *Այս առիթով շատ հետաքրքիր միտք ունի մեծն Խրիմյան Հայրիկը. «Օրե՜նք սիրե, ժողովո՜ւրդ, օրենք սիրե. սահմանադրության երեսից մի՛ փախչիր, որ քեզ համար նոր ամրակապ մի լաստափայտ է... ապավինի այդ օրինագիր լաստին, որ քո վերջին ապավենն է»: Ի՞նչ էր ուզում ասել Խրիմյանը:*

Ժողովրդավարության իրավական երաշխիքների թվում հիմնարար դեր է կատարում Սահմանադրությունը: Այն ամրագրում է ժողովրդավարության սկզբունքները, ինստիտուտները, կառուցակարգերը՝ դրանց տալով բարձրագույն իրավական ուժ: Այդ կարգավորման հիմնական նպատակը ժողովրդաիշխանության կենսագործումն է:

Սահմանադրությունը հիմնական օրենքն է կամ «օրենքների օրենքը», որն ունի հիմնադիր, հիմնարար բնույթ, սովորաբար ընդունվում է կամ ժողովրդի կողմից՝ հանրաքվեի միջոցով, կամ էլ ժողովրդի անունից՝ խորհրդարանի միջոցով: Ուստի, սահմանադրությունը կարելի է համարել հասարակական պայմանագիր, որն արտահայտում է ժողովրդի բարձրագույն կամքը:

ՀՀ Սահմանադրությունը, ընդունվել է 1995թ. հուլիսի 5-ին՝ հանրաքվեի միջոցով և փոփոխությունների է ենթարկվել 2005թ: Այն մեր պետության ու հասարակության հիմնական օրենքն է, որն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, ամրագրում է հասարակական և պետական կարգերի հիմնական սկզբունքները, ժողովրդաիշխանության իրականացման համակարգը, մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներ, ազատությունները և պարտականությունները, ինչպես նաև պետական իշխանության մարմինների համակարգը:

ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված ժողովրդավարական ինստիտուտները, սկզբունքները, նորմերը վերաբերում են հենց ժողովրդավարության հիմնական հենասյուներին՝ հասարակությանը, պետությանը և մարդուն: Ժողովրդավարությունն իրական դարձնելու համար Սահմանադրությունն ամրագրում է՝



- **հայաստանյան հասարակությունը ժողովրդավարական, քաղաքացիական հասարակություն է** (տե՛ս 14-րդ դասը),
- **հայաստանյան պետականությունը սոցիալական և իրավական հանրապետություն է,**
- **մարդու (քաղաքացու) իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեք են** (*տե՛ս հաջորդ դասը*):

Պետության, քաղաքացիական հասարակության և մարդու ազատության միջև հավասարակշռության հաստատումը Սահմանադրության և օրենքների ողջ իմաստն է: Սահմանադրությունը «հաշտեցնում

է» մարդու, պետության և հասարակության իրավունքները՝ ապահովելով այդ երեքի շահերի հավասարակշռությունը, և դրանով իսկ հաստատելով ժողովրդավարություն:

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՍՈՑԻԱԼ-ԻՐԱՎԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Անկախություն ձեռք բերելուց հետո մեր հայրենիքը թևակոխեց անկախ պետականության կառուցման շրջան, որի խնդիրներն էին հասարակական կյանքի բոլոր ոլորտներում խելամիտ, հավասարակշռված բարեփոխումների միջոցով Հայաստանում կայացնել ժողովրդավարությունը, այն է՝ քաղաքացիական հասարակությունը, իրավական, սոցիալական պետությունը, մարդու իրավունքները: Դրանով իսկ պետք է իրականացվեր մեր ազատասեր նախնիների սուրբ պատգամը՝ հզորացնել ու բարգավաճ դարձնել հայրենիքը, ապահովել սերունդների ազատությունը, ընդհանուր բարեկեցությունը և քաղաքացիական համերաշխությունը:

Ժողովրդավարության կարևոր երաշխիքը քաղաքացիական հասարակությունն է: Այն իրավական, ազատական, ինքնակառավարվող, բազմակարծիքային, բաց հասարակություն է, կազմված ազատ, ինքնավար անհատներից: Անհատներն այստեղ իրականացնում են իրենց շահերը բոլորի համար հավասար և ընդհանուր օրենքի շրջանակներում: Այդպիսի հասարակությունում անհատի կենսագործունեության բոլոր ձևերը կառուցված են ազատ կամավորության վրա:

Մենք ապրում ենք որոշակի հասարակական միջավայրում: Ինչքան էլ որ ուժեղ լինեն մեր ցանկությունները մեր իրավունքների և ժողովրդավարության հարցում, մենք չենք կարող դրանք կենսագործել, եթե միջավայրը չի նպաստում դրան: Այդպիսի իրական հնարավորություն մեզ համար ստեղծում է քաղաքացիական հասարակությունը, որպես ազատ, ժողովրդավարական հասարակություն, որի գլխավոր նպատակներից է մարդկանց համար լայն ժողովրդավարական հնարավորություններ բացելով՝ հաստատել հասարակական համերաշխություն և խաղաղություն:

Կայացած քաղաքացիական հասարակությունը ստեղծում է իրական երաշխիքներ և պայմաններ, որոնք նպաստում են ժողովրդավարությունն իդեալից իրականության վերածելուն: Եթե երկրի տնտեսությունը ավատատիրական է, դրանում հողի հիմնական սեփականատերերը ազնվականներն են, կա ճորտություն, ապա ժողովրդավարության մասին խոսք գնալ չի կարող: Ուրեմն երկրի տնտեսության վիճակը, մարդու տնտեսական ազատությունը պայմաններ են, առանց որոնց ժողովրդավարության մասին խոսք գնալ չի կարող: Բացի այդ հնարավոր է, որ տնտեսությունն իր սկզբունքներով ազատական է, օրինակ՝ օրենքն ամրագրում է սեփականության և բնակարանի իրավունքները, սակայն տվյալ երկրում սեփականության իրավունքը երաշխավորված չէ, կամ չկան աշխատատեղեր, արդյունքում մարդը չունի այդ իրավունքից օգտվելու միջոցներ (դրամ), իսկ հասարակությունն էլ չի օգնում նրան այդ գործում (վարկ տալով, բնակարան տրամադրելով): Նաև ժողովրդավարությունը ձևական է, տնտեսապես չերաշխավորված:

Կարևոր են նաև ժողովրդավարության քաղաքական երաշխիքները: Երկրի քաղաքական համակարգը՝ պետությունը և կուսակցությունները,

քաղաքականությունը պետք է տոգորված լինեն ժողովրդավարության և մարդու իրավունքների՝ որպես բարձրագույն արժեքի կենսագործման ոգով: Բռնապետության կամ քաղաքական անկայունության, համատարած ապօրինությունների պարագայում, որոնք ամենևին էլ քաղաքացիական հասարակության բնութագրիչներ չեն, ժողովրդավարությունը և մարդու իրավունքները մնում են անիրագործելի արժեքներ:

Սահմանադրական իրավական և սոցիալական պետությունը որպես ժողովրդավարության երաշխիք: Սահմանադրությունն ընդունելիս Հայաստանի քաղաքացիները նախ և առաջ որոշեցին, թե ինչ պետություն են ցանկանում ունենալ: ՀՀ Սահմանադրությունն ամրագրում է հայոց պետականության կառուցման և գործունեության հիմունքները (սկզբունքները), որոնք վերջին հաշվով կոչված են պետությունը դարձնելու իսկապես ժողովրդավարական, ժողովրդի կամքն ու շահերն արտահայտող, ժողովրդի կողմից ղեկավարվող իշխանություն:

Ժողովրդավարական պետականության սահմանադրական հիմնական բնութագրերը		
Հանրապետական կառավարման ձև	Իրավական պետություն	Սոցիալական պետություն

Հայաստանի պետական կառավարման ձևը հանրապետությունն է: Որպես ժողովրդավարության բարձրագույն իրավաբանական հիմք՝ մեր Սահմանադրությունն ամրագրում է ժողովրդաիշխանության սկզբունքը՝ ժողովրդին համարելով իշխանության աղբյուր, հաստատելով իշխանության նրա իրավունքը: Բայց միաժամանակ Սահմանադրությունը սահմանում է, որ ժողովուրդն իրեն պատկանող իշխանությունն իրականացնում է ոչ միայն անմիջապես, այլ նաև ներկայացուցչական ժողովրդավարությամբ, այն է՝ հանրապետության միջոցով: Այդ Հանրապետությունում ժողովուրդը որոշակի ժամկետով ընտրում է իր ներկայացուցիչներին (Հանրապետության նախագահ, խորհրդարան, տեղական ինքնակառավարման մարմիններ)՝ երկիրը ժողովրդի շահերից ելնելով կառավարելու համար: Մնացած մարմինները նշանակվում են ընտրովիների կողմից:

Բանավիճե՛ք: *Արդյո՞ք հայ ժողովուրդը ճիշտ ընտրություն է կատարել պետական կառավարման ձևը որոշելիս (հիմնավորե՛ք պատասխանը): Մի՞գուցե սխալմամբ ենք ընտրել հանրապետական կառավարման ձևը: Արդյո՞ք արդի հասարակական-քաղաքական իրողությունները մեզ չեն հուշում կանգ առնել միապատական կառավարման վրա: Բաժանվե՛ք միապետության և հանրապետության կողմնակիցների և կազմակերպե՛ք քննարկում:*

Հայաստանի Հանրապետությունը իրավական պետություն է: Մեր Սահմանադրությունը պետական իշխանության սահմանափակման հիմնախնդիրը լուծելու, ժողովրդավարությունն ու մարդու իրավունքներն իրական դարձնելու համար ամրագրում է ժողովրդավարական պետության որոշակի ձև, որն անվանում են **իրավական հանրապետություն**: Մենք ընտրել ենք իշխանության այնպիսի ձև, որտեղ պետական մարմինները և պաշտոնատար անձինք չունեն անսահմանափակ իշխանություն, նրանք պատասխանատու են հասարակության և քաղաքացիների առջև:

Իրավական է այն պետությունը, որի իշխանությունը սահմանափակված է, որում պետական մարմինները և պաշտոնատար անձինք իրավազոր են կատարելու միայն Սահմանադրությամբ և օրենքներով թույլատրված գործողություններ: Իրավական պետությունը ժողովրդավարական է, և, ընդհակառակը, ժողովրդավարական պետությունը պետք է լինի իրավական:

Իրավական պետությունը ոչ իրավական, ավանդական պետությունից տարբերվում է իր կազմակերպման և գործունեության երեք հիմնական սկզբունքներով, որոնք բոլորն էլ ամրագրված են մեր Սահմանադրությամբ:



***Հարցում շրջապատին**: Ձեր շրջապատի 5 մարդկանց ենթարկեք հարցման հետևյալ հարցերի շուրջ. «Ժողովրդավարական է արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը», «Սոցիալական է արդյո՞ք Հայաստանի Հանրապետությունը»: Արդյունքներն ամփոփե՛ք դասարանում և վերլուծե՛ք:*

Իրավական օրենքների գերակայության սկզբունքը: Իրավական օրենքների գերակայությունն ունի երկակի իմաստ.

- **Առաջին,** պետությունը պետք է երաշխավորի Սահմանադրության և օրենքների գերակայությունը: Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքները պետք է համապատասխանեն Սահմանադրությանը: Այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն Սահմանադրությանը և օրենքներին:
- **Երկրորդ՝** օրենքներն իրենց բովանդակությամբ պետք է բխեն իրավահավասարությունից, ազատությունից, մարդասիրությունից, լինեն արդարացի, համապատասխանեն ժողովրդավարական մյուս սկզբունքներին: Հակառակ դեպքում դրանք **ոչ իրավական օրենքներ** են:

Իրավական պետությունում կան բազմաթիվ ընթացակարգեր, որոնք երաշխիք են օրենքների իրավականությունն ապահովելու համար: Օրինակ՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, սահմանադրական դատարան դիմելու իրավունքը: Անհատը և հասարակական միավորումները կարող են հասնել ոչ իրավական օրենքները և այլ ակտերն անվավեր ճանաչվելուն:

***Կազմակերպե՛ք դատախաղ:** Խաղի մասնակիցներ են սահմանադրական դատարանի կազմը (նախագահ և 4 անդամներ), դիմող քաղաքացին և նրա ներկայացուցիչը, կառավարության երկու ներկայացուցիչները: Դիմողը հիմնավորում է, որ իր գործով կայացված դատարանի վերջնական ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասահմանադրական են: Կառավարության ներկայացուցիչները հիմնավորում են հակառակ տեսակետը: Դատարանը լուծում է վեճը: Վիճարկվող օրենքի դրույթներն են. «Պետական կազմակերպությունների աշխատողներն իրավունք չունեն ստեղծել կուսակցություններ և արհեստակցական միություններ, անդամագրվել դրանց: Այս արգելքը խախտած աշխատողները հեռացվում են աշխատանքից»:*

Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը: Իրավական պետությունը իշխանությունն իրականացնում է օրենսդիր, գործադիր և դատական իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի հիման վրա: Իշխանությունների բաժանման սկզբունքի նպատակն է. հաստատել քաղաքական ազատություն, ապահովել օրինականություն, բացառել իշխանության կենտրոնացումը մեկ անձի կամ մարմնի ձեռքում և կանխել չարաշահումները: Այդ նպատակներին հասնելու համար անհրաժեշտ է կենսագործել երկու պահանջ:

1) Միասնական պետական իշխանության բաժանումը երեք ճյուղերի՝ օրենսդիր, գործադիր և դատական: Բաժանման նպատակն է, որ երեք իշխանությունները չկենտրոնացվեն մեկ մարմնի ձեռքում: Իշխանության երեք թևերից յուրաքանչյուրն իրականացվում է պետական ապարատի առանձին կառույցների միջոցով, որոնք միմյանցից գտնվում են հարաբերականորեն անկախ և ինքնուրույն վիճակում: Յուրաքանչյուրն ունի իր լիազորությունները, որոնք իրականացնում է ինքնուրույն:

Օրենսդիր իշխանություն	Մարմնավորում է ժողովրդի կողմից ընտրվող ներկայացուցչական մարմինը, որը կոչված է որոշելու հասարակության և պետության զարգացման ռազմավարությունը օրենքներ ընդունելու միջոցով:
Գործադիր իշխանություն	Գործադիր մարմինը նշանակվում է ներկայացուցչական մարմնի կողմից և զբաղվում է օրենքների կենսագործմամբ, ընթացիկ կառավարմամբ:
Դատական իշխանություն	Մարմնավորում են հատուկ կազմակերպված անկախ մարմինները՝ դատարանները, որոնք զբաղվում են իրավունքի խախտումների վերաբերյալ վեճերի լուծմամբ, արդարադատության իրականացմամբ:

2)Հավասարակշռել իշխանության ճյուղերը «հակակշիռների և զսպիչների» համակարգի միջոցով, որպեսզի մեկը մյուսի նկատմամբ չունենա առավելություն, ինչը կարող է հանգեցնել պետական իշխանության չարաշահման: Պետական իշխանության երեք ճյուղերի հավասարակշռությունն ապահովվում է, այսպես կոչված, «հակակշիռների և զսպիչների» համակարգերի միջոցով: Իմաստն այն է, որ յուրաքանչյուրն ունի նաև այնպիսի լիազորություններ, որոնք հնարավորություն են տալիս հսկելու և ազդելու միմյանց վրա, համագործակցելու միմյանց հետ պետական կարևորագույն հարցերը վճռելիս: Օրինակ՝ մեր Սահմանադրությամբ ամրագրված են «հակակշիռների և զսպիչների» հետևյալ կառուցակարգերը.

- Նախագահի իրավունքը՝ մերժում կիրառել Ազգային ժողովի օրենքների նկատմամբ,
- Ազգային ժողովի իրավունքը՝ հաղթահարել մերժումը,
- Նախագահի իրավունքը՝ արձակել Ազգային ժողովը,
- Ազգային ժողովի իրավունքը՝ պաշտոնանկ անել Նախագահին:

Մտորումներ: *Պետական իշխանության սահմանափակման գործում գլխավոր դերակատարը հասարակությունն է, որը հակակշռում է պետությանը: Հասարակությունը պետք է ընտրի և վերահսկի պետական իշխանությանը: Մեկնաբանե՛ք «Ինչպիսին ժողովուրդն է, այնպիսին էլ նրա կառավարությունը», «Եթե*

պետությունը ուժեղ է, ապա՝ ճնշում է մեզ, իսկ եթե՝ թույլ է, մենք զոհվում ենք» ասույթները:

Հայաստանի Հանրապետությունը սոցիալական պետություն է: Սոցիալական պետության գաղափարն արտահայտում է, այսպես կոչված, սոցիալական-տնտեսական արդարության և ժողովրդավարության պահանջները:

Մարդկության պատմական փորձը վկայում է, որ շուկայական տնտեսությունն ինքնաբերաբար չի ապահովում նյութական բարիքների այնպիսի բաշխում, որը կբավարարի հասարակության բոլոր անդամներին: Նախ՝ մարդկանց մի մասը օբյեկտիվ հանգամանքների ուժով աշխատունակ չէ (ծերեր, հաշմանդամներ, անչափահասներ), մի մասն էլ գործազուրկ է և այլն: Երբեմն էլ աշխատավարձերը կարող են շատ ցածր լինել: Այս պայմաններում պետությունն անխուսափելիորեն «գիշերային պահակից», այսինքն՝ միայն հսկիչի դեր կատարողից, վերածվեց սոցիալական կամ ընդհանուր բարեկեցության պետության: Այսինքն՝ պետության, որն սկսեց կարգավորել շուկան, սահմանել աշխատավարձի նվազագույն չափեր, իրականացնել սոցիալական նպաստների ու թոշակների բաշխում, մշակել և իրագործել տարբեր բնույթի լայն սոցիալական ծրագրեր:

Սոցիալական պետությունը ձգտում է իր բնակչության համար ապահովել արժանապատիվ և անվտանգ գոյության պայմաններ, աշխատանք, բարեն-պաստ շրջակա միջավայր, բոլորի համար մոտավորապես միատեսակ կենսա-կան հնարավորություններ:

Որպես սոցիալական պետության սկզբունքի երաշխիքներ Սահմանադրությունը ամրագրում է տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրները, օրինակ՝ պաշտպանել և հովանավորել ընտանիքը, մայրությունը և մանկությունը:

Գործնական իրավական աշխատանք: *Կարդացե՛ք Սահմանադրության հոդվածում ամրագրված կետերը և մեկնաբանե՛ք դրանք: Դրանցից որո՞նք են վերաբերում սոցիալական պետությանը:*

3. ՄԱՐԴԸ ԵՎ ՆՐԱ ՈՐԱԿՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔ

Ինչպես տեսանք, ժողովրդավարությունն ունի բազում երաշխիքներ: Սակայն, որպես անմիջական և ներկայացուցչական ձևերի ամբողջություն, **ժողովրդավարությունն ինքնին ոչինչ չի երաշխավորում**: Ժողովրդավարությունը որպես կառուցակարգ հնարավորություն է տալիս բոլորին հավասար մասնակցել հասարակական կյանքին և, իհարկե, հասնել հաջողության կամ էլ պարտվել:

Ժողովրդավարությունը որպես կառավարման ձև հնարավորություն, իդեալ, խոստում է: Խոստում այն մասին, որ մենք՝ ազատ և իրավահավասար մարդիկ (քաղաքացիներս) համատեղ գործունեության ընթացքում կարող ենք կառավարել և կառավարվել այնպես, որ կբավարարվեն ազատության, արդարության, հավասարության, երջանկության մեր անձնական ձգտումները:

Ժողովրդավարությունը որպես խոստում, իհարկե, օդի դատարկ հնչյուն չէ, «ձայն բարբառո հանապատի» խրատ, այլ Սահմանադրությամբ ամրագրված սկզբունքների, կառուցակարգերի, մարդու իրավունքների ամբողջություն, որոնք ժողովրդավարության օրենսդրական և շատ կարևոր երաշխիքներն են: Սակայն

ժողովրդավարության ամենակարևոր երաշխիքը մարդիկ են, մենք՝ հասարակության անդամներս, մեր առօրյա կյանքով ու դրանում մեր կատարած արարքներով:

Հետևաբար, **ժողովրդավարությունը մարտահրավեր է՝** նետված մեզանից ամեն մեկին՝ լինել, ապրել, գործել, մտածել ժողովրդավարորեն: Այստեղից էլ ժողովրդավարության ամենակարևոր երաշխիքը մենք ենք, որովհետև ամեն մի հասարակական-քաղաքական գործի հաջողություն, ժողովրդավարության հաղթարշավը կախված է մեր ազատ, պատասխանատու վերաբերմունքից:

Ժողովրդավարությունը գոյություն ունի, եթե մարդիկ հավատում են դրան, հետևում են դրա գաղափարներին, ազատության, հավասարության, եղբայրության իրավական սկզբունքներին: Եթե եսասիրությունից, վախից, անձնական այսրոպեական շահից ելնելով դուք դավաճանում եք ժողովրդավարությանը, ստանալով ինչ-որ օգուտ, ունենալով ինչ-որ շահ, ապա այնուհանդերձ դուք պարտված եք, որովհետև ինչ-որ մի օր դուք կամ ձեր մերձավորները կհայտնվեք ձեր իսկ փորած փոսի մեջ, ինչ-որ մի օր բռնությունը և կամայականությունը կգցեն ձեզ իրենց ճիրանները:

Ժողովրդավարությունն առաջին հերթին աշխարհայացք է՝ հիմնված ազատության, իրավահավասարության, մարդու իրավունքների արժեքների վրա: Անշուշտ, ժողովրդավարությունը լինելով մտածելակերպ, անպայմանորեն ենթադրում է նաև ժողովրդավար գործելակերպ: «**Լավագույն օրենքները ի զորու չեն օգնել, եթե մարդիկ ոչնչի պիտանի չեն**»: Սահմանադրական ժողովրդավարական նորմերը կարող են արդյունավետ գործել, եթե մեր բոլորիս գիտակցությունն ունի ժողովրդավարական բնույթ, եթե հասարակությունը և նրա անդամները ժողովրդավարությունն ըմբռնում են որպես արժեք և գործում են դրա ճշմարիտ պահանջներին ու սկզբունքներին համապատասխան: Գյոթեի խոսքերով ասած՝ «**Միայն նա է արժանի երջանկության և ազատության, ով ամեն օր դրանց համար գնում է մարտի**»:

Եթե երկրում հաստատված բարոյահոգեբանական մթնոլորտը չի խթանում ժողովրդավարություն և քաղաքացիականություն, ուրեմն Սահմանադրությունը դատապարտված է անգործության: Հենց այդ պատճառով ազատության և հավասարության սկզբունքների վրա կառուցված ժողովրդավարության գաղափարի կողմնակից մտածողներից շատերը շեշտադրում էին «ժողովրդավարություն սովորելու» անհրաժեշտությունը:

Մտորումներ: *Ժողովրդավարական մշակույթի արմատավորումը հասարակության անդամների մեջ շատ կարևոր է: Պատկերացրե՛ք տարբերությունը քաղաքականապես բանիմաց, կրթված և անտեղյակ մարդկանց միջև: Կարո՞ղ են անտեղյակներն իրականացնել և պաշտպանել իրենց իրավունքները: Խորհե՛ք և փորձե՛ք հասկանալ և մեկնաբանել Վ. Ներսեսյանցի հետևյալ միտքը. «Իրավունքը ոչ թե վայրի ծառի մշակութային պտուղ է, այլ մշակութացված ծառի պտուղ: Այնպես որ իրավունքը ոչ թե վայրի ծառի մշակութային պտուղ է, այլ մշակութացված ծառի պտուղ: Այդ պատճառով այդպիսի պտուղը համտեսելու ցանկություն ունեցող մարդկանց և ժողովուրդներին անհրաժեշտ է աշխատանքով և տանջանքով, համառորեն, գիտակցված և համբերատար մշակել իրենցում, իրենց համար և իրենց մոտ, իրենց իրավական մշակույթի այգին, աճեցնել իրենց ազատության ծառը: Օտար պտուղներով այստեղ կուշտ չես լինի»:*

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է:

երաշխիք / իրավական երաշխիք / սահմանադրություն / միապետություն / հանրապետություն / իրավական պետություն / իրավական օրենք / «հակակշիռների և զսպիչների» կառուցակարգեր / «գիշերային պահակ» պետություն / ազգային և համամարդկային արժեքներ:

Պատասխանե՛ք հարցերին:

1. Ի՞նչ պատճառով է, որ ժողովրդավարությունն ունի երաշխիքների կարիք:
2. Ո՞ր պետական կառավարումն է համարվում ժողովրդավարական:
3. Ի՞նչ է պետական իշխանության սահմանափակման հիմնախնդիրը:
4. Որո՞նք են ժողովրդավարական պետության սահմանադրական բնութագրերը:
5. Որո՞նք են իրավական պետության հիմնական սկզբունքները:
6. Որո՞նք են իշխանությունների բաժանման սկզբունքի պահանջները:
7. Ի՞նչ է սոցիալական պետությունը:
8. Ի՞նչ դեր են խաղում մարդու որակները ժողովրդավարության երաշխիքների շարքում:

Ինքնուրույն հետազոտական աշխատանք.

Պատրաստե՛ք զեկուցում հետևյալ թեմաներով, ըստ ուսուցչի բաշխման. «Աշխարհիկ պետություն», «Հայոց թագավորները», «Աշխարհին հայտնի բռնապետները»:

Գործնական աշխատանք.

Դասարանի Սահմանադրությանը համապատասխան կազմակերպե՛ք դասարան-խորհրդարանի նախագահի և ընտրական հանձնաժողովի ընտրության գործընթաց: Ընտրական հանձնաժողովի կազմավորումից անմիջապես հետո նա պետք է նախապատրաստի դասարանի նախագահի ընտրության գործընթացը, հիմք ընդունելով դասարանի Սահմանադրությունը և օգտագործելով § 5 դասի նյութերը:

§ 4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆ

Արդարությունն առանց ուժի անօգնական է.
ուժն առանց արդարության՝ բռնակալ:
Պասկալ (1623-1662)

Մարդու իրավունքների որպես ժողովրդավարության հիմնական հենասյուներից մեկի երաշխավորման գործում մեծ է Սահմանադրության դերը, որը պարունակում է անմիջականորեն գործող, բարձրագույն իրավական ուժ ունեցող երաշխիք-հոդվածներ: Մարդու և քաղաքացու իրավունքների սահմանադրական երաշխիքներն իրենց հերթին լինում են **ընդհանուր և հատուկ**: Ամենից ընդհանուր երաշխիքը սահմանադրական կարգն է, նրա համընդհանուր ճանաչում գտած սկզբունքներն ու նորմերը և, անշուշտ, դրանց անշեղ պահպանությունը: Սահմանադրական այդ երաշխիքից բխում են իրավունքների ապահովման որոշակի հնարավորություններ մարդկանց համար և որոշակի պարտականություններ՝ պետության համար:

1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պետության և անհատի փոխհարաբերությունների հարցում հիմք ընդունելով բնական իրավական, ազատական հայեցակարգը՝ Սահմանադրությունը հռչակում է. «Պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը միջազգային իրավունքի սկզբունքներին ու նորմերին համապատասխան: Պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Պետության առջև դրված սահմանադրական այդ առաքելությունից բխում են նրա հետևյալ պարտականությունները՝ **ճանաչել, պահպանել, ապահովել և պաշտպանել մարդու իրավունքները:**

Պետությունը պարտավոր է ճանաչել մարդու իրավունքները: Ճանաչել մարդու իրավունքները նշանակում է, որ պետությունն ընդունում է բնական իրավունքից բխող մարդու անօտարելի իրավունքները և դրանք համապարտադիր դարձնելու նպատակով ամբողջ ծավալով ամրագրում է Սահմանադրությամբ և օրենքներով (տե՛ս մարդու իրավունքների ծառը § 21): **Այս պարտականության կատարման գործում մեծ է խորհրդարանի դերը:** Այն ապահովում է մարդու իրավունքների իրավական կարգավորումը և պաշտպանությունը՝ հիմնականում օրենքներ ընդունելու միջոցով: Օրենքները կոնկրետացնում են ժողովրդավարության և սահմանադրական իրավունքների իրականացման կարգը, սահմանում են լրացուցիչ երաշխիքներ դրանց համար: Օրենսդիր իշխանության դերն այս հարցում հատկապես կարևոր է նրանով, որ մարդու իրավունքների ապահովման, պաշտպանության հետ կապված գրեթե բոլոր հարցերի կարգավորումը վերապահված է օրենքներին՝ այսինքն՝ Ազգային ժողովին:

Ուսումնասիրե՛ք ՀՀ Սահմանադրության 83.5 հոդվածը, որտեղ ամրագրված է բացառապես օրենքներով սահմանվող հարցերի շրջանակը, և դուրս գրե՛ք այն կետերը, որոնք վերաբերում են մարդու իրավունքների և ժողովրդավարության իրականացմանը, պաշտպանությանը, երաշխիքներին:

Պետությունը պարտավոր է պահպանել մարդու իրավունքները: Դա նշանակում է, որ պետությունը պարտավոր է ձեռնպահ մնալ գործողությունների կատարումից, որոնք կարող են խախտել մարդու ազատությունը: Քանի որ իրավունքները տրված են մարդուն ի ծնե, ապա դրանք չեն կարող օտարվել, սահմանափակվել: Օրինակ՝ պետությունը, ճանաչելով կյանքի իրավունքը, միաժամանակ պարտավոր է վերացնել մահապատիժը՝ որպես քրեական պատժատեսակ:

Պետությունը պարտավոր է ապահովել մարդու իրավունքները: Ապահովել մարդու իրավունքները նշանակում է, որ պետությունը, նրա մարմիններն ու պաշտոնատար անձինք պարտավոր են անհատին տրամադրել որոշակի բարիքներ: Պետությունը պարտավոր է ձեռնարկել դրական, ակտիվ գործողություններ իրավունքների ապահովման, դրանք իրական և երաշխավորված դարձնելու համար: Օրինակ՝ կյանքի իրավունքի ապահովման համար պետությունը պարտավոր է պայքարել անձի կյանքի դեմ ուղղված հանցագործությունների դեմ, միջոցներ ձեռնարկել դրանք կանխելու համար: **Այս պարտականության կատարման գործում մեծ է կառավարության դերը**: Նրա կոչումը օրենքները գործադրելն է, երկրի ներքին քաղաքականութան մշակումը և կենսագործումը, իսկ ներքին քաղաքականության կարևոր բաղկացուցիչը մարդու իրավունքների, ժողովրդավարության ապահովումն ու երաշխավորումն է: Սահմանադրությունը կառավարության վրա դնում է ավելի կոնկրետ պարտականություններ.

- ապահովել հասարակական կարգի պահպանությունը, միջոցներ ձեռնարկել օրինականության ամրապնդման, քաղաքացիների իրավունքների և ազատությունների ապահովման ուղղությամբ,
- իրականացնել պետական քաղաքականությունը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում: Չէ՞ որ ներքին քաղաքականության այս ուղղություններից ամեն մեկը մարդու կոնկրետ իրավունք է:

Պետությունը պարտավոր է պաշտպանել մարդու իրավունքները: Պաշտպանել մարդու իրավունքները նշանակում է, որ պետությունը, նրա օրենսդիր, գործադիր և դատական մարմիններն իրականացնում են գործունեություն մարդու խախտված իրավունքները վերականգնելու, այդ խախտումները կասեցնելու, մարդու իրավունքները խախտողներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Օրինակ՝ հայտնաբերել մարդու դեմ ուղղված հանցանք կատարած անձին, ենթարկել նրան պատասխանատվության և հարկադրել հատուցել պատճառված վնասները:

2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Հանրապետության Նախագահը մարդու իրավունքների երաշխավորն է: Նա հետևում է մարդու իրավունքների բարձրագույն իրավական երաշխիքի՝ Սահմանադրության պահպանմանը: Այդ խնդիրն իրագործելու համար նա ունի համապատասխան լիազորություններ: Օրինակ՝ կարող է դիմել սահամանադրական դատարան՝ վիճարկելով օրենքների, կառավարության և վարչապետի որոշումների համապատասխանությունը Սահմանադրությանը՝ նաև ժողովրդավարության ու մարդու իրավունքների տեսանկյունից:

Յուրաքանչյուր ոք ունի մարդու իրավունքների պաշտպանի աջակցությունը ստանալու իրավունք: Մարդու իրավունքների պաշտպանն անկախ պաշտոնատար անձ է, որն իրականացնում է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից մարդու խախտված իրավունքների և ազատությունների պաշտպանությունը:

Պաշտպանին ուղղված բողոքները իրավունքների խախտման վերաբերյալ կարող են լինել բանավոր կամ գրավոր: Բողոքը պաշտպանին պետք է տրվի 1 տարվա ընթացքում այն օրվանից, երբ դիմողն իմացել է կամ պետք է իմացած լիներ իր իրավունքների խախտման մասին: Բողոքում պետք է նշված լինեն ֆիզիկական անձի անունը, ազգանունը, բնակության վայրը, մարդու խախտված կամ խախտվող իրավունքների մասին տեղեկությունները: Բողոքին կարող են կցվել փաստաթղթեր:

Պաշտպանը չի քննարկում այն բողոքները, որոնք պետք է լուծվեն միայն դատական կարգով: Բողոքն ընդունելով քննարկման՝ պաշտպանը ուսումնասիրում է բարձրացված հարցը և կարող է ընդունել որոշում, որով առաջարկում է իրավախախտին վերացնելու խախտումը՝ նշելով մարդու իրավունքների վերականգնման համար անհրաժեշտ և կատարման ենթակա հնարավոր միջոցառումները: Պաշտպանը կարող է սեփական նախաձեռնությամբ սկսել հարցի քննարկումը, եթե տեղեկություններ կան մարդու իրավունքների զանգվածային խախտումների մասին, կամ դա ունի բացառիկ հասարակական նշանակություն:

Պաշտպանը կարող է մարդու իրավունքների խախտման հարցով դիմել սահմանադրական դատարան:

Այցելություն: *Դասերից հետո կազմակերպե՛ք այց Մարդու իրավունքների պաշտպանի նստավայր կամ Սահմանադրական դատարան և ծանոթացե՛ք նրանց գործունեությանը մարդու իրավունքների ոլորտում: Եթե դա անհնարին է, ապա այցելե՛ք համապատասխան ինտերնետային կայքեր (www.concourt.am և www.ombuds.am) ու ծանոթացե՛ք նրանց գործունեությանը:*

Պետական մարմինների առջև իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Յուրաքնաչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելու և արդյունավետ պաշտպանություն ակնկալելու իրավունք: Օրենքը պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև կազմակերպությունների, այդ թվում՝ հասարակական, ղեկավարներին պարտավորեցնում է ապահովել մարդկանց ամեն մի **դիմումի, գանգատի, բողոքի, առաջարկության** ժամանակին և համակողմանի **քննարկումը**, այդ առթիվ որոշումների **ընդունումը**, ընդունված որոշումների **կատարումը**: Այդ մարմինները և կազմակերպությունները պարտավոր են դիմում-բողոքներին ընթացք տալ 30 օրվա ընթացքում, իսկ լրացուցիչ ուսումնասիրություն և ստուգում չպահանջող դիմումներին ու գանգատներին՝ 15 օրից ոչ ուշ: Օրինակ՝ պետական հանրակրթական դպրոցների առաջին դասարանների աշակերտների դասագրքերն անվճար են, սակայն աշակերտից պահանջում են վճար: Նա կամ նրա ծնողը իրավունք ունեն դիմելու դպրոցի տնօրենին, որը պարտավոր է 15 օրից ոչ ուշ պատասխանել:

3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների դատական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունք: Այդ իրավունքը երաշխավորված Սահմանադրությամբ. «Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրանքի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք»: Ամեն ոք իր իրավունքների խախտման դեպքում կարող է դիմել դատական մարմինների օգնությանը: Դատարանը հատուկ պետական մարմին է, որի առաքելությունը մարդու իրավունքների պաշտպանությունն է:

Սահմանադրությամբ երաշխավորված դատական պաշտպանության իրավունքը յուրաքանչյուր մարդու համար, ում իրավունքը խախտվել է, կամ ում մեղադրում են հանցանքի կատարման մեջ, ապահովում է իր գործի արդարացի քննություն դատարանի կողմից: Այդ առաքելության պատշաճ կատարման երաշխիքը հետևյալ երեք սահմանադրական իրավունքներն են:

1) Անկախ և անկողմնակալ դատարանի իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի օրենքի հիման վրա ստեղծված ձեռնահաս, անկախ ու անկողմնակալ դատարանի կողմից իր գործի քննության իրավունք: Սահմանադրությունը և օրենքները դատարանի անկախությունն ու արդարացիությունն ապահովելու համար սահմանում են մի շարք իրավական երաշխիքներ (տե՛ս -րդ դասը):

Արդարադատություն իրականացնում է միայն դատարանը: Ոչ մի այլ պետական մարմին և պաշտոնատար անձ, անհատ իրավունք չունի իրականացնելու արդարադատություն: Ոչ ոք չի կարող հանցագործության համար մեղավոր ճանաչվել և ենթարկվել պատժի այլ կերպ, քան դատարանի դատավճռով և օրենքին համապատասխան: Դատարանի լիազորությունների յուրացումը որևէ մեկի կողմից պատժվում է օրենքով: Առաքել բիձու ժամանակներում, դատարաններից բացի, կային ոչ դատական մարմիններ, որոնք քննում էին «հակահեղափոխական բնույթի» քրեական գործերը: Օրինակ՝ հատուկ խորհրդակցությունը, որի կազմի մեջ մտնում էին ներքին գործերի ժողկոմիսարը (նախագահ), նրա տեղակալները: Ներկա Սահմանադրությունը արգելում է արտակարգ դատարանների ստեղծումը:

2) Հավասարության պայմաններում և արդար դատավարության իրավունք: Ոչ միայն դատարանը, այլև դատարանում գործի քննության կարգը՝ դատավարությունը, պետք է լինեն արդարացի: Այդ իսկ պատճառով դատարանի գործունեությունն անվանում են արդարադատություն: **Արդարադատությունը** դատարանի կողմից իրավական գործերի քննման և լուծման գործընթացն է, որն իրականացվում է օրենքով սահմանված ընթացակարգի խստագույն պահպանմամբ, կոչված է ապահովելու դատական որոշումների օրինականությունը, հիմնավորվածությունը, արդարացիությունը:

Դատական ընթացակարգի առանցքը կազմում է մրցակցության սկզբունքը: Անկախ և անկողմնակալ դատարանի առջև, որը գործը լուծողն է, կանգնած են մեղադրող կողմը (տուժող, դատախազ) և պաշտպանության կողմը (ամբաստանյալ, նրա պաշտպան): Երկու կողմերի իրավունքները հավասար են: Ստալինյան բռնապետության տարիներին, երբ կոմիսարը, այսինքն՝ նախարարը կատարում էր դատական գործառույթ, դատարանի անկախության և անկողմնակալության մասին խոսք լինել չէր կարող: Մեղադրվող կողմը զրկված էր մի շարք հիմնարար իրավունքներց: Օրինակ՝ հնարավոր էր նրա բացակայությամբ իր գործի քննություն դատարանում:

3) Գործի ողջամիտ ժամկետում և հրապարակային քննության իրավունք: Դատարանում գործերի քննության հրապարակայնությունն արդարադատության սկզբունք է, որն ապահովում է հասարակայնության ներկայությունը դատավարությանը: Դատական նիստին կարող է ներկա գտնվել 16 տարին լրացած յուրաքանչյուր անձ:

Հանրության բարքերի, հասարակական կարգի, պետական անվտանգության, դատավարության մասնակիցների անձնական կյանքի կամ արդարադատության շահերի պաշտպանության նկատառումներով լրատվության միջոցների և հասարակության ներկայացուցիչների մասնակցությունը դատական քննության ընթացքում կամ դրա մի մասում կարող է արգելվել: Օրինակ, եթե դռնբաց նիստը սպառնում է ընտանեկան գաղտնիքի հրապարակմանը, ապա դատավարության կողմի միջնորդությամբ դատարանը կարող է անցկացնել դռնփակ նիստ: Սակայն դատարանի դատավճիռները և վերջնական որոշումները բոլոր դեպքերում հայտարարվում են հրապարակայնորեն: Հրապարակայնության սկզբունքի անհիմն սահմանափակումը օրենքի էական խախտում է և հիմք՝ դատական վերջնական որոշման բեկանման համար:

Գործի քննության հրապարակայնության նշանակությունը
• Հասարակական հսկողության տակ է դնում դատավարության մասնակիցների գործողությունները: Հանրությունը, լինելով ներկա դատական նիստերին, գնահատում է դատարանի գործունեությունը: Դատարանի թույլ տված ամեն մի խախտում անմիջականորեն նկատվում է ներկաների կողմից: • Երաշխավորում է դատավորի անկախությունը, իսկ ամբաստանյալին՝ առանց կաշկանդվելու արտահայտել իր դիրքորոշումը: • Ունի մեծ դաստիարակչական նշանակություն ներկաների համար:
Ի՞նչ է դատական նիստի դաստիարակչական նշանակությունը: Ինչպե՞ս և ո՞ւմ նկատմամբ է հրապարակայնությունը կատարում դաստիարակչական ներգործություն: Երբևիցէ մասնակցե՞լ եք դատական նիստի, և ինչպիսի՞ն է Ձեր տպավորությունը:

ՀՀ սահմանադրական դատարանը կարևոր դերակատարություն ունի ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության գործում: Օրինակ՝ նա լուծում է ընտրությունների արդյունքներ հետ կապված վեճերը: Բացի այդ, եթե տեղի է ունեցել մարդու սահմանադրական որևէ իրավունքի կամ ազատության խախտում, և օտագործելով դատական պաշտպանության բոլոր միջոցները մարդը չի կարողացել վերականգնել իր խախտված իրավունքը, ապա նա կարող է դիմել սահամանադրական դատարան: Սակայն միայն մեկ պայմանով. անհատը պետք է հիմնավորի, որ իր գործով կայացված դատարանի վերջնական ակտով իր նկատմամբ կիրառված օրենքի դրույթները հակասահմանադրական են: Այս դատարանը գործը նորից և ամբողջությամբ չի քննում, այլ միայն ստուգում է կիրառված օրենքի սահմանադրականությունը:

4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՀԱՏՈՒԿ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Մարդու իրավունքների սահմանադրական հատուկ երաշխիքների հասկացությունը: Առանձնահատուկ դեպքերում, երբ ոտնահարված է մարդու որևէ իրավունքը, և նա ձգտում է հասնել դրա պաշտպանությանը, կամ երբ մարդը կասկածվում կամ մեղադրվում է հանցանք կատարելու մեջ, նրան անհրաժեշտ են լրացուցիչ երաշխիքներ իր իրավունքների պաշտպանության համար: Նման երաշխիքներով անվանում են մարդու **իրավունքների հատուկ երաշխիքները,** որոնք ևս ամրագրված են Սահմանադրությամբ:

Հատուկ իրավիճակը պատկերացնելու համար կարդացե՛ք Հ. Քոչարի «Կարոտ» պատմվածքը կամ դիտե՛ք դրա հիման վրա նկարահանված համանուն ֆիլմը: Առաքել բիձու վիճակն առանձնահատուկ էր: Նրան մեղադրում էին մի քանի հանցանքների՝ ապօրինաբար պետական սահմանը հատելու, լրտեսության կատարման մեջ:

Անշուշտ, իրավախախտումների, այդ թվում՝ հանցագործությունների դեմ պայքարը պետության պարտականությունն է: Բայց նա մեղավորներին պատասխանատվության պետք է ենթարկի օրենքով սահմանված կարգի պահպանմամբ՝ հարգելով մարդու իրավունքները: Առանձնահատուկ իրավիճակում

հայտնված Առաքել բիծան պետք է ունենար լրացուցիչ իրավունքներ պետական չինովնիկների կամայականությունից իրեն պաշտպանելու համար: Իրավունքների այդ համախումբը, որպես մարդու իրավունքների սահմանադրական հատուկ երաշխիքներ, անվանում են նաև **արդարադատության սահմանադրական երաշխիքներ**: Ինչո՞ւ: Որովհետև այդ իրավունքները՝ որպես ելակետային, առանցքային սկզբունքներ, դրված են դատավարական գործունեությունը կարգավորող օրենքների հիմքում: Այդ երաշխիքները կոչված են բացառելու կամայականությունը, մարդու իրավունքների խախտումները հատկապես պետական մարմինների, այդ թվում՝ դատարանների գործունեության մեջ:

Ամեն ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Քանի որ իրավական հարցերում ամեն ոք չէ, որ կարող է կողմնորոշվել, որովհետև դա իմացության հատուկ համակարգ է, մարդը պետք է հնարավորություն ունենա ստանալու իրավաբանական օգնություն, այսինքն՝ նա կարող է դիմել համապատասխան մասնագետի՝ փաստաբանին՝ իրավական խորհրդատվության համար: Այդ իրավունքի երաշխիքը պետությունից անկախ գործող փաստաբանական ծառայությունն է: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին: Յուրաքանչյուր ոք ունի ձերբակալման, խափանման միջոցի ընտրման կամ մեղադրանքի առաջադրման պահից իր ընտրությամբ պաշտպան ունենալու իրավունք:

Պաշտպանը այն փաստաբանն է, որ քրեական գործով վարույթում ներկայացնում է կասկածյալի կամ մեղադրյալի օրինական շահերը և նրանց ցույց է տալիս իրավաբանական օգնություն օրենքով չարգելված բոլոր միջոցներով: Կան դեպքեր, երբ պաշտպանի մասնակցությունը պարտադիր է, իսկ մնացածում պաշտպան հրավիրելը մեղադրյալի իրավունքն է:

Եթե ուշադրություն եք դարձրել, Առաքել բիծան չուներ պաշտպան, որովհետև նրա ժամանակների օրենքները պաշտպանին թույլատրում էին մասնակցել միայն դատական նիստին, այն էլ՝ ոչ բոլոր դեպքերում:

Հրավեր: *Դասարան հրավիրե՛ք փաստաբանի՝ փաստաբանական աշխատանքը ներկայացնելու համար:*

Անմեղության կանխավարկածի իրավունք: Ապահովում է հանցանք կատարելու մեջ մեղադրվող անձի իրավունքները, ինչպես նաև երաշխավորում, որ անմեղ, այսինքն՝ հանցանք չգործած անձը չենթարկվի քրեական պատասխանատվության: Մարդուն կարող են կասկածել կամ մեղադրել հանցանքի կատարման մեջ, սակայն անմեղության կանխավարկածի իրավունքից բխում է երեք սկզբունք.

- «Հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝

դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով»: Միայն դատարանն իրավունք ունի հանցագործության կատարման մեջ անձին մեղավոր ճանաչել և նրա նկատմամբ պատիժ կիրառել:

- «Մեղադրյալը պարտավոր չէ ապացուցել իր անմեղությունը»: Առաքել բիձան՝ որպես մեղադրյալ՝ ունի իրավունք ապացուցելու իր անմեղությունը, օրինակ՝ ցուցմունք տալ, վկաներ հրավիրել, բայց ոչ պարտականություն: Մեղադրանքի ապացուցման պարտականությունը կրում է մեղադրանքի կողմը՝ քննիչը, դատախազը:
- «Չփարատված կասկածները մեկնաբանվում են հօգուտ մեղադրյալի»: Անարդարացի է մարդուն հանցագործ ճանաչել կասկածելի տվյալների հիման վրա: «Կարոտ» ֆիլմում քննիչների՝ լրտեսության մեջ մեղադրանքը լրիվ ենթադրություն էր, չուներ որևէ հիմնավոր և հավաստի ապացույց: Ուրեմն՝ այդ մեղադրանքը պետք է դիտարկվեր «չփարատված կասկած», մեկնաբանվեր հօգուտ Առաքելի, այսինքն՝ քրեական հետապնդումն այդ մասով պիտի դադարեցվեր:

Մտորումներ: *Անցյալում գործել է անմեղության կանխավարկածին հակառակ՝ մեղավորության կանխավարկածի սկզբունքը: Ի՞նչ է այն: Ներկայումս որոշ ծայրահեղականներ, ելնելով այն հանգամանքից, որ հանցավորությունը ահռելի չափերի է հասել, առաջարկում են դատավարական գործունեության համար հիմք ընդունել այդ սկզբունքը: Բաժանվե՛ք խմբերի և քննարկե՛ք:*

Ցուցմունք տալու պարտականությունից ազատ լինելու իրավունք: Ոչ ոք պարտավոր չէ վկայել (ցուցմունք տալ) իր, ամուսնու և մերձավոր ազգականների դեմ: Այս իրավունքն ունի բարոյական հիքեր: Անձը, որին քրեական գործը քննող մարմինն առաջարկում է հայտնել կամ տրամադրել հանցանք գործելու մեջ իր, ամուսնու կամ մերձավոր ազգականների մեղավորությունը հիմնավորող տեղեկություններ կամ նյութեր, իրավունք ունի հրաժարվել նման տեղեկություններ հայտնելուց և նյութեր տրամադրելուց:

Մտորումներ: *Ինչքանո՞վ է բարոյական ծնողի դեմ ցուցմունք տալը, որ պարտականություն էր խորհրդային ժամանակներում: Կարո՞ղ են իրար հակասել օրենքը և բարոյականությունը: Եթե այո, ապա ո՞ր դեպքերում: Ինչպե՞ս կմեկնաբանեք «Օրենքները պետք է արմատավորեն բարոյականություն և արմատախիլ անեն արատները» բանաձևը:*

Մերձավոր ազգականների շրջանակի մեջ մտնում են ծնողները, զավակները, որդեգրողները, որդեգրվածները, հարազատ և ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբայրները և քույրերը, պապը, տատը, թոռները, ամուսնու ծնողները: Եթե քննիչը ցուցմունք տալու կանչեր Առաքելի որդուն, նա չէր կարող հրաժարվել վկայություն տալուց: Այն ժամանակվա օրենքները ցուցմունք տալը համարում էին բոլորի պարտականությունը, իսկ որդու կողմից հոր դեմ ցուցմունք տալը խրախուսվում էր:

Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը: Ամեն մի գործի, այդ թվում՝ քրեական, կապակցությամբ իրականացվող վարույթի ընթացքում թույլատրվում է օգտագործել միայն այն փաստական տվյալները, որոնք ձեռք են բերվել օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ: «Արգելվում է օրենքի խախտմամբ ձեռք բերված ապացույցների օգտագործումը»: Այնինչ՝ Առաքել բիծուն առաջադրված մեղադրանքի հիմքում դրվել և որպես ապացույց օգտագործվում էին բռնությամբ, սպառնալիքով, խաբեությամբ ձեռք բերված ցուցմունքները:

Հարցում շրջապատին: *Շրջապատում գտե՛ք որևէ մեկին, ում կամ ում ազգականին ենթարկել են բռնության ստալինյան տարիներին: Համառոտագրե՛ք պատմությունը, այնուհետև, դասարանում քննարկելով՝ պարզե՛ք նրա իրավունքների խախտումները:*

Չկա հանցանք առանց օրենքի և պատիժ՝ առանց հանցանքի: «Մարդուն չի կարելի հանցագործության համար մեղավոր ճանաչել, եթե արարքի կատարման պահին գործող օրենքով այն հանցագործություն չի համարվել»: Թե ո՛ր արարքներն են համարվում հանցագործություն, ուղղակիորեն պետք է նախատեսված լինի օրենքով՝ քրեական օրենսգրքով: Հակառակ դեպքում արարքը հանցանք չէ և չի կարող հանգեցնել պատժի: Ստալինյան օրենքները թույատրում էին դատարանին հանրության համար վտանգավոր արարքները, որոնք ուղղակիորեն նախատեսված չէին օրենքով, համարել հանցագործություն և մարդկանց պատժել, ինչը հանգեցնում էր օրենքի բազմաթիվ խախտումների, օրինականության հաճախակի ոտնահարման:

Մարդու նկատմամբ չի կարող կիրառվել քրեական պատիժ, եթե նա չի կատարել հանցանք: Ուրեմն՝ չկա պատիժ առանց հանցանքի: «Արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության պահին գործող օրենքով»:

Մտորումներ: *Գիտե՞ք որևէ մեկին, որ դատվել է՝ անմեղ լինելով: Ինչո՞ւ են հնարավոր նման դեպքերը: Հնարավո՞ր է, որ պետությունը միշտ գործի անսխալ և անկողմնակալ:*

Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար: Միևնույն հանցագործության համար կրկնակի դատապարտումն արգելված է: Նույն անձի վերաբերյալ նույն դեպքի առթիվ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի կամ որոշման, ինչպես նաև քրեական հետապնդման մարմնի չվերացված որոշման առկայությունը բացառում է քրեական գործ նորոգելը, մեղադրանքն ավելի ծանրով փոխարինելը, ավելի խիստ պատիժ նշանակելը: Դա, իհարկե, չի նշանակում, որ գործի վերանայումն արգելված է: Եթե տեղեկություններ կան գործի քննության ընթացքում տեղ գտած խախտումների կամ նոր ի հայտ եկած հանգամանքների մասին, որոնք կարող էին ազդել քրեական գործի ելքի վրա, ապա այն կարող է վերանայվել, սակայն միայն հին դատավճռի կամ որոշման վերացման դեպքում:

Օրենքի հետադարձ ուժի և հետադարձ ուժի արգելքի իրավունք: Մարդկանց արարքները կատարվում են ինչ-որ մի պահ: Օրենքները ևս ընդունվում ու գործում են ժամանակի մեջ: Մարդը կարող է կատարել արարք, որը տվյալ պահին օրենքով արգելված չէ, բայց հանրության համար վտանգավոր է: Եթե հանկարծ ընդունվի օրենք, և այդ արարքը համարվի իրավախախտում, ապա այդպիսի օրենքն անվանում են պատասխանատվություն սահմանող: Օրենքը կարող է տարածվել

միայն դրա գործողությունից հետո կատարվող նույնանման արարքների վրա: Այսինքն՝ պատասխանատվություն սահմանող օրենքը չունի հետադարձ ուժ:

Պատասխանատվությունը խստացնող օրենքը ևս չունի հետադարձ ուժ: Օրենքը պատասխանատվությունը խստացնող է, եթե խստացնում է պատասխանատվության չափը, օրինակ՝ բարձրացնում է տուգանքի գումարը, ավելացնում ազատազրկման ժամանակը:

Սահմանադրությունը հռչակում է, որ հետադարձ ուժ չունեն նաև անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները և այլ իրավական ակտերը:

Արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքն ունի հետադարձ ուժ: Այսինքն, եթե օրենքը արարքն արդեն չի համարում հանցագործություն կամ մեղմացնում է դրա համար սահմանված պատիժը, ապա նրա գործողությունը Սահմանադրության ուժով տարածվում է նաև մինչ այդ կատարված հանցանքների վրա:

Դատավճիռների վերանայման իրավունք: Այս իրավունքը երաշխավորում է միայն քրեական գործերով դատավճիռների վերանայման իրավունքը: Եթե գործով ամբաստանյալը կամ տուժողը դժգոհ են դատավճռից այն համարելով անարդարացի, ապա կարող են դիմել վերադաս դատարանին, որը դիմումի առկայության դեպքում նորից պետք է քննի տվյալ գործը: Կրկին վերադառնանք ստալինյան բռնությունների ժամանակաշրջանի օրենքներին, որոնք մի շարք հանցանքների վերաբերյալ գործերով արգելում էին դատավճիռների «գանգատարկումը»: Նույնիսկ մահապատիժ սահմանող դատավճիռները ենթակա էին անհապաղ կատարման:

Ներման կամ պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք: «Յուրաքանչյուր դատապարտյալ ունի ներման կամ նշանակված պատիժը մեղմացնելու խնդրանքի իրավունք»: Այսինքն՝ արդեն մեղավոր ճանաչված և դատապարտված անձը կարող է դիմել, որ իրեն ներեն կամ իր նկատմամբ նշանակված պատիժը մեղմացնեն: Հայաստանում դատապարտյալներին ներում շնորհելու լիազորությունը պատկանում է Հանրապետության Նախագահին: Եթե հանկարծ Առաքել բիծան ցանկանար խնդրել ներելու իրեն, ապա նրա դիմումը չէին ընդունի, որովհետև ստալինյան ժամանակաշրջանի օրենքները «հակահեղափոխական» կոչված մի շարք հանցանքների վերաբերյալ գործերով արգելում էին ներման խնդրագրերի ընդունումը:

Վնասի հատուցման իրավունք: «Տուժողին պատճառված վնասը հատուցվում է օրենքով սահմանված կարգով»: Մարդու իրավունքների խախտումները հաճախ զուգակցվում են մարդուն վնաս պատճառելով: Այդ դեպքում, բացի խախտված իրավունքը վերականգնելուց, պետք է հատուցվի պատճառված վնասը: Պատճառված վնասի հատուցման պարտականությունը երաշխիք է իրավունքները ցանկացած խախտումներից պաշտպանելու համար: Խոսքը նաև դատական սխալներից տուժածների իրավունքների վերականգնման մասին է: Երբեմն օրենքով նախատեսված հարկադրանքի միջոցները կիրառվում են նաև անմեղ անձանց նկատմամբ՝ նրանց պատճառելով բարոյական, ֆիզիկական և գույքային վնաս: Եթե արդյունքում մարդն արդարացվում է, ապա նա իրավունք ունի պահանջել անօրինական գործողությունների հետևանքով պատճառված գույքային վնասի հատուցում: Այդ վնասը հատուցում է պետությունը:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

Մարդու իրավունքների պաշտպան / մեղադրանքի հիմնավորվածություն / արտակարգ դատարան / մրցակցության սկզբունք / իրավաբանական օգնություն / ձերբակալում / խափանման միջոց / պաշտպան / չփարատված կասկած / ցուցմունք տալ / ապացույց / օրենքի հետադարձ ուժ / պատասխանատվություն սահմանող և խստացնող օրենք / դատավճռի վերանայում / քրեական գործ:

Պատասխանե՛ք հարցերին

1. Որո՞նք են մարդու իրավունքներից բխող պետության պարտականությունները:
2. Ո՞րն է դատական իշխանության դերակատարությունը մարդու իրավունքների պաշտպանության հարցում:
3. Ինչպե՞ս է պաշտպանում մարդուն մարդու իրավունքների պաշտպանը:
4. Ինչո՞ւ դատարանը պիտի լինի անկախ և անկողմնակալ:
5. Ի՞նչ է հավասարության պայմաններում և արդար դատավարության իրավունքը:
6. Ի՞նչ նշանակություն ունի հրապարակայնությունը գործի քննության համար:
7. Ո՞րն է մարդու իրավունքների սահմանադրական հատուկ երաշխիքների առաքելությունը:
8. Ո՞ր պահից մարդն ունի պաշտպանի իրավունք:
9. Ո՞ր պահից է հանցագործության համար մեղադրվողը համարվում մեղավոր:
10. Ո՞վ է կրում մեղադրանքի ապացուցման պարտականությունը:
11. Ովքե՞ր և ինչո՞ւ են ազատվում ցուցմունք տալու պարտականությունից:
12. Ո՞ր օրենքներն ունեն, և որո՞նք չունեն հետադարձ ուժ:

Ստեղծագործական աշխատանք

Գրե՛ք փոքրիկ շարադրություն «Հայրենիք և ժողովուրդ» թեմայով: ***Կոմնորոշող նյութ.*** *«Հայրենիքը չի տրվում այնպես, ինչպես ժառանգվում է հայրենական հարստությունը: Դա ձեռք է բերվում ամեն մի սերնդի և նրա առանձին անդամի կողմից, ձեռք է բերվում հայրենաճանաչումով, հայրենապաշտությամբ, նրան արժանի դառնալու ձգտումով... Սոցիալապես որքան արդար, այնքան զորավոր է հայրենիքը: Գերերջանիկ է մարդը, ով կարող է ասել. «իմ հայրենիքում արևը ծագում է բոլորի և ամեն մեկի համար, այնտեղ երկիրը մշակելու և հոգեպես մշակվելու ազատություն ունեմ ես» (Գ. Նժդեհ):*

§ 5. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Սիրելի աշակերտներ, դուք արդեն ընդունել եք ձեր դասարանի Սահմանադրությունը, ընտրել եք դասարան-խորհրդարանի նախագահին, ընտրական հանձնաժողովի անդամներին: Երրորդ դասից սկսած Դուք պետք է նախապատրաստվեք դասարանի նախագահի ընտրություններին: Այդ աշխատանքը պետք է կատարեք ինքնուրույն: Որպես օժանդակող նյութ, ստորև ներկայացված են ընտրությունների փուլերը՝ ըստ ընտրական օրենսգրքի, ընտրական քարոզարշավին վերաբերող օրենսդրական պահանջները, ինչպես նաև ընտրարշավի հնարքներն ու միջոցները: Օգտագործելով այդ նյութերը դասարանի ընտրական հանձնաժողովը պետք է կազմի դասարանի նախագահի ընտրության օրացույցը ըստ փուլերի, այն հաշվով, որ հինգերորդ դասին արդեն տեղի ունենան դասարանի նախագահի ընտրությունները:

Քարոզարշավին վերաբերող դասանյութը կողմնորոշող նշանակություն ունի խորհրդարանական խմբակցությունների, ինչպես նաև դասարանի նախագահի թեկնածուների համար, ովքեր դրան համապատասխան՝ ըստ ընտրական հանձնաժողովի ընտրական օրացույցի պետք է կազմակերպեն իրենց քարոզարշավը:

1. ԸՆՏՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ԴՐԱ ՓՈՒԼԵՐԸ

Ընտրական գործընթացը կազմված է օրենքով ամրագրված, փոխկապված, հերթական փուլերից: Պետությունը, լիազորված մարմինները և պաշտոնատար անձինք պատասխանատու են ընտրությունների նախապատրաստման, կազմակերպման և անցկացման օրինականության համար:

Ընտրական գործընթացի փուլերը		
Ընտրությունների նշանակում	Ընտրողների ցուցակների կազմում	Ընտրական հանձնաժողովների, ընտրատարածքների և տեղամասերի ձևավորում
Թեկնածուների առաջադրում և գրանցում	Նախընտրական քարոզարշավ	Քվեարկություն և ընտրությունների արդյունքների հաշվառում

Ընտրությունների նշանակումը: Օրինակ՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները նշանակում է մարզպետը համայնքի ղեկավարի լիազորությունների ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 90 օր առաջ: Տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններն անցկացվում են ոչ ուշ, քան տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ավարտից 30 օր առաջ:

Ընտրողների ցուցակների կազմումը: Այս փուլում կազմվում են ընտրողների ցուցակները, այնուհետև դրանք դրվում են համընդհանուր ծանոթացման համար:

Ընտրողների ցուցակը մշտապես վարվող փաստաթուղթ է: Ընտրողների ցուցակը կազմվում և վարվում է ըստ մարզերի և համայնքների՝ որպես մեկ միասնական ցուցակ, այն է՝ ընտրողների ազգային գրանցամատյան: Այն կենտրոնական ընտրական հանձնաժողովի ինտերնետային կայքի մշտական և անբաժանելի մասն է:

Քվեարկությունից 40 օր առաջ ընտրողների ցուցակը փակցվում է տեղամասային կենտրոնում՝ բոլորի համար տեսանելի տեղում: Սխալների հայտնաբերման դեպքում դրանք

կարող են լրացուցիչ ճշգրտվել: Անճշտությունների վերաբերյալ վեճերը կարող են բողոքարկվել դատարան:

Ընտրական հանձնաժողովների, տեղամասերի և ընտրատարածքների ձևավորումը: Հայաստանում կազմակերպվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ կենտրոնական, ընտրատարածքային և տեղամասային: Ընտրատարածքների թիվը հավասար է Ազգային ժողովի մեծամասնական ընտրակարգով պատգամավորական տեղերի թվին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գործում է մշտական հիմունքներով: Նա իրականացնում է այլ հանձնաժողովների աշխատանքի ղեկավարությունը, տնօրինում է պետական բյուջեից հատկացվող միջոցները, մշակում է ընտրություններին վերաբերող հրահանգներ և մեկնաբանություններ, ինչպես նաև կատարում է ընտրությունների կազմակերպման ու անցկացման հետ կապված այլ գործառույթներ:

Թեկնածուների առաջադրում և գրանցում: Թեկնածուների առաջադրման իրավունք ունեն ընտրողների խմբերը (նախաձեռնողների խմբերը) և քաղաքական կուսակցությունները: Թեկնածուների գրանցումը կամ ցուցակների գրանցումը կատարում են ընտրական հանձնաժողովները: Գրանցման պահանջները և կարգը սահմանված են օրենքով: Թեկնածուների գրանցումը նրանց իրավունք է տալիս մասնակցելու հետագա ընտրական գործընթացին և ընդգրկվելու ընտրական քվեաթերթիկի մեջ:

Նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները, դրանց դաշինքները, քաղաքացիները:

Ազգային ժողովի ընտրություններում քաղաքացին կարող է առաջադրվել միայն մեկ ցուցակով և միայն մեկ մեծամասնական ընտրատարածքում:

Պատգամավորության թեկնածու չեն կարող գրանցվել սահմանադրական դատարանի անդամները, դատավորները, ուժային, հարկային, մաքսային մարմինների աշխատակիցները: Նրանք թեկնածու կարող են գրանցվել միայն իրենց լիազորությունները ժամանակավորապես վայր դնելու դեպքում:

Նախընտրական քարոզարշավ: Նախընտրական քարոզչությունը քաղաքացիների և քաղաքական կազմակերպությունների գործունեությունն է՝ ուղղված ընտրողներին՝ նրանց համոզելու և դրդելու ընտրել իրենց թեկնածուին կամ կուսակցությանը: Քարոզչությունը ընտրական գործընթացի կարևորագույն փուլն է, քանի որ այն վճռական ներգործություն է թողնում ընտրությունների արդյունքների վրա: Քարոզչության արդյունավետությունից է կախված ընտրություններում թեկնածուի կամ կուսակցության հավաքած ձայների քանակը:

Քվեարկություն և ընտրությունների արդյունքների հաշվում: Քվեարկության օրը ոչ աշխատանքային օր է: Քվեարկությունն անցկացվում է տեղամասային կենտրոններում՝ ժամը 8.00-ից մինչև 20.00-ն: Ընտրողները քվեարկում են քվեաթերթիկներով: Քվեարկության խցիկը պետք է ապահովի թերթիկի լրացման գաղտնիությունը: Արգելվում է քվեարկության օրը տեղամասային կենտրոնին հարող տարածքում մինչև 50 մետր շառավղով խմբերով հավաքվելը:

Քվեարկության համար սահմանվում է ընտրողների ներկայության որոշակի տոկոս, որի դեպքում ընտրությունները ճանաչվում են կայացած:

Ձայների հաշվումը կատարվում է ընտրական տեղամասում՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից: Քվեարկության արդյունքներն անցկացվում են արձանագրության մեջ, որը փոխանցվում է ընտրատարածքային հանձնաժողով: Ընտրությունների վերջնական արդյունքները որոշվում են՝ կախված ընտրության տեսակից: Քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը վստահված անձանց, դիտորդների, ՁԼՄ-ների ներկայացուցիչների կողմից կարող է անարգել տեսանկարահանվել:

2. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԳԵԼՔՆԵՐԸ

Քանի որ նախընտրական քարոզչությունից է կախված ընտրություններում թեկնածուի կամ կուսակցության հավաքած ձայների քանակը, ապա թեկնածուները և կուսակցությունները մշակում և կենսագործում են ընտրարշավի իրենց ռազմավարությունը և մարտավարությունը: **Ընտրարշավը** թեկնածուի կամ կուսակցության գործողությունների համակարգն է՝ ուղղված ընտրություններում իրենց նպատակների իրագործմանը:

Նախընտրական քարոզչության սկզբունքները: Քարոզչության դերը նկատի ունենալով՝ ընտրական օրենսգիրքը կարգավորում է քարոզչության գործընթացը և կարգը: Այդ կարգավորումը խարսխված է հետևյալ սկզբունքների վրա.

Ընտրություններին մասնակցող թեկնածուների և կուսակցությունների իրավահավասարության ապահովում: Դա երաշխավորված է ընտրությունների ֆինանսավորման կարգով, ՁԼՄ-ներից օգտվելու հավասար իրավունքով:

Նախընտրական քարոզչության ազատություն: Յուրաքանչյուր քաղաքացի և հասարակական միավորում ազատորեն կարող է օրինական կարգով և թույլատրված ձևերով ազատորեն մասնակցել քարոզչությանը: Այս իրավունքը քաղաքական ազատության հիմնաքարն է: Քարոզչության ազատ իրականացումը ապահովում է պետությունը:

Նախընտրական քարոզչության չեզոքություն (լոյալություն): Թեկնածուները և կուսակցությունները պարտավոր են լոյալ վերաբերվել իրենց հակառակորդներին, թույլ չտալ վիրավորանք, արժանապատվության նսեմացում, «սև քարոզչություն», կեղծարարություն և այլն:

Պետության չեզոքություն: Պետական ապարատը, մարմինները, ծառայողները նախընտրական քարոզչության ընթացքում պետք է լինեն չեզոք, չմիջամտեն նախընտրական պայքարին, չզբաղվեն քարոզչությամբ: Ակնհայտ է, որ պետական մարմինները կարող են իրենց հնարավորություններն օգտագործել ընտրությունների արդյունքների որոշման համար: Այդ հնարավորությունն ընդունված է անվանել «վարչական ռեսուրս»: Օրենքը արգելում է նախընտրական քարոզչություն կատարել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, դրանց աշխատակիցներին:

Նախընտրական քարոզչության ժամկետները և չարաշահման արգելքները: Նախընտրական քարոզչությունը սկսվում է թեկնածուների և կուսակցությունների գրանցման համար նախատեսված վերջին օրվան հաջորդող օրը և վերջանում է քվեարկությունից մեկ օր առաջ: Քվեարկության և նրան նախորդող օրը նախընտրական քարոզչությունն արգելվում է:

Արգելվում է նաև նախընտրական քարոզչություն և ցանկացած բնույթի քարոզչական նյութ տարածել բարեգործական կազմակերպություններին, օտարերկրյա քաղաքացիներին և կազմակերպություններին:

Արգելվում է սահմանադրական կարգը բռնի տապալելու, ռասայական, ազգային, կրոնական գերակայության քարոզումը, ռասայական, ազգային կամ կրոնական թշնամանք առաջացնող նյութերի հրապարակումն ու տարածումը:

Թեկնածուներին և կուսակցություններին արգելվում է անձամբ կամ որևէ այլ կերպ քաղաքացիներին անհատույց կամ արտոնյալ պայմաններով տալ (խոստանալ) դրամ, սննդամթերք, արժեթղթեր, ապրանքներ կամ մատուցել (խոստանալ) ծառայություններ:

3. ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՁԵՎԵՐԸ ԵՎ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Նախընտրական քարոզչության ձևերը: Նախընտրական քարոզչությունը կարող է անցկացվել ՁԼՄ-ներով, հրապարակային միջոցառումների ձևով (ժողովներ, հանդիպումներ ընտրողների հետ, հրապարակային քննարկումներ, բանավեճեր, հանրահավաքներ, երթեր, ցույցեր կազմակերպելու միջոցով), տպագիր նյութեր հրապարակելու, ձայնագրված և նկարահանված նյութեր տարածելու միջոցով: Հեռուստատեսությամբ և ռադիոյով, լրատվության այլ միջոցներով քարոզչությունն իրականացվում է հրապարակային

բանավեճերի, կլոր սեղանների, մամուլի ասուլիսների, հարցազրույցների, քաղաքական գովազդի և օրենքով չարգելված այլ ձևերով:

Անվճար զանգվածային լրատվամիջոցներ	Պետությունը, ըստ կենտրոնական հանձնաժողովի սահմանած ժամանակացույցի, թեկնածուներին երաշխավորում է հավասար պայմաններ՝ անվճար օգտվելու հանրային ռադիոյից և հեռուստատեսությունից, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների լրատվամիջոցներից: Նախընտրական քարոզչությանը վերաբերող ռադիոհաղորդումները և հեռուստահաղորդումները եթեր հեռարձակվելիս ձայնագրվում ու տեսագրվում են և պահպանվում առնվազն վեց ամիս:
Վճարովի զանգվածային լրատվամիջոցներ	Թեկնածուներն ավելի լայն ճանաչում ձեռք բերելու նպատակով կարող են օգտվել նաև ՁԼՄ-ների վճարովի ծառայություններից: Ցավոք, սրանք շատ թանկ արժեն, և ոչ բոլոր թեկնածուները կարող են օգտվել այդ ծառայություններից: Ընտրական հանձնաժողովը որոշում է վճարովի գովազդի սակագները և ծավալը: Թույլատրվում է նաև ուղիղ եթեր դուրս գալը:
Հրապարակային հանդիպումներ	Հրապարակային բանավեճերը, կլոր սեղանները, մամուլի ասուլիսները, հարցազրույցները և նմանատիպ հավաքները քարոզարշավների ժամանակ ընդունված և տարածված եղանակներ են: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները հավասար հիմունքներով և անվճար տրամադրում են անհրաժեշտ տարածքներ նախընտրական քարոզչության նպատակով կազմակերպվող հանդիպումների, հանրահավաքների, ժողովների համար: Արգելվում է պատմամշակութային շինությունները և դրանց հարող տարածքները վերոհիշյալ նպատակներով տրամադրելը:
Հեռախոսային և այլ կապի միջոցներ	Շատ հարմար միջոց է նաև հեռախոսի միջոցով քարոզարշավը, երբ ընտրողի հետ կարող ես կապվել արագ, անմիջականորեն և զրուցել հանգիստ պայմաններում: Հեռախոսազանգերը կատարում են կամավորները, տվյալ կուսակցության անդամները կամ թեկնածուի համակիրները: Ի տարբերություն քարոզարշավի այլ միջոցների՝ հեռախոսազանգերն անմիջական կապ են ապահովում հենց թեկնածուի ընտրատարածքի ընտրողների հետ: Զարգացած երկրներում քարոզարշավներում նկատելի դեր ունեն ինտերնետը և էլեկտրոնային փոստը: Հայաստանում դրանք դեռևս լայն տարածում չեն գտել: Հասկանալի է, որ ընտրողների մեծ մասը կամ չունի համակարգիչ, կամ էլ չի կարող օգտվել այդ ծառայությունից:
Այցելություն-հանդիպումներ ընտրողների հետ	Հանդիպումները նպատակ ունեն նպաստել թեկնածուի ճանաչմանը, ընդգծել ընտրողների կարևորությունը, այսինքն՝ թեկնածուն, արժևորելով նրանց դերը, անձամբ այցելել է իրենց: Հանդիպումները, մանավանդ մարզերում, լինում են կարճ և նախատեսվում են մեկը մյուսի հետևից: Մեկ օրում թեկնածուն կարող է այցելել մի քանի բնակավայր:
Պաստառներ, տեղեկատվական թերթիկներ	Թերևս քարոզարշավ իրականացնելու ամենատարածված միջոցը տեղեկատվական թերթիկների և պաստառների տպագրումն ու տարածումն է: Այս հանգամանքը կարելի է բացատրել այն փաստով, որ դրանք ավելի էժան արժեն, և իսկ

	տարածումը իրականացնում են կամավորները: Կուսակցությունները և թեկնածուներն իրավունք ունեն հավասար հիմունքներով, անարգել հրապարակել, տարածել պաստառներ, թերթիկներ և քարոզչական այլ տպագիր նյութեր: Համայնքի ղեկավարը պարտավոր է համայնքի տարածքում առանձնացնել հատուկ տեղեր քարոզչական պաստառները փակցնելու համար: Արգելվում է քարոզչական պաստառի վրա ՀՀ զինանշանը կամ դրոշը պատկերելը: Արգելվում է անանուն քարոզչական տպագիր նյութեր տարածելը:

Նախընտրական քարոզչական գովազդներ: Ժամանակակից ընտրություններում լայնորեն օգտագործվում են քաղաքական գովազդները: Նախընտրական քարոզչության ժամանակ դիմում են նույն ռազմավարությանն ու մոտեցումներին, ինչ օգտագործվում են առևտրային գովազդներում: Եթե առևտրային գովազդում առաջարկվում են ապրանքներ և ծառայություններ, ապա քաղաքական քարոզարշավում ընտրողին կոչ է արվում «գնել» այն գաղափարախոսությունը, արժեքները, որոնք ներկայացնում է տվյալ թեկնածուն կամ կուսակցությունը: Քարոզչության գովազդային մեթոդները բազմաթիվ են:

Կարգախոսներ: Շուկայագիտության մեջ ապացուցված է, որ կարգախոսների հաճախակի կրկնությունը նպաստում է ապրանքի ճանաչմանը և, հետևաբար, դրա ձեռքբերմանը: Ինչպե՞ս կարելի է պատկերացնել որևէ շարժում, քարոզչություն առանց կարգախոսների: Եկե՛ք վերհիշենք պատմությունից մի քանի առավել հիշարժան կարգախոսներ. «Ազատություն, հավասարություն, եղբայրություն», «Պրոլետարնե՛ր բոլոր երկրների, միացե՛ք», «Պայքար, պայքար մինչև վերջ»: Կարգախոսներ կարելի է մտաբերել նաև քարոզարշավներից. «Հին ընկերները չեն դավաճանում», «Կառուցենք և պաշտպանենք», «Իմ կուսակցությունը իմ ժողովուրդն է»:

Տրամաբանական կոչեր: Այսպիսի կոչեր ընդհանրապես հանդիպում են ատամի մածուկներ, լվացքի փոշի, դեղորայքներ առաջարկելու ժամանակ: Այստեղ տանտիրուհին կարող է ի ցույց դնել գովազդվող ապրանքը, ի հակադրություն իր մրցակցի, և ցույց տալ, թե ինչպես նույն աղտոտ հագուստի կեղտաբծերը գովազդվող ապրանքն ավելի լավ է մաքրել: Նույն նշանակությունն ունեն ընտրական քարոզչության ժամանակ օգտագործվող տրամաբանական կոչերը: Օրինակ՝ ներկայացվում է թեկնածուի անցած քաղաքական ճանապարհը, որպեսզի եզրահանգվի, որ թեկնածուն փորձառու է, գրագետ և կարող է արհեստավարժորեն կատարել իր պարտականությունները, եթե ընտրվի տվյալ պաշտոնում:

Զգացմունքային կոչեր: Ինչպես հուշում է հենց անվանումը, այստեղ հնարը ընտրողի (սպառողի) հոգեբանության վրա ազդելն է: Զգացմունքային կոչերի կարելի է հանդիպել ամենուր, և ընտրարշավները բացառություն չեն: Մենք հաճախ ենք հանդիպում գովազդների, որտեղ թեկնածուին ներկայացնում է ինչ-որ անվանի դերասան, գրող, մտավորական: Կարող է ներկայացվել թեկնածուի հանդիպումը ժողովրդի մի հատվածի հետ, որտեղ ընտրողները մեծ ջանասիրությամբ գովաբանում են իրենց հյուր-թեկնածուին: Կան այդպիսի մի քանի մեթոդներ:

Վկայություններ	Նվագախմբային վագոն	Համընդհանուր համակրանք
Հանրահայտ, հեղինակավոր մարդիկ պատմում են, թե ինչքան օգտակար կամ հաճելի է իրենց համար օգտվել տվյալ ապրանքից կամ ծառայությունից:	Գովազդի այս տեսակում կոչը հետևյալն է. «Բոլորը օգտագործում և սիրում են այս ապրանքը, դուք էլ միացեք նրանց»:	Հայտարարվում է, որ եթե դուք օգտագործեք տվյալ ապրանքը, ապա հաճելի կդառնաք ուրիշներին կամ նույնիսկ կարժանանաք նրանց համակրանքին:

Եթե մտաբերեք կամ ուշադրություն դարձնեք քաղաքական գովազդներին, անպայման կարող եք մատնանշել, թե որ հնարքն է օգտագործվում տվյալ գովազդում: Սակայն ուշադրությո՛ւն դարձրեք, որ մենք հաճախ ենք գովազդներում լսում կարգախոսներ, որոնք իրականում ոչ մի կապ չունեն առաջարկվող ապրանքի հետ: Օրինակ՝ զովացուցիչ ըմպելիքներ գովազդելու հայտնի կարգախոս է. «*Հավատա՛ ծարավիդ, վստահի՛ր ուժերիդ*»: Հասկանալի է, որ այս կարգախոսը բոլորովին կապ չունի գովազդվող ապրանքի հետ: Այդպիսին կարող է լինել նաև քաղաքական գովազդը:

Մտորումներ: *Հանդիպե՞լ եք այդպիսի քաղաքական գովազդի: Եթե այո, ապա վերհիշե՛ք այն: Մտորե՛ք վրաց գրող Չաբուա Էջիբիի հետևյալ դատողության շուրջ. «Արդեն վաղուց նկատվում է, որ պետությունը կառավարելուն իրենց արժանի և կոչված են համարում ավելի շատ միջակ և ոգով ցածր մարդիկ»:*

§ 6. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

«Բոլոր մարդիկ ծնվում են ազատ և հավասար՝ իրենց իրավունքներով և արժանապատվությամբ: Նրանք օժտված են բանականությամբ ու խղճով և պարտավոր են միմյանց վերաբերվել եղբայրության ոգով»
Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր

1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ

Ժողովրդավարության և մարդու իրավունքների միջազգայնացումը: Ժողովրդավարության և մարդու իրավունքների իրական պատմությունը սկզբնավորվեց երկրագնդի առաջին սահմանադրական ակտերի ընդունմամբ: Դրանից հետո՝ մինչև XX դ. սկիզբը, տեղի ունեցավ ժողովրդավարության և մարդու իրավունքների համընդհանրացում, այսինքն՝ տարածում աշխարհի այլ երկրներում: Պետությունների սերտ համագործակցությունը նպաստեց, որ առանձին երկրներ ընդօրինակեն մյուսների՝ ժողովրդավարությանը և մարդու իրավունքներին վերաբերող փորձը:

XX դ. առաջին կեսերից սկսվեց մարդու իրավունքների **միջազգայնացումը**, այսինքն՝ մարդու իրավունքների ամրագրումը պետությունների կնքած միջազգային պայմանագրերում: Նման զարգացման պատճառներից էին Երկրորդ աշխարհամարտի մարդկային աղետը, գաղութային համակարգի քայքայումը, որոնք նպաստեցին ժողովրդավարության ոլորտում միջազգային համագործակցության ընդլայնմանը, այդ թվում՝ ՄԱԿ-ի ստեղծմանը:

1945 թ. հոկտեմբերի 24-ին ուժի մեջ մտավ ՄԱԿ-ի կանոնադրությունը: Այդ օրը նշվում է որպես **Միավորված ազգերի կազմակերպության օր:** Հիմնադիր պետությունները ՄԱԿ-ի ստեղծման շարժառիթներ են համարել ապագա սերունդներին պատերազմներից զերծ պահելը, մարդու իրավունքների, մարդկային անհատի արժանապատվության նկատմամբ հավատի հաստատումը, տղամարդկանց և կանանց իրավահավասարությունը, ազգերի հավասարությունը և այլն:

ՄԱԿ-ի հիմնադրումը և պետությունների համագործակցությունը նպաստեց միջազգային իրավունքի արագ զարգացմանը, իսկ ժողովրդավարությունը և մարդու իրավունքները դարձան միջազգային աշխարհայացքի մի մասը: Դրա արդյունքը մարդու իրավունքներին նվիրված միջազգային պայմանագրերի կնքումն էր: Այնուհետև սկսվեց միջազգային իրավունքի հետադարձ ներգործությունն ազգային իրավական համակարգերի վրա: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրությունը ամրագրում է, որ միջազգային պայմանագրերը ՀՀ իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են: Եթե վավերացված միջազգային պայմանագրերում սահմանվում են այլ նորմեր, քան նախատեսված են օրենքներով, ապա կիրառվում են պայմանագրերի նորմերը:

Ժողովրդավարության և մարդու իրավունքների միջազգային երաշխիքների հասկացությունը: Ժողովրդավարության և մարդու իրավունքների միջազգային երաշխիքները միջազգային իրավունքով հիմնադրված, մարդու իրավունքների պահպանության և պաշտպանության նկատմամբ վերահսկողություն իրականացնող միջպետական կազմակերպություններն ու կառուցակարգերն են:

Չնայած մարդու իրավունքների ներպետական երաշխավորմանը և միջազգային ամրագրմանը, դրանց կայացման վիճակը գոհացուցիչ և իդեալական չէ:

Մտորումներ: *Իդեալական չէ նաև արդի աշխարհը: Ինչո՞ւ: Կատարյալ չէ՞ ինքը մարդը: Աշխարհի անկատարության ուրիշ էլ ինչ պատճառներ կարող եք նշել:*

Արդի աշխարհը խայտաբղետ է իր մշակութային, պատմական, կրոնական տարբերություններով: Որոշ հակաժողովրդավարական պետություններ չեն ճանաչում մարդու իրավունքները կամ բարեխիղճ չեն իրենց պարտավորությունները կատարելու հարցում: Աշխարհի շատ մասերում անտեղյակ են մարդու իրավունքներից, իսկ շատ ժողովուրդներ անհաղորդ են մարդու իրավունքների գաղափարին: Երկրագնդի բնակչության 7 տոկոսը գիտի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի մասին: Հետևաբար միջազգային հանրության առաջնահերթ խնդիր է ժողովրդավարության և մարդու իրավունքների մասին գիտելիքների տարածումը, մշակույթի արմատավորումը: Տեղեկացվածությունը երաշխիք է մարդու իրավունքների կենսագործման համար: **Մարդու իրավունքներից անտեղյակ մարդն անպաշտպան մարդ է**:

Ժողովրդավարության ու մարդու իրավունքների այս և բազում այլ հիմնախնդիրները լուծելու համար անհրաժեշտ է միջազգային հանրության սերտ համագործակցությունը, իսկ մարդու իրավունքներն ունեն միջազգային լուրջ երաշխիքների և պաշտպանության կարիք: Ժողովրդավարական երկրներում **յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների միջազգային պաշտպանության իրավունք:** Ներպետական իրավունքի կողմից ճանաչված այս իրավունքը մարդու իրավունքների կենսագործման կարևոր երաշխիքն է: Համաձայն մեր Սահմանադրության «Յուրաքանչյուր ոք ՀՀ միջազգային պայմանագրերին համապատասխան իրավունք ունի իր իրավունքների և ազատությունների պաշտպանության խնդրանքով դիմելու մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին»:

2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Միջազգային հանրությունը, ձգտելով ժողովրդավարության, մշակել և կնքել է մարդու իրավունքների միջազգային պայմանագրեր, ստեղծել է դրանց պաշտպանության համակարգեր, երաշխիքներ:

Միջազգային պայմանագրերը մարդու իրավունքների միջազգային իրավունքի հիմնական աղբյուրներն են, որոնց կնքումով մարդու իրավունքները դարձան համաշխարհային իրավական արժեք, վերածվեցին պարտադիր իրավական չափանիշների, ինչին պետք է ձգտեն բոլոր ժողովուրդները և պետությունները:

1948 թ. դեկտեմբերի 10-ին ընդունվեց ՄԱԿ-ի Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը: Այդ օրը նշվում է որպես **Մարդու իրավունքների օր:** Հռչակագիրը սկզբնավորեց մարդու իրավունքների միջազգային իրավունքը: Հռչակագիրը դիտարկվում էր որպես խնդիր, որին ձգտելու և դրանում ամրագրված իրավունքներն իրականացնելու էին բոլոր պետությունները: Հռչակագրի ելակետային դրույթներից մեկն այն է, որ մարդու իրավունքները համարվում են ազատության, արդարության, համընդհանուր խաղաղության հիմքը:

Հռչակագիրն առաջին միջազգային փաստաթուղթն էր, որը պարունակում է մարդու իրավունքների համընդգրկուն շրջանակը և ունի համընդհանուր նշանակություն: Սակայն պետք է նկատի ունենալ, որ Հռչակագիրը պարտադիր չէր այն կնքած պետությունների համար, այլ նրանց ներկայացված խորհրդատվական, բարոյական պահանջ էր:

Հռչակագրին բնորոշ թերությունները հաղթահարեցին 1966 թ. ընդունված Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը: Վերջինս ունի երկու լրացուցիչ արձանագրություն. 1) 1966 թ. արձանագրությունը, որը կարգավորում է Մարդու իրավունքների կոմիտեի կողմից գանգատների քննարկման կարգը, 2) 1989 թ. արձանագրությունը, որն ուղղված է մահապատժի վերացմանը:

Հռչակագիրը և երկու դաշնագրերն ամենից կարևոր, համընդհանուր փաստաթղթերն են՝ նվիրված մարդու իրավունքներին: Այդ պատճառով երեքին միասին անվանում են **Մարդու իրավունքների խարտիա կամ Մարդու իրավունքների մասին միջազգային բիլ:**

Դաշնագրերը, ի տարբերություն Հռչակագրի, պարտադիր են այն կնքած պետությունների համար, պարունակում են մարդու իրավունքների պաշտպանության կառուցակարգեր: Դրա շնորհիվ դաշնագրերը կնքած պետությունների քաղաքացիները հնարավորություն են ձեռք բերում օգտագործել դրանցով նախատեսված իրավունքները, քանի որ պետությունները պարտավոր են իրենց օրենսդրությունը համապատասխանեցնել դաշնագրերի պահանջներին: Այն անձինք, որոնց քաղաքական և քաղաքացիական իրավունքները խախտվել են, իրավունք ունեն դիմել իրավական պաշտպանության միջպետական միջոցների օգնությանը:

Ըստ գործողության տարածքի մարդու իրավունքներին վերաբերող միջազգային պայմանագրերը լինում են **համընդհանուր (համաշխարհային) և տարածաշրջանային:**

Համաշխարհային պայմանագրերը կնքվել են ՄԱԿ-ի շրջանակներում և դրանց մասնակցում երկրագնդի գրեթե բոլոր պետությունները: Ներկայումս դրանց քանակն անցնում է 100-ից: **Տարածաշրջանային պայմանագրերը** կնքվել են ինչ-որ տարածաշրջանի պետությունների միջև, իրենց գործողությունը տարածում են միայն երկրագնդի ինչ որ մասի վրա: Դրանց քանակն անցնում է 200-ից: Օրինակ՝ Մարդու իրավունքների և պարտականությունների ամերիկյան հռչակագիրը (1948թ.), Մարդու և ժողովուրդների իրավունքների աֆրիկյան խարտիան (1981թ.), Մարդու իրավունքների արաբական խարտիան (1994թ.) և այլն:

3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՄԱԿԱՐԳԸ

ՄԱԿ-ը համընդհանուր միջկառավարական միջազգային կազմակերպություն է, որն ապահովում է պետությունների միջև վեճերի կամ խնդիրների, ինչպես նաև մարդկությանը հուզող ցանկացած հարցի լուծման միջազգային կառուցակարգը:

Մարդու իրավունքների պաշտպանության ՄԱԿ-ի մարմինները լինում են **կանոնադրական** (այսինքն՝ ՄԱԿ-ի կանոնադրությամբ հիմնադրված) և **պայմանագրային:** Կանոնադրությամբ նախատեսված մարմիններն իրենց հերթին բաժանվում են **հիմնականի և օժանդակի:** Գլխավոր ասամբլեային մարդու իրավունքների հարցերով օգնելու համար ստեղծված են մի շարք օժանդակ մարմիններ, օրինակ՝ ապագաղութացման հատուկ կոմիտե, ընդդեմ ապարտհեյդի հատուկ կոմիտե և այլն:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների կանոնադրական մարմինները: Գլխավոր ասամբլեայում (ԳԱ) ներկայացված են ՄԱԿ-ի անդամ բոլոր պետությունները՝ մեկ ձայնով: Այն՝ որպես հիմնական խորհրդակցական մարմին, կարող է քննել ՄԱԿ-ի կանոնադրությամբ վերապահված ցանկացած հարց և ընդունել համաշխարհային կարծիքի կշիռ ունեցող խորհրդատվական որոշումներ: Մինչ այժմ ԳԱ-ն ընդունել է մարդու իրավունքների վերաբերյալ 80-ից ավելի փաստաթղթեր:

Անվտանգության խորհուրդը (ԱԽ) աշխարհի խաղաղության և անվտանգության համար պատասխանատու մարմին է՝ կազմված 15 անդամից: Նրանցից 5-ը վետոյի իրավունք ունեցող մշտական անդամներն են, իսկ 10-ը՝ ընտրվում են ԳԱ-ում՝ 2 տարի ժամկետով: ԱԽ-ի որոշումներից են կախված մարդու հիմնարար իրավունքները՝ կյանքը, անվտանգությունը, զարգացումը: Մարդու իրավունքները ոտնահարող պետության նկատմամբ ԱԽ-ն կիրառում է տնտեսական սանկցիաներ, դիվանագիտական կապերի խզում, ՄԱԿ-ի զինված ուժերի օգտագործում, բեռնարգելք (էմբարգո) և այլն:

Մտորումներ: *Գիտե՞ք, թե որ երկրներն են ԱԽ-ի 5 մշտական անդամ: Ինչո՞ւ հենց նրանք և այն էլ՝ վետոյի իրավունքով: Ճի՞շտ եք համարում դա: ԱԽ-ի ի՞նչ ձևաչափ կառաջարկեիք:*

Տնտեսական և սոցիալական խորհրդի (ՏՍԽ) գործունեությունը հատուկ նշանակություն ունի, քանի որ նա մշակում է մարդու իրավունքների հարգանքը և պահպանումը խթանող հրահանգներ, համակարգում է ՄԱԿ-ի աշխատանքը՝ ուղղված հետամնաց երկրների տնտեսական զարգացմանը, խտրականության վերացմանը, բնակչության աճի կարգավորմանը, հանցավորության ու թմրանյութերի ապօրինի շրջանառության կանխմանը, էկոլոգիական ճգնաժամի հաղթահարմանը:

Մտորումներ: *Ո՞րն է թվարկված հիմնախնդիրների կապը ժողովրդավարության և մարդու իրավունքների հետ: Ի՞նչ գիտեք դրանց մասին: Ի՞նչ է ժողովրդագրական՝ բնակչության աճի ճգնաժամը: Կարո՞ղ է երկրագնդի բնակչությունը անվերջ աճել: Ո՞րն է այդ հիմնախնդրի լուծումը:*

ՏՍԽ-ի շրջանակներում գործող կարևոր մարմիններն են՝

1. Մարդու իրավունքների հանձնաժողովը, որը նախապատրաստում է միջազգային փաստաթղթերի նախագծերը. անցկացնում է մարդու իրավունքներին նվիրված հետազոտություններ և հանրային լսումներ դրանց խախտումների մասին՝ ընդունելով դիմումներ խախտումների վերաբերյալ, քննարկում է տարբեր երկրներում մարդու իրավունքների վիճակը: Հանձնաժողովի հատուկ զեկուցողները հետևում են առանձին երկրներում մարդու իրավունքների վիճակին: Ունի նաև հատուկ թղթակիցներ, որոնք տեղերում ուսումնասիրում են մարդու իրավունքների խախտումները:

2. Կանանց վիճակի հանձնաժողովը, որը պատրաստում և ՏՍԽ-ին է ներկայացնում կանանց տնտեսական, քաղաքական, անձնական և կրթության իրավունքների մասին խորհրդատվությունները և զեկույցները:

ՄԱԿ-ի քարտուղարությունը՝ Գլխավոր քարտուղարի ղեկավարությամբ կարևոր դեր է խաղում ՄԱԿ-ի ընդունած որոշումների, այդ թվում՝ մարդու իրավունքների վերաբերյալ, կատարման գործում: Այն ղեկավարում է ՄԱԿ-ի բոլոր կառույցների գործունեությունը և սպասարկում նրանց ծրագրերի կենսագործումը: Մարդու իրավունքների պաշտպանության հարցերը վարում են երկու գրասենյակները՝ մարդու

իրավունքների և փախստականների հարցերով գերագույն հանձնակատարների: Քարտուղարության կազմում կա Սոցիալական զարգացման և մարդասիրական հարցերի կենտրոն, որն զբաղվում է կանանց, երիտասարդության, տարիքավոր և ծեր մարդկանց, հաշմանդամների և աշխատավոր միգրանտների իրավունքների պաշտպանության հարցերով:

Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը համակարգում և ղեկավարում է ՄԱԿ-ի մարդու իրավունքներով զբաղվող բոլոր մարմինների աշխատանքները: Նա հաշվետու է Գլխավոր քարտուղարին և ԳԱ-ին:

ՄԱԿ-ի միջազգային դատարանը կազմված է 15 անկախ դատավորից, որոնց ընտրում են ԳԱ-ն և ԱԽ-ն՝ միջազգային իրավունքի ասպարեզում ճանաչված և բարձր բարոյական նկարագրի տեր իրավագետներից՝ 9 տարի ժամկետով: Նստավայրը Հագան է:

Դատարան կարող են դիմել միայն պետությունները: ՄԱԿ-ի անդամ-պետությունների համար դատարանի ընդունած որոշումները պարտադիր են: Պետությունները դատարանին դիմում են նաև մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող հարցերով: Այսպես՝ Դատարանը քննում է մարդկության դեմ ուղղված հանցագործությունների՝ ցեղասպանության, ապարտհեյդի դեպքերը: Դատարան դիմելու առիթ է նաև ՄԱԿ-ի անդամ-պետությունների կնքած պայմանագրերի մեկնաբանությունը, այն դեպքում, երբ վեճի կողմ պետությունների մոտ առկա է դրանց տարընթերցություն: Դատարան են դիմում նաև ԳԱ-ն կամ ԱԽ-ն խորհրդատվություն ստանալու նպատակով: Օրինակ՝ որևէ միջազգային պայմանագրի մեկնաբանման, ՄԱԿ-ում որոշակի պաշտոնների սահմանման և այլ հարցերով:

ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային մարմինները ստեղծվել և գործում են մարդու իրավունքների առանձին պայմանագրերի հիման վրա: Օրինակ՝ տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների կոմիտեն ստեղծվել է համանուն դաշնագրի հիման վրա: Այդպիսին է նաև **Մարդու իրավունքների կոմիտեն,** որը ստեղծվել է Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին դաշնագրի հիման վրա: Կոչված է հետազոտել դաշնագրի մասնակից պետությունների զեկույցները դաշնագրով ամրագրված իրավունքների վիճակի վերաբերյալ: Լուծում է նաև մասնակից պետությունների վեճերը դաշնագրից բխող պարտավորությունների շուրջ: Կոմիտե կարող է դիմել նաև անհատը՝ պայմանով, եթե խախտվել է դաշնագրով նախատեսված նրա իրավունքը, և սպառվել են ներպետական պաշտպանության բոլոր միջոցները: Քննելով անհատի դիմումը՝ կոմիտեն իր կարծիքն ուղարկում է համապատասխան պետությանը և դիմողին:

ՄԱԿ-ի պայմանագրային մարմիններից են՝ Ռասսայական խտրականության վերացման կոմիտեն, Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավուքների կոմիտեն, Կանանց նկատմամաբ խտրականության վերացման կոմիտեն: Վերջինս ստեղծվել է Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին համաձայնագրի հիման վրա: Կազմված է 4 տարով ընտրված 23 փորձագետից: Հետազոտում է մասնակից պետությունների 4 տարին մեկ կամ կոմիտեի պահանջով ներկայացված զեկույցները կանանց իրավունքների կենսագործման վերաբերյալ: Մասնակից պետության ուշադրությունն է հրավիրում խախտումների վրա, տալիս է դրանց վերացմանն ուղղված խորհուրդներ: Անհատական գանգատներ չի ընդունում:

4. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ

Հայաստանը ներգրավված է մարդու իրավունքների ապահովման, դրանց պաշտպանության չորս համակարգերում, որոնցից առաջինը ՄԱԿ-ի համընդհանուր համակարգն է: Մնացած երեքը տարածաշրջանային համակարգեր են:



Մարդու իրավունքների եվրոպայի խորհրդի համակարգը: Այս համակարգը հիմնված է **Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական համաձայնագրի** (1950 թ.) վրա: Այս համակարգի կարևորագույն փաստաթղթերից են նաև Խոշտանգումները և անմարդկային, նվաստացնող վերաբերմունքը և պատիժը կանխելու մասին եվրոպական համաձայնագիրը (1987 թ.), Եվրոպական սոցիալական խարտիան (1996 թ.), Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային համաձայնագիրը (1995 թ.):

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան ամրագրելով եվրոպական դատարանի կողմից պաշտպանվող իրավունքները, դրանց պաշտպանության համար հիմնադրել է **Մարդու իրավունքների եվրոպական դատարան** (այսուհետ Դատարան): Դատարանը մշտական գործող է՝ տեղակայված Ստրասբուրգում: Դատավորների քանակը հավասար է համաձայնագրի մասնակից պետությունների՝ Եվրոպայի խորհրդի (ԵԽ) անդամների քանակին: Դատավորներն ընտրվում են ԵԽ-ի խորհրդարանական համաժողովի կողմից՝ 6 տարի ժամկետով: Դատարանի մասին տես www.echr.coe.int ինտերնետային կայքում:

Եվրոպական դատարան դիմելու պայմանները: Անհատը կարող է դիմում ներկայացնել Դատարան, եթե համարում է, որ տուժել է Համաձայնագրում ամրագրված իրավունքների ոտնահարումից (պիտի հստակ նշվի հոդվածը, որն ըստ դիմողի խախտվել է): Մինչև դիմումը ներկայացնելն

անհրաժեշտ է նախապես սպառել ներքին պաշտպանության միջոցները տվյալ պետությունում: Պետք է պահպանել վաղեմության ժամկետը՝ պետության կայացրած վերջին որոշման օրից պետք է անցած լինի 6 ամսից ոչ ավել:

Դիմելու կարգը և դիմումի ընդունելիության պայմանները: Դիմումը չի կարող լինել անանուն, կրկնել նախկինում Դատարանի կողմից քննված գանգատը կամ լինել միջազգային քննության այլ ընթացակարգի առարկա: Դիմումը պետք է լինի հիմնավորված. կցվում են ապացույցներ Համաձայնագրի հոդվածի խախտման վերաբերյալ:

Դիմումի ուղարկման հասցեն *The Registrar* *European Court of Human Rights* *Council of Europe* *F-67075 Strasbourg Cedex*	*Դիմելու ձևի այլ մանրամասներին կարող եք ծանոթանալ Հայաստանում Եվրոպայի խորհրդի տեղեկատվական գրասենյակի www.echr.coe.am ինտերնետային էջում:*

Եվրոպական դատարանում գործի քննության կարգը: Առաջին հերթին Դատարանը լուծում է դիմումների ընդունելիության հարց: Օրինակ՝ վերաբերում է այն Համաձայանագրով ամրագրված իրավունքին: Այնուհետև Դատարանը երկու կողմերին առաջարկում է համաձայնության գալ և կարգավորել խնդիրը: Բարեկամական լուծում չգտնելու դեպքում Դատարանը քննում և լուծում է գործը ըստ էության:

Դատարանը ոչ թե վերացնում է ազգային մարմինների ակտերը, այլ որոշում հատկացնել արդար դրամական փոխհատուցում: Նրա որոշումները իրավունքը խախտած պետության համար պարտադիր են:
ԵԽ-ի նախարարների կոմիտեն՝ կազմված մասնակից պետությունների արտաքին գործերի նախարարներից, իրականացնում է հսկողություն Դատարանի վերջնական որոշումների կատարման վրա:

Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպություն (ԵԱՀԿ): Ժողովրդավարությունը և մարդու իրավունքների պաշտպանությունը կարևոր տեղ է զբաղեցնում ԵԱՀԿ-ի գործունեության մեջ: Նրա կազմի մեջ մտնում են եվրոպական բոլոր պետությունները, Կանադան և ԱՄՆ-ը: Այս համակարգի հիմնադիր փաստաթուղթը **Հելսինկյան եզրափակիչ ակտն է** (1975 թ.), որը սկզբնավորեց Հել-սինկյան հասարակական իրավապաշտպան շարժումը: Այդ ակտը սահմանում է անդամ պետությունների համագործակցության ուղղությունները և ձևերը՝ խաղաղության և անվտանգության, ինչպես նաև մարդու իրավունքներին վերաբերող տարբեր ոլորտներում: Եզրափակիչ ակտն անդամ պետությունների հարաբերությունները կանոնակարգում է 10 սկզբունքների հիման վրա, որոնցից 7-րդը մարդու իրավունքների հարգման սկզբունքն է:

ԵԱՀԿ-ի բոլոր փաստաթղթերը անդամների համար խորհրդատվական են: Բայց ստանձնած պարտավորության ոտնահարումը խախտող պետության համար կարող է ունենալ անբարենպաստ քաղաքական հետևանքներ: Հիմնական մարմինը Մշտական խորհուրդն է (Վիեննա), որը պարբերաբար անցկացնում է քաղաքական քննարկումներ և ընդունում որոշումներ:

ԵԱՀԿ-ի բազմակողմ գործունեությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ արդի աշխարհում խաղաղության և անվտանգության պայմանը մարդու իրավունքների, արժանապատվության համընդհանուր հարգանքն է: Համագործակցության ուղղություններից են մարդու իրավունքները, կրթությունը, տեղեկատվությունը,

մշակույթը, սպորտը, որոնք լուրջ ներդրում են Եվրոպայում խաղաղության գործում: ԵԱՀԿ անդամները պարտավոր են ապահովել մարդու ազատ տեղաշարժվելու իրավունքը, նպաստելու ընտանիքների վերամիավորմանը, տուրիզմի զարգացմանը:

Մարդու իրավունքների Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) համակարգը: ԱՊՀ-ի շրջանակներում կնքվել և գործում են Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների մասին համաձայնագիրը (1995 թ.), Փախստականներին և հարկադրաբար վերաբնակեցվածներին օգնության մասին համաձայնագիրը (1993 թ.), Ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց իրավունքների ապահովման համաձայնագիրը (1994 թ.):

5. ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Միջազգային մարդասիրական իրավունքի հասկացությունը: Մարդկության պատմությունն անընդհատ պատերազմների պատմություն է, քան թե կառուցման ու բարգավաճման: Պատերազմը մեծ վնաս է հասցնում բախվող կողմերի բնակչության կյանքին, գույքին, այլ արժեքներին: Միջազգային իրավունքը պատերազմը չի արգելում, սակայն չի խրախուսում: Եթե իրավունքը չի կարողացել կանխել պատերազմը, ուրեմն ի՞նչ՝ իրավացի էր Ցիցերոնը ասելով, թե «**Օրենքները լռում են, երբ զենքերն են շաչում**»: Անշուշտ, ոչ, գործում է մարդասիրական իրավունքը:

Մարդասիրական իրավունքը միջազգային իրավունքի այն ճյուղն է, որը ուղղված է ռազմական իրավիճակներում անհատի պաշտպանությանը, ռազմական գործողությունների պատճառած տառապանքների և զրկանքների թեթևացմանը:

Մարդասիրական իրավունքի հիմնական աղբյուրներն են՝ Գործող բանակներում վիրավորների և հիվանդների վիճակի բարելավման մասին (1949 թ.), Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին (1949.), Պատերազմի ժամանակ քաղաքացիական բնակչության պաշտպանության մասին (1949 թ.), Միջազգային զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին (1977 թ.), Միջազգային բնույթ չկրող զինված ընդհարումների զոհերի պաշտպանության մասին (1977 թ.):

Մարդու իրավունքների միջազգային իրավունքը պաշտպանում է բոլոր մարդկանց իրավունքները՝ մշտապես և ամենուրեք: Միջազգային մարդասիրական իրավունքը ձգտում է մեղմել պատերազմի հետևանքները, **առաջին**՝ սահմանափակելով պատերազմելու ձևերի և մեթոդների ընտրությունը, **երկրորդ**՝ պատերազմող կողմերին պարտավորեցնելով խնայել ռազմական գործողություններին չմասնակցած կամ այլևս չմասնակցող (շարքից դուրս եկած զինվորականներ) անձանց:

Մտորումներ: *XX դարը պատերազմների մասշտաբներով աննախադեպ էր: XXI դարը մեզ դրել է երկընտրանքի առաջ. կա՛մ խաղաղություն, կա՛մ մարդկության կործանում: Ինչո՞ւ: Արդյո՞ք անխուսափելի են պատերազմները: Մենք ևս պատերազմում էինք հանուն Ղարաբաղի: Լինո՞ւմ են արդյոք պատերազմները արդարացի և անարդարացի:*

Մարդասիրական իրավունքի հիմնական նորմերը

- Մարտի ընթացքում շարքից դուրս եկած, ռազմական գործողություններին անմիջական մասնակցություն չունեցող անձինք ունեն կյանքի, ֆիզիկական և

բարոյական անձեռնմխելիության իրավունք: Նրանք պետք է արժանան պաշտպանության և մարդասիրական վերաբերմունքի:

- Արգելվում է սպանել կամ հաշմություն պատճառել գերի հանձնված և ռազմական գործողություններին այլևս չմասնակցող հակառակորդին:
- Վիրավորներին, հիվանդներին պետք է վերցնել և օգնել: Պաշտպանված են նաև բուժանձնակազմը, բժշկական հաստատությունները, փոխադրամիջոցները և գույքը: Կարմիր խաչի (Կարմիր մահիկի) խորհրդանիշը պաշտպանության տարբերանշանն է և պետք է հարգվի:
- Գերված մարտիկները և հակառակորդի իշխանության ներքո գտնվող քաղաքացիական անձինք ունեն կյանքի, արժանապատվության, անձնական իրավունքների և համոզմունքների հարգանքի, իրենց ընտանիքների հետ նամակագրության, օգնություն ստանալու իրավունք:
- Յուրաքանչյուր ոք ունի հիմնական դատական երաշխիքների իրավունք: Ոչ ոք պատասխանատու չէ ուրիշի գործողությունների համար: Ոչ ոք չպետք է ենթարկվի ֆիզիկական կամ հոգեբանական խոշտանգումների, մարմնական պատիժների, դաժան կամ նվաստացուցիչ վերաբերմունքի:
- Արգելվում է ավելորդ ավերածություններ և չափից մեծ տառապանքներ պատճառող զենքերի կամ պատերազմելու եղանակների կիրառումը:
- Պատերազմող կողմերը մշտապես պետք է տարբերակեն մարտիկներին քաղաքացիական բնակչությունից, որպեսզի խնայեն նրան: Քաղաքացիական անձինք հարձակման չպետք է ենթարկվեն: Հարձակումը պետք է ուղղվի միայն ռազմական օբյեկտների վրա:

***Հարցում շրջապատին**: 5 տղամարդու, ովքեր ծառայել են բանակում ենթարկե՛ք հարցման միջազգային մարդասիրական իրավունքի հիմնական նորմերի իմացության հարցի շուրջ (տեղյակ են, մասնակի տեղյակ են, անտեղյակ են): Ստացված արդյունքները քննարկե՛ք դասարանում:*

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) անկողմնակալ, չեզոք, անկախ ոչ կառավարական կազմակերպություն է, որն իրականացնում է պատերազմի և ներպետական զինված բախումների ընթացքում տուժածների կյանքի և արժանապատվության պաշտպանությունը և նրանց օգնության ձեռք մեկնելու առաքելությունը: Հիմնադրվել է 1803 թ. Ժնևի 5 քաղաքացիների կողմից և հիմք է դրել Կամիր խաչի և Կարմիր մահիկի միջազգային շարժմանը: ԿԽՄԿ–ի առաքելությունը և հանձնառությունը հիմնված է Ժնևյան համաձայնագրերի վրա:

ԿԽՄԿ-ի գործունեության ուղղություններն են.

- Վիրավոր, հիվանդ, նավաբեկյալ, գերության մեջ գտնվող զինվորների պաշտպանություն: ԿԽՄԿ-ի պատվիրակները այցելում և պարզում են գերիների ապրելու պայմանները, նրանց հետ վարվելակերպը, և եթե անհրաժեշտ է միջնորդում են պետությանը բարելավելու նրանց վիճակը:
- Քաղաքացիական բնակչության, այդ թվում՝ օպուկացված, պաշտպանություն:

- Անհայտ կորածների որոնում, ռազմական բախման հետևանքով բաժանված ընտանիքների միավորում, նամակագրության հանձնում:
- Պատերազմի հետևանքով տուժած բնակչության օգնություն՝ նրանց սնունդ, դեղորայք և այլ օգնություն հասցնելով:
- Մեկնաբանում, հստակեցնում, զարգացնում ու տարածում է միջազգային մարդասիրական իրավունքը:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

միջազգային պայմանագիր / լրացուցիչ արձանագրություն / կանոնադրական և պայմանագրային մարմին / տնտեսական սանկցիա / էմբարգո / ՄԱԿ-ի քարտուղարություն / ՄԱԿ-ի միջազգային դատարան / մարդու իրավունքների կոմիտե / մարդու իրավունքների եվրոպական դատարան / վաղեմության ժամկետ / բարեկամական լուծում / Կարմիր մահիկ / ԿԽՄԿ:

Պատասխանե՛ք հարցերին.

1. Ի՞նչ է մարդու իրավունքների միջազգայնացումը:
2. Ինչո՞ւ են անհրաժեշտ մարդու իրավունքների միջազգային երաշխիքները:
3. Ի՞նչ է մարդու իրավունքների միջազգային պաշտպանության իրավունքը:
4. Ինչո՞վ էին տարբերվում Մարդու իրավունքների համաընդհանուր հռչակագիրը և 1966 թ. երկու դաշնագրերը:
5. Հայաստանը մարդու իրավունքների ինչպիսի՞ համակարգերում է ընդգրկված:
6. Ի՞նչպես են պաշտպանում մարդու իրավունքները ՄԱԿ-ի ԳԱ-ն և ԱԽ-ն:
7. Ո՞վ է Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարը:
8. ՄԱԿ-ի մարդու իրավունքների պայմանագրային ինչպիսի՞ մարմիններ գիտեք:
9. Ինչպե՞ս է մարդու իրավունքների կոմիտեն պաշտպանում մարդու իրավունքները:
10. Ի՞նչ է ԵԱՀԿ-ն և ինչպե՞ս է նա առնչվում մարդու իրավունքների հետ:
11. Ի՞նչ է միջազգային մարդասիրական իրավունքը:
12. Միջազգային մարդասիրական իրավունքի ի՞նչ նորմեր գիտեք:

Պատրաստե՛ք զեկուցում

Ուսուցչի բաշխմամբ պատրաստեք զեկուցումներ հետևյալ թեմաներով. «Հելսինկյան Եզրափակիչ ակտը և դրանում ամրագրված միջազգային իրավունքի սկզբունքները», «Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայում ամրագրված իրավունքները», «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը», «Տնտեսական, սոցիալական ու մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը», «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը»:

Հրավեր կամ այցելություն

Ըստ հնարավորության դասարան հրավիրեք որևէ միջազգային կազմակերպության աշխատակցի կամ կազմակերպեք այցելություն նրա գրասենյակ ժողովրդավարության և մարդու իրավունքների ոլորտում նրա գործունեությանը ծանոթանալու համար: Եթե դա հնարավոր չէ այցելեք հետևյալ ինտերնետային կայքերը. Եվրոպայի խորհուրդ՝ http://www.coe.int, http://www.coe.fr/youth/home.htm, http://www.humanrights.coe.int, Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ

պայքարի եվրոպական հանձնաժողով՝ http://www.ecri.coe.int, Կտտանքների կանխարգելման եվրոպական հանձնաժողով՝ http://www.cpt.coe.int, և այլ կայքեր:

Գործնական աշխատանք: Դասարանի Սահմանադրությամբ սահմանված կարգով անցկացրե՛ք ձեր դասարան-պետության դատարանի անդամների, դասարանի դատախազի և մարդու իրավունքների պաշտպանի ընտրությունները:

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Եթե ուզեն կամքով արի ու աշխարհի հրով վառված –

ինչեր միայն չեն կատարի ամբոխները խելագարված...

Ե. Չարենց (1897-1937)

1. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքականություն բառը ծագել է հունարեն polis – «քաղաք» կամ politike - «պետական և հասարակական գործեր»: «Քաղաքականություն» հասկացության ամենահին և պարզ մեկնաբանումը նշանակում է՝ պետության կառավարման արվեստ, այսինքն՝ պետության ներքին և արտաքին նպատակների իրականացման եղանակ: Ինչպես տեսնում ենք, սկզբնապես քաղաքականությունը հանգում էր պետության որպես կազմակերպության գործունեության, որն իրականացնում էր իր տարածքի մենաշնորհային օրինական կառավարումը: Պետությունը որպես իշխանության կրող և սուբյեկտ մենակ բաշխում էր արժեքները և պաշարները: Սակայն արդի ժամանակաշրջանի քաղաքացիական հասարակության մեջ քաղաքականությունը միայն պետության մենաշնորհը չէ:

Հասարակության մեջ և՛ համերկրային, և՛ տեղական մակարդակներում առաջանում են բազում խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Այդ խնդիրների մի մասը վերաբերում է մեզանից յուրաքանչյուրի սեփական, մասնավոր կյանքին: Օրինակ՝ գնել մեքենա, թե բնակարան: Այդ խնդիրը լուծում եք Դուք, ձեր ցանկությանը և հնարավորությանը համապատասխան: Այդ պատճառով այն համարվում է մասնավոր գործ: Սակայն կան խնդիրներ, որոնք ունեն ընդհանուր նշանակություն, ազդում են բոլորիս կյանքի և բարեկեցության վրա: Այդպիսի խնդիրների լուծումն իրականացնում են մեր կողմից ընտրված հանրային մարմինները (տեղական, ինքնակառավարման, համապետական՝ Ազգային ժողով, նախագահ): Օրինակ ինչ-որ համայնքում չի կատարվում աղբահեռացման աշխատանքը կամ խորհրդարանի նախորդ ընտրությունները ցույց են տալիս, որ ընտրողների բավականին մեծ զանգված ընտրություններին չի մասնակցել: Ընտրական հարաբերությունները կարգավորվում են օրենքով, այսինքն՝ խնդրի կարգավորումն իրականացնում է պետությունը: Սակայն մինչև պետության կողմից վերջնական իրավական լուծումները՝ խնդիրը գիտակցվում է մարդկանց և նրանց կազմակերպությունների կողմից: Այնուհետև դրանք դառնում են հանրային

քննարկման առարկա, ընդ որում այդ քննարկումների ընթացքում մարդկանց և նրանց խմբերի կարծիքները կարող են բախվել: Լուծումներից մեկն այն է, որ ընտրություններին մասնակցելն օրենքով դարձվի պարտադիր: Այսպիսով հարցի լուծողը պետության օրենսդիր մարմինն է, որն այդ քաղաքական որոշմանը կարող է տալ օրինական ձև: Սակայն օրենսդիր մարմինը նման որոշում ընդունում է՝ մարդկանց և հասարակական խմբերի, կազմակերպությունների, կուսակցությունների կարծիքները հաշվի առնելով կամ նրանց մասնակցությամբ: Այս ամբողջ գործընթացը՝ սկսած հիմնախնդրի գիտակցումից, բարձրաձայնելուց մինչև դրա իրավական լուծումը պետության միջոցով համարվում է հանրային քաղաքականություն:

Այդպիսով՝ **հանրային քաղաքականությունը գործունեություն է՝ ուղղված հասարակական կյանքի կառավարմանը և կարգավորմանը՝ բարեկեցության, ազատության և սահմանադրական կարգերի հաստատման նպատակով:**

2. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Հանրային քաղաքականությունն իրականացվում քաղաքական համակարգի միջոցով: **Քաղաքական համակարգը գործող կառուցակարգ է, որի միջոցով լուծվում են քաղաքական կառավարման խնդիրները, ընդունվում են քաղաքական որոշումներ:**

Քաղաքական համակարգի գործողության համար շատ մեծ նշանակություն ունեն քաղաքական պահանջմունքները և դրանցով պայմանավորված շահերը: Հասարակական գիտակցության կողմից շահերի իմաստավորումն ունի մեծ նշանակություն: Օրինակ՝ ինչ որ հասարակության մեջ նրա անդամներին հուզող հարցերից է ընտրողների ընտրություններին չներկայանալը: Խորհրդարանի վերջին երկու ընտրություններում ներկայացել են միայն ընտրական ձայնի իրավունք ունեցողների 35 տոկոսը: Հարցը բարձրացվում է ՁԼՄ-ների կողմից: Քաղաքացիները սկսում են բաժանվել տարբեր տեսակետի կողմնակիցների. առաջին՝ ընտրություններին ներկայանալն ընտրողի իրավունքն է, երկրորդ՝ ընտրություններին ներկայանալը դարձնել պարտադիր և չներկայացողներին տուգանել: Ակնհայտ է, որ քաղաքական համակարգի անհրաժեշտ բաղադրատարր է դառնում հասարակության անդամների քաղաքական գիտակցությունը, որը տեղեկութավորված է ընտրական իրավունքի հարցերում և կարող է գնահատել այդ քաղաքական խնդիրը:

Խնդրի քննարկումն անհատներից անցնում է քաղաքական ուժերին: Սրանք ընտրության հարցին տալիս են նաև գաղափարական երանգ: Արտահայտելով իրենց տեսակետը կուսակցությունները կողմնորոշվում են իրենց գաղափարական,

քաղաքական, մարտավարական շահերից ելնելով: Օրինակ՝ կուսակցություններից մեկը, որի կողմնակիցները նախորդ ընտրություններում եղել են բավականին ակտիվ, գտնում է, որ ընտրություններին մասնակցելը պետք է մնա որպես իրավունք, որովհետև նա վստահ չէ, որ չմասնակցողները մասնակցության դեպքում ձայնը կտան իրեն: Այս դիքորոշումն ունի մարտավարական հիմնավորում: Մյուս կուսակցությունները գտնում են, որ ընտրություններին մասնակցելը օրենքով պետք է դարձնել պարտադիր:

Այսպիսով, ընտրություններին մասնակցելու խնդիրը հասունանալով վերածվում է ներքին քաղաքական հիմնահարցի: Հիմնահարցի սրումը պայմանավորված էր հասարակության անդամների և քաղաքական կազմակերպությունների շահերով: Ելնելով իրենց շահերից կուսակցությունները սկսում են քաղաքական քարոզչությունը, դրան տալով գաղափարական երանգավորում: Քարոզչությունն ուղղված է ապագա հանրաքվեում իրենց դիրքորոշման հաղթանակի ապահովմանը:

Այդ ամենը կատարվում է քաղաքական համակարգում, որի միջուկը պետությունն է: Կուսակցությունների խնդիրն է հանրաքվեով ընդունվելիք օրենքով ամրագրել իրենց համար նախընտրելի կարգը: Այդ ամրագրումը կատարվում է պետության միջոցով, որովհետև հարցը լուծվելու է պետության օրենսդիր մարմնի կողմից նշանակվող հանրաքվեով, իսկ որոշելու է ժողովորդը ձայների մեծանասնությամբ: Հանրաքվեի արդյունքում ընդունված քաղաքական որոշումն ունի օրենքի ուժ, այսինքն՝ օրենքը համապարտադիր և բարձրագույն ակտ է: Այսպիսով, ստացվեց, որ, ի վերջո, քաղաքական համակարգի միջուկը պետությունն է, որի շուրջ պտտվում են քաղաքացիների քաղաքական կազմակերպությունները և խմբերը՝ իրենց քաղաքական գաղափարախոսություններով և փորձում են անցնել պետական իշխանության գլուխ կամ մասնակցել դրա իրականացմանը:

Այս ամբողջ գործընթացում կարևոր նշանակություն ունեն նաև բնակչության և քաղաքական ուժերի քաղաքական գիտակցությունը և մշակույթը: Դրա հասունության աստիճանը, ակտիվությունը մեծ նշանակություն ունեն քաղաքական համակարգի արդյունավետ գործողության համար:

Քաղաքական համակարգի գործողությունը կարգավորվում է իրավական, քաղաքական ինչպես նաև բարոյական նորմերով: Այդ նորմերը սահմանված կամ ավանդաբար ձևավորված վարքագծի կանոններ են, որոնցով կարգավորվում կամ որոնց համաձայն ընթանում են քաղաքական հարաբերությունները, և որոնք գոյություն ունեն օրենքների, կանոնադրությունների, կուսակցությունների ծրագրերի, քաղաքական գործընթացները կարգավրող քաղաքական ավանդույթների ու ընթացակարգերի տեսքով:

Քաղաքական համակարգի սուբյեկտները չեն գործում ամենաթողության պայմաններում: Արդի դարաշրջանում քաղաքականությունն ընթանում է համաձայն սահմանադրական և օրենսդրական նորմերի, որոնք պարտադիր են քաղաքական կյանքի բոլոր մասնակիցների համար՝ լինի դա պետություն, կուսակցություն, քաղաքականությամբ զբաղվող քաղաքացի:

Կուսակցության քաղաքական ծրագիրը, որի կենսագործմանը ձգտում է նա, կարող է կենսագործվել միայն օրինական կարգով՝ ընտրությունների միջոցով իշխանության գլուխ անցնելով և այնուհետև իրավական ընթացակարգով կենսագործելով:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

մասնավոր կյանք / մարտավարական շահ / հանրային իշխանություն / հանրային կյանք / գերակա իշխանություն:

Պատասխանե՛ք հարցերին

9. Ի՞նչ է քաղաքականությունը:
10. Ո՞ր համակարգի միջոցով և ի՞նչպես է իրականացվում քաղաքականությունը:
11. Ո՞վ է վերջնական լուծում տալիս քաղաքական խնդիրներին:

Ինքնուրույն հետազոտական գրավոր աշխատանք

Պատրաստեք զեկուցում հետևյալ թեմայով՝ «Արիստոտելը քաղաքականության մասին»:

§ 8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Որպեսզի ճանաչես պետության էությունը, անհրաժեշտ է նախապես ուսումնասիրել մարդկանց հակումները, հուզմունքները, բարքերը:

Թ. Հոբս

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ

Հասարակական կյանքը բազմակողմ և բազմաբնույթ է: Այն կազմված է տնտեսական, սոցիալական, հոգևոր, իրավական և այլ ոլորտներից, որոնց միջև տեղի է ունենում մշտական փոխգործողություն: Այդ փոխգործողության ընթացքում քաղաքականությունը ներխուժում է հասարակության կյանքի բոլոր ոլորտներ: Շատ դեպքերում քաղաքականությունից է կախված այդ ոլորտներում մարդկանց սպասելիքների իրականացումը: Այդ պատճառով հասարակության զարգացմանը զուգընթաց մարդկանց հետաքրքրությունը քաղաքականության նկատմամբ աճում է, մարդիկ իրենց ճակատագրով կապվում են քաղաքականության հետ, քանի որ նրանց կյանքի ընթացքը կախված է քաղաքական գործիչներից և նրանց ընդունած որոշումներից:

Քաղաքական համակարգը, ըստ Դ. Իստոնի, հասարակական այլ ոլորտների հետ գործում է **«մուտք - ելք»** սկզբունքով: Մուտքը քաղաքական համակարգի վրա շրջակա միջավայրի ազդեցությունն է: Քաղաքական գործընթացներով անցնելուց հետո մուտք եղած տեղեկույթը կարող է վերածվել պաշտոնական-պարտադիր որոշման:

Հասարակական խնդիրների վերաբերյալ հանրության արձագանքները և, հետևաբար, քաղաքական համակարգին ուղղված տեղեկույթը կարող է լինել երկակի՝ **պահանջներ և պաշտպանություն**: Արտաքին միջավայրից այդ տեղեկույթը մուտք է գործում քաղաքական համակարգ և թափ է առնում քաղաքական քննարկումների գործընթացը:

Մուտքային տեղեկույթը պահանջ է, եթե մարդիկ և կազմակերպությունները դիմում են իշխանություններին հասարակական բարիքների ցանկալի կամ անցանկալի բաշխման կապակցությամբ: Օրինակ՝ ցածրացնել կենսաթոշակային տարիքը, բարձրագույն կրթությունը դարձնել անվճար, թեթևացնել հարկերը և այլն: Եթե պահանջները շատ են, ապա դրանք կարող են թուլացնել քաղաքական համակարգը, ապակայունացնել այն:

Պաշտպանությունը՝ ընդհակառակը կոչված է ուժեղացնել քաղաքական համակարգը, որովհետև դրանով մարդիկ և կազմակերպությունները ընտրում են վարքագիծ, որով հավանություն են տալիս քաղաքական համակարգի գործողությանը: Այդպիսի ամրապնդող վարքագծի տարբերակներն են, օրինակ՝ հարկերի պարտաճանաչ մուծումը, զինվորական պարտքի կատարումը, պետական կառույցների և խորհրդանիշների հարգանքը, կառավարողների պաշտպանությանն ուղղված հանրահավաքի անցկացումը:

Արտաքին միջավայրից ստացած տեղեկույթին քաղաքական համակարգը պատասխանում է քաղաքական որոշումներով ու գործողություններով: Քաղաքական որոշումները կարող են ունենալ նոր օրենքի ձև, լինել հայտարարություն, ֆինանսական հատկացում և այլն: Որոշումների կատարումը ապահովվում է իրավունքի ուժով: Քաղաքական գործողությունները հանրային հրատապ հիմնախնդիրների լուծման, կարգավորման միջոցառումներն են:

Այսպիսով, **հանրային քաղաքականությունը գործընթաց է, որում քաղաքական համակարգը փոխգործակցելով արտաքին միջավայրի հետ՝ ստացված մուտքային տեղեկույթը ելքում վերածում է համապատասխան որոշումների ու գործողությունների՝ լուծելով հանրային հրատապ խնդիրները**: Եթե քաղաքական համակարգը ընդունակ չէ դրան, ապա այն երկար չի կարող գոյատևել:

2. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

Հանրային քաղաքականության իրականացման համակարգն ունի որոշակի կազմակերպական կառուցվածք: Այդ կազմակերպական կառուցվածքը քաղաքական կազմակերպությունների ամբողջություն է, որոնք իրավունքի (օրենքի) շրջանակներում և պետության միջոցով իրականացնում են քաղաքական իշխանությունը կամ պայքարում են դրա իրականացման համար:

Հասարակության քաղաքական համակարգի մասնակիցներին անվանում են քաղաքական համակարգի սուբյեկտներ: Քաղաքական համակարգի սուբյեկներ են համարվում պետությունը և քաղաքական կազմակերպությունները (կուսակցություն, հասարակական-քաղաքական կազմակերպություն, շարժում), զանգվածային տեղեկատվության միջոցները, անհատները և նրանց խմբերը:

Քաղաքական համակարգի սուբյեկների մեջ կենտրոնական տեղ է զբաղեցնում պետությունը: Այն համընդհանուր հանրային իշխանություն է՝ օժտված գերակայությամբ և ինքնիշխանությամբ: Ոչ մի այլ քաղաքական կազմակերպություն նման հատկություններ չունի:

Անհատները, այդ թվում նաև Դուք քաղաքական համակարգում հանդես եք գալիս կամ գալու եք որպես քաղաքական իրավունքներով օժտված քաղաքացի: Օրինակ՝ քաղաքական գործիչ, ընտրող, որևէ կուսակցության անդամ, պատգամավորության թեկնածու, պատգամավոր, պետական պաշտոնյա և այլն:

Սիրելի աշակերտ, դու արդեն սովորել ես, թե ինչ է ժողովրդավարությունը, գիտես թե ինչ է քաղաքականությունը: Այս և հերթական 8 և 9 դասերին ոչ թե կսերտես նորանոր տեղեկույթ, այլ կխորացնես հասարակական կյանքին պատասխանատու մասնակցության վերաբերյալ գիտելիքները և ձեռք կբերես լավ քաղաքացի լինելու գործնական հմտություններ: Այս դասերն ուսումնական ծրագիր են ներառվել ամերկյան «քաղաքացիական կրթություն» կենտրոնի հրատարակած «Projekt Citizen» գրքից, որին համապատասխան և կառուցված են Ձեզ ուղղված հանձնարարականները:

«Ակտիվ քաղաքացի» դասի գլխավոր նպատակն է օգնել աշակերտներին դեռ դպրոցից մասնակցել հանրային կառավարմանը և քաղաքականությանը: Հանրային քաղաքականությունն իրականացվում է երեք մակարդակներում՝ համապետական, մարզային, տեղական (քաղաքային և գյուղական համայնքների):

Կարող ենք օրինակ բերել փողոցային երթևեկությունը: Փողոցային երթևեկության նկատմամբ կարգի պահպանությունն իրականացնում է պետությունը՝ իրավական կարգավորման միջոցով: Ճանապարհային երթևեկության անվտանգության տեսչությունը ապահովում է սահմանված կարգի կատարումը: Հետիոտները և ավտովարորդները պահպանելով սահմանված կանոնները խուսափում են հնարավոր պատահարներից: Այսպիսով հանրային իշխանության և քաղաքացիների համաձայնեցված գործողությունները թույլ են տալիս լուծել ճանապարհային անվտանգության խնդիրը:

Հանրային քաղաքականության ձևավորումը սկսվում է, երբ մարդիք գիտակցում են հասարակության մեջ որոշակի խնդրի առկայությունը: Այդ խնդիրը լուծելու համար ձեռնարկվում են հետևյալ քայլերը՝ տվյալների հավաքում, դրանց վերլուծություն, հնարավոր հետևանքների գնահատում, այս կամ այն որոշման օգտին պաշպանության կազմակերպում: «Ակտիվ քաղաքացի» նախագծի իրականցման ընթացքում Դուք ևս պետք է ձեռնարկեք նույն քայլերը: Դուք պետք է աշխատեք Ձեր դասարանցիների հետ համատեղ, սակայն կարող եք դիմել նաև ուսուցիչների, ծնողների կամ այլ անձանց օգնությանը: Ստորև տրված են այն հանձնարարությունները, որոնք դուք պետք է կատարեք.

1. Հետազոտման խնդրի որոշումը: Դուք պետք է վեր հանեք ձեր բնակավայրում առկա և ձեր կարծիքով կարևոր խնդիրները,

2. Տեղեկույթի հավաքում: Դասարանի կողմից հետազոտվող խնդրի որոշումից հետո Դուք պետք է հավաքեք և վերլուծեք այդ խնդրի վերաբերյալ տարբեր աղբյուրներից հավաքված տեղեկույթը.

3. Խնդրի լուծման ճանապարհների հետազոտում: Այս փուլում Դուք պետք է հետազոտեք և վերլուծեք այն հանրային քաղաքականությունը, որը տվյալ պահին իրականացում են հանրային մարմինները ձեզ հետաքրքրող հարցով: Միաժամանակ Դուք

պետք է գնահատեք այլ անձանց և կազմակերպությունների առաջարկած քաղաքականությունը:

4. Խնդրի լուծման Ձեր սեփական հանրային քաղաքականության մշակումը: Դուք պետք է մտածեք սեփական ծրագիրը, որը պետք է Ձեր կարծիքով ընդունեն և իրականացնեն հանրային կառավարման մարմինները:

5. Գործողությունների պլանի մշակում: Դուք պետք է մշակեք գործողությունների պլան, որով պետք է համոզեք իշխանության մարմիններին ընդունել Ձեր ծրագիրը:

Հանձնարարության կատարման ընթացքում հավաքված նյութերը ձեր կողմից պետք է օգտագործվեն դասարանի թղթապանակը կազմելու համար: **Թղթապանակը** հատուկ ընտրված նյութերի ժողովածու է, որում ներառվում են Ձեր կողմից հավաքած տեղեկությունները՝ գրավոր հաշվետվությունները, աղյուսակները, նկարները, գծապատկերները և այլն:

«Ակտիվ քաղաքացի» հետազոտական աշխատանքի հաջորդ կարևոր քայլը թղթապանակի բանավոր շնորհանդեսն է՝ այլ դասարանցիների կամ հասարակական կազմակերպությունների համար: Կարելի է կազմակերպել «դպրոցի լավագույն թղթապանակ» մրցույթը: Նախագծի վրա աշխատանքի ընթացքում ձեռք բերված գիտելիքները և փորձը կօգնեն ձեզ զարգացնել հասարակական կառավարմանը մասնակցելու հմտությունները:

§ 9-10. «ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ» ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Չկա ավելի վատ կենդանի, քան մարդը, որ չի հետևում օրենքներին:

Դ. Սավոնարոլա

ՓՈՒԼ 1. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ ՊԱՀԱՆՋՈՂ ԽՆԴՐԻ ՎԵՐՀԱՆՈՒՄ

Այս փուլում Դուք ծանոթանում եք ձեր բնակավայրում առկա որոշ խնդիրների հետ: Դրա համար Դուք պետք է՝

- դասարանում քննարկեք, թե ի՞նչ գիտեք կամ ի՞նչ եք լսել խնդիրների մասին, ինչպես պետք է դրանք լուծվեն,
- անցկացնել հարցազրույց Ձեր ծնողների կամ այլ մարդկանց հետ, որպեսզի իմանաք և գրառեք այն, թե ի՞նչ են նրանք մտածում այդ խնդիրների մասին, և ինչպե՞ս են վերաբերվում դրանց:

Այս փուլի նպատակն է քննարկել ձեր բնակավայրի համար կարևոր խնդիրները և դրանցից ընտրել ամենակարևորը, ինչը և կհետազոտվի ձեր դասարանի կողմից:

Առաջին փուլի դասարանային աշխատանք

Ձեր բնակավայրում առկա խնդրի քննարկում: Այս հանձնարարության կատարման համար դասարանով կատարեք հետևյալը.

ա) քննարկեք ձեր բնակավայրին բնութագրական խնդիրը,

բ) բաժանվեք փոքր խմբերի՝ կազմված 3-4 աշակերտներից: Յուրաքանչյուր փոքր խումբ պետք է քննարկի մի խնդիր: Այնուհետև յուրաքանչյուր խումբ պետք է պատասխանի քննարկվող խնդրի վերաբերյալ հարցերին, որոնք առաջադրված են «Խնդրի վերհանման և վերլուծության ձևում»:

գ) այնուհետև յուրաքանչյուր խումբ պետք է քննարկի իր պատասխաններն ամբողջ դասարանի հետ,

դ) փոքր խմբերը պետք է պահեն իրենց լրացրած ձևաթղթերը, որպեսզի դրանք հետագայում օգտագործվեն:

Բնակավայրում առկա հիմնախնդիրները կարող են լինել բազմաբնույթ: Օրինակ՝ դպրոցական (միասնական համազգեստի անհրաժեշտությունը), բնապահպանական (դպրոցի տարածքի կամ բնակավայրի աղտոտվածությունը, անտառահատումները), հանրային բարքերի, մարդու իրավունքների ու ազատությունների և այլն:

Առաջին փուլի տնային աշխատանք

Ստորև թվարկված երեք հանձնարարությունները կօգնեն ձեզ ավելի շատ իմանալ ձեր բնակավայրի խնդիրների և դրանցով իրականացվող քաղաքականության մասին: Օգտագործե՛ք դասագրքում եղած ձևերը ստացվող տեղեկությունները գրառելու համար: Պահպանե՛ք ամբողջ տեղեկույթը: Այն հետագայում կարող եք ներառել դասարանի թղթապանակի մեջ:

1. Հարցազրույց անցկացնելու հանձնարարություն: Ընտրեք որևէ խնդիր, որը ձեր դասարանը համարում է կարևոր, քննարկեք դա ձեր ծնողների, ընկերների, հարևանների և կամ այլ մարդկանց հետ: Պարզեք, թե ինչ գիտեն նրանք այդ մասին, և ինչ են նրանք մտածում այդ մասին: Օգտագործեք «հարցազրույցի ձևը» ստացված տեղեկությունները գրառելու համար:

2. Հանձնարարություն տպագիր աղբյուրների հետ աշխատելու համար: Ուսումնասիրեք թերթերը և այլ տպագիր աղբյուրները, որպեսզի պարզեք ընտրված խնդրի կարևորությունը ձեր բնակավայրի համար և որոշեք դրա լուծման ուղիները: Ուսումնասիրված թերթից վերցված տվյալները գրառեք «ստորև բերված համապատասխան ձևում:

3. Հանձնարարություն ռադիո և հեռուստատեսային հաղորդումների համար: Լսեք և դիտեք հաղորդումներ, որոնք կապված են ձեր կողմից հետազոտվող խնդիրների և դրանց լուծման ուղիների մասին: Գրառե՛ք այդ տեղեկույթը և քննարկեք այն դասարանում: Օգտագործե՛ք ստորև բերված համապատասխան ձևը, տեղեկույթը գրառելու համար:

ԽՆԴՐԻ ԲԱՑԱՀԱՅՏՄԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Խմբի անդամների ազգանունները .....
.....
Օր, ամիս, տարի.....
Խնդիր .....

1. Գտնո՞ւմ եք դուք և այլ մարդիկ, որ այդ խնդիրը համարվում է կարևոր: Ի՞նչու:
.....
.....
2. Կառավարման ո՞ր մարմիններն են պատասխանատու այդ խնդրի լուծման համար. .....
3. Կառավարման այդ մարմինն անցկացնում է արդյո՞ք ինչ-որ քաղաքականություն այդ խնդրի իրականացման համար:.....
.....

Եթե այդպիսի քաղաքականություն կա, ապա պատասխանեք հետևյալ հարցերին.

- Որո՞նք են դրա առավելությունները և թերությունները.....
.....
- Ի՞նչպես կարելի է բարելավել այդ քաղաքականությունը.....
.....
- Ի՞նչպես է հնարավոր փոխել այդ քաղաքականությունը: Ի՞նչու: .....
.....
- Ի՞նչ տարածայնություններ կան Ձեր քաղաքում կամ գյուղում այդ քաղաքականության վերաբերյալ
.....

4. Ո՞րտեղ կարելի է գտնել տեղեկատվություն այդ խնդրի վերաբերյալ .....
.....
5. Կա՞ն արդյոք այլ խնդիրներ Ձեր քաղաքում կամ գյուղում, որոնք կարելի կլիներ լուծել դասարանում: Ի՞նչ խնդիրներ են դրանք:.....
.....

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԻ ՁԵՎ

Ձեր ազգանունը, անունը.....
Օր, ամիս, տարի.....
Խնդիր .....
1. Հարզազրույց տվողի ազգանունը.....
զբաղմունքի տեսակը (դերը հասարակության մեջ) .....
.....
Եթե հարցվողը չի ցանկանում նշել իր ազգանունը,հարգեք նրա ցանկությունը և նշեք միայն զբաղմունքը:
2. Պատմե՛ք հարցազրույց տվողին, թե ինչ խնդիր եք դուք ուսմնասիրում: Այնուհետև խնդրեք նրան պատասխանել հետևյալ հարցերին: Գրառեք պատասխանները:
ա) Գտնո՞ւմ եք դուք այդ խնդիրը կարևոր և ի՞նչու:.....
.....
բ) Գտնո՞ւմ եք Դուք, որ այլ մարդիք ևս համարում են այդ խնդիրը կարևոր: .....
.....
գ) Այդ խնդրի լուծման համար հանրային իշխանության մարմինները ի՞նչ քաղաքականություն են ներկայումս անցկացնում:.....
.....
3. Եթե այդպիսի քաղաքականություն իրականացվում է, ապա պատասխանեք հետևյալ հարցերին:
- Որո՞նք են դրա առավելությունները և թերությունները.....
.....
- Ի՞նչպես կարելի է բարելավել այդ քաղաքականությունը.....
.....
- Ի՞նչպես է հնարավոր փոխել այդ քաղաքականությունը: Ի՞նչու: .....
.....
- Ի՞նչ տարածայնություններ կան Ձեր քաղաքում կամ գյուղում այդ քաղաքականության վերաբերյալ .....
4. Ո՞րտեղ կարելի է գտնել տեղեկատվություն այդ խնդրի և դրա կապակցությամբ տարբեր մարդկանց ու խմբերի դիրքորոշման վերաբերյալ: .....
.....
5. Կա՞ն արդյոք այլ խնդիրներ Ձեր քաղաքում կամ գյուղում, որոնք կարելի կլիներ լուծել դասարանում: Ի՞նչ խնդիրներ են դրանք:.....
....

ՏՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Ձեր ազգանունը .....
Օր, ամիս, տարի.....
Խնդիր .....
Հրատարակության (թերթ, ամսագիր և այլն) անվանումը հրատարակման ամիս, ամսաթիվը, տարին.....
Հոդվածի վերնագիրը.....
1. Հոդվածագրի դիրքորոշումը խնդրի վերաբերյալ.....
.....
2. Այդ դիրքորոշման հիմնական կետերը.....
.....
3. Ըստ հոդվածագրի հանրային իշխանության մարմինների կողմից ինչ քաղաքականություն է իրականացվում խնդրի լուծման համար .....
.....
Եթե այդպիսի քաղաքականություն իրականացվում է, ապա պատասխանեք հետևյալ հարցերին:
- Որո՞նք են դրա առավելությունները և թերությունները.....
.....
- Ի՞նչպես կարելի է բարելավել այդ քաղաքականությունը.....
.....
- Ի՞նչպես է հնարավոր փոխել այդ քաղաքականությունը: Ի՞նչու: .....
- Ի՞նչ տարածայնություններ կան Ձեր քաղաքում կամ գյուղում այդ քաղաքականության վերաբերյալ
.....

ՌԱԴԻՈ ԵՎ ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՁԵՎ

Ձեր ազգանունը .....
Օր, ամիս, տարի.....
Խնդիր .....
1. Տեղեկույթի աղբյուրը (նորություններ, վավերագրական ֆիլմեր և այլն):.....

Հաղորդումը դիտելու և լսելու ընթացքում քննարկեք հետևյալ հարցերը.
2. Համարվում է արդյո՞ք այդ խնդիրը կարևոր և ինչո՞ւ: .....
.....
3. Հանրային իշխանության մարմինների կողմից ինչ քաղաքականություն է իրականացվում խնդրի լուծման համար .....

- Որո՞նք են այդ քաղաքականության առավելությունները.
.....
- Որո՞նք են այդ քաղաքականության թերությունները.
.....
- Ի՞նչպես է հնարավոր բարելավել այդ քաղաքականությունը:
.....
- Պահանջում է արդյո՞ք այդ քաղաքականությունը փոփոխություն: Ի՞նչու.
.....
- Ի՞նչ տարածայնություններ կան Ձեր քաղաքում կամ գյուղում այդ քաղաքականության վերաբերյալ
.....
...

ՓՈՒԼ 2. ԴԱՍԱՐԱՆՈՒՄ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԽՆԴՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ

Այս փուլում դուք պետք է դասարանով քննարկեք, թե ինչ իմացաք ձեր բնակավայրի խնդիրների մասին, պարզեք, թե արդյոք ձեր ունեցած տեղեկությունները բավարար են, որպեսզի այդ խնդիրը ընտրվի որպես դասարանի աշխատանքի առարկա: Դրա համար դասարանում կազմակերպեք քննարկում, որի արդյունքում պետ է ընդունեք որոշում այն մասին, թե արդյո՞ք «բավարար են խնդրի վերաբերյալ տեղեկությունները, որպեսզի այն ընտրվի հետազոտման համար»: Կատարեք հետևյալ քայլերը դասարանի կողմից հետազոտվող խնդրի ընտրության համար:

1. Եթե դասարանը գտնում է, որ առկա է բավարար տեղեկություն որոշում ընդունելու համար, ապա քվեարկությամբ դուք պետք է ընտրեք հետազոտվող խնդիրը: Համոզվե՛ք, որ դուք ընտրել եք ձեր բնակավայրի համար կարևոր խնդիր: Միաժանակ համոզվեք, որ դուք կարող եք հավաքել բավարար տեղեկույթ այդ խնդրի վերաբերյալ, որպեսզի պատրաստեք լավ թղթապանակ: Եթե դասարանը որոշի, որ անհրաժեշտ է խնդրի վերաբերյալ հավաքել լրացուցիչ տվյալներ, ապա խմբերին հանձնարարեք որպեսզի ավելի շատ տեղեկություններ հավաքվեն առաջադրվող խնդրի վերաբերյալ:

2. Եթե դասարանը որոշի, որ խնդրի վերաբերյալ անհրաժեշտ է հավաքել լրացուցիչ տվյալներ, ապա խմբերին հանձնարարեք որպեսզի ավելի շատ տեղեկություններ հավաքեն առաջադրվող խնդիրների վերաբերյալ:

ՓՈՒԼ 3. ԴԱՍԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԵՏԱԶՈՏՎՈՂ ԽՆԴՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ՀԱՎԱՔՈՒՄ

Այն բանից հետո, երբ ձեր դասարանը ընտրել է ընտրել է խնդիրը, դուք պետք է որոշեք, թե որտեղից գտնել լրացուցիչ տեղեկություններ: Այդ ընթացքում դուք կտեսնեք, որ որոշ մարդիկ ավելի շատ գիտեն խնդրի մասին: Դրա համար դուք պետք է կարողանաք տեղեկույթի աղբյուրի ճիշտ ընտրություն կատարել:

Երրորդ փուլի դասարանային աշխատանք

Տեղեկությունների աղբյուրի որոշում: Տեղեկությունների հնարավոր աղբյուրներից են՝ գրադարանները, թերթերի խմբագրությունները և թղթակիցները, բուհերի, քոլեջների դասախոսները և գիտական աշխատողները, իրավաբանները, հասարակական կազմակերպությունները, խմբերը և ակտիվիստները, հանրային իշխանության մարմինները (օրենսդիր, գործադիր, տեղական ինքնակառավարման): Այս շրջանակն օրինակելի է և դրանցից որը ընտրելը կախված է ձեր խնդրի բնույթից:

Պարզեք, թե դրանցից որը կա ձեր բնակավայրում և ինչպես հաղորդակցվել նրանց հետ: Այնուհետև բաժանվեք հետազոտական խմբերի: Յուրաքանչյուր խումբ պետք է հավաքի տեղեկույթը ընտրված կոնկրետ աղբյուրից: Ստացված տեղեկությունները գրառեք ստորև բերված «փաստաթղթային ձևում»: Ուսուցիչները և ծնողները կարող են օգնել ձեզ տեղեկությունները հավաքելուց, սակայն չպետք է ձեր փոխարեն անեն դա: Դուք կարող եք հրավիրել նաև մասնագետների՝ այդ թվում ծնողներից, ովքեր կարող են կիսել իրենց գիտելիքները հետազոտվող խնդրի վերաբերյալ:

Տեղեկույթի աղբյուրների հետ կապ հաստատելու համար օգտագործեք հեռախոսային տեղեկատուները, ծնողների ծանոթությունները և կապերը, նաև ծնողներին: Օրինակ, նրանցից որևէ մեկը կարող է լինել իրավաբան, քաղաքական գործիչ, թղթակից և հանդիսանալ տեղեկույթի աղբյուր: Եթե տեղեկույթի աղբյուրը դուրս է ձեր բնակավայրից, ապա դիմեք նրան նամակով, հեռախոսազանգով, համացանցով, փորձեք հրավիրել դպրոց: Հեռախոսային հաղորդակցման դեպքում ըստ ձևի կատարեք գրառումներ: Հավաքված ամբողջ տեղեկությունը պահպանեք ապագայում դասարանի թղթապանակը կազմելու համար:

Երրորդ փուլի տնային աշխատանք

Խնդրի հետազոտման անցկացում: Այն բանից հետո, երբ դուք կորոշեք, թե որ աղբյուրներն եք օգտագործելու ձեր աշխատանքում, ձեր դասարանը պետք է բաժանվի հետազոտական խմբերի: Ամեն մի խումբ պատասխանատու է որոշակի աղբյուրից տեղեկություններ հավաքելու կամ ստանալու համար: Աղբյուրի հետ հաղորդակցվելուց նախ ներկայացեք, բացատրեք ձեր նպատակները, խնդրեք օգնություն կամ խորհուրդ՝ թե ում դիմել:

ՏՊԱԳԻՐ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻՑ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՁԵՎ

Հետազոտող խմբի անդամի ազգանունը .....

Օր, ամիս, տարի.....

Գրադարանի, կազմակերպության, գործակալության, համացանցի էլեկտրոնային կայքի անվանումը.....

Հետազոտվող խնդիրը.....

1. Տեղեկույթի աղբյուրը.

ա) հրատարակության անվանումը.....

բ) հեղինակը .....

գ) հրատարակության ժամանակը.....

2. Հրատարակության տեղեկատվությունը գրառեք, ինչը ձեզ կօգնի պատասխանելու խնդրի վերաբերյալ հետևյալ հարցերին.

ա) Ինչքանո՞վ է կարևոր այդ խնդիրը մեր գյուղի և քաղաքի համար.....

.....

.....

բ) Ինչքանո՞վ է կարևոր այդ խնդիրը մեր հանրապետության համար.....

.....

.....

գ) Ներքոբերյալներից ի՞նչն եք համարում իրականությանը համապատասխանող.

- Այդ խնդրի լուծման համար չկա չկա համապատասխան օրենք և քաղաքականություն. Այո------- ՈՉ.....
- Այդ խնդրի լուծման համար գոյություն ունեցող օրենքն անբավարար է. Այո------- ՈՉ.....
- Եղած ունեցող օրենքը բավարար է խնդիրը լուծելու համար, սակայն չի կատարվում. Այո------- ՈՉ.....

դ) Ի՞նչ տարաձայնություններ կան Ձեր քաղաքում կամ գյուղում այդ քաղաքականության վերաբերյալ

.....

.....

ե) Բնակչության ի՞նչ շերտեր, խմբեր կամ կազմակերպություններ են շահագրռված տվյալ խնդրով.

.....

- Ի՞նչու են նրանք շահագրգռված տվյալ խնդրով.....

.....

- Ի՞նչ դիրք են նրանք գրավել.....

.....

- Որոնք են նրանց դիրքորոշման առավելությունները և թերությունները.....

.....

- Ինչպե՞ս են նրանք փորձում ազդել հանրային իշխանության մարմինների վրա հիմնախնդրի լուծման իրենց դիրքորոշումը ընդունելու համար.....

.....

զ) Ի՞նչպես ես և իմ ընկերները կարող ենք ձեռք բերել ավելի շատ տեղեկություններ այդ դիրքորոշումների վերաբերյալ:

ՆԱՄԱԿՆԵՐԻՑ ԵՎ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐԻՑ ՏԵՂԵԿՈՒՅԹԻ ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ՁԵՎ

Հետազոտող խմբի անդամների ազգանունը, անունը.....

Օր, ամիս, տարի.....

Հետազոտվող խնդիր .....

1. Տեղեկույթի աղբյուրը (Գրեք տեղեկույթը տվող մարդու ազգանունը: Եթե հնարավոր է, նշեք թե որտեղ և ինչ է նա աշխատում)

.....

Ազգանունը

.....

Կազմակերպության անվանումը.....

Հասցեն, հեռախոսը.....

2. Խնդրի վերաբերյալ տեղեկույթի ստացումը: Կոնկրետ անձի հետ հեռախոսային կամ գրավոր հաղորդակցումից հետո նրան խնդրեք պատասխանել հետևյալ հարցերին.

ա) Ինչքանո՞վ է կարևոր այդ խնդիրը գյուղում կամ քաղաքում.....

.....

բ) Ինչքանո՞վ է կարևոր այդ խնդիրը երկրի համար.....

.....

գ) Ինչո՞ւ պետք է այդ խնդիրը քննարկվի հանրային իշխանության մարմինների կողմից: Ուրիշ էլ ո՞վ պետք է կրի պատասխանատվություն այդ հարցի լուծման համար և ինչո՞ւ:

.....

.....

դ) Ներքոբերյալներից ի՞նչն եք համարում իրականությանը համապատասխանող.

- Այդ խնդրի լուծման համար չկա չկա համապատասխան օրենք և քաղաքականություն. Այո------ ՈՉ.....
- Այդ խնդրի լուծման համար գոյություն ունեցող օրենքն անբավարար է. Այո------- ՈՉ.....
- Եղած ունեցող օրենքը բավարար է խնդիրը լուծելու համար, սակայն չի կատարվում. Այո------- ՈՉ.....

ե) Այդ խնդրի լուծման համար հանրային իշխանության որ մարմիններն են պատասխանատու: Ինչ են նրանք անում խնդրի լուծման ուղղությամբ:

.....

.....

զ) Ի՞նչ տարածայնություններ կան Ձեր քաղաքում կամ գյուղում այդ քաղաքականության վերաբերյալ

.....

է) Բնակչության ի՞նչ շերտեր, խմբեր կամ կազմակերպություններ են շահագրռված տվյալ խնդրով.

.....

- Ի՞նչու են նրանք շահագրգռված տվյալ խնդրով.....

.....

- Ի՞նչ դիրք են նրանք գրավել.....

.....

- Որոնք են նրանց դիրքորոշման առավելությունները և թերությունները.....

.....

- Ինչպե՞ս են նրանք փորձում ազդել հանրային իշխանության մարմինների վրա հիմնախնդրի լուծման իրենց դիրքորոշումը ընդունելու համար.....

.....

ը) Եթե Ձեր դասարանը մշակում է այդ խնդրի լուշման քաղաքականություն, ապա ինչպես դուք կարող եք ազդել իշխանության մարմինների վրա այդ քաղաքականությունն ընդունելու համար:

ՓՈՒԼ 4. ԴԱՍԱՐԱՆԻ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Հիմա, երբ արդեն դուք ավարտել եք խնդրի հետազոտությունը, դուք կարող եք սկսել կազմել ձեր դասարանի թղթապանակը: Դասարանը պետք է բաժանվի չորս խմբի: Յուրաքանչյուր խումբ պետք է պատասխանի թղթապանակի առանձին մասի պատրաստման համար: Թղթապանակում պետք է ներառել ամենից լավ փաստաթղթային նյութերը, որ հավաքել է ձեր դասարանը՝ խնդիրը հետազոտելիս: Դրանում պետք է ներառվեն նաև դասարանի հավաքած կամ պատրաստած նկարները, գրավոր նյութերը:

Ա. Թղթապանակը կազմելու պահանջները

Դասարանի թղթապանակը համարվում է չորս խմբի աշխատանքի արդյունք: Այն կազմված է լինելու երկու բաժիններից՝ ցուցադրական և փաստաթղթային:

1. Ցուցադրական բաժին: Այս բաժինը կազմված է 4 պաստառային թերթերից (մինչև 80 սմ լայնությամբ և մինչև 1 մ բարձրությամբ): Ամեն մի խմբի աշխատանքը պետք է տեղավորվի 4 թերթանոց ցուցանակի (ստենդի) մեկ էջին: Ցուցանակը պետք է պատրաստել այնպես, որ այն հնարավոր լինի դնել սեղանին կամ կախել պատից: Ցուցադրված նյութերը կարող են ներառել գրավոր հաղորդագրություններ, աղբյուրների ցուցակ, գծապատկերներ, աղյուսակներ, լուսանկարներ:

2. Փաստաթղթային մաս: Ամեն մի խումբ հավաքված ողջ տեղեկություններից պետք է ընտրի կատարված հետազոտությունը լավագույն կերպով ներկայացնող նյութերը: Կարիք չկա այս բաժնում ներկայացնել ձեր հավաքած բոլոր նյութերը: Ձեր ընտրած նյութերը պետք է հաստատեն ձեր հետազոտության ամենից կարևոր արդյունքները: Այդ նյութերը ամրացրեք արագակարում: Նախագծի չորս մասերից

ամեն մեկն անհրաժեշտ է բաժանել գունավոր թերթիկներով: Ողջ նյութը պետք է ունենա ամբողջ նախագծի ընդհանուր և ամեն մի մասի վերնագրեր:

Բ. Հանձնարարություններ թղթապանակը կազմող խմբերին

Յուրաքանչյուր խումբ դասարանի հավաքած ողջ հետազոտական նյութից պետք է հավաքի միայն այն, որոնք նրան կօգնեն ստորև թվարկած խնդիրները լուծելու համար: Խմբերը պետք է գործեն ստորև բերվող իրենց հրահանգներին համապատասխան:

1-ին խումբ. «Խնդրի բացատրությունը»: Այս խումբը պատասխանատու է դասարանի ընտրած խնդրի բացատրության համար: Խումբը պետք է բացատրի, թե ինչո՞ւ է այդ խնդիրը կարևոր և ինչո՞ւ պետք է այն լուծվի պետական մակարդակով:

2-րդ խումբ. «Խնդրի լուծման այլընտրանքային ուղիների գնահատում»: Այս խումբը պատասխանատու է խնդրի լուծման վերաբերյալ հանրային մարմինների կամ հասարակական խմբերի կողմից առաջարկվող կամ արդեն իրականացնվող լուծումների լուսաբանման և վերլուծության համար:

3-րդ խումբ. «Ձեր դասարանի կողմից առաջարկվող հանրային քաղաքականության մշակում»: Այս խումբը պատասխանատու է հետազոտված խնդրի լուծման ծրագրի մշակման և հիմնավորման համար:

4-րդ խումբ. «Գործողությունների պլանի մշակում»: Այս խումբը պատասխանատու է դասարանի կողմից առաջարկվող ծրագրի իրականացման գործողությունների պլանի համար:

Ստորև տրված են ամեն մի գործողությունների հրահանգները: Շատ կարևոր է, որ խմբերը համագործակցեն միմյանց միջև և գաղափարները քննարկեն համատեղ: Միաժամանակ նրանք դասարանին պետք է տեղեկացնեն արվածի մասին և համատեղ քննարկեն աշխատանքի ընթացքը և արդյունքները: Դա կօգնի դասարանին լավագույնս մշակել թղթապանակը: Խմբերը պետք է որոշեն, թե որ տեղեկությունը ներառել ցուցադրական մասում և որը՝ փաստաթղթային մասում: Այդպիսի համագործակցությունը կկանխի տեղեկությունների կրկնությունը և կապահովի ամենից լավ ապացույցների ու նյութերի ներառումը թղթապանակ:

Գ. Թղթապանակի պատրաստ լինելու գնահատման չափանիշներ

Թղթապանակի ամեն մի բաժնի չափանիշներ

1. Ավարտվածություն

- ամեն բաժին ներառում է վերևում խորհուրդ տրվող նյութերը.
- օգտագործված են բոլոր նյութերը, որ դուք ուզում էիք ներառել:

2. Պարզություն (հստակություն).

- դուք լավ եք պատրաստել թղթապանակի ձեր բաժնի ցուցադրումը.
- թղթապանակի ձեր բաժինը գրված է հասկանալի, վերացված են բոլոր լեզվական և քերականական սխալները.
- բոլորին հասկանալի են ձեր հիմնական փաստարկները և դատողությունները.

3. Տեղեկութավորվածություն

- թղթապանակի տեղեկույթը ճիշտ է.
- ներկայացված տեղեկույթում ներառված են բոլոր փաստերը և ամենից կարևոր հասկացությունները.
- տեղեկությունը, որ դուք ներառել եք բաժնում, կարևոր է ձեր թեմայի հասկացման համար:

4. Հիմնավորվածություն

- բաժնում ներկայացված են հիմնական պահերը և գաղափարները բացատրող կամ հաստատող օրինակներ.
- ներկայացված են բաժնում քննարկվող կարևոր պահերը հիմնավորող փաստարկներ

5. Գծապատկերային ձևավորումը

- գծապատկերային ձևավորումը համապատասխանում է ձեր բաժնի բովանդակության հետ.
- ներկայացված գծապատկերների աղյուսակները կրում են բաժնի հիմնական բովանդակային բեռը.
- գծապատկերները և աղյուսակները վերնագրված են, ունեն գրառումներ.
- գծապատկերային ձևավորումը թույլ է տալիս հասկանալ, թե ինչ եք դուք ուզում արտացոլել ցուցադրական բաժնում:

6. Փաստաթղթավորում

- ձեր բաժնի հիմնական հարցերով դուք ունեք փաստաթղթային նյութեր.
- դուք օգտագործել եք տեղեկությունների հուսալի, հավաստի և տարատեսակ աղբյուրներ.
- նկատվում է փոխկապվածություն փաստաթղթային բաժնի և ցուցադրական բաժի նյութերի միջև.
- Ձեր կողմից օգտագործվել են ամենից լավ և ամենից կարևոր տեղեկատվության աղբյուրներ:

7. Սահմանադրականություն.

- դուք փաստարկում եք, որ ձեր կողմից առաջարկվող հանրային քաղաքականությունը չի հակասում գործող Սահմանադրությանը (վերաբերում է միայն երրորդ խմբին):

Ամբողջ թղթապանակի չափանիշներ

1. Համոզչականություն

- Ձեր թղթապանակում ներկայացված են ընտրված խնդրի կարևորությունը հաստատող բավարար ապացույցներ.
- առաջարկվող հանրային քաղաքականությունը համապատասխանում է տվյալ խնդրի լուծմանը.
- թղթապանակում կան բացատրություններ այն մասին, թե ինչպես կարող եք ստանալ հանրության օգնությունը և հովանավորությունն առաջարկվող քաղաքականության համար:

2. Գործնական ուղղվածությունը

- Ձեր կողմից առաջարկվող քաղաքականությունը համարվում է գործնական և իրատեսական.
- հանրության պաշտպանությունը ստանալու Ձեր պլանը համարվում է իրատեսական:

3. Կոորդինացիա

- թղթապանակի բոլոր մասերը կապված են միմյանց հետ և չեն կրկնում տեղեկույթը.
- թղթապանակի փաստաթղթային մասի նյութերը ներկայացնում են թղթապանակի ցուցադրական մասը հաստատող ապացույցներ և փաստեր:

4. Վերլուծություն և գնահատում (արդյունքների ամփոփում)

- փաստաթղթային բաժնի վերջին մասում ներկայացված են Ձեր դասարանի սովորողների կողմից ձեռք բերված փորձի վերլուծությունը և գնահատումը.
- դուք նշում եք թղթապանակի կազման ընթացքում ինչ եք սովորել:

ՓՈՒԼ 5. ՁԵՐ ԹՂԹԱՊԱՆԱԿԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ

Թղթապանակը պատրաստելուց հետո դասարանն այն կարող է ներկայացնել լսարանին: Կարող եք հրավիրել ծնողներին, ուսուցիչներին, հանրային իշխանության մարմինների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին, այդ թվում նրանց, ումից կախված է Ձեր առաջարկած քաղաքականության լուծումը: Եթե

կազմակերպվի միջդասարանային մրցույթ, ներկայացումը կարող է գնահատել ժյուրին՝ ըստ վերը ներկայացվող չափանիշների: Այդ գործունեությունը Ձեզ կտա արժեքավոր փորձ՝ կարևոր գաղափարներն այլ մարդկանց ներկայացնելու և նրանց Ձեր դիրքերից համոզելու հարցում:

Ներկայացման ժամանակ յուրաքանչյուր խումբ պետք է ղեկավարվի հետևյալ ցուցումներով.

Ա. Բանավոր ներկայացման անցկացում: Ներկայացման առաջին մասում յուրաքանչյուր խումբ 3-5 րոպեի ընթացքում բանավոր ներկայացնում է թղթապանակի իր մասի վերաբերյալ տեղեկությունները:

- ելույթը պետք է կառուցվի ցուցադրական և փաստաթղթային բաժինների վրա, սակայն չպետք է ընթերցվի ցուցադրապաստառից.
- օգտագործեք թղթապանակի գծապատկերները և աղյուսակները.
- օգտագործեք միայն այն նյութերը, որոնք ներառված են թղթապանակի մեջ:

Բ. Հարցեր: Այս մասում հյուրերը և ժյուրիի անդամները կարող են հարցեր տալ Ձեզ՝ ներկայացված նյութի վերաբերյալ:

Գ. Նախապատրաստություն: Դուք կարող եք խնդրել ներկայացման փորձ ունեցող ծնողներին, ուսուցիչներին և այլ մարդկանց նախապատրաստել Ձեր խմբին: Մինչ ելույթը կատարեք փորձարկում՝ դասարանի առջև և քննարկեք:

Ե. Ցուցումներ: Ներկայացման ընթացքում և հարցերի ժամանակ պետք է մասնակցեն ինչքան հնարավոր է շատ աշակերտներ, այլ ոչ թե մեկը կամ մի քանիսը: Ներկայացումը պետք է ցուցադրի, թե ինչ են բոլորը սովորել համատեղ աշխատանքում՝ թղթապանակը պատրաստելուց:

Անհրաժեշտ է ելույթի ժամանակ ընդհանրապես խուսափել ցուցադրական նյութերի ընթերցումից: Ընտրեք ամենից կարևոր տեղեկությունն ու փաստարկները և ներկայացրեք դրանք Ձեր խոսքերով: Դուք կարող եք օգտագործել գրառումներ, բայց ոչ հարցերին պատասխանելուց: Ներկայացման ժամանակ ամեն մի խումբ ներկայացնում է միայն թղթապանակի իր մասի նյութերը:

ՓՈՒԼ 6. ՁԵՌՔ ԲԵՐՎԱԾ ՓՈՐՁԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Միշտ կարևոր է մտորել այն մասին, թե ինչ եք դուք սովորել և վերլուծել ինչ որ աշխատանքի ընթացքում ձեռք բերված փորձը: Դա միակ եղանակն է, որով մարդը խուսափում է ապագա սխալներից և բարելավում է իր նվաճումները:

Այժմ, երբ ավարտել եք թղթապանակի վրա կատարված ողջ աշխատանքը, դրա փաստաթղթային բաժնում ավելացրեք վերլուծական կամ գնահատողական մասը: Ձեր թղթապանակի այդ մասում համառոտ պետք է նկարագրվի հետևյալը.

- ի՞նչ եք դուք սովորել և ինչպես.
- ինչը կանեիք այլ կերպ, եթե նորից պատրաստեիք թղթապանակ:

Վերլուծությունը պետք է իրականացնի ողջ դասարանը: Ուսուցիչը կօգնի Ձեզ այդ աշխատանքում: Խորհուրդ ենք տալիս մինչև այս աշխատանքի կատարումն իրականացնել թղթապանակի նախնական ներկայացում, ինչը կօգնի ձեզ ավելի լավ հասկանալու Ձեր ձեռքբերումները և բացթողումները: Դուք կարող եք օգտագործել հետևյալ հարցերը Ձեր փորձն արտացոլելու համար.

- ի՞նչ ես անձամբ սովորեցի դասարանի հետ նախագծի վրա աշխատելու ընթացքում.
- ի՞նչ սովորեց մեր դասարանը հանրային քաղաքականությունը մշակելու և դասարանի թղթապանակը կազմելու ընթացքում.
- ի՞նչ հմտություններ ես ձեռք բերեցի և ինչքանո՞վ դրանք զարգացրեցի.
- ի՞նչ հմտություններ մենք ձեռք բերեցինք և ինչքանո՞վ դրանք զարգացրեցինք.
- ինչու՞մ է կայանում թիմով աշխատելու առավելությունը.
- ինչու՞մ է թիմով աշխատելու թերությունը.
- ի՞նչն եմ ես արել լավ.
- ի՞նչ ենք մենք արել լավ.
- ի՞նչպես ես կարող եմ բարելավել խնդրի լուծման իմ հմտությունը.
- ինչպե՞ս մենք կարող ենք բարելավել խնդրի լուծման մեր հմտությունները.
- ի՞նչը մենք կանեինք այլ կերպ, եթե մշակեինք այլ թղթապանակ հանրային քաղաքականության այլ հարցով:

ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 11. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ժողովուրդն է մեր ժամանակների աստվածությունը... Ժողովուրդն ավելին է, քան իր պետությունը, իր իշխանությունը...
Գ. Նժդեհ (1886-1955)

1. ԱՆՀԱՏԸ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Մարդն ամբողջի՝ հասարակության մի մասն է: Մարդը գիտակցում է, որ չի կարող ապրել մենակ, առանց հասարակության: Նա ունի հասարակության կարիքը: Հասարակությունը մարդկային գոյության պայմանն է: Միաժամանակ մարդն ինքնավար անհատականություն է: Մարդը լինելով անհատ, օժտված է ինքնագիտակցությամբ և ունի ինքնավարություն: Որպես այդպիսին նրան բնորոշ է սեփական «ես»-ը, որը տարբերում է իրեն և ուրիշներին: Անհատը ձգտում է ընդլայնել իր ազատության շրջանակները, հաստատել իր ինքնավարությունը հասարակության մեջ: Իրենց հերթին հասարակությունը և պետությունը մարդուն դնում են իրենց իշխանության տակ, համոզում և հարկադրում են նրան ենթարկվել: Ահա այս պայմաններում հասարակության մեջ առաջ են գալիս բախումներ՝ անհատ-անհատ (երկու «ես»-երի միջև), անհատ և պետություն:

Պետությունն ամբողջ հասարակության պաշտոնական ներկայացուցիչն է, ընդհանուր գործերի կառավարիչը: Ցանկացած մարդ պետության տարածքի սահմաններում դառնում է պետության պարտադիր կարգադրագրերի հասցեատեր: Ամեն մի մարդուց պահանջվում է բոլոր իրավական կարգադրագրերի պահպանում, պետության, այլ մարդկանց առջև իր պարտականությունների կատարում: Անհատի ազատությունը չի կարող լինել բացարձակ: Միաժամանակ պետության իշխանությունը չի կարող լինել անսահման:

Վտանգավոր են և՛ անհատի ամենաթողությունը, և՛ պետական իշխանության կամայական բացարձակությունը: Ոստի հասարակության գլխավոր խնդիրերից է անհատի և պետության միջև ներդաշնակ հավասարակշռության հաստատումը: Այդ հավասարակշռության սկզբունքը, չափանիշը մարդու իրավունքներն են:

Հազարամյակներով մարդու ազատության և իրավունքների ճանապարհին առկա են եղել բազմաթիվ խոչընդոտներ: Դրանցից մեկն էլ պետությունն է, որն իր հզորությունն օգտագործել է մարդու ազատությունը ոտնահարելու, նրա իրավունքները խախտելու համար: Հաճախ մարդը և պետությունը գոյատևել են իրարից օտարված և միմյանց հանդեպ թշնամաբար տրամադրված: Ստրուկի և ճորտ

գյուղացու համար պետությունը եղել է օտար, թշնամական ուժ, որովհետև նրանք չեն ունեցել իրավունքներ և ազատություններ, այլ կրել են միայն պարտականություններ: Մարդկությունն անցել է երկար և դժվարին ճանապարհ, մինչև որ պետությունը սկսել է ճանաչել և հարգել մարդու իրավունքները:

Բնական իրավունքի տեսությունը պետությանը համարում է հասարակական դաշինքի հիման վրա ստեղծված կազմակերպություն, որը պետք է ծառայի մարդուն և հասարակությանը, ապահովի և պաշտպանի մարդու իրավունքները: Պետությունն իր այդ պարտականությունը կատարելու համար ընդունում է օրենքներ՝ նվիրված մարդուն, նրա իրավունքներին ու ազատություններին, իրավական պարտականություններին: Դրանց օրենսդրական ամրագրումը երաշխիք է անհատի ազատ զարգացման համար: Արդյունքում անհատը պետության տարածքում ձեռք է բերում որոշակի իրավական կարգավիճակ, որի վրա ազդող գործոններից է քաղաքացիությունը: Ցանկացած երկրում, ըստ քաղաքացիության առկայության կամ բացակայության չափանիշների, գոյություն ունեն մարդկանց հետևյալ իրավական կարգավիճակները՝ **քաղաքացիներ, այլ պետության քաղաքացիներ, երկքաղաքացիներ, քաղաքացիություն չունեցողներ**:

Պետության բնակչության կառուցվածքը



Քաղաքացիներ

Ունեն Սահմանադրությամբ և օրենքներով սահմանված բոլոր իրավունքներն ու ազատությունները: Միայն նրանց են վերապահվում քաղաքական և մի շարք այլ իրավունքներ ու ազատություններ: Քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի:

Երկքաղաքացիներ

Միաժամանակ Հայաստանի և մեկ այլ պետության քաղաքացի: Ըստ Սահամանադրության նրանց իրավունքները եւ պարտականությունները սահմանվում են օրենքով:

Այլ պետության քաղաքացիներ

Ունեն այլ պետության քաղաքացիություն: Չեն օտվում քաղաքական իրավունքներից: Ունեն դիվանագիտական պաշտպանության իրավունք: Ձերբակալելիս, կալանելիս, քրեական պատասխանատվության ենթարկելիս համապատասխան պաշտոնատար անձիք պարտավոր են 24 ժամվա ընթացքում այդ մասին տեղյակ պահել օտաերկրացու պետության ներկայացուցչությանը:

Քաղաքացիություն չունեցողներ

Անձը կորցրել է իր պետության աղաքացիությունը, սակայն ձեռք չի բերել մեկ այլ պետության քաղաքացիություն: Չեն օգտվում դիվանագիտական աշտպանության իրավունքից: Սահմանադրությունը և օրենքները նրանց օժտել են միայն մարդուն բնորոշ իրավունքներով ու ազատություններով:

2. «ՔԱՂԱՔԱՑԻ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏՆԵՐԸ

Պատմականորեն «քաղաքացի» հասկացությունը նշանակում է ազատ և պատասխանատու մարդ: Այս իմաստը ծագել է Հին Հունաստանում և զարգացվել է Հին Հռոմում: Այստեղ քաղաքացիներ էին անվանում տվյալ պետության անդամ համարվող ազատ մարդկանց: Հետևաբար՝ «քաղաքացի» հասկացությունը դեռևս այս ժամանակներից ենթադրում էր անհատ, որին բնորոշ են ազատությունը, պատիվը և արժանապատվությունը: Ազատ քաղաքացիների համակեցությունն անվանում են «քաղաքացիական հասարակություն», որում մարդու բնական ազատությունը վերածվում է քաղաքացիական ազատության: Ներկայումս քաղաքացի հասկացությունը երկիմաստ է:

«Քաղաքացի» հասկացության իրավական իմաստը: Իրավական իմաստով «քաղաքացի» հասկացությունը մատնանշում է տվյալ պետության մշտական բնակչին, որը կապված է պետության հետ փոխադարձ իրավունքներով ու պարտականություններով: «Քաղաքացի» հասկացությունից ածանցված է «քաղաքացիություն» հասկացությունը, որը որոշում է մարդու իրավական կարգավիճակը:

Քաղաքացիությունն արտահայտում է պետության հետ մարդու քաղաքական և իրավական կապը, որը բնութագրվում է կայունությամբ ու կողմերի՝ միմյանց հանդեպ ունեցած իրավունքներով և պարտականություններով: Քաղաքացիությունը կայուն է, որովհետև այն որպես կանոն, ծագում է մարդու ծննդյան պահից և պահպանվում է նրա ամբողջ կյանքի ընթացքում, անկախ նրանից թե որտեղ է գտնվում քաղաքացին՝ պետության ներսում, թե նրա սահմաններից դուրս:

Սահմանադրությունը և օրենքները ամբողջ ծավալով բոլոր իրավունքներն ու ազատությունները, ինչպես նաև պարտականությունները վերապահում են միայն քաղաքացիներին: Օրինակ՝ ընտրելու իրավունքը: Ոչ քաղաքացիներն իրավունքների և ազատությունների որոշակի մասով չեն օժտված, և որոշ պարտականություններ չեն կրում: Միջազգային պայմանագրերը, Սահմանադրությունը և մյուս օրենքները տարբերակում են այն իրավունքներն ու ազատությունները, որոնցով մարդն օժտված է անկախ իր քաղաքացիությունից: Այդ իրավունքները և ազատությունները կրող սուբյեկտին նշելու համար գործածվում են «մարդը», «ամենքը», «յուրաքանչյուր ոք», «բոլորը» հասկացությունները:

Գործնական աշխատանք: *Կարդացեք ՀՀ Սահմանադրության 39-րդ հոդվածը և պարզեք, թե կրթության ոլորտում ի՞նչ իրավունքներ ունեն քաղաքացիները և ոչ քաղաքացիները: Ի՞նչ եք կարծում, որո՞նք են նրանց միջև խտրականության պատճառները:*

«Քաղաքացի» հասկացության բարոյական իմաստը: Բարոյական իմաստով «քաղաքացի» հասկացությունը նշանակում է անհատ, որին հատուկ են պատասխանատվությունն իր երկրի ու քաղաքացիական պարտականությունների նկատմամբ, որն ունի իսկական քաղաքացիական դիրքորոշում: Անհատի այդպիսի որակն անվանում են **քաղաքացիականություն,** որը շատ կարևոր է հասարակության բարգավաճման համար (*տե՛ս հաջորդ դասը*):

Մտորումներ: *«Բանաստեղծ կարող ես չլինել, բայց քաղաքացի պարտավո՛ր ես լինել»: Ի՞նչ էր ուզում ասել Ա.Ն. Նեկրասովը: Համաձա՞յն եք նրա հետ:*

3. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Քաղաքացիության որոշման սկզբունքները: «Յուրաքանչյուր մարդ ունի քաղաքացիության իրավունք: Ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել քաղաքացիությունից կամ իր քաղաքացիությունը փոխելու իրավունքից»: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի այս դրույթներին համապատասխան յուրաքանչյուր պետության օրենսդրություն սահմանում է, թե ով է համարվում իր քաղաքացին: Քաղաքացիությունը հիմնականում ձեռք է բերվում ծնունդով: Քաղաքացիության հարցը լուծելիս պետությունները ելնում են կամ **«արյան սկզբունքից» (ազգային սկզբունքը)** կամ էլ **«հողի սկզբունքից» (տարածքային սկզբունք)**: «Արյան սկզբունքի» հիման վրա նորածնի քաղաքացիությունը որոշվում է ծնողների քաղաքացիությամբ և կախված չէ նրա ծննդյան վայրից: Մեր Սահմանադրությամբ սահմանված է արյան սկզբունքը: «Հողի սկզբունքի» դեպքում երեխայի քաղաքացիությունը որոշվում է նրա ծննդյան վայրով և կախված չէ ծնողների քաղաքացիությունից: Օրինակ, Բրազիլիայի քաղաքացի է նրա տարածքում ծնված յուրաքանչյուր երեխա, իսկ Բրազիլիայից դուրս ծնված բրազիլական քաղաքացիների երեխան չի համարվում Բրազիլիայի քաղաքացի:

Քաղաքացիության իրավական կարգավորման հիմունքները Հայաստանում: ՀՀ Սահմանադրությունը սահամանում է քաղաքացիության իրավական կարգավորման հիմունքները, իսկ օրենքը՝ քաղաքացիության ձեռքբերման ու դադարման հիմքերը և կարգը:

- **Հայաստանի քաղաքացիներից ծնված երեխան Հայաստանի քաղաքացի է՝** անկախ ծնվելու վայրից:
- **Հայաստանի քաղաքացին միաժամանակ կարող է լինել այլ պետության քաղաքացի:**
- **Յուրաքանչյուր ոք կարող է դիմել ՀՀ քաղաքացիություն ստանալու համար:** ՀՀ քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած յուրաքանչյուր անձ կարող է դիմել քաղաքացիություն ստանալու համար, եթե նա օրենքով սահմանված կարգով, վերջին երեք տարիներին մշտապես բնակվել է Հայաստանում, բացատրվում է հայերենով, և ծանոթ է մեր Սահմանադրությանը: Քաղաքացիություն ստացող անձը կարդում է երդում հայերեն տեքստով և ստորագրում է այն: ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումը մերժվում է, եթե տվյալ անձն իր գործունեությամբ վնասում է պետական և հասարակական անվտանգությունը, հասարակական կարգը, հանրության առողջությունն ու բարքերը, այլոց իրավունքներն ու ազատությունները, պատիվն ու համբավը:
- **Ազգությամբ հայերը ՀՀ քաղաքացիություն են ձեռք բերում պարզեցված կարգով**: Սահմանադրությունը արտացոլում է մեր ժողովրդի զգալի մասի աշխարհասփյուռ վիճակը և, ազգությամբ հայերի համար սահմանում է ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելու պարզեցված կարգ: Դա նշանակում է, որ ՀՀ քաղաքացիություն ձեռք բերելիս նրանց նկատմամբ չեն կիրառվի այլ ազգությունների պատկանող օտարերկրացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց համար սահմանված վերապահումները և պահանջները:

Օրինակ՝ եթե ծագումով հայը բնակություն է հաստատել Հայաստանում, ապա նա առանց երեք տարվա բնակության ժամկետի կարող է ստանալ ՀՀ քաղաքացիություն:

Մտորումներ: *Ուրիշ ի՞նչ կարող է անել պետությունը՝ աշխարհասփյուռ հայերին Հայաստանում հավաքելու համար: Մտորե՛ք այս հարցի շուրջ և փորձե՛ք մշակել առաջարկություններ: Մինչև 2005թ. սահմանադրական փոփոխությունները ՀՀ Սահմանադրությունն արգելում էր երկքաղաքացիությունը: Ի՞նչ եք կարծում, ինչու՞: Բաժանվեք երկու խմբի և կազմակերպեք քննարկում:*

- **Ոչ ոք չի կարող զրկվել ՀՀ քաղաքացիությունից, ինչպես նաեւ քաղաքացիությունը փոխելու իրավունքից**: 18 տարին լրացած յուրաքանչյուր քաղաքացի իրավունք ունի փոխել քաղաքացիությունը՝ դուրս գալ ՀՀ քաղաքացիությունից և ձեռք բերել այլ պետության քաղաքացիություն: Քաղաքացիությունը փոխելու դիմումը կարող է մերժվել, եթե նրա նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, նրա նկատմամբ կա դատարանի օրինական ուժի մեջ մտած և կատարման ենթակա դատավճիռ կամ վճիռ, եթե քաղաքացիությունից դուրս գալը հակասում է մեր ազգային անվտանգության շահերին, ինչպես նաև եթե նա ունի չկատարված պարտավորություններ:
- **Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի քաղաքացի է, ունի ՀՀ քաղաքացիության իրավունք:** Երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի քաղաքացի է, իսկ մյուսը օտարերկրացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ: Նման համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, երբ նա ծնվել է ՀՀ-ում կամ երբ ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելով դառնում է քաղաքացիություն չունեցող անձ և կամ՝ եթե նրա ծնողները մշտապես բնակվում են Հայաստանում: Երեխան, որի ծնողներից մեկը նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ կամ քաղաքացիություն չունեցող անձ է, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:
- **Յուրաքանչյուր երեխա, որի ծնողներից մեկը Հայաստանի քաղաքացի է, ունի քաղաքացիության իրավունք:** Երբ ծնողներից մեկը երեխայի ծնվելու պահին Հայաստանի քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրացի, երեխայի քաղաքացիությունը որոշվում է ծնողների գրավոր համաձայնությամբ: Նման համաձայնության բացակայության դեպքում երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն՝
    - եթե նա ծնվել է ՀՀ-ում,
    - եթե քաղաքացիություն ձեռք չբերելով՝ դառնում է քաղաքացիություն չունեցող անձ,
    - եթե նրա ծնողները մշտապես բնակվում են Հայաստանում:

  Երեխան, որի ծնողներից մեկը նրա ծնվելու պահին ՀՀ քաղաքացի է, իսկ մյուսն անհայտ կամ քաղաքացիություն չունեցող անձ է, ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:
- **Քաղաքացիություն չունեցող անձանցից Հայաստանում ծնված երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:**

Քաղաքացիության հարցերի լուծման կարգը: Հանրապետության նախագահի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումներից է Ներման,

քաղաքացիության, պարգևների և կոչումների վարչությունը: Քաղաքացիության հարցերը լուծում է ՀՀ Նախագահը իր հրամանագրերով: Քաղաքացիության հարցերի վերաբերյալ դիմումները քննարկվում են մեկամյա ժամկետում: Դիմումի մերժման դեպքում կրկին կարելի է դիմել, մերժման օրից մեկ տարի հետո: Պաշտոնատար անձանց կողմից քաղաքացիության հարցերով դիմումները չընդունելը, քննարկման ժամկետները խախտելը, ինչպես նաև նրանց այլ անօրինական գործողությունները կարող են բողոքարկվել դատական կարգով:

Հայաստանի մանուկ քաղաքացիների նկարներ	*Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բարն եմ սիրում,* *Մեր հին սազի ողբանվագ, լացակումած լարն եմ սիրում,* *Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛ւյրը վառման,* *Ու նաիրյան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում:* *Իմ կարոտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հեքիաթ չկա.* *Նարեկացու, Քուչակի պես լուսապսակ ճակատ չկա.* *Աշխա՛րհ անցի՛ր, Արարատի նման ճերմակ գագաթ չկա.* *Ինչպես անհաս փառքի ճամփա՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում:* *Ե. Չարենց*

4. ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանում գտնվող կամ բնակվող այլ պետության քաղաքացին պարտավոր է պահպանել ՀՀ օրենքները, հարգել մեր ժողովրդի ազգային ավանդույթները և սովորույթները: Նա ունի մտքի, խոսքի, խղճի և դավանանքի ազատության իրավունք, մեր Սահմանադրությանը համապատասխան:

Այլ պետության քաղաքացին իրավունք ունի պահպանել իր ազգային լեզուն, մշակույթը և սովորույթները: Նա ունի անձնական և ընտանեկան կյանքի անօրինական միջամտությունից օրենքով պաշտպանվելու, անձի և բնակարանի անձեռնամխելիության, հաղորդակցության գաղտնիության, պատվի և արժանապատվության, կյանքի և առողջության, անձնական ազատության և գույքի դեմ ոտնձգություններից դատական պաշտպանության իրավունքներ, առանց խտրականության: Այլ պետության քաղաքացին ՀՀ-ում կարող է ամուսնանալ կամ ամուսնալուծվել օրենսդրությամբ սահմանված կարգով և ընտանեկան հարաբերություններում ունի քաղաքացուն հավասար իրավունքներ ու կրում է հավասար պարտականություններ:

Այլ պետության քաղաքացին օրենսդրությամբ սահմանված կարգով ունի աշխատանքի, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, սեփականության իրավունք:

Այլ երկրի քաղաքացին Հայաստանում չունի ընտրական իրավունք, չի կարող անդամագրվել Հայաստանում գործող հասարակական-քաղաքական որևէ

կազմակերպությանը, չի կարող զբաղեցնել պաշտոնների կամ զբաղվել գործունեությամբ, որոնց համար օրենքով նախատեսված է ունենալ ՀՀ քաղաքացիություն:

Սահմանադրությամբ սահմանված պարտականություններից այլ երկրի քաղաքացուն չի վերաբերում միայն ՀՀ զինված ուժերում ծառայելու պարտականությունը: Նա պարտավոր է ոչ ուշ քան ՀՀ մուտքի արտոնագրի կամ կացության ժամկետի լրանալը, հեռանալ Հայաստանից:

Այլ երկրի քաղաքացուն Հայաստանում ձերբակալելիս, կալանելիս, քրեական պատասխանատվության ենթարկելիս կամ ՀՀ տարածքից նրա ելքն արգելելիս լիազորված պաշտոնատար անձիք պարտավոր են ոչ ուշ, քան 24 ժամվա ընթացքում այդ մասին տեղյակ պահել այդ քաղաքացու շահերը պաշտպանող պետության ներկայացուցչությանը, իսկ եթե տվյալ անձը փախստական է՝ ՄԱԿ-ի փախստականների գծով գերագույն հանձնակատարին:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք ինչ է.

ինքնավար անհատ / իրավական կարգադրագիր / ամենաթողություն / բացարձակ իշխանություն / կարգավիճակ / օրինահպատակ / երկքաղաքացի / քաղաքացիություն չունեցող / այլ պետության քաղաքացի:

Պատասխանե՛ք հարցերին

1. Ո՞րն է պետության առաքելությունը:
2. Մարդու ինչպիսի՞ իրավական կարգավիճակներ են հնարավոր և ինչո՞վ են իրարից դրանք տարբերվում:
3. Ո՞րն է քաղաքացի հասկացության պատմական իմաստը:
4.Ո՞րն է քաղաքացի հասկացության իրավական իմաստը:
5.Ո՞րն է քաղաքացի հասկացության բարոյական իմաստը:
6. Քաղաքացիության որոշման ի՞նչ սկզբունքներ կան:
7. Ի՞նչ է նշանակում քաղաքացիությունը փոխելու իրավունքը:
8. Ինչպե՞ս և ո՞ւմ կողմից են լուծվում քաղաքացիության հարցերը Հայաստանում:

Կատարե՛ք սոցիալական հարցում

Հարցման ենթարկեք ձեր շրջապատի հինգ անձանց հետևյալ հարցացանկով և արդյունքներն ամփոփեք դասարանում: *ՀՀ պատշաճ կերպով կատարո՞ւմ է մարդու իրավունքներից բխող իր պարտականությունները («այո», «ոչ») Ո՞րոնք են չկատարման պատճառները. ա) պետությունը չունի՞ կամք և ցանկություն, բ) Հայաստանում չկա՞ մարդու իրավունքների մշակույթ:*

§ 12. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ

Պատմության նպատակն է ժողովուրդներին և մարդկային անհատներին վարել դեպի ներքին բարոյական ազատություն, առանց որի սակավարժեք է արտաքին ազատությունը:
Գ. Նժդեհ (1886-1955)

1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԿԱՅԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆ

Ժողովրդավարական հասարակության կայացման հիմնական նախադրյալը: Դուք արդեն գիտեք, թե ի՞նչ է ժողովրդավարությունը (տե՛ս առաջին դասը): Սակայն պետք է տարբերել ժողովրդավարական, քաղաքացիական հասարակությունը որպես հայեցակարգ, գաղափար և որպես իրականություն: Այսպես քաղաքացիական հասարակության հայեցակարգը Հայաստանի համար դեռևս իդեալ է: Քաղաքացիական հասարակությունը գոյություն ունի այնտեղ և այն ժամանակ, որտեղ և երբ տնտեսապես ու քաղաքականապես ազատ անհատները մասնակցում են պետական գործունեությանը և ապահովում են իրենց շահերն ինքնակազմակերպման ճանապարհով:

Այդպիսով **քաղաքացիական հասարկության կայացման առաջին և հիմնական նախադրյալը քաղաքացիական դիրքորոշման և արժանապատվության որակներ ունեցող անհատն է**: Այդպիսի ազատական հայ մարդուն իրականություն դարձնելու լավագույն միջոցը գիտելիքն է ժողովրդավարության, մարդու իրավունքների և դրանց նշանակության մասին: Հասարակությունը և պետությունը համատարած կրթության ու դաստիարակության միջոցով պետք է արմատավորեն ժողովրդավարական մշակույթ: Ժողովրդավարության տեսաբաններից Ա. դե Թոքվիլն (1805-1859) ասել է. «**Ազատ ապրելու արվեստը ընդունակ է ստեղծել հրաշքներ, բայց միևնույն ժամանակ չկա ավելի դժվար բան, քան սովորել ազատ ապրել**»: Սակայն բացի գիտելիքներից իսկական քաղաքացու ձևավորման համար կարևոր է նաև իրական, առօրյա կենսափորձը:

Եթե հասարակության անդամները չունեն «ազատ ապրելու» որակներ, ապա չի կարող լինել ու կայանալ նաև ժողովրդավարական քաղաքացիական հասարակությունը: Դրանք չեն կարող ներմուծվել վերևից, հիմնադրվել օրենքով, հռչակագրով: Ժողովրդավարությունը բուն հասարակության և նրա անդամների առաջադիմության, մշակույթի, քաղաքակրթության երկարտև զարգացման արդյունքն է: Հասարակության, որի անդամին բնորոշ է մտածողության, հաղորդակցման հատուկ ոճ, հատուկ կացություն, որն անվանում են **քաղաքացիականություն**:

Եթե հասարակությունը և նրա առանձին անդամները չունեն ազատության պատրաստակամություն, ընդունված որոշումների նկատմամբ սոցիալական պատասխանատվության զգացում, ինքնասահմանափակման ընդունակություն, հարգանք համաքաղաքացիների իրավունքների ու շահերի նկատմամբ, մանկուց ներարկված օրենքի նկատմամբ հարգանքի զգացում, ապա քաղաքացիական հասարակության գոյությունը և կայացումը դառնում է հարցական: Հակառակ դեպքում, այսինքն՝ թվարկված որակների դրական միտվածությունը ընդունակ է ստեղծել որոշակի պայմաններ սոցիալական առաջադիմության, հռչակված ժողովրդավարության արժեքների ու սկզբունքների իրականացման համար:

Հետևաբար, քաղաքացիական հասարակության կառուցման առաջին խնդիրն այդպիսի անհատի կայացումն է:

Մտորումներ: *Ինչպիսի՞ն եք դուք ձեր որակներով: Համադրե՛ք ձեր որակները և վերը թվարկվածները: Համընկնո՞ւմ են դրանք, թե՞ ոչ:*

Քաղաքացիական դիրքորոշում և քաղաքացիականություն: Դիրքորոշումը անհատին բնորոշ հոգեբանական երևույթ է, որում ըստ հոգեբանների առկա են երեք բաղադրատարր՝ տեղեկութային, հուզական-գնահատողական, վարքագծային:

Տեղեկութային բաղադրատարրը ենթադրում է մարդու աշխարհայացքը և այն իդեալը, որին նա ձգտում է: Այս դեպքում խոսքը գնում է քաղաքացիական իդեալների մասին, որոնք ամրագրված են Սահմանադրությամբ: Հիշե՛ք ժողովրդավարությունը պետք է սովորել, հաստատե՛լ մեզանում, որը կբերի մեզ արդարության զգացումի, այլ անհատների նկատմամբ խորը հարգանքի, կարեկցանքի:

Մեզանից ամեն մեկի դիքորոշման մեջ կան հուզական-գնահատողական բաղադրատարրեր, ինչը ենթադրում է համակրանք և հակակրանք ինչ-ինչ օբյեկտների նկատմամբ: Ժողովրդավարությունը ենթադրում է հանդուժողականություն, բացառելով անհիմն հակակրանքը, սակայն դա չի նշանակում զիջում, ներողամտություն կամ բացասական վարքագծի խրախուսում: Ժողովրդավարությունն ամենից առաջ ակտիվ հուզական վերաբերմունք է՝ ձևավոր-ված մարդու համընդհանուր իրավունքների ու ազատությունների ճանաչման հիման վրա: Ոչ մի դեպքում ժողովրդավարությունը չի կարող ծառայել այդ հիմնական ար-ժեքների նկատմամբ ոտնձգությունների արդարացմանը:

Մեր իմացությունը և հույզերը որոշում են մեր վարքագիծը, արարքները: Այսպիսով քաղաքացիական դիրքորոշումը նշանակում է պատրաստակամություն, բարոյական պարտք՝ միշտ և բոլոր դեպքերում գործել ժողովրդավարության և մարդու իրավունքների չափանիշներին համապատասխան: Այդ պայքարի և գործելակերպի միջոցներից են՝ բռնության մերժումը, բռնության զոհերի հետ համերաշխության ցուցադրումը, հակաժողովրդավարության և մարդկային ատելության հրահրմանն ուղղված քարոզչության վարկաբեկումը և այլն:

Այդպիսով, քաղաքացիական դիրքորոշումը որպես հոգեբանական հատկություն նշանակում է, որ անհատին բնորոշ է պատասխանատվությունն իր երկրի ու քաղաքացիական պարտականությունների նկատմամբ, այսինքն՝ քաղաքացիականություն: **Քաղաքացիականությամբ օժտված անհատը որպես իսկական քաղաքացի գիտակցում է իր իրավունքները և պարտականությունները հայրենիքի և պետության նկատմամբ:**

Իսկական քաղաքացու բնութագրիչներ

- Իսկական քաղաքացին օրինահպատակ է, հանրորեն ակտիվ, հասարակությունից չօտարված: Այս իմաստով Հայաստանի քաղաքացին ազատ անհատն է, որը իրեն պատասխանատու է համարում իր արարքների համար, զգում է իրեն իր ժողովրդի և հայրենիքի մասնիկը: իր ժողովրդի հետ նա կապված է անցյալով, ներկայով, ապագայով և ընդհանուր ճակատագրով: «Պակասավոր է այն հայը, որ հայրենի պատմության իմաստասիրությունը, նրա հետագա զարգացման ուղիները հասկանալու համար չի վերապրել իր ժողովրդի ողջ անցյալը»:
- Իսկական քաղաքացին անտարբեր չէ, թե ինչ է կատարվում իր հայրենիքում: Ունենալով հայրենիքի համար պատասխանատվության զգացում նա

օգտագործում է իրեն ընձեռված բոլոր հնարավորությունները՝ երկրի և պետության կյանքի վրա ազդելու համար:



- Իսկական քաղաքացին լինելով տնտեսապես անկախ, և ունենալով անձնական ազատություն, ակտիվ մասնակցում է հասարակության և պետության խնդիրների լուծմանը, ազդում է պետության վրա դրականապես:
- «Իդեալական քաղաքացին ոչ միայն չպետք է վնասի ուրիշներին, խախտի ուրիշի սեփականությունը կամ կատարի այլ անարդարություն, այլև պարտավոր է օգնել անարդարությունից տուժածներին և աշխատի ընդհանուր բարիքի համար» (Ցիցերոն):



- Իսկական քաղաքացին հանդուրժողական է, տոգորված խորը հարգանքով այլոց իրավունքների նկատմամբ: Նա հասկանում է, որ ինքն ազատ է, ազատ ունենալ և պնդել իր համոզմունքները և ճանաչում է այլոց նույնպիսի իրավունքը: Սակայն դա չի նշանակում հանդուրժող վերաբերմունք սոցիալական անարդարությանը, հրաժարում սեփական կարծիքից կամ զիջում այլոց համոզմունքներին:

Հանրօգուտ աշխատանք: *Որպես բարոյական պարտք և տուրք ժողովրդավարությանը՝ ձեր շրջապատից որևէ մեկին ընթերցե՛ք իսկական քաղաքացուն բնորոշ հատկությունները:*

Քաղաքացիական արժանապատվություն: Ժողովրդավարության, քաղաքացիական հասարակության ծագման և զարգացման պատմությունը ցույց է տալիս, որ դրանց կայացումը պայմանավորված է բնակչության քաղաքացիական արժանապատվությամբ: **Քաղաքացիական արժանապատվությունը հատուկ, սոցիալապես կարևոր հատկություն է, հասարակության կողմից մարդու արժեքավորության ճանաչումը, մարդու՝ ինքն իր հանդեպ հարգարժան վերաբերմունքը**:

Քաղաքացիական արժանապատվություն ունի միայն տնտեսապես և քաղաքականապես ազատ մարդը: Տնտեսապես ազատությունը հիմնված է անհատական, մասնավոր սեփականության վրա, որն ապահովում է ոչ միայն տնտեսական պահանջմունքների բավարարումը, այլև թույլ է տալիս քաղաքացուն ընդունել ինքնուրույն որոշումներ իր կենսագործունեության վերաբերյալ: Քաղաքական ազատությունն ապահովում է քաղաքացու լրիվ մասնակցությունը քաղաքական գործունեությանը: Անշուշտ այդ ամենի հիմքը մարդու երաշխավորված անձնական ազատությունն է: Այսպիսով քաղաքացիական արժանապատվությունը ի դեմս մարդու իրավունքների արտաքին նախադրյալ և պայման է մարդու մոտ քաղաքացիականության, որպես ներքին հատկության ձևավորման համար:

Սոցիալական հետազոտություն: *Դիտարկելով Ձեր շրջապատի անձանց փորձե՛ք գնահատել նրանց քաղաքացիական դիրքորոշման աստիճանը և մասնակցության տեսակը (ակտիվ կամ պասիվ)՝ վեր հանելով գերակայող միտումները: Որո՞նք են դրա պատճառները: Արդյունքները քննարկե՛ք դասարանում:*

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Քաղաքացիական մասնակցություն» հասկացությունը: Քաղաքացիական դիրքորոշման և արժանապատվության հիմնական ցուցանիշն անհատի ակտիվ մասնակցությունն է հասարակական գործերին: Հասարակական գործերի, հիմնախնդիրների նկատմամբ շահագրգռվածությունը, դրանց քննարկման և լուծման նկատմամբ հետաքրքրվածությունը քաղաքացիական դիրքորոշման կարևոր գործոնն է: Քաղաքացիական դիրքորոշումն այնքանով է ուժեղ, որքանով անհատը հասարակական բարիքների կենսագործումը վեր է դասում անձնական, մասնավոր շահերից:

Իհարկե, բոլոր ժամանակներում կա, եղել և մնում է տարբերությունն անհատական շահերի և այլասիրության միջև և, անշուշտ, հասարակության հաջող զարգացումն անհնարին է առանց անհատական շահերի հզոր շարժառիթների: Քաղաքացիական հասարակության անդամներից չի պահանջվում լինել այլասեր. քաղաքացիական հասարակությունը ենթադրում է գիտակցված անհատական շահ: Դա նշանակում է, որ անհատական շահը որոշվում է հասարակական շահերի և պահանջմունքները ավելի խոշոր համատեքստում: Այդպիսի անձնական շահը չի համարվում «կարճատես»: Դա «հեռատես» անհատական շահ է, որը հաշվի է առնում նաև հասարակական, ընդհանուր շահը:

Մտորումներ: *Ի՞նչ եք հասկանում «կարճատես» և «հեռատես» շահեր ասելով: Բերե՛ք օրինակներ: Դուք անձամբ ձեր գործողություններում ո՞ր շահն եք համարում գերակա, հանրայի՞ն, թե ձեր՝ անհատական: Պատկերացրե՛ք, թե ի՞նչ կլիներ, եթե բոլորը ղեկավարվեյին միայն իրենց անհատական, այսրոպեական շահերով:*

Քաղաքացիական մասնակցությունը որպես ժողովրդավարության տեսակ: Մասնակցության ժողովրդարությունը ենթադրում է, որ բացի ընտրություններից քաղաքացիները պետք է ունենան իրավունք և հնարավորություն ակտիվ մասնակցել քաղաքական որոշումների ընդունմանը, քաղաքական գործընթացներին, ինչպես նաև ընդունված որոշումների կատարման նկատմամբ վերահսկողությանը:

Այդպիսի ժողովրդավարությունը մասնակցությունը դիտարկում է որպես հասարակական և պետական կյանքի կազմակերպման և գործունեության համընդհանուր սկզբունք: Այդ սկզբունքը տարածվում է ոչ միայն քաղաքական կյանքի վրա, այլև տնտեսության, կրթության և նույնիսկ ընտանիքի: Չկան ոլորտներ, որ լինեն մեկուսացված քաղաքականութունից, այդ իսկ պատճառով դրանք բոլորը գտնվում են ժողովրդավարական քաղաքական գործընթացների ոլորտում: Այդպիսի մոտեցումն ապահովում է ժողովրդի շահերի առավել հաշվառումը որոշումներ ընդունելիս, ընդլայնում է նրա ակտիվությունը հասարակական և պետական կյանքում, ամուր կերպով բարձրացնում է իշխանության հեղինակությունը ժողովրդի աչքում, բացառում է նրա օտարումը հասարակությունից և պետական կառավարումից:

Մասնակցության ժողովրդավարությունը ելնում է այն հանգամանքներից, որ մարդը բնական էակ է, որը հասկանում է, թե ինչ է իրենից ներկայացնում հասարակական բարիքը, այդ իսկ պատճառով ընդունակ է գիտակցաբար ընդունել բանական և խելացի որոշումներ: Այդպիսի ժողովրդավարության անկասկած արժանիքն է՝ փորձը ներառել լայն ժողովրդական զանգվածներին պետական կառավարման գործում, քաղաքական գործընթացներում, հաղթահարել բնակչության սոցիալական անտարբերությունը և, դրանով իսկ, ժողովրդավարության սահմանադրական-օրենսդրական իդեալը կենսագործել կյանքում:

Սոցիալական նախագիծ: *Մշակե՛ք Ձեր դպրոցի կամ համայնքային հիմնախնդիրների լուծման մասնակցության ծրագիր և փորձե՛ք կենսագործել այն:*

Քաղաքացիական մասնակցության տեսակները: Անշուշտ, մենք բոլորս էլ ապրելով մեր հայրենիքում, մասնակից ենք այստեղ ընթացող գործընթացներին: Սակայն մեր մասնակցությունը միասեռ չէ իր բովանդակությամբ և պահանջում է յուրաքանչյուր կոնկրետ դրսևորման մեջ անհատի ինքնուրույնության տարբեր աստիճաններ, նրա նախաձեռնողական գործողություններ: Մասնակցությունը օրինաչափորեն պահանջում է մարդկային գործունեության ինտենսիվության մեծ աստիճան: Անհատի մասնակցության աստիճանը հիմնված է նրա քաղաքացիական որակների վրա, նրա նախաձեռնության և հայեցողության վրա, քաղաքացիական, ժողովրդավարական համոզվածության վրա:

Համոզված եղեք, որ «Առանձին անհատի ընկերային դիրքավորումը, նրա վերաբերմունքը դեպի իր պետությունը - ահա թե ինչով է պայմանավորվում այդ վերջինի ճակատագիրը – պետության ճակատագիրը: Հնարավոր են հետևյալ դիրքավորումները: Նախ՝ անհատը սիրում է իր պետությունը, և այդ դեպքում անձնվիրաբար գործում, զոհաբերում, տառապում նրա համար, որով և նպաստում է նրա հզորացմանը և պաշտպանմանը: Նա խորթանում է իր պետությունից՝ դառնում անտարբեր դեպի նրա ճակատագիրը, որով՝ վերջինը դառնում է տկար և դյուրակործան: Վերջապես, նա, անհատը թշնամանում է իր պետությանը և աշխատում ի կորուստ նրա» (Գ. Նժդեհ):

Մեծ հայրենասերի այս խոսքերից հետևում է, որ մարդկանց ներքին դիրքորոշման տեսանկյունից մասնակցությունը մեր հասարակության քաղաքական, տնտեսական, հոգևոր-մշակութային և այլ գործերին կարող է լինել տարբեր: Մեզանից ամեն մեկի մասնակցությունը տարբերվում է իր **շարժառիթներով**, այսինքն՝ ըստ մարդուն գործողության դրդող գործոնների, մարդու համոզմունքների, արժեքային կողմնորոշումների և այլ ներքին բնութագրերի համակարգի: Դրանք պայմանավորում են անհատի մասնակցության ակտիվության աստիճանը: Ըստ այդմ կարելի է առանձնացնել մասնակցության հետևյալ տեսակները:

1. Ակտիվ քաղաքացիական մասնակցություն: Այս դեպքում անհատը գործում է համոզված կերպով: Անհատի սոցիալական ակտիվությունը քաղաքացիական դիրքորոշման բարձր մակարդակն է: Այն նախաձեռնողական վարքագիծ է, որը կարող է դառնալ և հաճախ դառնում է բուն ժողովրդավարական բարեփոխումների գործոն: Մասնակցության ակտիվությունը որոշվում է զարգացած

գիտակցությամբ, խորը ժողովրդավարական համոզվածությամբ: Այսպիսի մասնակիցը կոչվում է իսկական քաղաքացի, որն ունի գիտակցական պատրաստակամություն՝ օգտագործել ժողովրդավարության հնարավորությունները, ստեղծագործաբար ղեկավարվել դրանցով իր ամենօրյա վարքագծում: Ակտիվ մասնակցության հիմքում ընկած են նախաձեռնությունը, ստեղծագործությունը, անհատի գործնական ակտիվությունը: Մասնակցությունը հասարակության կյանքում դրսևորվում է բազմազանորեն: Օրինակ՝ մենք բոլորս պարտավոր ենք մասնակցել հայրենիքի պաշտպանությանը, իսկ տղամարդիկ ծառայել բանակում: Սակայն հայրենիքի համար անհրաժեշտ այդ մասնակցությունը մեզանից ամեն մեկի մոտ կարող է լինել տարբեր: Մեկի մոտ դա պայմանավորված է խորը և համոզված հայրենասիրությամբ, հետևաբար կամավոր է, իսկ մյուսը ծառայում է բանակում հարկադրված, պատասխանատվությունից վախենալով:

2. Հարմարվողական քաղաքացիական մասնակցություն: Հարմարվողական մասնակցությունն անհատի պասիվ գործունեությունն է: Այս դեպքում անհատն հարմարվում է իր շրջապատի (անմիջական սոցիալական շրջապատի, խմբի և այլնի) կարծիքին և գործողություններին, ենթարկվում նրանց: Այլ խոսքերով, մարդը վարվում է այդպես, քանի որ ուրիշներն այդպես են վարվում: Համաձայնողականությունը, սովորաբար, ճանաչվում է սոցիալապես օգտակար երևույթ, քանի որ անհատը, ենթարկվելով այլոց կարծիքին, վարվում է հանրորեն օգտակար: Սակայն պետք է ընդունել և այն, որ այդպիսի դիրքորոշումը, լինելով ընդունելի, չի հանդիսանում հասարակության համար ցանկալի, քանի որ իրենից ներկայացնում է անվերապահ ենթարկում, կույր հետևում, առանց սեփական քաղաքացիական դիրքորոշումների ակտիվության: Այդ պատճառով մարդիկ չեն արտահայտում իրենց մտքերը, համոզմունքները, չեն դրսևորում անկեղծություն, նախաձեռնություն, իրական (ոչ ձևական) ինքնուրույնություն: Ակնհայտ է, որ այլակարծիքությունն անհրաժեշտ է հասարակությանը: Այլակարծիքությունը այն անհատների առաջ ընկնող, անհազանգող վարքագիծն է, ովքեր մյուսներից շուտ են սկսել գործել, պայքարել անհատի իրավունքների ու ազատությունների համար: Սակայն այլակարծիքությունը չպետք է դուրս գա սոցիալապես պատասխանատու վարքագծի շրջանակներից: Այլակարծիքությունը պետք է դրսևորվի իրավաչափորեն, օրենքի շրջանակներում: **Ժողորդավարությունը գաղափարական, քաղաքական, հոգևոր-մշակութային բազմազանության դրսևորում է, սակայն ոչ ամենաթողություն:**

Մտորումներ: *Ձեր շրջապատում մասնակցության ո՞ր տեսակն է գերակշռում: Ինչո՞ւ: Որո՞նք են դրա պատճառները: Ինչպիսի՞ն է անձամբ ձեր քաղաքացիական մասնակցության ակտիվության աստիճանը:*

3. Հասարակությունից օտարված և անտարբեր գոյատևում: Օտարումը հասարակությունից, պետական կառավարումից, սեփականությունից կործանիչ է և անհատի, և պետության, և հասարակության համար: Օրինակ՝ մարդու օտարումը սեփականությունից նշանակում է մարդու կտրվածություն նրա ազատությունը սնող տնտեսական արմատներից: Անշուշտ նյութական ազատություն նշանակում է մարդու նաև հոգևոր, անձնական, քաղաքական, բարոյական անկախություն: Մարդկանց օտարումը քաղաքականությունից հանգեցնում է պետական իշխանության ամենաթողության, չարաշահումների: Իսկական քաղաքացի չպետք է լինի անտարբեր: Չէ որ հայրենիքը միայն մեր ընտանիքը և ունեցվածքը չէ:

Հովհաննես Շիրազ
Որն է, բաբո մեր հայենիք

-Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք:
-Էն, որ ունի բարձր երկինք,
Էն, որ ունի կարմիր արեւ՝
Յուր կապուտակ գլխի վերեւ.
Էն, որ ունի լեռն Ալագյազ՝
Հավքերն՝ աշուղ, ջրերը՝ սազ:
Էն, որ տեսքով իր Սեւանի՝
Մազերն արձակ ու գեղանի՝
Նստած հարսի կնմանի:
Էն, որ ունի աշխարհի թագ՝
Քանց թագավոր՝ Մասիս ճերմակ,
Ճերմակ Մասիս՝ սիրտը մրմուռ,
Գլուխը վեր՝ դրախտի դուռ:
Էն, որ ունի Մասիսն ի վար
Հին-հին բերդեր, վանքեր մթար,
Որ ավերակ, բայց դեռ դարեր
Լուռ կ'աղոթեն երկինքն ի վեր:
Էն, որ ունի Արազ, Տղմուտ,
Եւ ափերը մամռոտ ու մութ
Գերեզմաններն են պապերուդ...
Էն, որ Ղազբեկն ու Արագած՝
Արտերու մեջ՝ ախպեր կանգնած՝
Ձեռ կզարնեն գինով թասին
Ու կձայնեն մեր Մասիսին,
Թե՝ "Հե՛յ, բաբո, բավ չէ՞ մենակ
Պանդուխտ մնաս ամպերու տակ..."

Մրցույթ: *Ամեն մեկդ հավաքագրե՛ք անտարբերության և դրա հետևանքների վերաբերյալ երեքական ասույթներ և կազմակերպեք հրապարակային մրցույթ: Հաղթողին որոշե՛ք դասարանային քվեարկությամբ:*

3. ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴ

Ժողովրդավարությունը որպես ժողովրդի իշխանություն իրականցվում է ժողովրդի կողմից և ժողովրդի համար: Սակայն իրականում այդպիսի կառավարումը բառացիորեն չի կարող գոյություն ունենալ և գոյություն չունի, քանզի անհնարին է, որ յուրաքանչյուր մարդ մասնակցի յուրաքանչյուր ընդունվող որոշմանը: Այդպիսի իրավիճակը կհանգեցնի քաոսի և անպատասխանատվության:

Այս պայմաններում առաջ է գալիս ժողովրդի ներկայացուցչության անհրաժեշտությունը, երբ պարբերաբար ընտրվող անձինք հավակնելով իշխանության, ընդունում են քաղաքական որոշումներ ժողովրդի անունից ժողովրդի

համար: Այսպիսով առաջ են գալիս առաջնորդություն և առաջնորդ երևույթները, երբ մարդուն ընձեռվում է հնարավորություն ընտրել առաջարկված այլընտրանքների միջև: Առաջնորդության ինստիտուտը ծագել է վաղուց և պայմանավորված է հասարակության առանձնահատկություններով՝ անհատների ինքնավարությամբ, սոցիալական հոգեբանությամբ և այլն: Հասարակական կյանքը հիմնված տարաբնույթ, հաճախ հակադիր տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր շահերի և դրանց կրողների (անհատներ, խմբեր, կազմակերպություններ) վրա պահանջում է ղեկավարություն:

Մտորումներ: *«Խորքի կանչին առաջնորդում է խորքը – ժողովուրդ և առաջնորդ գտնում են իրար, միանում, ամբողջանում էութենական մի միասնության մեջ» (Գ. Նժդեհ):*

Հասարակական առաջնորդությունը սոցիալական գործառույթ է՝ պայմանավորված մարդու ընդունակությամբ գիտակցաբար դնել համընդհանուր նպատակներ և որոշել դրանց նվաճման եղանակները:

Առաջնորդները գերիշխող և մարդկանց համակցության մեջ ղեկավար դիրքեր ունեցող անձինք են: **Առաջնորդը մարդ է, որը ղեկավարում, ուղղորդում, և ներշնչում է մնացածին:** Առաջնորդի նման իշխանությունը կարող է լինել **պաշտոնական**, օրինակ՝ հրամանատարը զորամասում, և **ոչ պաշտոնական**՝ մարդ որը չունի պաշտոն, նշանակված ղեկավար չէ, սակայն ազդում է մարդկանց վրա, ընդունակ է կազմակերպել նրանց: Առաջնորդության տարատեսակներից մեկն էլ քաղաքական առաջնորդությունն է, որն ընթանում է քաղաքական ինստիտուտների շրջանակներում: Քաղաքական (պետական) այն գործիչը, որ մշտական և վճռական ազդեցություն է թողնում հասարակության, պետության, կազմակերպության վրա կոչվում է **քաղաքական առաջնորդ:**

Առաջնորդի հատկությունները: Որպես կանոն առաջնորդի հատկություններ են համարում՝ հեռատեսությունը, ճիշտ որոշումների ընդունման ունակությունը, ձեռնահասությունը, այլոց լսելու ու քննադատությունը հանդուժողաբար տանելու հատկությունը, սեփական սխալներն ընդունելը և դրանցից սովորելը, իր խմբի կամ թիմի անդամներին հարգանքով վերաբերվելը, հռետորությունը և մարդկանց ներշնչելու ունակությունը, ինքնավստահությունը, նախաձեռնողականությունը և այլն: Ցիցերոնն (Ք.ա 106-43) ասում էր. «Պետության գործերը վարող անձը պետք է լինի իմաստուն, արդար, չափավոր և ճառախոս»:

Մտորումներ: *Կա՞ն ձեր շրջապատում նման հատկություններ ունեցող անհատներ: Ուրիշ էլ ի՞նչ հատկություններ կվերագրեիք առաջնորդին: Ինչո՞ւ են մարդիկ հետևում առաջնորդներին: Հայ ժողովրդի պատմությունից ի՞նչ առաջնորդներ կարող եք նշել:*

Քաղաքական առաջնորդի գործառույթները: Առաջնորդի գործառույթները կոնկրետ հասարակության մեջ կախված են դրա տնտեսական, քաղաքական պայմանների բնույթից, և, վերջապես բուն առաջնորդի անհատական որակներից: Արդի քաղաքացիական հասարակությունը մեծապես չեզոքացնում է քաղաքագետ-պրոֆեսիոնալների առաջնորդող դիրքերը, սակայն չի լրիվ վերացնում:

Առաջնորդների համընդհանուր գործառույթներից կարելի է առանձնացնել.

❖ **Միավորող գործառույթ**՝ ամբողջ հասարակության կողմից ճանաչված արժեքների և իդեալների հիմքի վրա տարբեր շահերի միավորումը և համաձայնեցումը:

❖ **Կողմնորոշիչ գործառույթ**՝ քաղաքական կուրսի մշակում, որն արտացոլում է առաջադիմության միտումների և բնակչության խմբերի պահանջմունքները:

❖ **Գործիքային գործառույթ՝** հասարակության առջև կանգնած խնդիրների լուծման եղանակների և մեթոդների որոշում:

❖ **Հավաքագրման գործառույթ՝** անհրաժեշտ փոփոխությունների նախաձեռնում, բնակչության մոտ զարգացած խթանների ստեղծման օգնությամբ:

❖ **Հաղորդակցային գործառույթ՝** քաղաքական ինքնակազմակերպման կայուն ձևերի ստեղծում հասարակայնության տարբեր կազմակերպությունների և բնակչության խմբերի հետ սերտ կապերի հիման վրա:

❖ **Արդարության, օրինականության և կարգուկանոնի երաշխավորի գործառույթ՝** պայքար ընդդեմ բյուրոկրատիայի, ապօրինության, անհատի իրավունքների ու ազատությունների խախտումների:

Մտորումներ: *Քաղաքագիտության մեջ ընդունված է առաջնորդությունը բաժանել երեք տեսակների՝ ինքնակալական, ժողովրդավարական, բարձիթողային: Ի՞նչ են դրանք ձեր կարծիքով և որը ո՞ր ոլորտում է կիրառելի: Ի՞նչ եք մտածում «Մի ծաղկով գարուն չի գա» ասացվածքի մասին:*

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

դիրքորոշում / քաղաքացիական դիրքորոշում / ինքնասահմանափակում / քաղաքացիական արժանապատվություն / այլասիրություն / «կարճատես» և «հեռատես շահեր» / օտարում / նախաձեռնողականություն / հարմարվողականություն / ամենաթողություն:

Պատասխանե՛ք հարցերին

1. Ո՞րն է ժողովրդավարական հասարակության կայացման հիմնական նախադրյալը:
2. Որո՞նք են դիրքորոշման բաղադրատարրերը:
3. Ի՞նչ է քաղաքացիական դիրքորոշումը:
4. Ո՞ր մարդն ունի քաղաքացիական արժանապատվություն:
5. Ի՞նչ կապ կա անհատական և ընդհանուր, հասարակական շահերի միջև:
6. Ի՞նչ է քաղաքացիական մասնակցությունը:
7. Որո՞նք են քաղաքացիական մասնակցության տեսակներն ըստ շարժառիթների:
8. Ինչու՞ է անհրաժեշտ առաջնորդությունը:
9. Որո՞նք են առաջնորդի գործառույթները և ո՞րն է դրանցից ամենակարևորը:

Ստեղծագործական աշխատանք

Գրե՛ք փոքրիկ շարադրություն «Առաջնորդը և նրան բնորոշ հատկություններն ու հմտությունները» թեմայով:

§ 13. ՔԱՂԱՔԱՑՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

Սիրելի աշակերտ, դու արդեն սովորել ես, թե ինչ է ժողովրդավարությունը: Դու արդեն գիտես, թե որոնք են ժողովրդավարության երաշխիքները: Այս դասում մենք չենք փորձի սերտել ժողովրդավարության նորանոր և բազում օրինաչափություններ: Ընդամենը կփորձենք պատկերացում կազմել մեկ օրինաչափության վերաբերյալ: Այդ օրինաչափությունը կարելի է ձևակերպել այսպես՝ ժողովրդավարությունը ձևավորվում և զարգանում է մի շարք գործոնների ազդեցության տակ: Այդ գործոններն իրենց բնույթով կարող են լինել անմիջապես մեզանից չկախված (օբյեկտիվ) և մեզանից կախված (սուբյեկտիվ): Գիտնականները որպես մեզանից կախված գործոններ նշում են տվյալ հասարակության քաղաքական ընտրանու դիրքորոշումները, պետության գլխի (միապետ, նախագահ, վարչապետ) անձնական բարոյահիրավական որակները:

Սուբյեկտիվ գործոնների մեջ շատ կարևոր տեղ և դեր է հատկացվում «**ազգի կամ ժողովրդի ոգուն և կամքին**»: Ժողովրդի ոգու, կամքի ու ժողովրդավարության, պետականության միջև կապը կարելի է ձևակերպել այսպես. ինչպիսին հասարակությունը, ժողովուրդը, ազգն են, նրանց ոգին և կամքը, այդպիսին կլինի նրանց կազմած հասարակությունը և ստեղծած պետությունը:

Պատմականորեն ապացուցված օրինաչափություն է, որ ժողովրդի ոգին և կամքը կարող են ուղղված լինել ժողովրդավարության, պետական-սահմանադրական կարգի ամրապնդմանը՝ շնորհիվ իրենց ակտիվ, նպատակամղված պաշտպանությանը, և ընդհակառակը, դրանք իրենց պասիվ, անտարբեր վերաբերմունքով կամա թե ակամա նպաստում են ժողովրդավարության անկմանը, սահմանադրական պետականության թուլացմանը: Ժողովրդավարական, քաղաքացիական բովանդակությամբ ոգի ու կամք ունեցող ժողովուրդն անհրաժեշտության դեպքում ընդունակ է պաշտպանել պետությունը ոչ միայն արտաքին թշնամուց, այլև այն վտանգից, որ ելնում է իշխանավորներից, հասարակական ինչ-ինչ խմբերից:

Այսպիսով, ժողովրդավարության համար պայքարը մեզանից ամեն մեկի բարոյական-իրավական պարտքն է, իսկ դրա միջոցներն են բռնության մերժումը, մարդու իրավունքների զոհերի հետ համերաշխության ցուցադրումը, հակաժողովրդավարական քարոզչության վարկաբեկումը և այլն:

Փաստեր: *19-րդ դարի վերջին գերմանացի նշանավոր իրավաբան Ռուդոլֆ Հերինգն իր հայտնի «Հռոմեական իրավունքի ոգին նրա զարգացման տարբեր աստիճաններում» աշխատության մեջ բարձրացրեց հիմնահարց, թե ո՞րն էր հռոմեական ժողովրդի ոգին և կամքը, և ի՞նչ կապ կար դրանց ու պետության վարչաձևի միջև: Փորձելով հասկանալ Հռոմեական պետության ու իրավունքի էությունը, այդ ժամանակաշրջանի պետական կառավարման էությունը, Հերինգը ցույց տվեց, որ բացի հռոմեացի պաշտոնատար անձանց (հետագայում նաև կայսրերի) կամքից, պետական վարչաձևը, որն իր որակական կողմերով ժողովրդավարական էր, պայմանավորված էր նաև մեկ այլ սուբյեկտիվ գործոնով: Դա «հռոմեական ժողովրդի ոգին ու կամքն» էր: Հերինգն ամենից առաջ փորձեց վեր հանել հռոմեացիների բնավորության հիմնական գծերը, որոնք և հավաքական կերպով պայմանավորում էին այդ ժողովրդի ոգին և նրա առանձնահատկությունները: Հերինգից դեռ շատ առաջ հայ մտածող Շ.*

Շահամիրյանը (18-րդ դ.) գրեց իր «Որոգայթ փառաց» աշխատությունը: Շահամիրյանի այդ աշխատությունն առաջին հերթին հայ ազգային-ազատագրական շարժման կազմակերպման իրավական կառուցակարգի նախագիծ էր: Այն ուներ նաև 521 հոդվածից բաղկացած օրենսդրական բաժին՝ ազատագրված Հայաստանի համար առաջարկվող օրենքների կամ սահմանադրության նախագծի տեսքով: Շահամիրյանի զարգացրած մտքերից մեկն էլ այն է, որ հայ ժողովրդի՝ իր պատմության ընթացքում կրած դժբախտությունների և պարտությունների համար «մեղավոր» են նրա հովիվները, որ «կարգ ու սահման չշնորհեցին՝ վարելու համար մեր կյանքը»: Ընդ որում նա որպես ազգի և պետության օրենքի միջոցով փառավորության օրինակ, մատնանշում է Հռոմեական Հանրապետությունը. «փափագում եմ, որ հռոմեացիների հոգու զորությունն իջնի հայ հոգու վրա... որ մեզ համար հաստատենք օրենքներ...»: Մտածողը չի երկբայում, որ դրանով «մենք կգտնենք նույնպիսի երջանկություն, ինչպիսին գտան հռոմեացիները»:

Պատրաստեք զեկուցում: *Կարդացե՛ք Շահամիր Շահամիրյանի «Որոգայթ փառաց» աշխատության ներածությունը և պատրաստեք զեկուցում՝ «Օրենքների դերը պետականության և ազատության հարատևման գործում» թեմայով:*

Այս ամենն իմանալով, փորձենք վեր հանել ու սովորել ժողովրդավարական, իսկական քաղաքացիական դիրքորոշման բնութագրեր: Ասում են՝ ամեն ինչ ճանաչվում է համեմատության մեջ: Այդ պատճառով ձախ սյունակում ներկայացված է «իսկական հռոմեացու» մարդկային-քաղաքական կերպարը, աջ սյունակում՝ մեծն Սևակի նախանշած «լավ մարդու» բանաստեղծական-հուզական կերպարը: Միջին սյունակը թողնում ենք բաց՝ ձեր կողմից լրացնելու համար: Դուք պետք է այնտեղ ավելացնեք կամ «իսկական քաղաքացու» նոր բնութագրիչներ՝ ձեր պատկերացումների հիման վրա, կամ էլ դիտարկելով ձեր շրջապատի մարդկանց՝ փորձեք այն համեմատել հռոմեացու կերպարի հետ և արձանագրել հայ մարդու բարոյահիրավական կերպարը: Մեկ խորհուրդ ևս՝ տանը ձեզ համար, առանց գրելու խորհեք այն մասին, թե որքանո՞վ եք դուք համապատասխանում հռոմեացու կերպարի և բերված բանաստեղծական կերպարի հետ: Այդ խոհերը կարող եք չհրապարակել, պահել ձեր հոգու խորքում:

Հռոմեացիներին բնորոշ էր երկաթյա հետևողականությունը և համառ պահպանողականությունը:		Չէի ուզի, որ քո կյանքը հարթ խճուղու նման լիներ: Դու մի՛ անցիր ասֆալտ ճամփով, գերադասիր ճամփա՜ շինել:
Հռոմեացիներին բնորոշ էր անխախտ սերը դեպի ազատությունը, անձնական անկախությունը:		Դու հասկացիր հենց այս գլխից, մի մոռացիր երբեք, տղա՛ս. Ազնըվությունն այն է միայն, որ չի փոխվում՝ ոնց էլ շուռ տաս, - Նա մի ճերմակ երես ունի, ոչ թե յոթ – ութ գունեղ աստառ...
Հռոմեացիներն ունեին վառ արտահայտված սեփական արժանապատվության զգացում, առաքինություն, անհատականություն:		Ա՜խ, մի՛ նվա: Հայրըդ երբեք չէր հանդուրժում նվացողին... Շատ ավելի լավ է, տղա՛ս, դառն արցունքով աչքըդ ցողիր Ու քո ճամփան շարունակիր: Թո՛ղ որ լինի նա քարքարոտ...
Հռոմեացիների մոտ անձնական, մանր եսասիրությունը հրաշալիորեն զուգակցվում, իսկ հաճախ վերաճում էր ժողովրդի, ազգի և պետության եսասիրության:		Հպարտ եղիր, բայց ոչ գոռոզ (դատարկ մարդն է գոռոզանում, Հայրդ խելոք ու տխմարին դրանով էր զանազանում):
Հռոմեացին լինելով գործնական, նպատակասլաց և եսասեր՝ ձգտելով իր անձնական պահանջմունքներին, միաժամանակ երբեք չէր հասնելու դրանց իրավունքի, պատվի, հայրենիքի հաշվին:		Հորըդ նման հպարտ զգա, որ ոչ մեկի տուն չես քանդել, Ոչ մի ազնիվ խոսք չես կտրել, ոչ մի ազնիվ միտք չես բանտել,
Հռոմեացին խորապես գիտակցում էր, որ իր անհատական բարիքը պայմանավորված է պետության բարիքով, նրա եսասիրությունը միաժամանակ ընդգրկում էր նաև պետությունը:		Իսկ մեր շուրջը դեռ կան մարդիկ, որ երբ պետք է մեջք են ծռում, Երբ որ պետք է հռհռում են, պե՞տք է՝ ժպտո՛ւմ, պե՞տք է՝ լռո՛ւմ,
Հռոմեացին հասկանում էր, որ օրենքների խստագույն պահպանումը և կատարումը համապատասխանում է համընդհանուրին և, հետևաբար, նրա սեփական շահերին:		Ազնիվ եղիր ամեն ինչում - ո՞վ է կյանքում սովից մեռել: Ճշտի համար աքսոր չկա - ստի հանդեպ ինչո՞ւ լռել:
Հռոմեացին իր ամենօրյա կյանքում հետապնդում էր ոչ թե անձնական օգուտ պետության հաշվին, ոչ թե կարծեցյալ շահույթ ի հաշիվ վերջնական նպատակի, այլ ենթարկում էր հարաբերականորեն ստորինը՝ հարաբերականորեն բարձրագույնին, առանձինը՝ համընդհանուրին:		Լինես, մնաս ամենքի հետ, Նրանց կամքին հպատակվես, «Ես»-ըդ խառնես մեծ «մենքի»-ի հետ, Նրանց ցավով լուռ տապակվես:
Հռոմեացիների մոտ կրոնական զգացմունքները ենթարկված էին		Մի՛ տրտնջա, բայց և կյանքը գրքի նման դու մի կարդա,

հռոմեական պետության նպատակներին:		Գրքի նման՝ քեզնից հեռու, ինչ-որ օտար մարդկանց մասին...
Հռոմեացին խորապես կապված էր և հավատարիմ իր ազգային արմատներին, չէր տառապում օտարապաշտությամբ:		Մի՛ տրտնջա: Դու հիշո՞ւմ ես. «Ձախորդ օրեր... կուգան – կերթան»... Մի՛ տրտնջա: Եթե լավից ետ ես ընկել՝ ինքդ հասիր...
Հռոմեացին բարոյական զզվանք էր տածում անհարգանքի և նախկինում իր ընդունած սկզբունքներն անհարգողի նկատմամբ:		Բայց քո հոգում եթե լինի բարո՛ւ, լավի՛, սիրո՛ կարո՛տ, Դու չե՞ս հոգնի, դու կքայլես, կբարձրանաս դու սարն ի վեր: Դրա համար ոգի է պետք, դրա համար պետք չեն թևեր:
Հռոմեացուն բնորոշ էր վառ արտահայտված օրինահպատակությունը, վերաբերմունքն իրավունքին՝ որպես հռոմեական աշխարհը բարձրացնող բարձրագույն կետ:		Ապրե՞լ, ապրե՞լ, այնպե՞ս ապրել, Որ ուրիշի խիղդով խնդաս, Որ ուրիշի ցնծությունով Ինքդ էլ ցնծաս, ինքդ էլ թնդաս:

Ժողովրդավարության խորհուրդներ

Եկեք խորհենք, ինքներս ժողովրդավար ենք արդյո՞ք, թե՞ ոչ: Արդյո՞ք մենք մոլեռանդ չենք, անտեղի չե՞նք պիտակավորում մարդկանց կամ անհամ կատակներ անում՝ ելնելով նրանց անհատական հատկանիշներից: «Քանի որ պատերազմները սկսվում են մարդկանց ուղեղներում, ապա ուղեղներից էլ պետք է սկսվի խաղաղության կերտումը»: Խորհելով այս մասին՝ փորձի՛ր յուրացնել ժողովրդավարական վարքագծի հետևյալ կանոնները.

Պահպանիր գործող օրենքները և ենթարկվիր օրինական իշխանություններին:

Հարգի՛ր յուրաքանչյուրին և բոլոր մարդկանց, բոլոր իրավունքները, արժանապատվությունը և կյանքը:

Ձեռնպահ մնա բռնությունից կամ բռնություն կիրառելու սպառնալիքից՝ որպես նպատակներին հասնելու միջոց:

Դրսևորի հանդուրժողականություն այլոց նկատմամբ: Նրանք ունեն նույն հավակնությունները և իրավունքներն ինչ դու:

Ի՞նչ է ժողովրդավարությունը: Միություն՝ այո, միօրինակություն՝ ոչ: Բազմազանություն՝ այո, բռնություն՝ ոչ: Կրքոտ վեճեր՝ այո, ուժ և ենթարկում՝ ոչ:

Հասարակական խաղաղություն և ժողովրդավարություն հաստատելու համար առաջին հերթին խաղաղություն ու ժողովրդավարականություն հաստատիր քեզանում:

Ժողովրդավարությունը հարմարվողականություն չէ:

Ժողովրդավարությունն ամենից առաջ ակտիվ վերաբերմունք է՝ ձևավորված մարդու համընդհանուր իրավունքների ու ազատությունների ճանաչման հիման վրա:

Ժողովրդավարությունը պարտականություն է նպաստելու մարդու իրավունքնե-րի, բազմակարծության, իրավակարգի հաստատմանը:

Ժողովրդավարությունը նշանակում է, որ յուրաքանչյուր ոք ազատ է ունենալու և պնդելու իր համոզմունքները և ճանաչում է այլոց նույնպիսի իրավունքը:

Ժողովրդավարության մերժմամբ մերժվում է մարդ էակի՝ որպես հիմնարար և բարձրագույն արժեքի, գաղափարը:

ԳԼՈՒԽ 4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

§ 14. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ո՛վ հայ ժողովուրդ, քո միակ
փրկությունը քո հավաքական ուժի մեջ է:
Ե. Չարենց (1897-1937)

1. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

Հասարակությունն իր ձևավորման պահից անցել է զարգացման բարդ և հակասական ճանապարհ: Պատմության ընթացում եղել են ստրկատիրական, ճորտատիրական հասարակություններ: Պատմական այդ գործընթացում մարդկային հասարակությունը, ձեռք բերելով քաղաքակիրթ, ժողովրդավարական որակներ, դառնալով ինքնակառավարվող ամբողջական համակարգ, կարողանալով իրավական և ժողովրդավարական դարձնել նաև պետությանը, վերածվել է քաղաքացիական հասարակության: Քաղաքացիական հասարակությունը տարբերվում է ոչ քաղաքացիական հասարակությունից իր մի շարք հատկանիշներով:

Քաղաքացիական հասարակությունն իրավական, ազատական-ժողովրդավարական, ինքնակառավարվող բազմակարծիքային, բաց հասարակություն է՝ կազմված ազատ անհատներից, որոնք իրականացնում են իրենց շահերը բոլորի համար հավասար և ընդհանուր օրենքի շրջանակներում:

Ազատ մարդը քաղաքացիական հասարակության բարձրագույն արժեքն է: Քաղաքացիական հասարակության սկզբնական կառուցվածքային տարրը մարդն է իր բնական պահանջմունքներով ու շահերով, որոնք ճանաչվում են հասարակության և պետության կողմից: Ցանկացած հասարակություն և պետություն կարող է հավակնել կոչվելու ժողովրդավարական և իրավական միայն այն դեպքում, երբ դրանցում մարդը, նրա բնական իրավունքներն ու ազատությունները ճանաչվել են բարձրագույն արժեք և երաշխավորված են իրականում:

Քաղաքացիական հասարակության անդամներն ազատ անհատներն են: Այդ հասարակությունում անհատի ազատությունը երաշխավորված է և՛ տնտեսական, և՛ քաղաքական, և՛ անձնական առումներով: **Տնտեսական** առումով քաղաքացիական հասարակությունում անձն ունի սեփականության իրավունք: Նա ազատ է

սեփականության ձևի, աշխատանքի ընտրության հարցում: **Քաղաքական** առումով անհատի ազատությունը ենթադրում է նրա իրավունքը՝ լինելու որևէ հասարակական կազմակերպության անդամ, ունենալու սեփական կարծիքը պետական իշխանության համակարգի գործունեության վերաբերյալ: **Անձնական** առումով անհատի ազատությունը ենթադրում է նրա ինքնուրույն կենսագործունեությունը:

Քաղաքացիական հասարակությունն ունի ինքնակառավարման ներուժ: Արդյունքում հասարակությունը դառնում է պետությունից անկախ, որոշակիորեն ինքնավար և կարողանում է սահմանափակել պետական իշխանությունը, նվազագույնի հասցնել նրա միջամտությունը հասարակության գործերին: Առանց անկախ, ինքնակարգավորվող, բազմակարծիքային քաղաքացիական հասարակության ժողովրդավարությունը, ազատությունը և հավասարությունը կվերածվեն դատարակ կարգախոսների:

Պետությունը և քաղաքացիական հասարակությունը միմյանց ժողովրդավարականացման պայմաններ են: Առանց պետության հուսալի պաշտպանության, հակամարտությունների լուծման գործառույթների քաղաքացիական հասարակությունը կծնի անազատության և անհավասարության նոր ձևեր: Պետական իշխանության ինստիտուտները միջոցներ են, որոնց օգնությամբ կենսագործվում են իրավական օրենքները, հռչակվում և իրականացվում է սոցիալ-տնտեսական քաղաքականությունը, սանձվում և իրավական շրջանակի մեջ են դրվում հասարակական հակամարտությունները: Պետությունը քաղաքացիական հասարակության գոյության ու գործունեության երաշխավորն է: Մյուս կողմից՝ քաղաքացիական հասարակությունը իր խայտաբղետ կազմակերպություններով վերահսկում է պետությանը և նրա պաշտոնյաներին, զսպում և հակակշռում է պետական իշխանությանը:

Քաղաքացիական հասարակությունը իրավական, ժողովրդավարական հասարակություն է: Այդ հասարակության մեջ մարդը և նրա իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են: Քաղաքացիական հասարակության մեջ ողջ, այդ թվում՝ իրավական գաղափարախոսության հիմքն այդ արժեքներն են: Այդ հանգամանքն իր հերթին պայմանավորում է քաղաքացիական հասարակությանը բնորոշ պետության էությունը և ձևը: Պետությունն այստեղ իր ձևով իրավական է, իսկ էությամբ՝ քաղաքացիական համերաշխության և ընդհանուր բարեկեցության միջոց: Քաղաքացիական հասարակության պետական իշխանությունը կոչված է երաշխավորելու հասարակության քաղաքակիրթ գոյությունը և զարգացումը:

Քաղաքացիական հասարակության բնութագրական հատկանիշներից է բազմազանությունը՝ պլյուրալիզմը: Այն գլխավոր հատկանիշ է քաղաքացիական հասարակության բոլոր կառուցվածքային համակարգերի համար: Օրինակ՝ քաղաքական համակարգում, ինչպես տեսանք, գործում են տարբեր քաղաքական կուսակցություններ, և դա բնական է: Ինչո՞ւ: Որովհետև դա հնարավորություն է տալիս արտահայտելու մարդ էակի բազմազան քաղաքական պահանջմունքներն ու

շահերը: Մարդիկ ունեն տարբեր քաղաքական-հասարակական դիրքորոշումներ ու շահեր: Եթե հասարակության քաղաքական համակարգը բազմազանություն չունի, ուրեմն այն չի կարող կոչվել քաղաքացիական, ժողովրդավարական հասարակություն:

Քաղաքացիական հասարակության կայացումը Հայաստանում: Չնայած քաղաքացիական հասարակության հիմունքների սահմանադրական ամրագրմանը՝ այն մեզանում դեռևս չի ձևավորվել: Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացումը ռազմավարական խնդիր է, որի, լուծումը, սակայն երկար ժամանակ է պահանջում: Դրա համար անհրաժեշտ է և՛ հասարակության, և՛ պետական իշխանության քրտնաջան, խելամիտ, նպատակամղված գործունեություն: Բոլոր բարեփոխումները վերջին հաշվով տանում են քաղաքացիական հասարակության կայացմանը:

Հանրօգուտ աշխատանք: *Պատրաստե՛ք հակակոռուպցիոն քարոզչական թերթիկներ և տարածե՛ք դրանք:*

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ցանկացած հասարակություն իրենից ներկայացնում է սոցիալական, տնտեսական, քաղաքական, հոգևոր-մշակութային և այլ կառուցվախքային համակարգերի ամբողջություն:



Քաղաքացիական հասարակության կառուցվածքը արտահայտում է հասարակության (մարդու) կենսագործունեության համապատասխան ոլորտները և իրենից ներկայացնում է որոշակի բաղադրատարրերի ու հարաբերությունների ամբողջություն: Օրինակ՝ քաղաքացիական հասարակության **սոցիալական համակարգն** ընդգրկում է մարդկանց օբյեկտիվորեն գոյություն ունեցող ընդհանրությունները և հարաբերությունները նրանց միջև: Այս համակարգի բնական և հիմնական բաղադրատարրն ընտանիքն է: Ամուսնանալը և ընտանիք կազմելը մարդու բնական իրավունքներից է: Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է: Հասարակության և պետության պարտականությունն է երաշխավորել մարդու ընտանեկան կյանքի պաշտպանությունը անօրինական միջամտություններից: Սոցիալական համակարգի բաղադրատարրերից են նաև մարդկանց առանձին խմբերը, խավերը, դասակարգերը, ազգերը և այլն, ինչպես նաև նրանց միջև առաջացող հարաբերությունները: Այս ոլորտում պետության առաքելությունն է հաստատել սոցիալական համերաշխություն ու խաղաղություն նշված բաղադրատարրերի միջև:



Քաղաքացիական հասարակության **հոգևոր-մշակութային համակարգը** ներառում է հոգևոր-մշակութային արժեքների շուրջ համապատասխան հաստատությունների ու մարդկանց միջև առաջացող հարաբերությունները: Այս համակարգի մեջ են մտնում գաղափարախոսական, կրթական, գիտական, մշակութային, բարոյական, կրոնական ոլորտները: Այս համակարգի հիմքում ևս ընկած է բազմազանությունը, այլընտրանքը, գաղափարական (աշխարհայացքի) և կրոնական (խղճի ու դավանանքի) ազատությունը, կրթական և դաստիարակչական ոչ պետական կառույցների առկայությունը:

Կարևոր է իմանալ, որ քաղաքացիական հասարակության ամեն մի համակարգին բնորոշ հիմունքները (սկզբունքները) ամրագրվում են հիմնական օրենքով՝ Սահմանադրությամբ:

3. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Միավորումներ կազմելու իրավունքը և հասարակական կազմակերպությունները: Քաղաքացիական հասարակության անհատներն իրենց շահերն ու պահանջմունքներն ազատորեն արտահայտելու և դրանք իրականացնելու համար միավորումներ կազմելու իրավունք ունեն: Այս ցանկությունն ու պահանջը ժողովրդավարության հենասյուներից մեկն է: Հետևաբար, այն երաշխավորված է Սահմանադրությամբ և օրենքներով, պահպանվում է պետության կողմից (տե՛ս § 23, միավորումներ կազմելու իրավունքը):

Անհատների միավորման հետևանքով ստեղծված հասարակական կազմակերպությունները ոչ կառավարական, ոչ պետական կազմակերպություններ են, իրենցից ներկայացնում են ինքնակառավարվող քաղաքացիական հասարակության բաղադրատարրեր և թույլ են տալիս լուծել հանրային բնույթ ունեցող խնդիրներ:



Քաղաքացիական հասարակության բնութագրական գծերից մեկն էլ բազմազան հասարակական կազմակերպությունների համակարգի առկայությունն է (կուսակցություններ, շարժումներ, արհմիություններ, ստեղծագործական միություններ, սպառողների միություններ և այլն): Դրանք հնարավորություն են տալիս մարդկանց՝ միավորվելու ըստ իրենց նախասիրությունների և արտահայտելու իրենց զանազան պահանջմունքներն ու շահերը (քաղաքական, տնտեսական, հոգևոր-մշակութային և

այլն): Քաղաքացիական հասարակության կայացման աստիճանը բնութագրվում է ոչ միայն հասարակական կազմակերպությունների բազմազանությամբ, այլև ակտիվությամբ ու գործունեությամբ, դրանց աշխատանքի որակով և ազդեցության չափով:

Հասարակական կազմակերպությունների տեսակները: Միավորումներ կազմելու մարդու և քաղաքացու իրավունքների իրականացման հետևանքով հասարակության մեջ ստեղծվում և գործում են բազմաթիվ հասարակական կազմակերպություններ, որոնք իրենց բնույթով տարբեր են: Նկատի՛ ունեցեք, որ հասարակական կազմակերպությունները բնութագրական են քաղաքացիական հասարակության բոլոր կառուցվածքային համակարգերին: Այսինքն՝ հասարակական կազմակերպությունները գործում են և՛ քաղաքական, և՛ տնտեսական, և՛ հոգևոր-մշակութային և այլ ոլորտներում:

Հասարակական կազմակերպությունների դասակարգման չափանիշներից մեկն էլ դրանց դասակարգումն է ըստ քաղաքականությանն առնչվելու: Այս հիմքով բոլոր հասարակական կազմակերպությունները բաժանվում են երկու խմբի՝ **քաղաքական** և **ոչ քաղաքական**: Քաղաքական բնույթ ունեցող հասարակական կազմակերպությունները համարվում են քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգի բաղադրատարր և կատարում են հատուկ քաղաքական գործառույթներ: Այլ կերպ ասած՝ դրանք հիմնականում զբաղված են քաղաքականությամբ: Դրանցից են, օրինակ՝ կուսակցությունները: Իսկ ոչ քաղաքական կազմակերպություններն ուղղակիորեն իրենց առջև քաղաքական խնդիրներ չեն դնում:

4. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգը քաղաքական կազմակերպությունների ամբողջություն է, որոնք իրավունքի (օրենքի) շրջանակներում և պետության միջոցով իրականացնում են քաղաքական իշխանությունը կամ պայքարում են դրա իրականացման համար:

Քաղաքական համակարգի բաղադրատարրեր են համարվում պետությունը և քաղաքական կազմակերպությունները (կուսակցություններ, հասարակական-քաղաքական կազմակերպություններ և շարժումներ): Քաղաքական համակարգում կենտրոնական տեղ է զբաղեցնում պետությունը, որովհետև այն իր բնույթով հանրային իշխանություն է՝ օժտված ինքնիշխանությամբ: Ոչ մի այլ քաղաքական կազմակերպություն նման հատկություններով օժտված չէ: Անձը քաղաքական համակարգում հանդես է գալիս որպես քաղաքական իրավունքներով օժտված քաղաքացի (օրինակ՝ ընտրող, որևէ կուսակցության անդամ, պատգամավորության թեկնածու, պատգամավոր, պետական պաշտոնյա և այլն):

Քաղաքական կազմակերպության հասկացությունը և նշանակությունը: Ի՞նչ է քաղաքական կազմակերպությունը կամ կուսակցությունը: Դրանց բնութագրական գիծն ուղղակի կապն է քաղաքականության հետ, իսկ ստեղծման և գործունեության անմիջական խնդիրը որոշակի քաղաքական նպատակների հասնելն է: Ի տարբերություն այլ հասարակական կազմակերպությունների՝ կուսակցություններ կարող են ստեղծել և կուսակցություններին կարող են անդամագրվել միայն քաղաքացիները:

Քաղաքական կազմակերպությունները ընդհանուր շահերի, գաղափարների և նպատակների հիման վրա ձևավորված ակտիվ ու կազմակերպված հասարակական միավորումներ են, որոնք ձգտում են տիրանալ պետական իշխանությանը կամ վճռական կերպով ազդել վերջինիս վրա իրենց ծրագրերն իրագործելու նպատակով:

Քաղաքացիների ձայնը իշխանություններին լսելի դարձնելու համար թերևս ամենամեծ հնարավորությունը տալիս են քաղաքական կազմակերպությունները: Դրանք միջանկյալ օղակ են պետության ու հասարակության միջև և նպաստում են պետական իշխանության համար պայքարը քաղաքակիրթ դարձնելուն:

Քաղաքական կազմակերպությունների գործառույթները

- Նպաստում են առանձին քաղաքացիների, հասարակական խմբերի մասնավոր շահերը հավաքական քաղաքական շահերի մեջ միավորվելուն և արտահայտում են այդ շահերը՝ վերածելով դրանք կոնկրետ պահանջների և գործողությունների:
- Ձանում են ավելի ակտիվացնել ժողովրդի մասնակցությունը քաղաքական կյանքին՝ ակտիվորեն ներգործելով անհատների և հասարակական խմբերի քաղաքական գիտակցության վրա:
- Մասնակցում են ընտրություններին, որպեսզի գան իշխանության և իրագործեն իրենց ծրագրերը:
- Օգնում են քաղաքացիներին ավելի իրազեկ լինել քաղաքական անցուդարձին և հեշտությամբ կողմնորոշվել ընտրությունների ժամանակ:
- Լսում են ժողովրդի կարծիքներն ու առաջարկությունները և քննարկում դրանք:
- Ընդդիմանում են իշխանության ծրագրերին, քաղաքականությանը և դրանով ժողովրդի ուշադրությունը հրավիրում հրատապ հանրային խնդիրների վրա:
- Նպաստում են ժողովրդի և իշխանության միջև քաղաքական համաձայնության կայացմանը, հանդուրժողականության և փոխզիջողականության մթնոլորտի զարգացմանը:

Ինքնուրույն հետազոտական աշխատանք: *1) Ձեռք բերե՛ք որևէ կուսակցության ծրագիր և պատրաստե՛ք զեկուցում դրա վերաբերյալ: 2) Օգտվելով մամուլից և համացանցից փորձե՛ք համեմատել, թե ինչպե՞ս է մեկնաբանվում նույն քաղաքական իրադարձությունը տարբեր կուսակցությունների կողմից: Արդյունքներն ամփոփե՛ք դասարանում:*

Մրցակցային քաղաքական համակարգը և դրա սահմանադրական հիմունքները: Քաղաքացիական հասարակության քաղաքական համակարգի կազմակերպման և գործունեության հիմնական հատկանիշներից է քաղաքական բազմազանությունը, այսինքն՝ բազմակուսակցական քաղաքական համակարգը: Ժողովրդավարական հասարակություններում պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծվեն իշխանության ձգտող տարբեր քաղաքական կազմակերպությունների անարգել մրցակցության համար: Նման հիմքերով կազմակերպված քաղաքական համակարգը, ի տարբերություն միակուսակցական քաղաքական համակարգի, անվանում են «ժողովրդավարության մրցակցային համակարգ»:

Ըստ Սահմանադրության «Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում են գաղափարախոսական բազմակարծությունը և բազմակուսակցությունը:

Կուսակցությունները կազմավորվում են ազատորեն, նպաստում ժողովրդի քաղաքական կամքի ձևավորմանն ու արտահայտմանը: Նրանց գործունեությունը չի

կարող հակասել Սահմանադրությանը և օրենքներին, իսկ գործելակերպը՝ ժողովրդավարության սկզբունքներին:

Կուսակցություններն ապահովում են իրենց ֆինանսական գործունեության հրապարակայնությունը»:

Հարցում շրջապատին: *Ձեր շրջապատի տարեց մարդկանց խնդրե՛ք, որպեսզի նրանք պատմեն խորհրդային քաղաքական համակարգի մասին: Պատմածը համառոտագրե՛ք և ամփոփե՛ք դասարանում:*

Կուսակցության գործունեությունը կասեցնելը կամ արգելելը: Եթե կուսակցությունները խախտում են օրենքները, ապա Հանրապետության Նախագահի, Ազգային ժողովի, կառավարության դիմումի հիման վրա սահմանադրական դատարանը կարող է որոշում կայացնել կուսակցության գործունեությունը կասեցնելու կամ արգելելու մասին:

Կասեցնել կուսակցության գործունեությունը նշանակում է նրան արգելել իրականացնել օրենքներով նախատեսված իր իրավունքները որոշակի ժամկետով: Կուսակցության գործունեությունը կասեցնելուց հետո, այդ կուսակցությունը պարտավոր է վերացնել օրենքի խախտումները: **Արգելել** կուսակցության գործունեությունը նշանակում է ընդհանրապես չթույլատրել նրա գործունեությունը:

Մտորումներ: *Խորհրդարանական ամեն մի ընտրություն ի հայտ է բերում նոր կուսակցություններ և դրանց դաշինքներ: Որո՞նք են ներկա պահին ակտիվ գործող, ինչպես նաև խորհրդարանում ներկայացուցչություն ունեցող կուսակցությունները: Դրանցից որո՞նք են դիմադիր և որո՞նք ընդդիմադիր: Արդյո՞ք չափից դուրս շատ քանակով կուսակցությունների գոյությունն արդարացված է, թե՝ ոչ: Բաժանվե՛ք միակուսակցության և բազմակուսակցության կողմնակիցների և բանավիճե՛ք:*

5. ՈՉ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ոչ քաղաքական կազմակերպությունների հասկացությունը և կարգավիճակը: Ոչ քաղաքական հասարակական կազմակերպությունը անձանց՝ շահերի ընդհանրության հիման վրա հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքներ բավարարելու նպատակով ստեղծված կամավոր միավորում է: Ոչ քաղաքական հասարակական կազմակերպություններն իրենց կանոնադրություններում չեն ամրագրում ուղղակի քաղաքական խնդիրներ: Բայց դա չի նշանակում, որ դրանք ընդհանրապես չեն մասնակցում քաղաքականությանը:

Հասարակական կազմակերպություններ կարող են հիմնադրել կամ տասնութ տարին լրացած առնվազն երեք ֆիզիկական անձինք, կամ էլ երկու հասարակական կազմակերպություններ: Հասարակական կազմակերպությունները ենթակա են պետական գրանցման: Գրանցվելով նրանք ձեռք են բերում ոչ առևտրային իրավաբանական անձի կարգավիճակ: Այդ կարգավիճակը նրանց հնարավորություն է տալիս իրականացնելու իրենց կանոնադրական խնդիրները: Որպես հասարակական կազմակերպությունների գործունեության երաշխիք Սահմանադրությունը ամրագրում է. «*Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները տարածվում են նաև իրավաբանական անձանց վրա այնքանով, որքանով այդ իրավունքներն ու ազատություններն իրենց էությամբ կիրառելի են դրանց նկատմամբ*»:

Հասարակական կազմակերպությունները կարող են հիմնադրել ՁԼՄ-ներ, տարածել տեղեկատվություն, կազմակերպել հանրահավաքներ և զանգվածային այլ

միջոցառումներ, ներկայացնել և պաշտպանել իրենց անդամների իրավունքներն ու օրինական շահերը պետական մարմիններում և այլ հասարակական կազմակերպություններում, իրականացնել օրենքով չարգելված այլ գործունեություն:

Ճնշման խմբեր և լոբբիականություն: Ոչ քաղաքական հասարակական կազմակերպությունները քաղաքացիական հասարակությունում կարող են իրականացնել, այսպես կոչված, «**ճնշման խմբերի**» գործառույթ: Այսինքն՝ դրանք կարող են զանազան ձևերով ազդել պետական իշխանության մարմինների գործունեության վրա, պահանջներ ներկայացնել դրանց, բողոքարկել դրանց անօրինական գործողություններն ու որոշումները:

Հասարակական ոչ քաղաքական կազմակերպությունները մասնակցում են քաղաքականությանը նաև «**լոբբիականության**» միջոցով: Այս դեպքում նրանք փորձում են ազդել օրենսդիր մարմնի, նրա տարբեր խմբակցությունների վրա՝ ներկայացնելով քննարկվող օրենքի նախագծերի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները և փորձելով անցկացնել դրանք:

Սփյուռքում հասարակական կազմակերպությունները վաղուց են նմանատիպ գործունեություն ծավալել: ԱՄՆ-ում հայկական կազմակերպությունները, գլխավորապես՝ Ամերիկայի հայկական համագումարը և Հայ Դատի հանձնախումբը, օգտակար աշխատանք են տանում կոնգրեսի ներկայացուցիչների հետ: Թերևս այս կազմակերպությունների գործունեության ամենաշոշափելի արդյունքն ամերիկյան կառավարության կողմից Հայաստանին տրամադրվող լայնածավալ օգնությունն է:

Ոչ քաղաքական կազմակերպությունների բազմազանությունը: Ոչ քաղաքական հասարակական կազմակերպությունները լինում են տարբեր բնույթի՝ բնապահպանական, մարդասիրական, մարդու իրավունքների պաշտպանության: Դրանք կարող են միավորել նաև որոշակի հասարակական խմբերի պատկանող անձանց, օրինակ՝ կանանց՝ նպատակ ունենալով պաշտպանել նրանց իրավունքները, բարելավել նրանց կենցաղն ու վիճակը հասարակական կյանքում: Ոչ քաղաքական հասարակական կազմակերպությունները կարող են լինել ստեղծագործական միություններ և միավորել նկարիչներին, գրողներին, կոմպոզիտորներին և այլն:

Ուրիշ ինչ հասարակական կազմակերպություններ կարող եք նշել:

Հայաստանում գրանցված են երկու հազարից ավել հասարակական կազմակերպություններ: Սակայն, կարելի է ասել, որ սրանցից միայն չնչին տոկոսն է ակտիվ գործում: Հասարակական կազմակերպություններն օգնում են թեթևացնել մարդկանց սոցիալական ծանր վիճակը և լուծել մի շարք հասարակական խնդիրներ, որոնք կառավարությունն ի զորու չէ լուծել համապատասխան միջոցներ չունենալու պատճառով: Հասարակական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում են գտնվում նաև այն խնդիրները, որոնք անտեսվել կամ լուծում չեն գտել կառավարության կողմից:

Ոչ քաղաքական կազմակերպության անդամները: Ոչ քաղաքական հասարակական կազմակերպության անդամ կարող է դառնալ տասը տարին լրացած անձը, եթե կազմակերպության կանոնադրությունը դա թույլ է տալիս: Անձի անդամակցությունը հասարակական կազմակերպությանը չի կարող հանդիսանալ

նրա իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմք, պետական մարմիններում պաշտոն զբաղեցնելու պայման կամ արգելք:

Մտորումներ: *Հանդիսանո՞ւմ եք որևէ կազմակերպության անդամ: Բացատրե՛ք այդ կազմակերպության անհրաժեշտությունը: Ի՞նչ հասարակական կազմակերպության կցանկանայիք անդամագրվել կամ ստեղծել:*

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

իրավական հասարակություն / ինքնակառավարման ներուժ / քաղաքացիական համերաշխություն / պլյուրալիզմ / հասարակական կազմակերպություն / քաղաքական և ոչ քաղաքական կազմակերպություններ / կուսակցություններ / միակուսակցական քաղաքական համակարգ / լոբբիականություն / ճնշման խումբ:

Պատասխանե՛ք հարցերին:

1. Ի՞նչ է քաղաքացիական հասարակությունը:
2. Ո՞րն քաղաքացիական հասարակության բարձրագույն արժեքը:
3. Ինչպիսի՞ն է քաղաքացիական հասարակության և պետության փոխհարաբերությունը:
4. Ի՞նչ է քաղաքացիական հասարակության կառուցվածքը և որո՞նք են դրա բաղադրատարրերը:
5. Ի՞նչ կապ կա քաղաքացիական հասարակության և հասարակական կազմակերպության միջև:
6. Հասարակական կազմակերպությունների ի՞նչ տեսակներ կան:
7. Ի՞նչ է քաղաքական համակարգը և որո՞նք են դրա բաղադրատարրերը:
8. Ի՞նչ գործառույթներ են կատարում քաղաքական կազմակերպությունները:
9. Ի՞նչ դեր է կատարում մրցակցությունը քաղաքական համակարգում:
10. Ովքեր կարող են հիմնադրել ոչ քաղաքական կազմակերպություններ:

Ստեղծագործական աշխատանք:

Գրե՛ք փոքրիկ շարադրություն «Իմ երազած հասարակությունը» թեմայով:

§ 15. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Մտավոր բռնությունը բանական էակներին մտածողության մի որոշ ձև և ուղղություն պարտադրելով՝ խեղում է նրանց ոչ միայն մտապես, այլև՝ հոգեպես:
Գ. Նժդեհ (1886-1955)

1. Տեղեկույթի հասկացությունը և նշանակությունը արդի հասարակությունում

Տեղեկույթը մշտապես փոփոխվող տեսական գիտելիք է և տարաբնույթ տեղեկություններ, այդ թվում՝ մարդկանց գործնական հմտությունները: Տեղեկույթն առաջադիմության գրավականն է:

Քաղաքակրթության բարձրագույն աստիճանին հասնում է այն հասարակությունը և պետությունը, որը տնօրինում է ամենից որակով տեղեկույթին, մեծ ծավալով և արագ յուրացնում է այն՝ արդյունավետ կերպով օգտագործելով համամարդկային նպատակների իրականացման համար:



Տեղեկույթը և տեղեկացվածությունը մեծ դեր են խաղում մարդու իրավունքների իրականացման գործում: Օրինակ՝ սեփականության իրավունքը չի կարող լիարժեք իրականացվել տեղեկութային անորոշության պայմաններում: Այսպես՝ առևտրային կազմակերպությունները բնակչությանն առաջարկում են իրենց բաժնետոմսերը, առևտրային բանկերը խոստանում են հրապուրիչ շահույթ: Սակայն ո՞վ կհուշի, թե ինչքանով է արդարացված ապագա բաժնետերի ռիսկը, որը հարկադրված է ներդնելու իր միջոցները խոստումների մեջ: Ո՞վ կպաշտպանի հնարավոր բաժնետերերին խարդախներից:

Սպառողների իրավունքները ևս չեն կարող կենսագործվել կյանքում առանց որակյալ և անորակ ապրանքների մասին բավարար և հավաստի տեղեկությունների, առանց գովազդի և հակագովազդի, առանց ճշմարիտ տեղեկության՝ համեմատական թեսթավորման մասին և այլն:

Քաղաքական իրավունքները ևս ուղղակիորեն կախված են տեղեկույթից: Տեղեկատվական թափանցիկությունը, բացախոսությունը, կառավարական քաղաքականության կանխատեսելիությունը ժողովրդավարական գործընթացի կարևորագույն բաղադրատարերն են, առանց որոնց ժողովրդաիշխանությունից մնում են միայն արտաքին ձևերը: Չևն առանց բովանդակության անհետաքրքիր է ընտրողների համար:

Քաղաքացիական հասարակությունը տեղեկատվական հասարակություն է: Քաղաքացիական հասարակությունը բաց հասարակություն է: Նրանում հռչակված և պետության կողմից երաշխավորված են խոսքի և քննադատության ազատությունը, հրապարակայնությունը: Այդպիսի հասարակության անդամը կարողանում է

բավարարել տեղեկատվություն ստանալու իր իրավունքը: Այդ իրավունքն իրականացվում է քաղաքացիական հասարակության անդամների անմիջական հաղորդակցությամբ, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների (ԶԼՄ) օգնությամբ: Այս ոլորտում առաջացող հարաբերությունները կազմում են քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգը, որի բաղադրատարրերն են մարդու տեղեկատվական իրավունքները, պետությունից անկախ գործող հասարակական, մասնավոր կազմակերպությունները, ինչպես նաև ԶԼՄ-ները:

Կառավարում է նա, ով տիրապետում է տեղեկույթին: Արդյունաբերական, տեղեկատվական հասարակությունում պետական կառավարումը և տեղեկույթը փոխկապակցված երևույթներն են, որոնք փոխներազդում են իրար վրա սոցիալական կառավարման ընթացքում: Եթե պետությունը չի տիրապետում հասարակական գործընթացների վերաբերյալ անկողմնակալ, օբյեկտիվ տեղեկույթի, ապա չի կարող արդյունավետ կերպով իրականացնել կառավարումը:

Միևնույն ժամանակ պետական կառույցները ներազդում են տեղեկույթի վրա, նրա հրապարակայնության, մատչելիության, տարածման և սպառողին փոխանցման գործընթացի վրա:

Բոլոր ժամանակներում իշխանության կարևորագույն սոցիալական գործառույթն է եղել տեղեկույթի չափավորումը, դրա հոգեբանական փաթեթավորումը: Դրա հիման վրա է կառուցված հասարակական կարծիքի մանիպուլյացիայի կառուցակարգը: Ամենահայտնի և հասարակ ձևը, որով իշխանությունը վերահսկում է տեղեկատվական հոսքերի վրա, համարվում է գրաքննությունը (ցենզուրա): Այս դեպքում պետությունը պատասխանատու չինովնիկների օգնությամբ կառավարում է տեղեկատվական նյութի բովանդակությունը:

Տեղեկատվական թափանցիկությունը, բացախոսությունը, կառավարական քաղաքականության հրապարակայնությունը, մարդու տեղեկատվական իրավունքները երաշխիք են պետության տեղեկատվական մենաշնորհի և չափից դուրս գաղտնիության դեմ: Չափից դուրս գաղտնիությունը խախտում է մարդու տեղեկատվական իրավունքները, անտեսում է իշխանության թափանցիկության և հրապարակայնության սկզբունքը: Դա մեզ համար ունի սկզբունքային նշանակություն, քանի որ ավանդաբար բնակչությանը բնորոշ է անվստահությունն իշխանության նկատմամբ, ինչը կարելի է հաղթահարել միայն մեկ ճանապարհով՝ պետական ապարատի աշխատանքի մասին տեղեկույթի հանրամատչելիությամբ:

Տեղեկատվական մենաշնորհի բացասական հետևանքները: Տեղեկույթի մենաշնորհային տնօրինումը, ինչը բնութագրական է ամենից առաջ հակաժողովրդավարական հասարակությանը, արգելք է մարդու իրավունքների լիարժեք իրականացման համար:

Տեղեկույթի պետական մենաշնորհը և գրաքննությունը բումերանգի պես խփում են հենց պետությանը՝ տանելով հասարակությանը տնտեսական, քաղաքական և իրավական փակուղի: Չէ՞ որ տեղեկույթը ժողովուրդ - պետություն ուղղակի կապի միջոցն է: Ուղղակի կապի կամայական չափաբաժնավորումը միայն առաջին

հայացքից է շահավետ կառավարման սուբյեկտի համար: Ի վերջո, այն հանգեցնում է հետադարձ տեղեկույթի վնասակարությանը, զտվածությանը, կողմնակալությանը: Իսկ դա անխուսափելիորեն կառավարման կարևորագույն փուլում՝ որոշումների ընդունման, հանգեցնում է սխալների: Խորհրդային պետության փորձը վկայում է այդ մասին:

Հարցում շրջապատին*: Խորհրդային հասարակությունն անվանում էին «երկաթյա վարագույրով» փակված հասարակություն: Միջազգային ոլորտում և երկրի ներսում տեղեկույթի սահմանափակումը, չափից դուրս գաղտնիությունը, ճշմարիտ վիճակագրության և հրապարակայնության բացակայությունը, «հարմար» տեղեկույթի տարածումը հանգեցրին մեծաթիվ սխալների, որի հետևանքը այդ պետության կործանումն էր: Հարցման ենթարկելով մեծահասակներին նրանցից իմացեք խորհրդային ժամանակաշրջանում տեղեկատվության սահմանափակման և թաքցնելու կոնկրետ դեպքեր:*

Տեղեկատվական համակարգի իրավական կարգավորումը: Իշխանության և տեղեկույթի միջև հարաբերությունների կարգավորման գործուն միջոցը Սահմանադրությունն է և օրենքը, որոնք, ամրագրելով տեղեկատվական հասարակության ժողովրդավարական սկզբունքները և դրանց երաշխիքները, զսպում են կամայականությունն ինչպես պետության, այնպես էլ տեղեկատվական միջոցների կողմից: Արդի ժողովրդավարական հասարակություններում իշխանության և ԶԼՄ-ների միջև հարաբերությունների կարգավորման իրավական եղանակն անհատի տեղեկատվական իրավունքների ամրագրումն է և դրա ապահովումը:

Անհատի տեղեկույթ ունենալու իրավունքը շատ բարդ իրավունք է և բաղկացած է մի քանի իրավական հնարավորություններից: Որպես այդ իրավունքի երաշխիք՝ Սահմանադրությունն ամրագրում է բազմաթիվ դրույթներ: Դրանցից է, օրինակ, նորմատիվ իրավական ակտերի հրապարակայնության սկզբունքը. «*Օրենքներն ուժի մեջ են մտնում «Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո: Այլ նորմատիվ իրավական ակտերն ուժի մեջ են մտնում օրենքով սահմանված կարգով հրապարակվելուց հետո*»:

Տեղեկութային իրավունքների երաշխիքների շարքում մեծ է հաղորդակցության տեխնիկական միջոցների և համապատասխան կառույցների դերը: Եթե չկան ժողովրդավարական կառույցներ հաղորդակցության ոլորտներում, ապա չկան և երաշխիքներ տեղեկույթ ստանալու և տարածելու իրավունքի իրականացման համար: Ուստի և չկա ժողովրդավարություն:

2. ԶԼՄ-ՆԵՐԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Զանգվածային լրատվության միջոցներ են համարվում թերթերը, հանդեսները, փաստավավերագրերը, տեղեկագրերը և պարբերականները, որոնք միանվագ հրատարակվում են 100 օրինակից ավելի տպաքանակով, ինչպես նաև հեռուստա-ռադիոծրագրերը, կինովավերագրերը, որոնք պարբերաբար ստեղծում և հրապարակայնորեն տարածում են լուրեր և տեղեկություններ:

ԶԼՄ-ներն իրենց հոդվածներով, հաղորդումներով տեղյակ են պահում հասարակությանն իրեն հուզող հարցերի վերաբերյալ և փորձում են պաշտպանել ժողովրդի շահերը, հսկել իշխանության գործելակերպը, ժողովրդի և իշխանության

ուշադրությունը հրավիրել այն երևույթների վրա, որոնք չեն բխում ժողովրդի շահերից:

ՁԼՄ-ների նշանակությունը և դերը: Զարգացած ժողովրդավարական երկրներում ՁԼՄ-ների դերը հզոր է և կարող է էական ազդեցություն ունենալ այս կամ այն հարցում: Այստեղ զանգվածային լրատվության միջոցները պայմանականորեն համարվում են չորրորդ իշխանություն՝ իշխանության երեք ճյուղերի՝ օրենսդիրի, գործադիրի և դատականի հետ միասին: ՁԼՄ-ները մեծապես նպաստում են ժողովրդի քաղաքական գիտակցության և հասարակական կարծիքի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը: ՁԼՄ-ները՝ որպես քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգի տարրեր, էական դեր են խաղում պետությանը հակակշռելու, այն սահմանադրական, ժողովրդավարական, իրավական հունի մեջ դնելու գործում: Հենց դրանով է պայմանավորված ՁԼՄ-ներին չորրորդ իշխանության դեր վերագրելը:

Մտորումներ: *Ի՞նչ անկախ հեռուստակայաններ գիտեք: Ո՞րն է Ձեր տպավորությունը. նրանք իրականում անկա՞խ են: Կարելի՞ է ասել, որ Հայաստանում ՁԼՄ-ները չորրորդ իշխանություն են, թե՞ դեռ վաղ է խոսել այդ մասին:*

Խոսքի ազատության նշանակությունը և սահմանները: Խոսքի ազատությունը ժողովրդավարության մեծագույն նվաճումն է: Այն մարդկանց հնարավորություն է ընձեռում արտահայտելու իրենց կարծիքը, տեսակետները, քննադատելու իշխանությունների՝ ժողովրդի շահերից չբխող գործունեությունը, այսինքն՝ ապահովելու բազմակարծությունը: Որպեսզի ՁԼՄ-ները ճիշտ ծառայեն իրենց նպատակին, դրանք պետք է լինեն անկախ, ազատ և չենթարկվեն գրաքննության: Անկախ է համարվում այն մամուլը, որը չի ենթարկվում ոչ կառավարության, ոչ էլ որևէ այլ կազմակերպության հրահանգներին կամ գրաքննությանը:

Սակայն խոսքի ազատության իրավունքն անսահման լինել չի կարող: Խոսքի ազատությունը չի նշանակում, թե կարելի է տպագրել կամ հաղորդել զրպարտություններ, խախտել և ոտնահարել մարդու իրավունքները: Օրենքի համաձայն՝ մարդն իրավունք ունի մամուլով և այլ լրատվամիջոցներով հայտնել իր կարծիքը, տեսակետները հասարակական կյանքի տարբեր խնդիրների վերաբերյալ, ստանալ հավաստի և հրատապ լրատվություն:

Չարաշահել խոսքի ազատության իրավունքը չի կարելի: ՁԼՄ-ներով չի թույլատրվում հրապարակել պետական գաղտնիք պարունակող տեղեկություններ, որոնց ցանկը սահմանում է կառավարությունը: Հրապարակման ենթակա չէ պատերազմ, բռնություն, ազգային ու կրոնական թշնամանք հրահրող, անբարոյականություն, թմրամոլություն և քրեորեն պատժելի այլ արարքներ քարոզող, կեղծ ու չստուգված լրատվությունը:

Քաղաքացու կամ կազմակերպության պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավը օրենքով պաշտպանվում են: Եթե քաղաքացու կամ կազմակերպության պատիվը, արժանապատվությունը և գործարար համբավն արատավորող տեղեկություններ տարածվել են ՁԼՄ-ներով, ապա քաղաքացին կամ

կազմակերպությունը դատարանի միջոցով կարող են հասնել դրանց հերքման զանգվածային լրատվության նույն միջոցներով: Քաղաքացին կամ կազմակերպությունը, ում մասին ԶԼՄ-ներով հրապարակվել են նրա իրավունքները կամ օրենքով պաշտպանվող շահերը ստնահարող տեղեկություններ, իրավունք ունի իր պատասխանը հրապարակել զանգվածային լրատվության նույն միջոցներում:

Լրագրող և լրագրողական անաչառություն: Լրագրողն այն անձն է, որի հետ ԶԼՄ-ն կնքել է աշխատանքային պայմանագիր կամ լիազորել է իր իրավասություններին համապատասխան հավաքել, պատրաստել կամ խմբագրել նյութեր զանգվածային լրատվության միջոցների համար:

Լրագրողի առաքելությունն է ճշտված փաստերի հիման վրա մատչելի տեղեկատվության պատրաստումը և հրապարակումը: Նրա նյութը պետք է հնարավորություն տա հասարակությանը՝ ճիշտ կողմնորոշվելու իրականությունում:

ԶԼՄ-ների ներկայացուցիչների պարտավորությունն է ուշադիր հետևել իրադարձությունների զարգացմանը, հաղորդել տեղեկություն այդ մասին՝ ձգտելով լինել անկողմնակալ և հավաստի: Սակայն անկողմնակալ լինել չի նշանակում լինել դյուրահավատ և մատուցված ցանկացած տեղեկություն ընդունել որպես անհերքելի ճշմարտություն և դա պարտադրել ընթերցողներին կամ լսարանին:

Լրագրողը պետք է պարզի ճշմարտությունը: Դա հնարավոր է շատ դժվար, երբեմն վտանգավոր ու պատասխանատու աշխատանքի շնորհիվ: Զարգացած երկրներում բարձր է գնահատվում լրագրողի աշխատանքը, և միջազգային փաստաթղթերով ամրագրված է լրագրողների պաշտպանության դրույթը:

Գործնական իրավական աշխատանք: *Պատրաստե՛ք զեկուցում Հայաստանում մարդու իրավունքների խախտումների մասին՝ օգտագործելով ԶԼՄ-ի նյութերը: Փորձե՛ք գտնել խախտված իրավունքը ՀՀ Սահմանադրության երկրորդ գլխից:*

3. ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱՐԾԻՔ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Հասարակական կարծիքը զանգվածային գիտակցության իրականացման և դրսևորման եղանակ է, որում արտահայտվում է ժողովրդի մեծամասնության վերաբերմունքն իրականության այն փաստերի, դեպքերի, երևույթների վերաբերյալ, որոնք շոշափում են նրանց պահանջմունքները և շահերը:

Հասարակական կարծիքը հասարակական զարգացման շարժիչ ուժերից մեկն է, սոցիալական վերահսկողության, լայն զանգվածների վարքագծի կարգավորման արդյունավետ միջոց, հասարակական ինքնակառավարման բաղադրատարր:

Մտորումներ: *Հասարակական կարծիքը «կոլեկտիվ բանականության» յուրահատուկ խտացված արտահայտությունն է: Մեկնաբանեք այս միտքը: Արդյոք*

Ձեր բնակավայրի տեղական ինքնակառավարման մարմինը հաշվի՞ է առնում բնակիչների կարծիքը:

Հասարակական կարծիքը քարացած երևույթ չէ: Այն ձևավորվում է բազմաթիվ գործոնների ազդեցությամբ: Հասարակական կարծիքի ձևավորումը նախևառաջ տեղի է ունենում նպատակամղված՝ ուսուցում, համաուսուցում, քարոզչություն: Օրինակ՝ քաղաքական կազմակերպությունները և ՁԼՄ-ները զանգվածների գիտակցության վրա ահռելի ներգործություն են ունենում ձևավորելով հասարակական կարծիք այս կամ այն իրադարձության, իշխանությունների գործելակերպի վերաբերյալ: Սակայն հասարակական կարծիքի ձևավորման գործում դեր ունեն նաև տարերային գործոնները: Այսպես՝ կենսական հանգամանքները, սոցիալական փորձը և ավանդույթները անմիջական ազդեցություն ունեն բնակչության կարծիքում բանական, հուզական և կամային տարրերի վրա:

Քաղաքացիական հասարակության խնդիրն է ձևավորել առողջ հասարակական կարծիք հասարակական կյանքի երևույթների վերաբերյալ և դրանով իսկ ներազդել քաղաքական կառույցների վրա: Օրինակ՝ կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետ միջոցը այդ երևույթի դեմ անհանդուրժողական կարծիքի ձևավորումն է:

Հասարակական կարծիքն ունի կարգավորիչ և վերահսկող նշանակություն: Հասարակական կարծիքը հասարակական զարգացման շարժիչ ուժերից մեկն է: Այն ներառում է նաև հուզական-կամային ձգտումներ, նկատառումներ: Քաղաքական ուժերն իրենց ծրագրերը կազմելիս անպայման հաշվի են առնում հասարակական կարծիքը և ժողովրդի ձգտումները վերածում են իրականության:

Հասարակական կարծիքը նաև հասարակական վերահսկողության արդյունավետ միջոց է: Կառավարումը, որ հաշվի չի առնում հասարակական կարծիքը, դատապարտված է հեղինակազրկման: Չինովնիկը անպայման պետք է վախենա հասարակական կարծիքի հեղինակությունից, հակառակ դեպքում պետական կառավարումը կվերածվի կամայական, անհաշվետու կառավարման: Հասարակական կարծիքի հետ հաշվի նստելը ժողովրդավարության պայմաններում անհրաժեշտ է: Ուստի հասարակական կարծիքի ձևավորումից բացի, անհրաժեշտ է իրականացնել դրա նպատակամղված, ակտիվ հետազոտում և հաշվառում:

Հասարակական կարծիքը, լինելով բանական, հուզական և կամային տարրերի ամբողջություն, լայն զանգվածների վարքագծի կարգավորման արդյունավետ միջոց է: Հասարակական կարծիքի ձևավորման միջոցով կառավարման կառույցները կարող են հասնել իրենց հարմար իրավական զանգվածային գործողությունների, վարքագծի: Քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգի բաղադրատարրերն իրենց հերթին կարող են հասարակական կարծիքի ձևավորման միջոցով հանրությանը դրդել զանգվածային գործողությունների և արարքների, օրինակ, հանրահավաքների ու ցույցերի՝ ընդդեմ պետական կառույցների անարդյունավետ, հակաժողովրդավարական գործողությունների:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

տեղեկույթ / բաց հասարակություն / տեղեկույթի փաթեթավորում / գրաքննություն / տեղեկատվական մենաշնորհ / երկաթյա վարագույր / ՁԼՄ / լրագրող / լրագրողական անաչառություն / հասարակական կարծիք:

Պատասխանե՛ք հարցերին

1. Ի՞նչ դեր է խաղում տեղեկույթը հասարակության և պետության համար:
2. Ի՞նչ կապ կա տեղեկացվածության և մարդու իրավունքների իրականացման միջև:
3. Ի՞նչ է քաղաքացիական հասարակության տեղեկատվական համակարգը:
4. Ի՞նչ կապ կա պետության և տեղեկույթի միջև:
5. Որո՞նք են տեղեկատվական մենաշնորհի բացասական հետևանքները:
6. Ի՞նչ է տեղեկույթ ունենալու իրավունքը և որո՞նք են դրա երաշխիքները:
7. Ինչո՞ւ են ՁԼՄ-ներին անվանում չորրորդ իշխանություն:
8. Որո՞նք են խոսքի ազատության սահմանները:
9. Ինչպե՞ս և ի՞նչ գործոնների ազդեցությամբ է ձևավորվում հասարակական կարծիքը:
10. Ի՞նչ նշանակություն ունի հասարակական կարծիքը:

Ինքնուրույն աշխատանք.

Որևէ իրադարձության վերաբերյալ ընթերցե՛ք տարբեր թերթեր և համեմատե՛ք նրանց մոտեցումներն անաչառության, նյութի ներկայացման և այլ չափանիշների տեսանկյունից: Թերթերի ինտերնետային կայքերի հասցեներն են՝ Հայաստանի Հանրապետություն»՝ www.hhpress.am, «Հայոց աշխարհ»՝ www.armworld.am, «Ազգ»՝ www.azg.am, «Չորրորդ իշխանություն»՝ www.thi.am և այլն:

Հրավեր կամ այցելություն.

Դասարան հրավիրեք լրագրողի, որպեսզի նա ներկայացնի լրագրողական աշխատանքի նրբությունները և բարդությունները: Հնարավորության դեպքում կազմակերպեք այցելություն որևէ ՁԼՄ-ի աշխատանքային գրասենյակ նրա գործունեությանը ծանոթանալու համար:

ԳԼՈՒԽ 5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

§ 18. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տնտեսությունը մարդկանց կենսագործունեության համար անհրաժեշտ նյութական բարիքների արտադրության, բաշխման, փոխանակության և սպառման կապակցությամբ առաջացող հարաբերությունների ամբողջություն է:

Մարդկության պատմությանը հայտնի են տնտեսության երեք տեսակներ՝ **ավանդական, շուկայական, պլանային:**

Ավանդական տնտեսությունը գոյություն է ունեցել մինչև մարդկության պատմության նոր շրջանը: Ներկայումս գոյություն ունի թույլ զարգացած որոշ երկրներում: Նման տնտեսությունը հիմնականում ագրարային էր և հենվում էր ձեռքի աշխատանքի վրա: Տարածված էր մանրապրանքային արտադրությունը, պահպանողական ավանդույթները: Մարդկանց դերը տնտեսության մեջ որոշվում էր ժառանգաբար և դասային պատկանելությամբ: Ապրանքային փոխանակությունը թույլ զարգացած էր:

Շուկայական տնտեսությունը ձևավորվել է Եվրոպայում 18-րդ դարում: դրա համար անհրաժեշտ պայմաններ էին.

- արտադրողների տնտեսական առանձնացավծությունը: Նահապետական խոշոր ընտանիքները քայքայվեցին, առաջ եկավ համայնքների միջև ապրանքափոխանակությունը, համայնքային սեփականության փոխարեն զարգացավ մասնավոր սեփականությունը: Ամեն մի արտադրող դարձավ պատասխանատու իր գույքով,
- արտադրողի ինքնուրույնությունը: Արտադրողն ինքն է որոշում ինչպես օգտագործել իր գույքը, ինչ արտադրել, ինչքան, և ազատորեն շուկայում տնօրինել այդ արտադրանքը:

Պլանային տնտեսություն էր մեր տնտեսական համակարգը խորհրդային սոցիալիստական իշխանության տարիներին: Այդ համակարգում արտադրության հիմնական միջոցները պետության սեփականությունն էին, և պետությունն էր որոշում, թե ինչ և ինչքան ապրանքներ էին արտադրվելու և ինչ գնով էին վաճառվելու: Տնտեսության այդպիսի համակարգը անվանում են նաև վարչահրամայական: Ընդ որում՝ քաղաքացիները չունեին մասնավոր սեփականության իրավունք, այսինքն՝

արտադրության միջոցների, օրինակ՝ հաստոցների սեփականության իրավունք: Սակայն, ինչպես խորհրդային հասարակության պատմությունը, այնպես էլ համաշխարհային փորձը վկայում են, որ երկրի տնտեսական բարգավաճման համար ամենից լավ պայմաններ ու հնարավորություններ ստեղծում են շուկայական համակարգը և ազատ տնտեսական մրցակցությունը:

Շուկայական տնտեսական հարաբերություններն ունեն փուլային բնույթ: Ամեն մի փուլ ունի իր գործառույթը: Այդ փուլերը կարելի է պատկերել հետևյալ գծապատկերով:

Արտադրության փուլում ստեղծվում են նյութական արդյունքները և ծառայությունները: **Բաշխման փուլում** տեղի է ունենում արտադրված բարիքների բաժանում արտադրության մասնակիցների միջև: **Փոխանակության** փուլում արտադրության մասնակիցների միջև տեղի է ունենում ապրանքի կամ ծառայության փոխանակում: **Սպառման փուլում** ձեռք բերված ապրանքը կամ ծառայությունը սպառվում է գնողի կողմից:

Շուկան համարվում է ապրանքային արտադրության անհրաժեշտ տարր, երբ աշխատանքի արդյունքը բավարարում է մարդկանց պահանջմունքները առուվաճառքի միջոցով:

Երբ որ Հայաստանը սոցիալիստական էր, ապա պետությանն էին պատկանում արտադրության բոլոր միջոցները՝ հողը, ձեռնարկություններն ու գործարանները: Անկախացումից հետո Հայաստանը պլանային տնտեսությունից անցում կատարեց շուկայական տնտեսության, որի հատկանիշներից մեկն էլ՝ սեփականության ձևերի բազմազանությունն է: Օրինակ՝ 1991 թ. սեփականաշնորհվեց երկրի գյուղատնտեսական հողատարածության 90 տոկոսը: Թվով 860 հանրային-պետական տնտեսությունները՝ վերափոխվեցին 305 հազար անհատական գյուղացիական տնտեսությունների: Սեփականաշնորհվեցին նաև մեծ և փոքր ձեռնարկություններն առևտրի, սպասարկման, արտադրության և այլ ոլորտներում: Տնտեսության ոլորտում սկսեցի գործել շուկայական լծակներն, ըստ առաջարկի և պահանջարկի օրենքի:

2. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ Սահմանադրությունը սահմանում և երաշխավորում է շուկայական տնտեսական համակարգի հիմունքները, որոնք կարևոր նախադրյալ են ազատ քաղաքացիական հասարակության կայուն գոյության համար, ինչպես նաև մարդու ազատության տնտեսական հիմքն են:

Շուկայական տնտեսական համակարգի սահմանադրական հիմունքները		
Տնտեսական բազմակացութաձևություն	**Տնտեսական գործունեության ազատություն**	**Ազատ տնտեսական մրցակցություն**

Քաղաքացիական հասարակության տնտեսությունը բազմակացութաձև է: Տնտեսական հարաբերությունների հիմքը սեփականության ձևերն են: Այդ պատճառով շուկայական տնտեսության պայմաններում իրավահավասար կերպով ճանաչվում և պաշտպանվում են սեփականության բոլոր հնարավոր ձևերը: Այդ սկզբունքն ամրագրված է նաև ՀՀ Սահմանադրության մեջ. «ՀՀ-ում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը»:

Սեփականության իրավունքը սուբյեկտի՝ օրենքով ճանաչված և պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկանող գույքը: Գույքը կարող է գտնվել քաղաքացիների, իրավաբանական անձանց, պետության և համայնքների սեփականության ներքո: Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականության ներքո (մասնավոր սեփականություն) կարող է գտնվել ցանկացած գույք (առանց քանակի և արժեքի սահմանափակման)՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որ սահմանված են օրենքով:

Հայաստանի Հարապետությանը սեփականության իրավունքով պատկանող գույքը պետական սեփականությունն է: Օրինակ՝ պետական բյուջեի միջոցները ՀՀ սեփականությունն է:

Քաղաքային, գյուղական համայնքներին սեփականության իրավունքով պատկանող գույքը համայնքների սեփականությունն է:

Այդպիսով, ՀՀ-ում կա սեփականության երկու ձև՝ հանրային (պետական և համայնքային) և մասնավոր (ֆիզիկական և իրավաբանական անձանց): Մասնավոր սեփականությունն իր հերթին կարող է լինել անհատական և կոլեկտիվ: Հնարավոր է նաև սեփականության խառը ձևի գոյություն, օրինակ՝ մասնավոր-պետական:

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է տնտեսական գործունեության ազատությունը: Մասնավոր սեփականության իրավունքն ամբողջական է դառնում միայն այն դեպքում, եթե անձն ունի տնտեսական գործունեության ազատություն, այսինքն՝ կարող է իր սեփականությունն օգտագործել արտադրական և այլ տնտեսական նշանակությամբ՝ շահույթ ստանալու նպատակով: Տնտեսական գործունեության ազատությունը նշանակում է, որ անձն ունի ձեռնարկատիրական գործունեության իրավունք: Անձը ձեռնարկատիրական գործունեության իր իրավունքը կարող է իրականացնել երկու եղանակով՝ անհատապես և կոլեկտիվ:

Անհատական ձեռնարկատիրական գործունեությունը քաղաքացին իրականացնում է առանց իրավաբանական անձ կազմավորելու, որպես անհատ ձեռնարկատեր գրանցվելու պահից: Այս եղանակը սովորաբար ընտրում են անձինք, ովքեր հակված են միանձնյա որոշումներ ընդունելու: Անհատական ձեռնարկատիրական գործունեության դրական կողմերն են՝ արագաշարժությունը, պետության կողմից նվազագույն կարգավորվածությունը, որը հնարավորություն է տալիս ձեռնարկատիրոջն ինքնուրույն բաշխելու շահույթը և մուծելու միայն անհատական եկամտահարկ:

Կոլեկտիվ ձեռնարկատիրական գործունեության օրենքով սահմանված կազմակերպական իրավական ձևերից են, օրինակ՝ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը /ՍՊԸ/, լրացուցիչ պատասխանատվությամբ ընկերությունը /ԼՊԸ/, բաժնետիրական ընկերությունը, կոոպերատիվը և այլն:

Մտորումներ: *Երբևիցէ ցանկացել եք զբաղվել կամ արդեն զբաղվել եք ձեռնարկատիրական գործունեությամբ: Դրա ո՞ր եղանակն է (անհատական, թե կոլեկտիվ) ձեզ համար նախընտրելի:*

Հայաստանի Հանրապետությունում երաշխավորում է ազատ տնտեսական մրցակցությունը: Շուկայական տնտեսության մյուս հիմունքն մրցակցությունն է տնտեսվարող սուբյեկտների (արտադրողների, ծառայություններ մատուցողների) միջև և ազատ գնային համակարգը:

Դուք լավ գիտեք, որ մեր ցանկությունները և հնարավորությունները միշտ չէ, որ համընկնում են: Գներն են շատ անգամ որոշում, թե մենք ինչ պետք է ուտենք, ինչ հագնենք, ուսումը պետք է շարունակենք, թե աշխատանքի անցնենք: Ինչպես որ մեր՝ սպառողներիս համար են գները որոշիչ, այդպես է նաև ապրանքներ արտադրողների և ծառայություններ առաջարկողների համար: Ուրեմն, շուկայական տնտեսությունը գներով ղեկավարվող համակարգ է:

Շուկայական տնտեսություն գնային համակարգն է պատասխանում հետևյալ հարցերին՝ ի՞նչ պիտի արտադրվի, ինչպե՞ս պիտի արտադրվի, և ո՞վ պետք է այդ

արտադրանքը սպառի: Այսինքն՝ Հայաստանում գործում է առաջարկի և պահանջարկի շուկայական օրինաչափությունը: Այդ օրինաչափությունը գործում է մեզանից անկախ և լինելով շուկայական տնտեսության համակարգի դարավոր կենսափորձի արտահայտությունը հանդիսանում է շուկայի ինքնակարգավորման գործընթաց: Ինչպե՞ս է գործում այն: Պատահում է, երբ ավելի շատ է արտադրվում այն ապրանքատեսակից, որի պահանջարկն առաջարկված գնով ավելի քիչ է: Այդ դեպքում արտադրողներն ու վաճառողներն ապրանքի գինն իջեցնում են, որպեսզի այն ավելի հեշտ վաճառվի: Իսկ երբեմն լինում է ճիշտ հակառակը, երբ մարդիկ ցանկանում են գնել որևէ ապրանք, որը սակայն սակավ է: Այս դեպքում ապրանքի գինը բարձրանում է, որն էլ շահագրգռում է արտադրողներին կամ վաճառողներին շուկա բերել հիմնականում այդ ապրանքատեսակը: Ապրանքատեսակի գինը շուկայում ընկնում է, եթե դրա առաջարկն ավելին է, քան պահանջարկը: Այսպիսով՝ շուկան ինքն է որոշում և կարգավորում ապրանքի գինը:

Գնային համակարգը չի կարող գործել, եթե ապահովված չէ մրցակցությունը, քանի որ, եթե չկան մրցակիցներ, ուրեմն վաճառողը մեկն է, որն էլ ազատ կարող է որոշել իր ապրանքի գինը: Սա է պատճառը, որ ժողովրդավարական երկրներում կառավարությունն ազատ մրցակցություն է ապահովում: Այսինքն՝ ընդունում է օրենքներ կամ ստեղծում պայմաններ, որոնք թույլ չեն տալիս, որպեսզի որևէ ապրանքի արտադրությունը կամ ծառայության մատուցումը դառնա անհատ ձեռներեցի կամ որևէ կազմակերպության մենաշնորհ:

Եկեք տեսնենք, թե ինչպես է ազատ մրցակցության պայմաններում շուկան կարգավորում գնային համակարգը: Ամռանը, երբ շաքարավազ շատ է օգտագործվում՝ պահածոներ պատրաստելու համար, շաքարավազի գինը բարձրանում է: Այդ դեպքում ձեռներեցները շտապում են մեծ քանակությամբ շաքարավազ ներմուծել շուկա՝ շահույթ ստանալու համար: Երբ մի քանի ձեռներեցներ շուկան ողողում են շաքարավազով, նրա գինն ընկնում է, ուստի գնորդների թիվն էլ համապատասխանաբար մեծանում է:

Արդեն պարզ է, որ ազատ շուկան չի ենթադրում, թե պետությունն առհասարակ չի խառնվում երկրի տնտեսական գործերին: Պետությունը պաշտպանում է սպառողների շահերը, ընդունում օրենքներ, որոնք կանխում են հնարավոր չարաշահումները ձեռներեցների կողմից, իր ձեռքին է պահում մի շարք ծառայություններ ու արտադրություններ, որոնք կառավարության հովանավորության կարիքն ունեն: Կառավարությունը նաև պաշտպանում է շրջակա միջավայրը ձեռներեցների գործունեությունից: Այդ տեսանկյունից ժամանակակից քաղաքացիական հասարակության տնտեսությունը լրիվ շուկայական տնտեսություն չէ, այլ այսպես կոչված պետականորեն կարգավորվող կամ խառը տնտեսություն է:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

պլանային տնտեսություն / մասնավոր սեփականություն / հանրային սեփականություն / անհատական ձեռնարկատիրական գործունեություն / կոլեկտիվ ձեռնարկատիրական գործունեության ձև / խառը տնտեսություն:

Պատասխանե՛ք հարցերին:

1. Ի՞նչ է տնտեսությունը:
2. Որո՞նք են շուկայական տնտեսության սահմանադրական հիմունքները:
3. Ի՞նչ է նշանակում բազմակացութաձև տնտեսություն:
4. Սեփականության ի՞նչ ձևեր են սահմանված ՀՀ օրենսդրությամբ:
5. Ի՞նչ է նշանակում տնտեսական գործունեության ազատություն:
8. Ինչո՞ւմ է կայանում առաջարկի և պահանջարկի շուկայական օրենքի էությունը:
9. Տնտեսական մրցակցությունը ինչպե՞ս է կարգավորում շուկայի գնային համակարգը:

Բանավիճե՛ք:

Տնտեսության ո՞ր ձևն է նախընտրելի՝ վարչահրամայակա՞նը, թե՞ ազատ շուկայականը: Պլանային տնտեսությունն ուներ մեծ թերություններ, բայց տալիս էր նվազագույն սոցիալական երաշխիքներ: Շուկայական տնտեսության պայմաններում դրանք խստորեն կրճատվեցին: Շատ տարածքներ և բնակչության խմբեր հայտնվեցին վատթար վիճակում՝ «մեկնարկային» պայմանների անհավասարության, աշխատատեղերի բացակայության պատճառով: Տևացող շուկայական բարեփոխումները չստեղծեցին իրական նախադրյալներ մարդկային զարգացման համար: Որո՞նք են դրա պատճառները: Ինչպի՞սի միջոցառումներ կառաջարկեիք սոցիալ-տնտեսական ոլորտում առկա հիմնախնդիրները լուծելու համար:

§ 19. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆԸ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԱՄՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

Համաշխարհային փորձը ցույց է տվել, որ տնտեսության գոյություն ունեցած և գոյություն ունեցող բոլոր ձևերից ամենաարդյունավետը շուկայական տնտեսությունն է: Այստեղ ապրանքների և ծառայությունների գները որոշվում են ազատ արտադրողների առաջարկի և սպառողների պահանջարկի հիման վրա: Տնտեսական օրինաչափությունները պահանջում են, որ սեփականատերերը լինեն ազատ և ինքնուրույն, առանց պետական միջամտության որոշեն, թե ինչ են արտադրելու, ինչ քանակով և ինչ գներով են իրացնելու շուկայում: Սակայն, շուկայական տնտեսությունը երբեմն կարող է վերածվել քաոսի: Այստեղ արդեն կարևորվում է պետության դերը, որը պահպանելով շուկայական տնտեսության հիմունքները, ստանձնում է տնտեսության կարգավորման գործառույթը, միջամտում է դրան:

Հասարակության զարգացման օրինաչափություններից մեկն էլ այն է, որ տնտեսության զարգացման մակարդակի բարձրացմանը զուգընթաց պետությունն ավելի ու ավելի է միջամտում տնտեսությանը, սակայն թվում է թե հակառակը պետք է լիներ: Այդ միջամտության պատճառները բազմաթիվ են: Դրանցից էական են հոգեբանական պատճառները: Դեռևս հնուց վաճառողի և գնորդի միջև գոյություն ունի շահերի յուրահատուկ բախում: Այդ հավերժական հակասությունն արտահայտել է Հ. Թումանյանը շան որպես գնորդի և կատվի որպես ծառայություն վաճառողի պատմության մեջ: Շուկայում գնորդը և վաճառողը իրար դեմ հանդիման են կանգնած և պետությունը չի կարող թույլ տալ, որ նրանք անցնեն «բռնցքամարտի»: Նա պարտավոր է նախապես սահմանել խաղի կանոնները շուկայում:

Ինքնուրույն աշխատանք: *Գրականությունից դուրս գրեք վաճառողների և առևտրականների հակասությունների վերաբերյալ ասույթներ:*

Բացի այս պատճառներից կան տնտեսությանը պետության միջամտության էկոլոգիական, բնական ռեսուրսների խնայողության, քաղաքական, սոցիալական, տեխնոլոգիական պատճառներ:

Մտորումներ: *Ի՞նչ գիտեք այդ պատճառների մասին: Փորձե՛ք ինքնուրույն հետազոտել և վեր հանել այդ պատճառները և օրինակներով ցույց տալ պետության միջամտության անհրաժեշտությունը:*

Այսպիսով շուկայական տնտեսությունը կարող է լինել ազատ, երբ պետությունը չի միջամտում տնտեսությանը: Սակայն ազատ շուկայի պայմաններում տեղի է ունենում հասարակության գույքային շերտավորում, նրա բևեռացում, ինչը հղի է

սոցիալական պայթյունով: Պետությունը չի միջամտում քաղաքացիական հասարակության գործերին, քանի որ դա դասական ազատականության տեսանկյունից արգելք է ազատ ձեռներեցության ու մրցակցության համար, ոտնձգում է սեփականատերիարկատուի իրավունքները: Սակայն ինչպես ցույց տվեց պատմությունը ազատ շուկան չի ապահովում համընդհանուր բարեկեցությունը, չի հաղթահարում աղքատությունը և հասարակական հակամարտությունները, որովհետև ազատ մրցակցության հետևանքով ձևավորվում են մենաշնորհներ, հարստությունը կենտրոնանում էր ունևոր փոքրամասնության մոտ, իսկ հասարակության մեծ մասը հայտնվում էր չքավորության ճիրաններում:

XIX դ. վերջին՝ դասական ազատականությունը քայլ առ քայլ հրաժարվեց պետության տնտեսական չեզոքության սկզբունքից, իսկ պետությունը հասարակական ճնշման ազդեցության տակ սկսեց միջամտել հասարակության տնտեսական և սոցիալական ոլորտներին: Այդպիսի տնտեսությունը անվանում են պետության կողմից կարգավորվող, սոցիալապես կողմնորոշված շուկայական կամ խառը տնտեսություն: Պետությունը չմերժելով հասարակության և շուկայական ինքնակարգավորումը, սկսեց միջամտել տնտեսությանը, որպեսզի վերացնի ինքնակարգավորման թերությունները, կանխի տնտեսական ճգնաժամերը և ապահովի հասարակական խաղաղություն: Սոցիալապես կողմնորոշված շուկայական տնտեսությունում պետության միջամտության հետևանքով հասարակության բոլոր անդամների համար ապահավվում է կյանքի բարձր մակարդակ, կատարվում է ռեսուրսների արդար բաշխում, վերացվում են սո-ցիալական անհավասարության ծայրահեղությունները:

Մտորումներ: Այսօր երկրագնդում նոր, տնտեսական մեծ նվաճումներին զուգընթաց 2.5 մլրդ. մարդ շարունակում է ապրել օրական երկու ԱՄՆ դոլարից պակաս հնարավորությամբ: Երկրագնդի ամենահարուստների 1 տոկոսը տարեկան ստանում է այնքան եկամուտ, որքան ամենաաղքատների 57 տոկոս:

2. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐԻՉ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Պետությունը սահմանում է տնտեսական կյանքը կարգավորող իրավական նորմերը: Նա մի կողմից ամրագրում ու երաշխավորում է շուկայական տնտեսության համակարգի հիմունքները, իսկ մյուս կողմից՝ որոշում է «խաղի կանոնները» տնտեսավարող առանձին սուբյեկտների համար: Ընդ որում, այդ կանոնները կարող են սահմանափակել ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող սուբյեկտների ազատությունը: Այդ սահմանափակումը կարող է բխել տնտեսական աղետների, սոցիալական բախումների (սեփականատերերի և վարձու աշխատողների միջև) կանխման, սպառողների շահերի պաշտպանության

անհրաժեշտությունից: Այդ նպատակով պետությունը կարող է վերահսկել աշխատավարձերի չափերը, արտադրանքի որակը, պայքարել շուկայում հնարավոր մենաշնորհների դեմ և այլն:

Պետությունը դեռ հնուց եղել և մնում է դրամաշրջանառությունը կարգավորողը, որը պետության մենաշնորհներից է:

Պետությունն իրականացնում է մաքսային քաղաքականություն: Այդ քաղաքականությամբ պետությունը պաշտպանում է երկրի տնտեսական տարածությունը՝ այլ երկրների ապրանք արտադրողներից, ինչպես նաև խթանում է սեփական ապրանք արտադրողների ելքը համաշխարհային շուկա:

Ժամանակակից պայմաններում պետությունը սկսել է նաև միջամտել տնտեսական գործունեությանը մի շարք այլ ուղղություններով: Նախ, պետությունը կանխում է էկոլոգիական աղետը, որ կարող է առաջանալ անվերահսկելի տնտեսական գործունեության դեպքում: Երկրորդ, պետությունը պայքարում է տնտեսության «ստվերացման» և քրեականացման դեմ:

Ինքնուրույն աշխատանք: *Օգտվելով մամուլից և համացանցից պատրաստե՛ք զեկուցում հետևյալ թեմաներից մեկի մասին. «Տնտեսության ստվերացում», «Տնտեսության քրեականացում», «Շուկայական մենաշնորհներ»:*

Պետությունը մշակում և իրագործում է հատուկ տնտեսական ծրագրեր, որոնք նպատակամղված են երկրի տնտեսության զարգացմանը, որոշակի ճյուղերի առաջնային զարգացմանը: Բացի այս ամենը, ժամանակակից պետությունը խոշոր սեփականատեր է, որը զբաղվում է ձեռնարկատիրությամբ, այսինքն՝ ապրանք արտադրելով և վաճառելով, ծառայություններ մատուցելով:

Պետության տնտեսական քաղաքականության իրականացման միջոցներից մեկն էլ պետական բյուջեն է: Մենք կրթության, ոստիկանության, ճանապարհային և մի շարք այլ համակարգերի ծառայություններից օգտվում ենք անվճար: Հարց է ծագում՝ ո՞վ է հոգում այս ծախսերը: Պատասխանը միանշանակ է՝ պետությունը:

3. ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Տնտեսության մեջ դրա բոլոր փուլերում պետությունը նաև իրականացնում է վերահսկողություն: Վերահսկողության ձևերը բազմաթիվ են և իրականացվում են մի շարք ուղղություններով, օրինակ՝ ձեռնարկությունների տեղաբաշխման և շինարարության նկատմամբ վերահսկողությունը, հարկային վերահսկողությունը, արտադրողներին ֆինանսական աջակցություն ցույց տալը, էկոլոգիական վերահսկողությունը, սանիտարական վերահսկողությունը, մաքսային վերահսկողությունը, հակահրդեհային վերահսկողությունը, աշխատանքային և

սոցիալական օրենսդրության պահպանման նկատմամբ վերահսկողությունը, արտադրանքի որակի նկատմամբ վերահսկողությունը և սպառողների շահերի պաշտպանությունը, օրինակ՝ բանկերում ավանդատուների իրավունքների պաշտպանությունը:

Մտորումներ: *Ի՞նչ գիտեք վերահսկողության այդ ձևերի մասին: Փորձե՛ք ինքնուրույն վեր հանել դրանցից ամեն մեկի նշանակությունը, առօրյա կյանքի օրինակներով ցույց տվեք դրանց իրականացման եղանակները:*

Սակայն պետք է նկատի ունենալ, որ տնտեսության նկատմամբ վերահսկողությունը պետք է իրականացվի «չափի մեջ»: Եթե այն անբավարար է, ապա դա կարող է հասարակության մեջ ծնել արտադրողների ամենաթողություն, քաոս: Իսկ եթե վերահսկողությունը չափից դուրս կոշտ է և համընդգրկուն, ապա պետությունը կարող է խեղդել տնտեսությունը: **Հետևաբար տնտեությունը և պետությունը հակառակորդներ կամ թշնամիներ չեն: Պետության խնդիրն է պետական կարգավորմամբ և միջամտությամբ ապահովել երկրի տնտեսության բարգավաճումը, քանի որ դրանից է կախված Հայաստանի ամեն մի քաղաքացու բարեկեցությունը:**

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

սոցիալական բախում / վարձու աշխատող / տնտեսական մենաշնորհներ / տնտեսության «ստվերացում» / տնտեսության քրեականացում / «խաղի կանոններ» / մաքսային քաղաքականություն:

Պատասխանե՛ք հարցերին:

1. *Ի՞նչու է անհրաժեշտ տնտեսությանը պետության միջամտությունը:*
2. *Որո՞նք են տնտեսությանը պետության միջամտության պատճառները:*
3. *Ո՞րն է շուկայական խառը տնտեսության դերը և նշանակությունը:*
4. *Պետության մշակած ի՞նչ տնտեսական ծրագրեր գիտեք:*
5. *Որո՞նք են տնտեսության նկատմամբ պետական վերահսկողության տեսակները:*

Քննարկում: *Արդյոք ձեր ընտանիքը որևէ կերպ կարողացել է սեփականաշնորհման գործընթացի շնորհիվ դառնալ սեփականատեր: Պատմե՛ք այդ մասին:*

§ 20. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ

1. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Բյուջեի հասկացությունը: Դուք Ձեր ընտանիքում ամեն ամիս ծրագրավորում եք ընտանեկան բյուջեն, այսինքն՝ ինչ եկամուտներ ունեք և ինչ կարող եք գնել: Ձեր ընտանիքի նման, պետությունն էլ ունի իր բյուջեն: Երբ բյուջեի ծախսերը հավասար են եկամուտներին, այն հաշվեկշռված է: Իսկ երբ նախատեսված ծախսերը գերազանցում են եկամուտները, ուրեմն բյուջեն ճեղքվածք կամ դեֆիցիտ ունի: Պետական բյուջեն օգտագործվում է՝ հոգալու պետության ծախսերը՝ երկրի պաշտպանությունը, թոշակները և այլն:

Պետական բյուջեն պետությանը Սահմանադրությամբ և օրենքներով վերապահված լիազորությունների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների ձևավորման (եկամուտների) և ծախսման տարեկան ֆինանսական ծրագիրն է, որը օրենսդրական կարգով հաստատվում է խորհրդարանի կողմից:

Այսպիսով, պետական բյուջեն կազմված է պետության եկամուտներից և ծախսերից: Պետական բյուջեն օգտագործվում է հոգալու պետության ծախսերը՝ փողոցների նորոգումը, կրթական հարցերը, ծերերի թոշակները, աղքատների նպաստները և այլն:

Հայաստանում պետական բյուջեն օրենսդրական կարգով հաստատում է Ազգային Ժողովը՝ կառավարության ներկայացմամբ: Միաժամանակ Ազգային Ժողովը վերահսկողություն է իրականացնում պետական բյուջեի կատարման, ինչպես նաև օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից ստացված փոխառությունների և վարկերի օգտագործման նկատմամբ:

Բյուջեի ճեղքվածքը հաճախ դառնում է քաղաքական թեժ բանավեճերի առարկա, սակայն նաև մնում է մշտական քննարկման հարց: Բյուջեի ճեղքվածքը փակելու համար կա մի քանի ուղի, օրինակ՝ բարձրացնել հարկերը կամ կրճատել պետական ծախսերը: Սակայն քաղաքական քիչ գործիչներ են համարձակվում երկրի օրենսդիր մարմնում բարձրացնել այս հարցը, քանի որ կոնկրետ հարկերը բարձրացնելուց տուժելու են քաղաքացիները, որոնք իրենց ձայնն են տվել տվյալ քաղաքական գործչին՝ Ազգային Ժողովի ընտրություններում: Իսկ ծախսերի անվերջ կրճատումը հնարավոր չէ:

Մտորումներ: *Արդեն քանիերորդ տարին է, որ Հայաստանի բյուջեն ունի դեֆիցիտ՝ ճեղքվածք, երբ կառավարության ծախսերը գերազանցում են եկամուտներին: Սակայն այդ երևույթն այդքան էլ անսովոր չէ: Մի շարք պետություններ, դրանց թվում զարգացած և*

հարուստ այնպիսի երկիր, ինչպիսին է ԱՄՆ-ն, նույնպես յուրաքանչյուր տարի ունենում են բյուջեի դեֆիցիտ կամ ճեղքվածք: Բյուջեի ճեղքվածքը փակելու ի՞նչ ուղիներ կարող եք առաջարկել:

2. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

Ճիշտ է բուջեի մասին օրենքը հաստատում է օրենսդիրը, սակայն բյուջեի ոլորտում կառավարությունն ունի կարևոր լիազորություններ: **Դրանց հանրագումարը գալիս է հաստատելու, որ կառավարությունը մշակում և ապահովում է պետական բյուջեի կատարումը:**

1) Կառավարությունը մշակում է պետական բյուջեի նախագիծը: Նախագիծը մշակվում է կառավարության գործունեության ծրագրին համապատասխան՝ իհարկե, ելնելով պետության եկամուտների տված հնարավորություններից:

2) Կառավարությունը պետական բյուջեի նախագիծը ներկայացնում է Ազգային ժողովի հաստատմանը: Ազգային ժողովում քննարկումների ընթացքում բյուջեի վերաբերյալ հանձնաժողովների ու պատգամավորների կողմից կարող են արվել տարբեր առաջարկություններ և ուղղումներ: Մինչև տարվա սկիզբը պետական բյուջեն չհաստատվելու դեպքում ծախսերը կատարվում են նախորդ տարվա բյուջեի համամասնություններով:

3) Կառավարությունն ապահովում է պետական բյուջեի՝ որպես օրենքի կատարումը, այսինքն՝ սահմանում է դրա կատարման կարգը, վերահսկում է կատարման գործընթացը: Բյուջեի միջոցների օգտագործման նկատմամբ վերահսկում է նաև անկախ Վերահսկիչ պալատը:

Կարդացե՛ք Սահմանադրության 83.4 հոդվածը և պարզե՛ք, թե ինչ մարմին է վերահսկիչ պալատը, ինչպես է այն կազմավորվում, ինչ գործառույթներ ունի:

4) Կառավարությունը պատասխանատու է բյուջեի պատշաճ կատարման համար: Նա խորհրդարանի քննարկմանը և հաստատմանն է ներկայացնում պետական բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը: Ազգային ժողովը այդ հաշվետվությունը քննարկում և հաստատում է միայն Վերահսկիչ պալատի եզրակացության առկայությամբ:

3. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏԻ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Պետության եկամուտները գոյանում են՝ հարկերից, տուրքերից, միջազգային կազմակերպություններից և այլ պետություններից ստացած վարկերից, պետական պարտատոմսերի վաճառքից, միջազգային օգնություններից և այլ աղբյուրներից:

Պետության եկամտի հիմնական աղբյուրը հարկերն են: Հարկը պետական և հասարակական կարիքների բավարարման նպատակով համապարտադիր և անհատույց վճար է, որը գանձվում է ֆիզիկական և իրավաբանական անձանցից՝ հարկային օրենսդրությամբ նախատեսված կարգով, չափերով և սահմանված ժամկետներում:

Կառավարությունն ամենայն լրջությամբ է վերաբերվում հարկերն արդարացի և օրինական գանձելու գործին: Մեր հանրապետությունում հարկային օրենքները մեծ փոփոխությունների են ենթարկվում: Կառավարությունը հետևում է, որ, ըստ օրենքի, բոլորը մուծեն հարկերը: Հարկերը լինում են մի քանի տեսակի:

Շահութահարկ վճարում են իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունները՝ հանրապետության տարածքում և նրա սահմաններից դուրս ստացված շահույթի մասով: Իսկ օտարերկրյա իրավաբանական անձինք նման հարկ վճարում են Հայաստանի Հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության իրականացումից ստացած շահույթի մասով: Օրինակ՝ պատկերացնենք, որ կոկա-կոլա արտադրող ձեռնարկությունը Հայաստանում այս տարի 5 միլիոն դոլար արժողությամբ արտադրանք է վաճառել, որից իր շահույթը կազմել է 2 միլիոն: Ուստի «Կոկա-կոլա» ձեռնարկությունը պետք է շահութահարկ վճարի պետությանն այդ 2 միլիոն դոլարի համար ըստ սահմանված տոկոսաչափի:

Եկամտահարկ գանձվում է ֆիզիկական անձանց եկամուտից: Եկամուտ են համարվում՝

- աշխատանքային և քաղաքացիաիրավական պայմանագրերի կատարումից ստացված գումարները,
- հեղինակային վարձատրությունները,
- ձեռնարկատիրական գործունեությունից ստացված գումարները,
- նվիրատվության և օգնության կարգով ստացված գումարները,
- գույքը վարձակալության տալուց ստացված գումարները,
- փայամասնակցություններից, արժեթղթերից, ավանդների դիմաց ստացված և այլ գումարները:

Ակցիզային հարկ գանձվում է առանձին ապրանքների իրացումից: Ակցիզային հարկն ապրանքի գնի մեջ մտնող անուղղակի հարկն է: Օրինակ՝ ակցիզային հարկ վճարում են գինի, օղի, ծխախոտ, մորթի, ոսկերչական իրեր, ինչպես նաև պերճանքի

այլ առարկաներ արտադրող, իրացնող, ներմուծող ձեռնարկություններն ու քաղաքացիները:

Ավելացված արժեքի հարկն անուղղակի հարկ է, որը օրենքի համաձայն գանձվում է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում: Ավելացված արժեքի հարկ են վճարում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող կազմակերպությունները և ֆիզիկական անձինք: Օրինակ՝ կաշին մշակելու և իրացնելու համար վճարվում է ավելացված արժեքի հարկ: Հետո կաշին օգտագործվում է կոշիկ արտադրելու համար, և կոշիկի մեծածախ վաճառքի դեպքում այն նորից հարկվում է: Կոշիկի մանրածախ վաճառքի դեպքում ևս գանձվում է ավելացված արժեքի հարկ:

Հողի հարկ գանձվում է հողի սեփականատիրոջից: Հողի հարկը, որը սահմանվում է ըստ հողակտորի միավոր մակերեսի և տեսակի, սեփականատիրոջ կողմից միանվագ վճարվում է մեկ տարվա համար:

Գույքահարկ գանձվում է գույքի (հիմնականում անշարժ) որոշակի տեսակների համար: Այսինքն՝ քաղաքացին հարկ է վճարում իր սեփական տան, բնակարանի, ամառանոցի, ավտոտնակի և այլ շինությունների համար: Գույքահարկ գանձվում է նաև ավտոմոբիլային տրանսպորտի միջոցի և ջրային փոխադրամիջոցների սեփականատերերից՝ ըստ փոխադրամիջոցի քաշող շարժիչի հզորության:

Տուգանքներ, տուրքեր և այլ պարտադիր վճարումներ: Պետական գանձարանը հարստանում է նաև տարբեր տուգանքներից: Օրինակ՝ երբ տուգանք է նշանակվում երթևեկության կանոնները խախտելու, առանց համապատասխան փաստաթղթերի սնունդ վաճառելու, աղբը ոչ պատշաճ տեղում թափելու համար, ապա դրանք մուծվում են պետական գանձարան:

Պետական տուրքերը պետական մարմինների օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար պետական բյուջե մուծվող գանձում է: Օրինակ՝ փաստաթղթերի ձևակերպման, արտոնագիր ստանալու, ամուսնություն կամ ծնունդ գրանցելու համար գանձվում են տուրքեր, որոնք նույնպես մուտքագրվում են պետական բյուջե:

Այլ պարտադիր վճարումներից է, օրինակ, սոցիալական վճարը, որը վճարում են իրավաբանական անձինք, քաղաքացիները և օրենքով նախատեսված այլ միավորները՝ պետական սոցիալական ապահովագրության ծրագրերի ֆինանսավորման նպատակով:

Կառավարությունը կարող է պարտք վերցնել նաև քաղաքացիներից: Դրա համար նա թողարկում է **գանձապետական պարտատոմսեր**: Քաղաքացիները դրանք գնում

են որոշ ժամկետով և ստանում տոկոսներ: Կառավարությունը պարտատոմսերի վաճառքից առաջացած գումարն օգտագործում է պետական բյուջեի պակասորդը ծածկելու համար: Պարտատոմսերը կարող են գնվել տարբեր ժամկետներով՝ օրինակ՝ մեկ տարով, իսկ տոկոսադրույքի չափը բարձրանում է ժամկետին համապատասխան:

Կառավարությունը կարող է նաև վարկեր վերցնել՝ իր ծախսերը հոգալու համար: Անկախության հռչակումից հետո հանրապետությունը հայտնվեց ծանր տնտեսական վիճակում: Երկիրը ճգնաժամից հանելու համար կառավարությանն անհրաժեշտ էին դրամական մեծ միջոցներ: Ինչպես անհատները դրամի կարիքի ժամանակ դիմում են բանկերին՝ վարկեր վերցնելու համար, այնպես էլ կառավարությունը կարող է հարկ եղած դեպքում վարկեր վերցնել տարբեր միջազգային կազմակերպություններից: Օրինակ՝ Հայաստանը ծանր ճգնաժամից դուրս գալու համար դիմեց միջազգային կազմակերպությունների օգնությանը և վարկեր ստացավ մի քանիսից, որոնցից ամենախոշորներն են Համաշխարհային բանկը և Միջազգային արժութային հիմնադրամը: Վարկեր կարող են վերցվել նաև այլ պետություններից:

Լրացուցիչ նյութ: Համաշխարհային բանկի առաքելությունն է՝ օգնել զարգացող երկրներին, նվազեցնել աղքատության չափերը և նպաստել տվյալ երկրի զարգացմանը: Բանկը վարկեր է տրամադրում այն երկրներին, որոնք պարտավորվում են որոշակի ժամկետում վերադարձնել դրանք: Հայաստանն իր առաջին վարկը Համաշխարհային բանկից ստացել է 1993 թ.: Հայաստանին տրամադրվել են վարկեր նաև աղետի գոտու վերականգնման աշխատանքների, էներգետիկ սարքավորումների բարելավման, Սևանի փրկության, դպրոցական դասագրքերի տպագրության և այլ կարևոր ծրագրերի իրականացման համար:

Միջազգային արժութային հիմնադրամն ստեղծվել է 1946 թ.: Հիմնադրամի 181 անդամ-երկրների միասնական խնդիրն է՝ իրենց արժույթի առքն ու վաճառքը կայունացնելը: Անդամ երկրները որպես անդամավճար որոշակի գումար են ներդնում և համարվում են նաև նրա բաժնետերերը: Երկրի բաժնեմասի չափը որոշվում է նրանով, թե ինչպես է հարաբերվում տվյալ երկրի տնտեսությունը համաշխարհային տնտեսության հետ: Օրինակ, 18 տոկոս բաժնեմասով ԱՄՆ-ն ամենամեծ բաժնետերն է: Հայաստանը հիմնադրամի անդամ դարձավ 1992թ.: Հիմնադրամի վարկերը մեծ մասամբ օգտագործվում են երկրի համախառն ներքին արտադրանքը բարձրացնելու, սղաճը նվազեցնելու, դրամը կայունացնելու և այլ տնտեսական հարցեր լուծելու նպատակով:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

բյուջեի ճեղքվածք / հարկ / շահութահարկ / եկամտահարկ / ակցիզային հարկ / ավելացված արժեքի հարկ / հողի հարկ / գույքահարկ / գանձապետական պարտատոմս / Համաշխարհային բանկ / Միջազգային արժութային հիմնադրամ:

Պատասխանե՛ք հարցերին:

1. Ի՞նչ է բյուջեն:
2. ինչպե՞ս է մշակվում և հաստատվում բյուջեն:
3. Ի՞նչ է նշանակում բազմակացութաձև տնտեսություն:
4. Որո՞նք են պետական բյուջեյի եկամտի աղբյուրները:
5. Ո՞ր բյուջեն է կոչվում հաշվեկշռված և ո՞րը ճեղքվածքով:
6. Որո՞նք են բյուջեի ճեղքվածքը փակելու ուղիները:
7. Ի՞նչ ազդեցություն ունեն հարկերը մեր կյանքի վրա:

§ 21. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԸՆՏՐՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ

Պետական բյուջեի եկամուտները դուք արդեն սովորել եք: Բյուջեի մյուս մասը ծախսերն են: Դրանք բաժանվում են երկու մասի՝ ընթացիկ և կապիտալ ծախսեր:

Բյուջեի ընթացիկ ծախսերն ապահովում են պետական մարմինների և կազմակերպությունների, պետական հիմնարկների ընթացիկ գործունեությունը: Ընթացիկ ծախսերի մեջ մտնում են նաև այլ բյուջեներին և տնտեսության ճյուղերի հատկացվող գումարները: Վերջինս կարող է լինել դոտացիայի, բյուջետային վարկի /սուբսիդիա/ և սուբվենցիայի ձևերով:

Դոտացիան դրամական գումար է, որ պետական բյուջեյից տրվում է ցածր մակարդակի բյուջետային համակարգերին անվերադարձ և անհատույց պայմաններով: Դոտացիայի օգտագործումը չունի նպատակային նշանակություն:

Սուբսիդիա նշանակում է օգնություն: Սուբսիդիան դրամական կամ բնամթերային ձևով օգնություն է, որը տրամադրում է պետությունը պետական բյուջեյի կամ հատուկ ֆոնդերի հաշվին՝ իրավաբանական և ֆիզիկական անձանց, տեղական մարմիններին: Սուբսիդիա կարող է հատկացվել նաև այլ պետություններին: Սուբսիդիան տրվում է նպատակային ծախսերի համար բաժնային ներդրման պայմանով: Օրինակ՝ համայնքի ճանապարհի վերանորոգման համար անհրաժեշտ գումարի մի մասը տալիս է համայնքը, իսկ մյուս մասը՝ պետությունը: Եթե բյուջետային սուբսիդիան սահմանված ժամկետում չի օգտագործվել, ենթակա է վերադարձման հատկացնողին՝ պետությանը:

Սուբսիդիային մոտ հասկացություն է սուբվենցիան: Լատիներեն բառ է և նշանակում է օգնության գալ: Սուբվենցիան որոշակի նպատակային ծախսեր կատարելու համար բյուջեի միջոցների անհատույց և անվերադարձ հատկացում է տեղական կառավարման համակարգին կամ իրավաբանական անձանց: Օրինակ՝ գյուղի ոռոգման համակարգի կառուցման նպատակով: Սուբսիդիաները լինում են ուղղակի՝ պետական դրամական հատկացումներ տնտեսության որոշակի ճյուղերի զարգացման համար և անուղղակի, երբ պետության ներդրումը որոշակի ոլորտում գործող հարկային միավորներին հարկային արտոնություններ տրամադրելն է:

Բյուջեի կապիտալ ծախսերը ներառում են ներդրումային գործունեության ֆինանսական հատկացումները և այլ ծախսերը, որոնք նախատեսվում են մարզերի

զարգացման համար, շինարարական և կապիտալ վերանորոգչական աշխատանքների համար, էկոլոգիական ծրագրերի համար:

Բյուջետային պակասորդի առկայության դեպքում առաջի հերթին ֆինանսավորվում են ընթացիկ ծախսերը:

Այցելելով Ազգային ժողովի կայքը, ծանոթացե՛ք տվյալ տարվա բյուջեի հետ, ուսումնասիրելով այն գտեք դրանում բուջեի կապիտալ ծախսերի կամ դոտացիաների, սուբսիդիաների, սուբվենցիաների օրինակներ և փորձե՛ք ուսումնասիրել այն: Ինքանո՞վ են հիմնավորված այդ հատկացումները, չկան արդյո՞ք այլ ոլորտներ, որոնք ավելի առաջնային էին, քան այդ ոլորտը:

Կարող եք օգտագործել հանրային խնդիրների հետազոտման ընթացակարգը, որ սովորել եք առաջին կիսամյակում:

ԳԼՈՒԽ 6. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 22. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՐՈՅԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Մարդը բոլոր գործերի չափանիշն է:
Պրոթագորաս (Ք.ա. 481-411)

1. «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ» ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու իրավունքները հասկանալու համար անհրաժեշտ է իմանալ, թե ով է մարդը, քանզի մարդու իրավունքները մարդու անօտարելի հատկություններն են:

Մարդը հասարակական կյանքով ապրող կենսաբանական և բանական էակ է, որի՝ որպես տեսակի գոյության համար անհրաժեշտ են որոշակի բնական, հոգևոր և հասարակական պայմաններ:

Մարդը կենսաբանական էակ է: Մարդն ունի բնության օրինաչափություններով պայմանավորված հատկություններ և հավակնություններ: Օրինակ՝ նա պետք է սնվի, շնչի և այլն: Մարդու կենսաբանական հատկությունները վերածվում են բնական-ֆիզիոլոգիական հիմնարար պահանջմունքների, որոնց բավարարման համար մարդը պետք է ունենա հնարավորություններ: Եթե միջավայրը չի ապահովում նրա այդ հնարավորությունները, ապա մարդը չի կարող գոյատևել: Օրինակ՝ մարդու մարմնավոր գոյատևման համար անհրաժեշտ է թթվածին: Ուրեմն, շնչելը դառնում է նրա բնական պահանջմունքը: Այդպիսով՝ նա ունի մաքուր օդի բնական իրավունք: Այդ իրավունքը միջոց է նրա բնական պահանջմունքը բավարարելու համար:

Մարդը բանական, հոգևոր էակ է: Մարդն ունի գիտակցություն, զգացմունքներ, կամք: Բանական, զգացմունքային այս բնական հատկությունների շնորհիվ մարդու գոյությունը հոգևոր-ստեղծագործական է: Օրինակ՝ բնությունից նրան տրված է մտածելու հատկություն, որն անօտարելի է նրանից, հետևաբար՝ մտածելը և ստեղծագործելը մարդու հիմնական բնական հավակնություններից են, որոնք պետք է բավարարվեն: Ուրեմն, մարդն ունի ազատ մտածելու և ստեղծագործելու իրավունք:

Մարդը սոցիալական էակ է: Մարդն այլ մարդկանց հետ համատեղ, այսինքն՝ հասարակության մեջ ապրող էակ է: Առանց հասարակության չի կարող լինել մարդ, և, ընդհակառակը, առանց մարդու չկա հասարակություն: Սակայն հասարակությունը մարդուն դնում է զանազան կապերի ու կախվածությունների մեջ: Մինչդեռ առանց ազատության չի կարող լինել մարդ: Ուստի հասարակական միջավայրը պետք է ապահովի մարդու բնույթով պայմանավորված պահանջմունքները, մարդուն բնությունից կամ ի վերուստ տրված ազատությունը և իրավունքները:

Մարդու իրավունքների հիմքում ընկած են մարդու բնական պահանջմունքները: Մարդու յուրահատկությունները պայմանավորում են նրա բնական, հոգևոր ու հասարակական պահանջմունքները: Օրինակ՝ յուրաքանչյուր մարդու և նրա ընտա-

նիքին անհրաժեշտ են բավարար սնունդ, հագուստ, բնակարան, կյանքի, աշխատանքի, ստեղծագործության արդար ու բարենպաստ պայմաններ: Այդ պահանջմունքները հիմնարար են և անհրաժեշտորեն պետք է բավարարվեն: Հակառակ դեպքում կարող են վտանգվել մարդու կյանքը և գոյությունը: Այսպիսով՝ **մարդը կարող է գոյություն ունենալ միայն որոշակի բնակենսաբանական և հասարակական միջավայրում, որտեղ բավարարվում են նրա պահանջմունքները:** Նման միջավայրի ստեղծման ուղին մարդու համար հնարավորություններ ապահովելն է, որպեսզի նա, օգտագործելով դրանք, բավարարի իր սեփական, անհատական պահանջմունքները: Հետևաբար մարդու իրավունքները հնարավորություններ են, որոնք ուղղված են մարդու բնույթով պայմանավորված բնական ու հասարակական պահանջմունքների բավարարմանը: Այստեղից կարելի է եզրակացնել, որ մարդու իրավունքները մեր կամքից անկախ և անհրաժեշտ պայմաններ են, առանց որոնց մարդը՝ որպես էակ, չի կարող գոյություն ունենալ և ապրել:

Մարդու իրավունքները մարդու անօտարելի հատկություններն են: Մարդու իրավունքները պայմանավորված են բնական օրինաչափություններով: Ուստի դրանք անհատից անբաժանելի ու անօտարելի են: Ոչ ոք, այդ թվում՝ պետությունը, մարդուն չի «նվիրում» իրավունքներ: Պետությունը միայն ճանաչում, օրենքներով ամրագրում և երաշխավորում է մարդու բնական իրավունքները, որպեսզի ի վերջո ապահովի մարդու գոյությունը և ազատ զարգացումը: Մարդու բնական իրավունքներն ամրագրվում են կոնկրետ պետության օրենքներում, միջազգային իրավական փաստաթղթերում և ձեռք են բերում համապարտադիր իրավական նշանակություն: Օրինակ՝ մարդու բնական-ֆիզիոլոգիական պահանջմունքներից է հանգստանալու անհրաժեշտությունը: Այդ պահանջմունքի բավարարման միջոցը մարդու հանգստանալու բնական իրավունքն է: Դրա ապահովման երաշխիքը օրենքն է:

Մտորումներ: *«Յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են օրենքով» (ՀՀ Սահմանադրություն, հոդված 33): Ի՞նչ նշանակություն ունի այս իրավունքի սահմանադրական ամրագրումը: Այդ իրավունքից ո՞ւմ համար և ի՞նչ պարտականություններ են բխում:*

Ազատությունը և արժանապատվությունը մարդու իրավունքների նպատակն են: Մարդու իրավունքների հասարակական առաքելությունը և նպատակը մարդու արժանապատիվ կյանքի և ազատության, մարդկանց իրավահավասարության ապահովումն է: Մարդու իրավունքները որոշում են անհատի ազատության չափը հասարակության մեջ, այլ անհատների հետ հարաբերություններում, որովհետև մարդու իրավունքներից մարդու համար բխում է նաև ընդհանուր պարտականություն՝ չխախտել այլ անձանց իրավունքները:

Մարդու իրավունքները բնական օրինաչափություններով պայմանավորված հնարավորություններ են, որոնք ապահովելու համար ամրագրվում են Սահմա-

նադրությամբ ու օրենքներով և կոչված են երաշխավորելու մարդու կյանքը, ազատությունը, իրավահավասարությունը, արժանապատվությունը:

2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԲԱՐՈՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Մենք արդեն իմացանք, որ մարդու իրավունքները մարդու բնական հնարավորություններն են, որոնք, ամրագրվելով օրենքներում, վերածվում են կոնկրետ անհատին պատկանող իրավական իրավունքների՝ երաշխավորված այլոց պարտականություններով ու պատասխանատվությամբ: Այսինքն՝ մարդու իրավական իրավունքներն ունեն բնական հիմքեր, արմատներ: Սակայն մարդու իրավունքներն ունեն նաև խորը բարոյական և փիլիսոփայական հիմքեր, որոնք հողի և ջրի պես սնուցում են մարդու իրավունքների ծառը (տե՛ս նկարը):

Մարդու իրավունքներն ունեն բարոյական արմատներ, հենասյուներ: Բարոյականությունը հոգևոր ոլորտի երևույթ է: Այն հասարակական գիտակցության մեջ գոյություն ունեցող պատկերացումն է բարու և չարի, պատվի և արժանապատվության, առաքինության և արդարության մասին, որոնք մշակվում են աշխարհի բարոյագիտական իմաստավորման ընթացքում:

Ընդհանուրը բարոյականության և մարդու իրավունքների միջև հարգանքն է մարդու նկատմամբ: Մարդասիրությունը, մարդու կյանքը, ազատությունը, հավասարությունը, արդարությունը համամարդկային արժեքներ ու սկզբունքներ են, որոնք հենասյուն են բարոյականության համար: Մարդու իրավունքները ևս իրենց բովանդակության մեջ ներառում են այդ համամարդկային բարոյական արժեքներն ու սկզբունքները: Այդպիսով՝ մարդու իրավունքները՝ որպես օրենքներով ամրագրված իրավական հնարավորություններ, արտահայտում են նաև բարոյականության պահանջները, սկզբունքները:

Մարդու իրավունքները պարտադիր են դարձնում բարոյական արժեքները, արմատավորում են բարոյականություն: Բարոյական նորմերի կատարման երաշխիքը մարդկանց ներքին բարոյական մշակույթն է: Քանի որ մարդու իրավունքներն ունեն բարոյական արմատներ, ապա դրանք իրավաբանորեն ամեն մի մարդուց պահանջում են պարտադիր բարոյական վերաբերմունք այլ անհատների նկատմամբ: Վերաբերմունք, որը կառուցված է բարության, հանդուրժողականության, պարտքի, պատասխանատվության և այլ բարոյական արժեքների վրա: Շնորհիվ մարդու իրավունքների իրավական ձևակերպումների պարտադիրության՝ բարոյական արժեքները դադարում են լինել խրատներ կամ հասարակ ցանկություն:

Մարդու իրավունքները, դրանց կենսագործման հասարակական փորձը, ուսուցումը, կրթությունը մարդուն ներքնապես կողմնորոշում են դեպի սեփական ինքնորոշումը և ինքնազարգացումը, դաստիարակում են բարոյականություն, հոգևորություն և քաղաքացիականություն: Փիլիսոփաներից մեկը մարդու իրավունքներն անվանում է արդի դարաշրջանում հույս և հավատ ներշնչող «աշխարհիկ, քաղաքացիական կրոն», որի՝ որպես երկրային գաղափարի օգնությամբ մարդիկ լուծում են իրենց բազում և հարակա հիմնախնդիրները:

Մարդու իրավունքների իրավական բնույթի հետևանքով բարոյական արժեքները վերածվում են պարտականության ոչ միայն անհատների, այլև պետության համար: Մարդու իրավունքները պարտադիր կողմնորոշիչ են նաև պետության ընդունած օրենքների համար: Օրենքների առաքելությունը մարդու իրավունքներն ապահովելն ու իրական դարձնելն է: Այդպիսով՝ մարդու իրավունքները, ունենալով բարոյական

հիմքեր և բովանդակություն, իրենց ճշմարիտ իրավական բնույթի շնորհիվ բարոյական որակներ են հաղորդում նաև պետությանը և օրենքներին: Մարդու իրավունքների պարտադիրության շնորհիվ պետությունը և օրենքները լցվում են մարդասիրական բովանդակությամբ, դառնում «բարոյական», ժողովրդավարական: Այդպիսի պետությունը իրավական և սոցիալական պետություն է:

Մտորումներ: *Վերհիշե՛ք Հ. Թումանյանի «Գիքորը» պատմվածքը: Փորձե՛ք այն իմաստավորել բարոյական և իրավական տեսակետներից: Ե՞րբ է Թումանյանը գրել պատմվածքը: Այդ ժամանակ հռչակվա՞ծ էին արդյոք մարդու և երեխայի իրավունքները: Գիքորի ողբերգական պատմության օրինակով փորձե՛ք միմյանց շաղկապել մարդու իրավունքները, բարոյականությունը, պետությունը և օրենքները: Այսօր հնարավո՞ր են արդյոք այդպիսի դեպքեր:*

3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

Մարդու իրավունքների «իրավական ծառը»: Մարդու իրավունքների իրավական բնույթը կարելի է պատկերացնել որպես ծառ՝ արմատներով, բնով, ճյուղերով և պտուղներով:

Մարդու բնույթով պայմանավորված՝ բնական իրավունքները ծառի արմատներն են: Բնական իրավունքներն ամրագրվում են Սահմանադրությամբ և օրենքներով: Այդպիսով՝ ձևավորվում է մարդու իրավունքների վերաբերյալ օրենսդրությունը՝ ծառի բունը: Օրենսդրությունը երբեմն անվանում են դրական իրավունք, այսինքն՝ երևացող, օրենքներում գոյություն ունեցող: Ծառի բունը ևս երևացող է, ի տարբերություն արմատների:

Օրենսդրության հիման վրա մեզանից ամեն մեկն ունի իրեն ընձեռված հնարավորություն (սուբյեկտիվ իրավունք), օրինակ՝ ստեղծագործելու, կրթության: Սուբյեկտիվ իրավունքները ծառի ճյուղերն են: Մեզ ընձեռված հնարավորության օգտագործման արդյունքում ձեռք բերված բարիքը, օրինակ՝ արդեն ստացած կրթությունը, ծառի պտուղն է:

Բարոյականությունը և մարդասիրական փիլիսոփայությունը մարդու իրավունքների ծառի համար արևն ու ջուրն են: Մարդասիրությունը՝ որպես փիլիսոփայական աշխարհայացք, բոլոր հասարակական արժեքների սանդղակում մարդուն համարում է բարձրագույն արժեք: Արդի աշխարհում «մարդը որպես բարձրագույն արժեք» սկզբունքը դիտարկվում է աշխարհակարգի հիմնասյուն, արդի պետությունների և նրանց օրենսդրության կառուցման հիմնարար սկզբունք:

Հանրօգուտ աշխատանք: *Որպես բարոյական պարտք և տուրք մարդասիրությանը՝ ձեր շրջապատից որևէ մեկին, ով գաղափար չունի մարդու իրավունքների մասին, բացատրեք մարդու իրավունքների «իրավական ծառի» իմաստը:*

Մարդու իրավունքների իրավական կարգավորման անհրաժեշտությունը: Մարդու բնական իրավունքներն իրավական ամրագրման շնորհիվ վերածվում են

իրավական պարտադիր պահանջների ու պատվիրանների համակցության: Պարտադիրության արդյունքում մարդու իրավունքները գաղափարից կամ բարոյականությունից վերածվում են պետականորեն երաշխավորված հնարավորության: Խնդիրն այն է, որ մարդը գոյություն ունի և ապրում է այլ մարդկանց հետ համատեղ: Համատեղ կյանքի ընթացքում մարդկանց շահերը բախվում են: Երբեմն էլ պետությունն է բռնանում մարդու նկատմամբ: Այդ ամենի արդյունքում մարդը շատ հաճախ դժվարանում է կամ չի կարողանում իրականացնել իր հնարավորությունները: Նշանակում է՝ մարդու իրավունքների իրականացման կամ խախտված իրավունքները վերականգնելու համար անհրաժեշտ են երաշխիքներ և օգնություն պետության ու հասարակության կողմից: Այդպիսի հիմնարար և կարևոր երաշխիքը համապարտադիր և համահավասար օրենքն է:

Հարցում շրջապատին: *Հարցման ենթարկեք հինգ հոգու և կազմե՛ք վիճակագրություն, թե նրանցից քանիսը գիտեն «մարդու իրավունքներ» հասկացության և բնույթի մասին: Պարզե՛ք անտեղյակության պատճառները:*

Մարդու իրավունքների իրավական կարգավորման բովանդակությունը: Մարդու իրավունքների իրավական կարգավորումը կատարվում է օրենքներում ամրագրվելու, իսկ այնուհետև այդ օրենքները կենսագործելու միջոցով: Օրենքներում ամրագրվելու շնորհիվ դրանք ձեռք են բերում հստակ, բոլորի համար պարտադիր կանոնի ուժ: Օրենքները սահմանում են պատասխանատվություն մարդու իրավունքների խախտման համար: Պատասխանատվության կիրառման սպառնալիքը ստիպում է մարդկանց հարգել այլոց իրավունքները: Մարդու իրավունքները բարի ցանկություններից վերածվում են օրենքներով երաշխավորված իրականության: Բացի կոնկրետ պետության օրենքներում ամրագրվելուց, դրանք հռչակվում են նաև միջազգային փաստաթղթերում: Դրանով իսկ մարդու իրավունքները պարտադիր են դառնում երկրագնդի բոլոր մասերում ու երկրներում:

Ամրագրելով մարդու բնական կոնկրետ իրավունքները՝ օրենքը դրանց մի մասը նշելու համար օգտագործում է «իրավունք», իսկ մյուս մասը՝ «ազատություն» եզրույթները: Օրինակ՝ «կրթության իրավունք» և «դավանանքի ազատություն»: Անհատի ազատությունները դրանք նույն իրավունքներն են: Սակայն ազատություններն ունեն յուրահատկություն: Դրանց դեպքում անհատն ունի առավել ինքնորոշման հնարավորություն: Օրինակ՝ դավանանքի ազատության դեպքում մարդն իրավունք ունի դավանել ինչ-որ կրոն կամ չդավանել ոչ մի կրոն, ընտրել, ունենալ և տարածել կրոնական կամ աթեիստական համոզմունքներ: Հնարավորությունների շրջանակը այստեղ ավելի մեծ է: Մինչդեռ ընտրվելու իրավունքը ենթադրում է երկու հնարավորություն՝ առաջադրվել որպես պատգամավորության թեկնածու կամ չառաջադրվել:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք ինչ է

Կենսաբանական էակ / բանական էակ / սոցիալական էակ / բնական իրավունք / համապարտադիրություն / իրավունք և պարտականություն / բնական և հասարակական միջավայր / բնական օրինաչափություն / աշխարհակարգի հիմնասյուն / օրենք:

Պատասխանե՛ք հարցերին

1. Ո՞վ է մարդը:
2. Ի՞նչ կապ կա մարդու պահանջմունքների և մարդու իրավունքների միջև:
3. Ի՞նչու են մարդու իրավուքները համարվում բնական:
4. Ի՞նչ են մարդու իրավունքները:
5. Որո՞նք են մարդու իրավունքների բարոյական արմատները:
6. Ինչպե՞ս են մարդու իրավունքները պարտադիր դարձնում բարոյական արժեքները:
7. Ինչպիսի՞ բարոյական ազդեցություն են թողնում մարդու իրավունքները պետության և օրենքների վրա:
8. Բացատրեք մարդու իրավունքների «իրավական ծառը» նկարի իմաստը կոնկրետ իրավունքի օրինակով:
9. Ի՞նչ են օրենքները և ո՞րն է օրենքների կոչումը:

Ստեղծագործական աշխատանք.

Գրեք փոքրիկ շարադրություն «Ո՞վ է մարդը» թեմայով: Մրցույթով որոշե՛ք հաղթողին:

§ 23. ՄԱՐԴՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ես մինչ ի մահ, կախաղան, մինչև անարգ մահու սյուն
Պիտի գոռամ, պիտ կրկնեմ անդադար՝ ազատությո՛ւն:
Մ. Նալբանդյան (1829 -1866)

1. ՄԱՐԴՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ (ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ) ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Մարդու բնական ազատությունն ամենից առաջ վերաբերում է նրա անձին: Ազատության այդ կողմն անվանում են անձնական ազատություն: Մարդն ի ծնե ազատ է, ազատ ստրկությունից, ճորտությունից, խտրականությունից, ունի ներքին հոգևոր ինքնավարություն: Քանի որ մարդը միաժամանակ և՛ կենսաբանական (ֆիզիկական), և՛ հոգևոր էակ է, ապա անձնական ազատությունը ենթադրում է մարդու արտաքին ֆիզիկական և ներքին հոգևոր ազատությունն ու ինքնավարությունը:

Մարդու անձնական իրավունքները կյանքի և ազատության բնական իրավունքներից ածանցված, պետության կողմից ճանաչված, նրա ֆիզիկական, բարոյահոգևոր ազատությունը, ինքնավարությունը արտահայտող հնարավորություններն են:

Անձնական իրավունքները մարդու ի ծնե հնարավորություններն են, այն հիմքը, որի վրա կառուցված են մնացած սահմանադրական իրավունքները, ուստի դրանք վերտարածքային և վերազգային են, այսինքն՝ պատկանում են ցանկացած մարդու ծննդյան փաստով, անկախ քաղաքացիությունից, գտնվելու վայրից:

Մարդու անձնական իրավունքների և ազատությունների նշանակությունը: Անձնական իրավունքները կոչված են ապահովելու, երաշխավորելու անհատական ազատությունը և ինքնավարությունը, պաշտպանելու անհատին պետության և այլ մարդկանց կամայականությունից, ապօրինի միջամտությունից, դաժան կամ մարդկային արժանապատվությունը նսեմացնող վերաբերմունքից, ցանկացած բռնությունից: Անձնական իրավունքները թույլ են տալիս մարդուն այլ մարդկանց և պետության հետ հարաբերություններում լինել ազատ և ինքնավար, ապահովել մարդու անձնական կյանքի անձեռնմխելիությունը:

2. ՄԱՐԴՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կյանքի իրավունք: Մարդու կյանքը բարձրագույն արժեք է: Չէ՞ որ կյանքը նախադրյալ է մնացած իրավունքների համար: Երբ այն վտանգված է, մնացած իրավունքներն ինքնըստինքյան կորցնում են իրենց իմաստը: Ուստի կյանքի իրավունքը մարդու այլ իրավունքների մեջ գրավում է հիմնարար, առաջնային տեղ: Կյանքի իրավունքի հռչակումը պետությանը պարտավորեցնում է ձեռնարկել համալիր միջոցառումներ՝ ուղղված մարդու կյանքին սպառնացող վտանգների կանխմանը, նրա գոյության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը:

Կյանքի իրավունքի երաշխիքները: «Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի»: Պետությունը հրաժարվել է հանցագործության համար մարդուն մահապատժի ենթարկելուց: Սպանությունը՝ որպես մարդու կյանքի դեմ

ուղղված ոտնձգություն, իր բոլոր տեսակներով համարվում է հանցագործություն: Հանցանք են նաև մարդու կյանքը ոտնձգող կամ վտանգող բազմաթիվ այլ արարքներ՝ ահաբեկչությունը, ցեղասպանությունը և այլն: Պետությունն իր մարմինների միջոցով պայքարում է հանցագործությունների դեմ, այդ թվում՝ մարդու կյանքը ոտնձգող:

Մարդու այլ իրավունքները ևս երաշխիք են նրա կյանքի համար, օրինակ՝ արգելքը՝ մարդուն ենթարկել խոշտանգումների, դաժան պատժի: Պետության գործունեությունը առողջապահության, մահացությունների դեմ պայքարի և այլ ոլորտներում ևս երաշխիք է կյանքի համար:



Կյանքի իրավունքը ենթակա է իրավաչափ սահմանափակման այն դեպքում, երբ վտանգված է ընդհանուր բարիքը, այլոց ավելի նշանակալի իրավունքները: **Անհրաժեշտ պաշտպանության** վիճակում կատարված սպանությունը հանցանք չէ: Օրինակ՝ երբ ինչ-որ մեկը հարձակվել է Ձեզ վրա և սպառնում է Ձեր կյանքին, դուք կարող եք նրան սպանելով փրկել Ձեր կյանքը: Նման իրավիճակ է նաև **ծայրահեղ անհրաժեշտությունը** (օրինակ՝ ոստիկանը կյանքից զրկելու միջոցով վնասազերծում է ահաբեկչին, որը պատանդ էր վերցրել ավտոբուսի ուղևորներին և սպառնում էր պայթեցնել այն):

Կյանքի իրավունքը ենթակա է իրավաչափ սահմանափակման այն դեպքում, երբ վտանգված է ընդհանուր բարիքը, այլոց ավելի նշանակալի իրավունքները: **Անհրաժեշտ պաշտպանության** վիճակում կատարված սպանությունը հանցանք չէ: Օրինակ՝ երբ ինչ-որ մեկը հարձակվել է Ձեզ վրա և սպառնում է Ձեր կյանքին, դուք կարող եք նրան սպանելով փրկել Ձեր կյանքը: Նման իրավիճակ է նաև **ծայրահեղ անհրաժեշտությունը** (օրինակ՝ ոստիկանը կյանքից զրկելու միջոցով վնասազերծում է ահաբեկչին, որը պատանդ էր վերցրել ավտոբուսի ուղևորներին և սպառնում էր պայթեցնել այն):

Մտորումներ: *էվթանազիա - թեթև, անցավ մահ: Երբ մարդը տառապում է անբուժելի, դաժան, տանջահարող հիվանդությամբ, ունի՞ նա անցավ կյանքից զրկվելու իրավունք: Աշխարհի մի շարք երկրներ ընդունում են մարդու այս իրավունքը, մյուսները՝ ոչ: Ո՞ր մոտեցումն է ճիշտ: Բաժանվե՛ք խմբերի և բանավիճե՛ք:*

Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունք: Անձնական ազատության իրավունքը մարդու անձի ֆիզիկական ազատությունն է, որը մարդու էությունն է, ծննդյան պահից ունեցած բնական իրավունքը: Դա նշանակում է՝ ոչ ոք չի կարող ենթարկվել կամայական ձերբակալման, կալանքի կամ արտաքսման, ազատության այլ սահմանափակման:

Անձնական անձեռնմխելիությունը մարդու ֆիզիկական (կյանք, առողջություն) և բարոյահոգևոր (պատիվ, արժանապատվություն) անձեռնմխելիությունն է, ուստի բոլորը պարտավոր են չմիջամտել նրա անհատական կենսագործունեությանը:

- Մարդուն կարելի է ազատությունից զրկել օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Անձին ապօրինաբար ազատությունից զրկելը հանցանք է: Այդ դեպքում ամեն ոք ունի պատճառված վնասի հատուցման իրավունք:
- Ազատությունից զրկված յուրաքանչյուր անձ իրեն հասկանալի լեզվով անհապաղ տեղեկացվում է պատճառների, իսկ քրեական մեղադրանք ներկայացվելու դեպքում՝ նաև մեղադրանքի մասին: Մարդն իրավունք ունի դրա մասին անհապաղ տեղեկացնելու իր կողմից ընտրված անձին:
- Մարդուն չի կարելի ազատությունից զրկել միայն այն պատճառով, որ ի վիճակի չէ կատարելու քաղաքացիաիրավական պարտավորությունները: Օրինակ, եթե դուք փող եք պարտք և չեք կարողանում վերադարձնել, ապա դրա համար ձեզ չեն կարող զրկել ազատությունից:
- Մարդուն չի կարելի խուզարկել այլ կերպ, քան օրենքով սահմանված դեպքերում և կարգով: Ապօրինի խուզարկության դեպքում մարդն ունի պատճառված վնասի հատուցման իրավունք:
- Անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը բացարձակ չէ: Օրենքները կարող են նախատեսել ազատությունից զրկում: Որպեսզի օրենսդիրը չչարաշահի իր այս լիազորությունը, Սահմանադրությունը ամրագրում է ազատությունից զրկելու դեպքերը: Օրինակ՝ անձին հանցանք կատարելու համար իրավասու դատարանի կողմից ազատազրկման դատապարտելը, ընդհուպ մինչև ցմահ: Նպատակը հանցավոր անձին պատժելը և ուղղելն է: Կամ հանցանք կատարելու մեջ մեղադրվողին կալանավորելը, եթե դա անհրաժեշտ է անձի կողմից նոր հանցանքի կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար:

Գործնական իրավական աշխատանք: *ՀՀ Սահմանադրության 16 հոդվածը սահմանում է ազատությունից զրկելու դեպքերը, որոնք կարող են նախատեսվել օրենքով: Դուրս գրե՛ք այդ հիմքերը, կատարե՛ք դրանցից յուրաքանչյուրի էության և անհրաժեշտության սեփական վերլուծություն-մեկնաբանություն: Արդյո՞ք դրանք շատ չեն:*

Մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգանքի իրավունք: Մարդը բարձրագույն արժեք է, ինչից և բխում է նրա արժանապատվությունը: **Արժանապատվությունը հասարակության կողմից մարդու արժեքավորության ճանաչումն է, մարդու՝ ինքն իր հանդեպ հարգարժան վերաբերմունքը:** Հասարակությունը և պետությունը ճանաչում են կոնկրետ մարդու հասարակական արժեքը, նշանակությունը, ինքնատիպությունը: Ոչ մի հանգամանք և իրադրություն չի կարող դառնալ մարդու արժանապատվությունը նսեմացնելու հիմք:

- Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների, ինչպես նաև անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի: Ձերբակալված, կալանավորված և ազատազրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունք: Այս իրավունքն ուղղված է ոստիկանական մարմիններում, բանտերում և կալանավայրերում հանդիպող խոշտանգումների, նվաստացնող վերաբերմունքի կանխմանը:
- Արգելվում է մարդուն ենթարկել գիտական, բժշկական և այլ փորձերի առանց իր համաձայնության:

Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: Մարդու անձնական ազատությունը ենթադրում է ոչ միայն իր անձի անձեռնմխելիություն, այլև ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք: Այդպիսի հնարավորությունից զուրկ մարդը նման է ճորտի: Այս իրավունքն արդի պայմաններում կենսական պահանջմունք է, քանի որ առանց տեղաշարժման ազատության մարդը չի կարող իրականացնել որոշ իրավունքներ, օրինակ՝ կրթության, ընտանիք ստեղծելու և այլն: Ազատ տեղաշարժվելու իրավունքը ենթադրում է հանրապետությունից դուրս գալու և վերադառնալու իրավունք, ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք:

Հանրապետությունից դուրս գալու իրավունքը պատկանում է բոլորին: Ազատ տեղաշարժվելու և բնակավայր ընտրելու իրավունք ունի հանրապետությունում օրինական հիմքերով գտնվող յուրաքանչյուր ոք, իսկ վերադառնալու իրավունք ունեն քաղաքացիները և հանրապետությունում բնակվելու իրավունք ունեցողները: Հանրապետությունից դուրս գալու իրավունքն իրականացվում է վիզային ընթացակարգով: Պետությունները կարող են սահմանել հեշտացված կարգ մեկ պետությունից մյուսն անցնելու և բնակվելու համար:

Անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունք: Այս իրավունքն այլ կերպ անվանում են մասնավոր կյանքի անձեռնմխելիության իրավունք: **Մասնավոր կյանքն անհատի անձնական և ընտանեկան հարաբերություններն են, որ վերահսկվում են իր իսկ կողմից և ազատ են արտաքին ներգործությունից:** Անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունն անհրաժեշտ պայման է հասարակության մեջ մարդու բնականոն կյանքի համար: Այն ներառում է անհատի վարքագիծը և գործունեությունը աշխատանքից ազատ ժամանակ (հարաբերություններն ընտանիքում, ընտանեկան կացությունը, ընկերական հարաբերությունները, գրագրությունը, գործարար հարաբերությունները աշխատանքից դուրս):

Մտորումներ: *Ինչո՞ւ պիտի մարդու կյանքի անձնական և ընտանեկան ոլորտները գաղտնի լինեն կողմնակի անձանց համար, պաշտպանվեն արտաքին ուշադրությունից և ազդեցությունից:*

Առանց անձի համաձայնության նրա վերաբերյալ չի կարելի հավաքել, պահպանել, օգտագործել կամ տարածել այլ տեղեկություններ, քան նախատեսված է օրենքով: Արգելվում է անձին վերաբերող տեղեկությունների օգտագործումն ու տարածումը, եթե դա հակասում է տեղեկությունների հավաքման նպատակներին կամ չի նախատեսված օրենքով: Օրենքն արգելում է նաև մասնագիտական գաղտնիքի (բժշկական, նոտարական, որդեգրման և այլն) հրապարակումը և տարածումը: Օրինակ՝ խուզարկության մասնակիցներից քննիչը վերցնում է ստորագրություն առ այն, որ նրանք պարտավոր են չհրապարակել անձնական տեղեկությունները:

Յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում իրեն վերաբերող տեղեկություններին ծանոթանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի իր մասին ոչ հավաստի տեղեկությունների շտկման և իր մասին ապօրինի ձեռք բերված տեղեկությունների վերացման իրավունք:

Յուրաքանչյուր ոք ունի նամակագրության, հեռախոսային խոսակցությունների, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների գաղտնիության իրավունք: Այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով, դատարանի որոշմամբ: Օրինակ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ

մեղադրյալի նամակագրության մեջ կարող են պարունակվել գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ, քննիչը կարող է միջնորդել դատարանին նրա նամակագրությունը վերահսկելու համար: Դատարանի որոշմամբ թույլատրվում է կասկածյալի, մեղադրյալի և հանցագործությունների մասին տեղեկություններ ունեցող այլ անձանց հեռախոսային խոսակցությունների լսում և ձայնագրառում, եթե հիմքեր կան ենթադրելու, որ դրանցում կարող են քրեական գործի համար նշանակություն ունեցող տեղեկություններ պարունակվել:

Բնակարանի անձեռնմխելիության իրավունք: Այս իրավունքը մասնավոր կյանքի անձեռնմխելիության դրսևորումներից է և պաշտպանում է բնակարանը պետական մարմինների ու պաշտոնատար անձանց, անհատների ոտնձգություններից: Ոչ ոք առանց բնակարանի օրինական տիրապետողի և օգտագործողի համաձայնության իրավունք չունի մուտք գործել նրա բնակարանը: Այս իրավունքը կապված է «բնակարան» հասկացության հետ: Օրենքի համաձայն՝ **բնակարան** է համարվում սեփական կամ վարձակալված բնակարանը, այգետնակը, հյուրանոցային համարը, նավախցիկը, գնացքի ճամփորդախցիկը, դրանց հարող տարածքները, բնակելի շինության նկուղը, ձեղնահարկը, ինչպես նաև մասնավոր ավտոմեքենան, գետային կամ ծովային նավը, ծառայողական անձնական աշխատասենյակը և ավտոմեքենան, արվեստանոցը:

Բնակարանի անձեռնմխելիության իրավունքը ենթակա է սահմանափակման: Կյանքում առաջանում են իրադրություններ, երբ անհրաժեշտ է լինում մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան: Սահմանադրությունը սահմանում է, որ այդ դեպքերը պետք է նախատեսվեն օրենքով: Այդպիսիք կարող են համարվել արտակարգ իրավիճակները (օրինակ՝ հրդեհ, վթարներ, ջրհեղեղ և այլն), ինչպես նաև իրավապահպան գործունեության իրականացումը (օրինակ՝ դատարանի վճիռների կատարման անհրաժեշտությունը, հանցագործությունների բացահայտումը): Բնակարանի անձեռնմխելիության սահմանափակման հատուկ դեպք է **խուզարկությունը:** Օրինակ, եթե լիազորված մարմինները տվյալներ ունեն, որ բնակարանում թաքնված է հանցագործ կամ այնտեղ կան հանցագործության բացահայտման համար նշանակություն ունեցող ապացույցներ, ապա նրանք կարող են իրականացնել խուզարկություն: Սակայն առանց դատարանի որոշման չի թույլատրվում խուզարկել բնակարանը:

Հանրօգուտ աշխատանք: *Որպես ձեր ներդրում մարդու իրավունքների մշակույթի արմատավորման գործին՝ ձեր շրջապատից որևէ մեկին բացատրեք նրա որևէ անձնական իրավունքը:*

Մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Միտքը մարդու մտածողության արդյունքն է, որ փորձում է ճանաչել շրջակա աշխարհը և իրեն այդ աշխարհում, արտահայտվում է պատկերացումներում, հայացքներում, կարծիքներում, համոզմունքներում: **Մտածելը մարդու բնական հատկությունն է, նրա հոգևոր կյանքի հիմքը:** Մտքի ազատության իրավունքը սեփական գիտակցության և ենթագիտակցության աշխատանքն է՝ առանց հասարակության, պետության և այլ անձանց կողմից արտաքին վերահսկողության:

Խղճի և կրոնի ազատությունն իրավական իմաստով նշանակում է Աստծո նկատմամբ համոզմունքի ազատություն, հնարավորություն՝ դավանել ցանկացած կրոն, կրոնին վերաբերվել չեզոք, լինել աթեիստ և հերքել կրոնն ամբողջությամբ: Խղճի և կրոնի ազատության իրավունքը ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու, այդ համոզմունքները միայնակ կամ էլ այլոց հետ համատեղ քարոզի, եկեղեցա-

կան արարողությունների և պաշտամունքի այլ ծիսակատարությունների միջոցով արտահայտելու ազատությունը:

Քաղաքացիական հասարակությունը հիմնված է գաղափարական բազմազանության սկզբունքի վրա: Մարդիկ իրավահավասար են անկախ կրոնի նկատմամբ վերաբերմունքից, իսկ կրոնական խտրականությունն արգելված է:

Դպրոցը բաժանված է եկեղեցուց, և պետական կրթական համակարգն ունի աշխարհիկ բնույթ: Կրոնական և աթեիստական կազմակերպությունները բաժանված են պետությունից:

Հայ առաքելական եկեղեցին մեծ ներդրում ունի հայ ժողովրդի պատմության մեջ, ինչը նկատի ունենալով՝ Սահմանադրությունը հռչակում է. «ՀՀ-ն ճանաչում է Հայաստանյաց առաքելական սուրբ եկեղեցու՝ որպես ազգային եկեղեցու բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգևոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման և ազգային ինքնության պահպանության գործում»:

Մտորումներ: *Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք այս դրույթը չի խախտում կրոնների և կրոնական կազմակերպությունների իրավահավասարությունը: Ճի՞շտ է արդյոք կրոնական այլ կազմակերպությունների և ուղղությունների ազատ գործունեությունը Հայաստանում: Արդյո՞ք դա ազգային անվտանգության սպառնալիք չէ:*

Կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի և տեղեկատվության ազատության իրավունք: Սահմանադրության 27 հոդվածում խտացվել են երեք ինքնուրույն, սակայն սերտ կապված, միմյանց լրացնող և երաշխավորող իրավունքներ:

1. Յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Մարդու մտքի արդյունքը նրա կարծիքն է շրջակա աշխարհի և այլ մարդկանց նկատմամբ: Միտքը չի կարող լինել ազատ, եթե հնարավոր չէ այն ազատ արտահայտել: «Արգելվում է մարդուն հարկադրել հրաժարվել իր կարծիքից կամ փոխել այն»:

2. Յուրաքանչյուր ոք ունի խոսքի ազատության իրավունք: Դա հնարավորություն է արտահայտել (կամ չարտահայտել) իր միտքը, բացատրել իր վերաբերմունքը շրջակա իրականության դեպքերի նկատմամբ, ունենալ և պնդել իր տեսակետը:

3. Յուրաքանչյուր ոք ունի տեղեկատվության ազատության իրավունք: Մարդը կարող է ազատորեն փնտրել, ստանալ, տարածել տեղեկություններ, գաղափարներ՝ տեղեկատվության ցանկացած միջոցով (տպագիր, ցուցահանդես, ժողով, հանրահավաք և այլն)՝ անկախ պետական սահմաններից: Տեղեկատվությունը, որպես կանոն, բաց է, հանրամատչելի, հավաստի: Բացառություն է արված պետական գաղտնիքի համար, որի հրապարակումը հանցանք է:

Կարծիքն ազատ արտահայտելու, խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքները երաշխիք են տնտեսական, բարոյական, քաղաքական գաղափարների բազմազանության և հարստության համար, ինչն իր հերթին նպաստում է հասարակական կյանքում հիմնարար և առաջադեմ գաղափարների ներդրմանը:

Ամուսնության և ընտանիք կազմելու իրավունք: Ամուսնությունը փոխադարձ սիրո և հարգանքի վրա հիմնված՝ տղամարդու և կնոջ ազատ, կամավոր միությունն է, որի համար անհրաժեշտ են ամուսնացող անձանց փոխադարձ համաձայնությունը և նրանց ամուսնական տարիքի հասնելը:

Կինը և տղամարդը ամուսնանալիս, ամուսնության ընթացքում, ամուսնալուծվելիս օգտվում են հավասար իրավունքներից:

Ընտանիքը հասարակության բնական և հիմնական բջիջն է, որը կատարում է վերարտադրող, տնտեսական, սոցիալական, դաստիարակչական գործառույթներ: Ընտանիքը ազգի դիմագիծն է:

Հայաստանում ամուսնական տարիք է սահմանված տղամարդկանց համար՝ 18, կանանց՝ 17 տարին: Հարկադրանքով կայացած ամուսնությունը կարող է ճանաչվել անվավեր: Արգելվում է ամուսնությունը այն անձանց միջև, որոնցից թեկուզ մեկն արդեն այլ ամուսնության մեջ է գտնվում: Դա արգելում է նաև Հայ առաքելական եկեղեցին: Չի թույլատրվում ամուսնություն մոտ ազգակցության մեջ գտնվող անձանց, հարազատ և նույն հորից կամ նույն մորից ծնված եղբայրների ու քույրերի, որդեգրողների և որդեգրվածների միջև: Այս արգելքներն ունեն կենսաբանական և բարոյական շարժառիթներ. արյունապղծությունը կործանարար է անդրադառնում սերունդների վրա: Ամուսնությունը գրանցվում է համապատասխան պետական մարմնում, իսկ եկեղեցական գրանցումը պարտադիր չէ:

Ընտանիքը, մայրությունը, մանկությունը գտնվում են պետության հովանավորության ու պաշտպանության ներքո: Պետությունը օգնում և նյութապես աջակցում է անապահով ընտանիքներին, իրականացնում է մոր և մանկան շահերի պաշտպանություն տարբեր միջոցներով: Օրինակ՝ մայրության հետ կապված պատճառներով աշխատանքից ազատելը արգելվում է: Յուրաքանչյուր աշխատող կին հղիության և ծննդաբերության դեպքում ունի վճարովի արձակուրդի և նոր ծնված երեխայի խնամքի կամ երեխայի որդեգրման համար արձակուրդի իրավունք:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

անձնական ազատություն / մահապատիժ / իրավաչափ սահմանափակում / քրեական մեղադրանք / քաղաքացիաիրավական պարտավորություն / խուզարկություն / ճորտ / մասնավոր կյանք / բնակարան / միտք և մտածողություն / խիղճ / պետական գաղտնիք:

Պատասխանե՛ք հարցերին

1. Ո՞րն է անձնական իրավունքների նշանակությունը, և որո՞նք են դրանք:
2. Ի՞նչ է կյանքի իրավունքը և որո՞նք են այդ իրավունքի երաշխիքները:
3. Ի՞նչ են անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքները, և որո՞նք են դրանց երաշխիքները:
4. Ի՞նչ է մարդասիրական վերաբերմունքի և արժանապատվության հարգման իրավունքը:
5. Որո՞նք են ազատ տեղաշարժվելու իրավունքի երեք տարրերը:
6. Որո՞նք են անձնական և ընտանեկան կյանքի հարգանքի իրավունքի երաշխիքները:
7. Արդյո՞ք սահմանափակվող է բնակարանի անձեռնմխելիության իրավունքը:
8. Ի՞նչ են մտքի և կարծիքի ազատության իրավունքները:
9. Ի՞նչ է խղճի և կրոնի ազատության իրավունքը, և որո՞նք են դրա երաշխիքները:
10. Ի՞նչ են խոսքի և տեղեկատվության ազատության իրավունքները:
11. Որո՞նք են ամուսնության պայմանները և արգելքները:

Հրավեր կամ այցելություն.

Ըստ հարմարության դասարան հրավիրե՛ք ոստիկանության աշխատակցին կամ այցելե՛ք ոստիկանության բաժին, որպեսզի Ձեզ ներկայացվեն անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքի երաշխիքները:

§ 24. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Գո՛րծն է անմահ, լա՛վ իմացեք, որ խոսվում է դարեդար,
երնե՞կ նրան ով իր գործով կապրի անվերջ, անդադար:
Հ. Թումանյան (1869-1923)

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Քաղաքական իրավունքների հասկացությունը: Միայն անձնական ազատությունը բավարար չէ մարդու ազատ զարգացումն ու կենսագործունեությունն ապահովելու համար: Ուշ միջնադարյան առաջադեմ մտածողները, դեմ դուրս գալով բացարձակ միապետական կառավարմանը, առաջ քաշեցին ժողովրդի՝ որպես իշխանության տիրոջ, աղբյուրի գաղափարը: Որպես ինքնիշխան՝ ժողովուրդը հասարակական դաշինք կնքելու միջոցով հիմնադրում է պետություն, վերահսկում նրա գործունեությունը: Այդպիսով՝ անհատի ազատությունն ունի նաև քաղաքական կողմ: Անհատի քաղաքական ազատությունից բխող իրավունքների օգտագործմամբ հասարակությունը հիմնադրում է իր պետական կառավարման համակարգը, վերահսկում է այն: Առանց ժողովրդի քաղաքական համաձայնության և բարի կամքի ոչ ոք չի կարող տիրանալ պետական իշխանությանը: Արգելվում է իշխանության ապօրինի յուրացումը որևէ մեկի կամ խմբի կողմից:

Քաղաքական իրավունքները բխում են քաղաքական ազատությունից և ապահովում են անհատի մասնակցությունը հասարակության և պետության կյանքին, այդ թվում՝ հանրային իշխանության ձևավորմանը, նրա գործունեության նկատմամբ վերահսկողությանը:

Անձնական և քաղաքական իրավունքների կապը: Քաղաքական ազատությունը բխում է անձնական ազատությունից: Մարդը՝ որպես բանական և հասարակական կյանքով ապրող էակ, իրավունք ունի ինքնուրույն և ազատորեն գործելու նաև քաղաքական գործընթացներում, ունենալ և արտահայտել իր քաղաքական տեսակետները: Եթե անձնական իրավունքները ապահովում են մարդու անձեռնմխելիությունն ու ինքնավարությունը, ապա քաղաքական իրավունքները պայմաններ են ստեղծում **քաղաքացի - հասարակություն - պետություն** կապերն ամրապնդելու համար: Անձնական ազատությունը երաշխիք է քաղաքական ազատության համար և ընդհակառակը: Եթե հասարակության մեջ չկա քաղաքական ազատություն, ապա կառավարումն ի վերջո կվերածվի բռնապետության և կսկսի ոտնձգել անձնական ազատությունը:

Քաղաքական իրավունքները ժողովրդավարության հենասյուներն են: Ե՛վ քաղաքական ազատության, և՛ ժողովրդավարության հենասյուներ են ընտրությունները, ժողովրդի ներկայացուցչությունը (հիմնականում խորհրդարանում), կուսակցությունների բազմազանությունը: Ժողովրդի ներկայացուցչությունն իրականացվում է համընդհանուր ընտրությունների միջոցով: Որպես իշխանության հաշվետվության և պատասխանատվության ձև՝ ընտրությունները պետք է լինեն պարբերական և ազատ: Ընտրողները պետք է կարողանան միավորվել կուսակցությունների մեջ՝ իրենց քաղաքական նպատակները կենսագործելու համար:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ	
ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ	• Քաղաքացիության իրավունք
	• Միավորումների իրավունք
	• Հրապարակային հավաքների անցկացման իրավունք
	• Հանրային կառավարմանը մասնակցելու իրավունք
	• Հանրային ծառայության ընդունվելու իրավունք
	• Դիմելու և պատշաճ պատասխան ստանալու իրավունք
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ	

Քաղաքական իրավունքները հիմնականում պատկանում են միայն քաղաքացիներին: Որոշ իրավունքների սուբյեկտ են նաև ոչ քաղաքացիները, օրինակ՝ հրապարակային հավաքներ անցկացնելու: Եթե անձնական իրավունքները միայն անհատական են, ապա քաղաքականները իրականացվում են և՛ անհատական կարգով, և՛ այլ մարդկանց հետ միավորվելով, օրինակ՝ կուսակցությունների միջոցով:

Մտորումներ: *Քաղաքական ազատություն... Ե՞րբ է այն ձևական, ե՞րբ՝ իրական: Քաղաքացին ունի ընտրելու իրավունք: Բայց նա կարող է ընտրել «վատի» և «անտանելիի» միջև, այնինչ պիտի ընտրեր «լավի» և «ավելի լավի» միջև: Մեկ այլ խնդիր է փողը քաղաքականության մեջ, որը ջլատում է ժողովրդավարությունը, երբ շահարկում է իր ազդեցությունը, թե ով կընտրվի, թե ինչպես կքվեարկեն օրենսդիրները: Որո՞նք են այս խնդիրների հաղթահարման ուղիները:*

2. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունք: Միավորումները անհատների շահերի ընդհանրության հիման վրա կամավոր ստեղծված հասարակական կառույցներ են, որոնց նպատակը անդամների հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքների բավարարումն է: Օրինակ՝ գրողների միությունը: Միավորում, բացի կուսակցությունից, ստեղծելու և անդամագրվելու իրավունք ունեն բոլորը: Միավորումները հսկայական դեր ունեն ժողովրդավարության կայացման գործում (տե՛ս § 14): Հասարակական միավորումներն իրենց բնույթով բազմազան են: Դրանց տեսակներից են կուսակցությունը և արհեստակցական միությունը:

Արհեստակցական միությունը մասնագիտական գործունեության ընդհանուր շահեր ունեցող անձանց կամավոր միավորում է՝ ստեղծված նրանց ներկայացուցչության, սոցիալ-տնտեսական իրավունքների պաշտպանության նպատակով:

Կուսակցությունն ընդհանուր գաղափարներ և նպատակներ ունեցող քաղաքացիների միավորում է, որը ձգտում է ընտրությունների միջոցով տիրանալ իշխանությանը կամ ազդել վերջինիս վրա՝ իր ծրագրերն իրագործելու նպատակով:

Մտորումներ: *Ի՞նչ կուսակցություններ գիտեք: Դրանցից որի՞ն եք համակրում և ինչո՞ւ: Կա կարծիք, որ արդի դարաշրջանում կուսակցություններն անկում են ապ-*

ռում, կամ էլ հրապարակ են գալիս «փուչիկ» կուսակցություններ՝ որպես ժողովրդին ապակողմնորոշելու միջոց:

Միավորումներ կազմելու, դրանց անդամագրվելու իրավունքի երաշխիքները

- **Ստեղծման և անդամագրվելու կամավորություն**: Արգելվում է մարդուն հարկադրել անդամագրվել որևէ միավորման: Ինքը՝ անհատը պետք է ընտրի իր հասարակական-քաղաքական կողմնորոշումը, դրան համապատասխան ստեղծի կամ անդամագրվի միավորումներին:
- **Միավորումների գործունեության ազատություն և ինքնակառավարում**: Միավորումներն են որոշում իրենց նպատակները և խնդիրները: Նրանք ունեն ինքնակառավարման իրավունք՝ օրենքով սահմանված կարգով:
- **Արգելվում է ապօրինի միջամտել միավորումների գործունեությանը**: Սակայն պետությունը վերահսկում է նրանց գործունեությունը օրենքով սահմանված կարգով: Եթե միավորումները խախտում են օրենքը, ապա օրենքով նախատեսված դեպքերում և դատական կարգով նրանց գործունեությունը կարող է կասեցվել կամ արգելվել:

Միավորումներ կազմելու և դրանց անդամագրվելու իրավունքը կարող է սահմանափակվել միայն Սահմանադրությամբ սահմանված հիմքերով: Կուսակցություններ և արհեստակցական միություններ ստեղծելու, դրանց անդամագրվելու իրավունքներն օրենքով սահմանված կարգով կարող են սահմանափակվել զինված ուժերի, ոստիկանության, ազգային անվտանգության, դատախազության մարմինների ծառայողների, դատավորների և սահմանադրական դատարանի անդամի նկատմամբ:

Հրապարակային հավաքների անցկացման իրավունք: «Յուրաքանչյուր ոք ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք»: Հրապարակային հավաքների իրավունքը միջոց է հանրային հիմնախնդիրները քննարկելու, կարծիքներն ազատ արտահայտելու, երկրի տնտեսական, քաղաքական, մշակութային և այլ ոլորտների հարցերով պահանջներ առաջ քաշելու, իշխանությունների գործունեությանը հավանություն տալու կամ դրանից բողոքելու համար: Հրապարակային հավաքները պետք է լինեն խաղաղ, անցկացվեն առանց զենքի:

Հրապարակային հավաքներն անցկացվում են մի քանի ձևերով:

Ժողով – անցկացվում է որոշակի տեղում, նախապես որոշված ժամանակ՝ մարդկանց հուզող հարցերը համատեղ քննարկելու և լուծելու համար:

Հանրահավաք – հասարակական կարծիքի կազմակերպված արտահայտման ձև, որն իրականացվում է նախօրոք որոշված ժամանակ և որոշակի վայրում, կոչված է ի հայտ բերելու մարդկանց պահանջները, նրանց կարծիքն այս կամ այն հարցի վերաբերյալ:

Ցույց – քաղաքական և սոցիալ-տնտեսական հարցերի կապակցությամբ խմբային կամ անհատական կարծիքի արտահայտման ձև, որը նույնպես կազմակերպվում և անցկացվում է որոշված ժամին, որոշակի տեղում:

Երթ – ցույցի տարատեսակ, որն իրականացվում է նախօրոք որոշված երթուղով՝ քաղաքացիների շարժման միջոցով:

Ուղեկալում (պիկետ) – կոլեկտիվ կամ անհատական տեղաբաշխում ուղեկալվող օբյեկտի մոտ՝ պաստառների և տեսողական քարոզչության այլ միջոցների օգտագործմամբ:

Հրապարակային հավաքները անցկացվում են **ծանուցողական կարգով.** կազմակերպիչները կամ նախաձեռնող խմբերն այդ մասին ծանուցում են տեղական ինքնակառավարման մարմիններին, Երևան քաղաքում՝ Երևանի քաղաքապետարանին: Հրապարակային միջոցառումները որոշակի դեպքերում կարող են արգելվել: Օրինակ, եթե դրանց անցկացման մասին նախօրոք չի տեղեկացվել, կամ եթե դրանք կարող են խախտել հասարակական կարգը, վտանգել այլոց իրավունքները:

Հրապարակային հավաքներին մասնակցելու իրավունքի սահմանափակումները կարող են նախատեսվել միայն օրենքով՝ զինված ուժերում, ոստիկանությունում, ազգային անվտանգության, դատախազության մարմիններում ծառայողների, ինչպես նաև դատավորների, Սահմանադրական դատարանի անդամների համար:

Մտորումներ: *Համադրե՛ք կուսակցություն և արհեստակցական միություն ստեղծելու, դրանց անդամագրվելու, հրապարակային հավաքներին մասնակցելու իրավունքների սահմանափակումները և փորձե՛ք կռահել, թե որոնք են դրանց հիմնավորումները և պատճառները: Ճի՞շտ եք համարում դրանք, թե՞ ոչ:*

Պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը (հանրային կառավարմանը) մասնակցելու իրավունք: ՀՀ 18 տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

Հանրային կառավարմանը մասնակցելը կազմված է երեք հնարավորությունից:

1. Ընտրել և ընտրվել պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում (վերհիշե՛ք § 2): Ընտրելու իրավունքն անվանում են **ակտիվ ընտրական իրավունք:** Սահմանադրությունը երաշխավորում է ընտրելու իրավունք բոլոր 18 տարին լրացած քաղաքացիների համար: Բացի ընտրելուց, կա նաև ընտրվելու իրավունք կամ պասիվ ընտրական իրավունք: Ընտրվելու համար Սահմանադրությունը լրացուցիչ պահանջներ է ներկայացնում հանրապետության նախագահի, պատգամավորի, համայնքի ավագանու և ղեկավարի թեկնածուներին:

Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները: Դատարանի վճռով անգործունակ կարող է ճանաչվել քաղաքացին, ով հոգեկան խանգարման հետևանքով (օրինակ՝ տկարամտության) չի կարող հասկանալ իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարել դրանք:

2. Մասնակցել հանրապետական և տեղական հանրաքվեներին:

3. Մասնակցել հանրային կառավարմանը իրենց կողմից անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված ներկայացուցիչների միջոցով (հանրապետության նախագահ, պատգամավոր, համայնքի ավագանի և ղեկավար):

Հանրային կառավարմանը մասնակցելու իրավունքի սուբյեկտը 18 տարին լրացած քաղաքացին է: Սահմանադրությունը, նկատի ունենալով Ղարաբաղյան դեպքերի հետևանքով Ադրբեջանից տեղափոխված փախստականներին, թույլ է տալիս օրենքով սահմանել քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը:

Մտորումներ: *Ընտրությունները ժողովրդավարության կարևոր պայմաններից են: Սակայն քաղաքական ազատությունը չի սահմանափակվում միայն քվեարկության տուփով, որը «եղել և մնում է միայն որպես ձևականորեն հռչակված ժողովրդավարության խորհրդանիշ»: Մտորե՛ք այս մասին և փորձեք հասկանալ մտքի իմաստը: Ձեր շրջապատում ինչպե՞ս են գնահատում ընտրությունները:*

Քաղաքացիներն ունեն հանրային ծառայության ընդունվելու իրավունք:



Պետական ծառայությունը հանրային ծառայության հիմնական տեսակն է, որն իր հերթին լինում է քաղաքացիական ծառայություն (օրինակ՝ նախարարությունում), դատական ծառայություն, հատուկ ծառայություն (զինված ուժեր, ոստիկանություն և այլն), դիվանագիտական ծառայություն և այլն:

Քաղաքացիական աշխատանքը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին վերապահված առանձին խնդիրների ու գործառույթների իրականացումն է վարձու աշխատողների միջոցով:

Յուրաքանչյուր քաղաքացի, իր մասնագիտական գիտելիքներին և աշխատանքային ունակություններին համապատասխան, իրավունք ունի ընդունվելու հանրային ծառայության (պետական մարմիններում և տեղական ինքնակառավարման մարմիններում), քաղաքացիական աշխատանքի: Իհարկե, դա չի նշանակում, որ այդ իրավունքը գործում է ինքնաբերաբար: Նախ և առաջ անձը պետք է ունենա հանրային ծառայության պաշտոններ

զբաղեցնելու իրավունք: Օրինակ՝ քաղաքացիական ծառայության իրավունք ունի անձը, որը համապատասխանում է տվյալ պաշտոնի պահանջներին, տիրապետում է հայերենին և 18 տարեկան է: Այնուհետև քաղաքացին պետք է մասնակցի ծառայության պաշտոն զբաղեցնելու մրցույթին և անցնելու դեպքում նշանակվի պաշտոնի:

Դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Դիմում կամ առաջարկություն ներկայացնելու իրավունք ունի յուրաքանչյուր ոք: Դիմումը կամ առաջարկությունը, որի շարժառիթներ կարող են լինել անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումները, ունի եռակի նշանակություն:

- **Դիմելը քաղաքական իրավունք է:** Մարդիկ հասարակական շահերը շոշափող և պարտադիր քննարկման ենթակա դիմում-առաջարկների միջոցով ներազդում են իշխանության մարմինների գործունեության վրա, վերահսկում այն, նպաստում քաշքշուկի վերացմանը:
- **Դիմելը ապահովում է հանրային իշխանությանը տեղեկույթով:** Բնակչության դիմումները և առաջարկությունները տեղեկույթի կարևոր աղբյուր են հուզող խնդիրներն արագ, արդյունավետ լուծելու համար:
- **Դիմելը երաշխիք է մարդու այլ իրավունքների համար:** Դիմելու միջոցով գործի են դրվում այլ իրավունքները ոտնձգություններից, խախտումներից պաշտպանելու պետական կառուցակարգերը:

Դիմում կամ առաջարկություն ներկայացնողի իրավունքին համապատասխանում է հասցեատեր պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց պարտականությունը՝ պատասխանել նրան: Պատասխանը պետք է տրվի **ողջամիտ ժամկետում:** Երբեմն պատասխանելու ժամկետները սահմանում են օրենքները: Եթե դրանք չեն սահմանված, ապա ողջամիտ է այն ժամկետը, որը բանական է և սովորաբար անհրաժեշտ բարձրացված հարցի լուծման համար: Պատասխանը պետք է լինի **պատշաճ,** այսինքն՝ **օրինական** և **հիմնավորված:**

Դիմելու իրավունքի իրականացման ձևերը
Դիմում-խնդրանքը միջոց է մարդու որևէ իրավունքի իրականացման համար: Օրինակ, սոցիալական ապահովության իրավունքը կենսագործելիս անհրաժեշտ է անձի դիմումը՝ իրեն ծերության կենսաթոշակ նշանակելու մասին:
Դիմում հաղորդումը կամ բողոքը իրավունքի պաշտպանության ձև է: Դրանով համապատասխան մարմինը տեղեկացվում է մարդու որևէ իրավունքի խախտման, չարաշահումների, թերությունների մասին:
Առաջարկությամբ գրավոր ձևով մատնանշվում են հանրային խնդիրները (հանրային իշխանության մարմինների ու պաշտոնատար անձանց, այլ կառույցների գործունեության թերություններ, օրենսդրության կատարելագործում և այլն), դրանց լուծման տարբերակները:

Ստեղծագործական աշխատանք: *Գրե՛ք փոքրիկ շարադրություն «Ինչպիսի քաղաքական իրավունք կուզենայի ունենալ» թեմայով: Խոսքը իրավաբանորեն չամրագրված և ձեր երևակայած իրավունքի մասին է:*

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

Իշխանության ապօրինի յուրացում / իշխանության հաշվետվություն / արհեստակցական միություն / կուսակցություն / հրապարակային հավաքներ / ծանուցողական կարգ / ակտիվ և պասիվ ընտրական իրավունք / անգործունակ / պաշտոնի անձնագիր / ողջամիտ ժամկետ / պատշաճ պատասխան:

Պատասխանե՛ք հարցերին

1. Ի՞նչ է քաղաքական ազատությունը:
2. Ո՞րն է անձնական և քաղաքական իրավունքների կապը:
3. Ո՞րն է ժողովրդավարության և քաղաքական իրավունքների կապը:
4. Որո՞նք են քաղաքական իրավունքները:
5. Ի՞նչ է միավորումը, և որո՞նք են դրա տեսակները:
6. Որո՞նք են միավորումներ կազմելու իրավունքի երաշխիքները:
7. Ի՞նչ նշանակություն ունեն հրապարակային հավաքները:
8. Ո՞րն է հանրային կառավարմանը մասնակցելու իրավունքի կառուցվածքը:
9. Ո՞ր քաղաքացիները չեն կարող ընտրել և ընտրվել:
10. Ի՞նչ է հանրային ծառայությունը, և որո՞նք են դրա տեսակները:
11. Ի՞նչ է դիմելու իրավունքը, և ո՞րն է դրա նշանակությունը:
12. Որո՞նք են դիմելու իրավունքի իրականացման ձևերը:

Լուծե՛ք իրավաբանական խնդիրը:

Գյուղապետի ընտրությունները կազմակերպելիս գործող գյուղապետն իր հրահանգով պարտադրել էր ընտրական ցուցակներում ընդգրկել նաև գյուղի 16-18 տարեկան բնակիչներին՝ հիմնավորելով, որ գյուղում առկա ընտրողների ընդհանուր քանակը շատ չէ՝ 200: Այդ քայլով, ըստ գյուղապետի, ընտրողների քանակը կավելանա 83 անձով և գյուղում կընդլայնվեն ժողովրդավարության շրջանակները: *Իրավունք ունե՞ր արդյոք գյուղապետն ընդունելու այդպիսի որոշում: Սահմանադրական որ նորմերն են խախտվել:*

§ 25. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Աշխարհի հիմնական չարիքը ծնվում է այն իրողությունից,
որ բարերար Աստված բավականին դրամ չի ստեղծել:
Հ. Հայնե (1797-1856)

1. ՄԱՐԴՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Տնտեսական հարաբերությունները և տնտեսական իրավունքները: Որպեսզի հասկանանք տնտեսական իրավունքների էությունը, պետք է իմանանք, թե ինչ են տնտեսական հարաբերությունները: Մարդու իրական կյանքն ամենից առաջ տնտեսական բնույթ ունի: Կյանքում հիմնարար տեղ են զբաղեցնում մարդու գոյության համար անհրաժեշտ բարիքները: Մարդկանց միջև հարաբերությունները, որ առաջանում են այդ բարիքների արտադրության, բաշխման և սպառման ոլորտներում, կոչվում են տնտեսական: Տնտեսական հարաբերությունները պետք է կառուցվեն այնպես, որ ամեն մարդ կարողանա ապահովել իր կյանքը և ապրուստի միջոցները. սնունդ, բնակարան, ջեռուցում և այլն: Այդ հնարավորության երաշխիքը մարդու սահմանադրական տնտեսական իրավունքներն են, օրինակ՝ սեփականության:

Տնտեսական են մարդու այն իրավունքները, որոնք երաշխավորում են նրա մասնակցությունը տնտեսական հարաբերություններին և ապահովում նրա գոյության համար անհրաժեշտ նյութական բարիքները:

Տնտեսական իրավունքների նշանակությունը: Մարդու ազատության բնույթը որոշվում է խորը տնտեսական երևույթներով, սեփականության հարաբերություններով: Ազատության պատմական առաջադիմությունը վկայում է, որ ազատ անհատի ձևավորումը և զարգացումն անհրաժեշտաբար կապված են տնտեսական և սեփականության հարաբերություններում մարդու կարգավիճակի հետ: Տնտեսական իրավունքները ազատության և մարդու իրավունքների արտահայտման ձևերից մեկն են: Միաժամանակ դրանք անհատի ազատության զարգացման համահասարակական հիմքն են: Օրինակ՝ այնտեղ, որտեղ չկա սեփականություն, չկա և սկզբունքորեն անհնարին է ազատությունը: Պետությունը պարտավոր է յուրաքանչյուրի համար ստեղծել պայմաններ գործադրելու իր ուժերը և ջանքերը, օգտագործել իր տնտեսական իրավունքները՝ իր սոցիալական պահանջմունքները բավարարելու համար:

2. ՄԱՐԴՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Սեփականության իրավունք: Սեփականության իրավունքը մարդու՝ օրենքով ճանաչված և պահպանվող իրավունքն է՝ իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրեն պատկան գույքը: Գույքը կարող է պատկանել անհատներին, պետությանը, համայնքներին: Ուստի կա սեփականության երկու ձև՝ հանրային (պետական ու համայնքային) և մասնավոր:

Բազմաթիվ փիլիսոփաներ սեփականությունը համարում էին մարդու ապաճորտացման, իրական անկախության և ազատության հիմքը: Դրան համապատասխան Սահմանադրությամբ ամրագրված է. ՀՀ-ում ճանաչվում և պաշտպանվում է սեփականության իրավունքը: Յուրաքանչյուր ոք իրավունք ունի իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու, տնօրինելու և կտակելու իր սեփականությունը:

Սեփականության իրավունքի բովանդակությունը ենթադրում է սեփականատիրոջ երեք իրավազորություն		
Տիրապետել գույքը այսինքն՝ փաստացի ունենալ տվյալ գույքը:	**Օգտագործել գույքը** այսինքն՝ քաղել գույքի օգտակար բնական հատկությունները (օրինակ՝ սպառել), դրանից օգուտ ստանալ: Օգուտը կարող է լինել եկամտի, պտուղների, աճի, ծնաճի և այլ ձևերով: Սեփականատերը կարող է իր գույքն օգտագործել ցանկացած եղանակով, ներառյալ ձեռնարկատիրական գործունեության:	**Տնօրինել գույքը** այսինքն՝ որոշել գույքի ճակատագիրը, օրինակ՝ նվիրել, վաճառել, ի վերջո, դեն նետել: Սեփականատիրոջ մահվանից հետո նրա գույքն անցնում է ժառանգներին: Կտակելը գույքի ճակատագիրը որոշելու, այսինքն՝ տնօրինելու, ինչպես նաև ժառանգման իրավունքի տարբերակներից մեկն է:

«Ոչ ոքի չի կարելի զրկել սեփականությունից»: Սեփականատիրոջ առջև բոլորը կրում են պարտականություն՝ ձեռնպահ մնա նրա սեփականության իրավունքի խախտումից: Դրա երաշխիքը պետության պարտականությունն է՝ պաշտպանել սեփականության իրավունքը: Սակայն սեփականության իրավունքն անսահման չէ: Այդ իրավունքի իրականացումը չպետք է վնաս պատճառի շրջակա միջավայրին, խախտի այլ անձանց, հանրության և պետության իրավունքներն ու օրինական շահերը:

Ամեն ինչ չէ, որ կարելի է ունենալ որպես սեփականություն: Անշուշտ, մասնավոր սեփականության իրավունքով մարդը կարող է ունենալ տուն, դրամ, արժեթուղթ, շենքեր, հողամաս: Սահմանադրությունը, նկատի ունենալով Հայաստանի սակավահողությունը, սահմանում է. «Հողի սեփականության իրավունքից չեն օգտվում օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի»: Օրենքները ևս սահմանում են օբյեկտների տեսակներ, որոնք չեն կարող լինել մասնավոր սեփականություն, օրինակ՝ մարտական զենքը:

Մտորումներ: *Հողի մասնավոր սեփականության իրավունքը հասարակագիտության ամենավիճելի հիմնահարցերից է: Շատ մտածողների կարծիքով՝ հողը պետք է պատկանի կա՛մ բոլորին, կա՛մ նրանց, ովքեր այն մշակում են: Եթե հողը դառնալու է ազատ առքուվաճառքի առարկա, ապա այն ունենալու չափերը պետք*

է սահմանափակվեն: Բազմաթիվ երկրներում այդպես էլ կա: Իսկ Չինաստանում գյուղատնտեսական հողը տրվում է ցմահ օգտագործման իրավունքով: Ձեր կարծիքով՝ ո՞ր մոտեցումն է ճիշտ:

Սահմանադրությունը հնարավոր է համարում սեփականության հարկադիր, այսինքն՝ սեփականատիրոջ կամքին հակառակ օտարումը: Սակայն դա կարող է կատարվել օրենքով նախատեսված դեպքերում (օրինակ՝ հանցագործության համար որպես պատիժ գույքի բռնագրավում) և միայն դատական կարգով: Սեփականությունից զրկելն արտադատական կարգով արգելվում է:

Օրենքով սահմանված կարգով կարող է կատարվել սեփականության օտարում (նաև հարկադիր) հասարակության և պետության կարիքների համար: Այս հիմքով սեփականության օտարման պայմաններն են՝

1) **բացառիկ՝ գերակա հանրային շահերի դեպքերում** (օրինակ՝ հողամասի վրա պետք է կառուցվի երկրի սահմանի պաշտպանությունն ապահովող օբյեկտ, խողովակաշար, կամուրջ).

2) **նախնական և համարժեք փոխհատուցմամբ**: Օտարումը նախապես պետք է համաձայնեցվի սեփականատիրոջ հետ: Սեփականատերը կարող է համաձայնվել առաջարկվող պայմանների հետ. այս դեպքում օտարումը կամավոր է: Եթե չի համաձայնվում, ապա օտարումը դառնում է հարկադիր, և սեփականատերը կարող է դիմել դատարան: Համարժեք կամ հավասարարժեք փոխհատուցման տեսակները կարող են լինել տարբեր՝ դրամական, բնամթերային և այլն: Օրինակ, եթե օտարվում է հողամասը, ապա կարող է առաջարկվել համարժեք հողամաս կամ հողամասի շուկայական արժեքի հատուցում: Միայն նախնական փոխհատուցումից հետո պետությունը կարող է կայացնել որոշում գույքը օտարելու մասին:

Ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու իրավունք: Սեփականության իրավունքն ամբողջական է դառնում միայն այն դեպքում, եթե անձն ունի տնտեսական գործունեության ազատություն, այսինքն՝ կարող է իր սեփականությունն օգտագործել արտադրական և այլ տնտեսական նշանակությամբ՝ շահույթ ստանալու նպատակով: Սահմանադրությունը երաշխավորում է, որ մարդիկ կարող են անարգել ստեղծել ձեռնարկություններ՝ վարել առևտուր, բացել բանկեր և այլն, տնօրինել իրենց ստացած արդյունքը, ստանալ շահույթ, զբաղվել օրենքով չարգելված այլ ձեռնարկատիրական գործունեությամբ: Նման գործունեությունը չի հակասում հասարակության շահերին: Մարդն իրավունք ունի պահանջել պետությունից՝ պաշտպանելու իրեն չափից դուրս հարկումից, պետական պաշտոնյաների կամայականությունից, դրամաշորթությունից, կազմակերպված հանցագործությունից, պայմաններ ստեղծել ազատ տնտեսական մրցակցության համար:

Ձեռնարկատիրական գործունեության իրավունքը կարող է իրականացվել երկու եղանակով՝ անհատապես և կոլեկտիվ: Անհատական ձեռնարկատիրությունը մարդն իրականացնում է՝ **անհատ ձեռնարկատեր** գրանցվելով: Այս եղանակը սովորաբար ընտրում են անձինք, ովքեր հակված են միանձնյա որոշումներ ընդունելու: Սրա դրական կողմերն են արագաշարժությունը, պետության կողմից նվազագույն կարգավորվածությունը, ձեռնարկատիրոջ առավել ինքնուրույնությունը: Կոլեկտիվ ձեռնարկատիրության՝ օրենքով սահմանված ձևերից են սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, բաժնետիրական ընկերությունը, առևտրային կոոպերատիվը և այլն:

Ձեռնարկատիրական գործունեության երաշխիքներից է ազատ տնտեսական մրցակցությունը ձեռնարկատերերի միջև: Եթե, օրինակ, չկան մրցակիցներ և վաճառո-

ղը մեկն է, ապա նա է որոշում իր ապրանքի գինը: Նման իրավիճակը կարող է հանգեցնել չարաշահումների: Սահմանադրությունը արգելում է «շուկայում մենաշնորհը կամ գերիշխող դիրքի չարաշահումը և անբարեխիղճ մրցակցությունը»: Ուստի պետությունը պարտավոր է ապահովել ազատ և հավասար մրցակցություն, այսինքն՝ ընդունել օրենքներ, ստեղծել պայմաններ, որոնք թույլ չեն տա, որպեսզի որևէ ապրանքի արտադրությունը կամ ծառայության մատուցումը դառնա ինչ-որ մեկի մենաշնորհը: Բայց դա չի նշանակում, որ մենաշնորհ չի կարող լինել, կամ էլ մրցակցությունը հնարավոր չէ սահմանափակել: Պետությունը կարող է իր վրա վերցնել որոշակի ապրանքների արտադրության, վաճառքի մենաշնորհները: Օրինակ՝ նավթի արդյունահանման: Պետությունը կարող է սահմանել ապրանքների վաճառքի գներ, որոնք պարտադիր են մասնավոր ձեռնարկատերերի համար: Նկատի՛ ունեցեք. «Մրցակցության սահմանափակումը, մենաշնորհի հնարավոր տեսակները և դրանց թույլատրելի չափերը կարող են սահմանվել միայն օրենքով, եթե դա անհրաժեշտ է հանրության շահերի պաշտպանության համար»:

Հրավեր: *Կազմակերպեք հանդիպում-քննարկում որևէ ձեռնարկատիրոջ հետ «Ձեռնարկատիրական գործունեություն. հաջողության պայմանները և դժվարությունները» թեմայով:*

Աշխատանքի ազատ ընտրության իրավունք: Աշխատանքը կարևոր դեր է խաղում հասարակության և մարդու կյանքում: Գործադրելով իր ընդունակություններն աշխատանքում՝ մարդը ստեղծում է նյութական կամ մտավոր արժեքներ, որոնք հասարակական հարստության աղբյուր են: Սակայն միևնույն ժամանակ աշխատանքն ապահովում է մարդու նյութական գոյությունը: Դրանով իսկ աշխատանքը կարևոր նշանակություն ունի մարդու արժանապատվության և ինքնահարգանքի ապահովման համար, նախադրյալներ է ստեղծում մնացած իրավունքների համար:

Սահմանադրությունը մարդու համար երաշխավորում է ընտրության ազատություն՝ աշխատել կամ չաշխատել: «Հարկադիր աշխատանքն արգելվում է»: Ամեն ոք իրավունք ունի ազատորեն տնօրինելու իր աշխատանքային ընդունակությունները, ընտրելու մասնագիտություն և գործունեության տեսակ: Դա երաշխավորված է մարդու այլ իրավունքներով, օրինակ՝ սեփականության, ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու, հանրային ծառայության անցնելու և այլն:

Մտորումներ: *Բացի աշխատանքի ընտրության ազատության իրավունքից, կա նաև աշխատանքի իրավունք, որի դեպքում պետությունն իր վրա է վերցնում համընդհանուր զբաղվածություն ապահովելու պարտականությունը: Ինչո՞ւ է ՀՀ Սահմանադրությունը հրաժարվել այդ իրավունքից: Ճի՞շտ եք համարում դա: Հնարավո՞ր է ապահովել այդ իրավունքը շուկայական տնտեսության պայմաններում:*

Աշխատանքի ոլորտի այլ իրավունքները: Բացի աշխատելու հնարավորությունից, մարդու համար շատ կարևոր են պայմանները, որոնցում ընթանում է նրա աշխատանքային գործունեությունը: Չէ՞ որ դրանք կարող են լինել նաև նվաստացնող, անարդար, առողջությունը քայքայող: Ուստի Սահմանադրությունը աշխատանքի ոլորտում երաշխավորում է մի շարք այլ իրավունքներ:

Յուրաքանչյուր աշխատող ունի արդարացի և օրենքով սահմանված՝ նվազագույնից ոչ ցածր աշխատավարձի իրավունք: Աշխատավարձն աշխատանքային պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարելու դիմաց աշխատողին վճարվող հատուցումն է: Կոնկրետ աշխատողի աշխատավարձը սահմանվում է աշխատանքային պայմանագրով: Արդարացի աշխատավարձի երաշխիքներից է օրենքով սահմանված նվազագույն աշխատավարձի չափը, որից պակաս աշխատողի աշխատավարձը չի կարող լինել:

Յուրաքանչյուր աշխատող ունի անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք: Աշխատողի անվտանգությունը և առողջությունը աշխատանքային գործունեության ընթացքում աշխատողների կյանքի և առողջության պահպանման համակարգ է, որի մեջ ներառվող միջոցառումները սահմանված են աշխատանքային օրենսդրությամբ: Աշխատանքի ժամանակ յուրաքանչյուր աշխատողի համար պետք է երաշխավորվեն պատշաճ, անվտանգ և առողջության համար անվնաս պայմաններ: Այդ միջոցառումները պարտավոր է ապահովել գործատուն: Պետությունն իր հերթին հսկողություն է իրականացնում այդ ոլորտի նկատմամբ: Այդ գործընթացին մասնակցում են նաև արհեստակցական միությունները:

Ինտերնետային այցելություն: *Այցելե՛ք ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության www.mss.am կայքը և ծանոթացե՛ք աշխատանքի ոլորտում նախարարության գործունեությանը:*

Յուրաքանչյուր ոք ունի գործազրկությունից պաշտպանվելու իրավունք: Գործազրկությունն առաջանում է աշխատաշուկայում պահանջարկի և առաջարկի անհամամասնության հետևանքով: Գործազուրկի կարգավիճակ տրվում է աշխատունակ, սակայն աշխատանք չունեցող և փնտրող անձանց: Մարդուն գործազրկությունից պաշտպանելու համար պետությունը ստեղծել է զբաղվածության պետական ծառայություն և զբաղվածության հիմնադրամ, որոնք իրականացնում են բնակչության զբաղվածության պետական կարգավորման և ֆինանսավորման խնդիրները: Աշխատանք փնտրող և գործազուրկ անձանց համար օրենքը երաշխավորում է մի շարք իրավունքներ, այդ թվում՝ մասնագիտական կողմնորոշման խորհրդատվության, ազատ աշխատատեղերի վերաբերյալ տեղեկությունների, հարմար աշխատանքի միջնորդության, անվճար վերամասնագիտացման և որակավորման բարձրացման, գործազրկության նպաստի և կրթաթոշակի իրավունք:

Աշխատողներն ունեն գործադուլի իրավունք: **Գործադուլը** մեկ կամ մի քանի կազմակերպությունների աշխատողների կամ աշխատողների խմբի աշխատանքի ժամանակավոր դադարեցումն է այն դեպքում, երբ կոլեկտիվ աշխատանքային վեճը հնարավոր չի եղել լուծել այլ կերպ:

Գործադուլի նպատակը աշխատողների տնտեսական, սոցիալական, աշխատանքային շահերի պաշտպանությունն է: Գործադուլ հայտարարելու իրավունք ունի արհեստակցական միությունը: Մինչև գործադուլը հնարավոր է նախազգուշական գործադուլ՝ 2 ժամից ոչ ավելի: Գործադուլն արգելվում է ոստիկանությունում, զինված ուժերում, նման այլ ծառայություններում, կենտրոնացված մատակարարման (էլեկտրականություն, ջեռուցում, գազ) կազմակերպություններում, անհետաձգելի բժշկական օգնության ծառայությունում, տարերային աղետի գոտիներում, ինչպես նաև ռազմական կամ արտակարգ դրության վայրերում:

Յուրաքանչյուր ոք ունի հանգստի իրավունք: Առանց հանգստի աշխատանքն անհնարին է: Հանգիստը աշխատող մարդու բնական պահանջմունքն է, ուստի Սահմանադրությունը երաշխավորում է. «Առավելագույն աշխատաժամանակը, հանգստյան օրերը և ամենամյա վճարովի արձակուրդի նվազագույն տևողությունը սահմանվում են օրենքով»:

Հանգստի ժամանակը օրենքով, աշխատանքային պայմանագրով կանոնակարգված աշխատանքից ազատ ժամանակն է, որն աշխատողն օգտագործում է իր հայեցողությամբ:

Հանգստի ժամանակի տեսակները
1. **Հանգստանալու և սնվելու համար ընդմիջում**: Տրամադրվում է աշխատանքային օրվա կեսին, սակայն ոչ ուշ, քան աշխատանքը սկսելուց 4 ժամ հետո (2 ժամից ոչ ավելի և կես ժամից ոչ պակաս տևողությամբ): Աշխատողը կարող է ընդմիջմանը բացակայել աշխատավայրից:
2. **Աշխատանքային օրվա ընթացքում հանգստանալու լրացուցիչ և հատուկ ընդմիջումներ**: Լրացուցիչ ընդմիջումները տրամադրվում են մինչև 18 տարեկան աշխատողներին՝ նվազագույնը 30 րոպե, իսկ հատուկ ընդմիջումները՝ հատուկ պայմաններում (օրինակ՝ մտավոր հուզական գերլարված վիճակում կամ պլյուս 40^0C-ից բարձր օդի ջերմաստիճանի դեպքում) աշխատողներին:
3. **Աշխատանքային օրերի միջև ընկած անընդմեջ հանգիստ**, որի տևողությունը չի կարող պակաս լինել 11 ժամից:
4. **Ամենշաբաթյա անընդմեջ հանգիստ**: Ընդհանուր հանգստյան օրը **կիրակին** է, իսկ հինգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ նաև **շաբաթը**:
5. **Տոնական և հիշատակի օրերը**, որոնք օրենքով սահմանված են որպես ոչ աշխատանքային (Ամանոր, Սուրբ Ծնունդ և Հայտնություն, Բանակի օր, Կանանց տոն, Ցեղասպանության զոհերի հիշատակի օր, Աշխատանքի օր, Հաղթանակի և խաղաղության տոն, Հանրապետության տոն, Սահմանադրության օր, Անկախության տոն):
6. **Ամենամյա արձակուրդ**՝ օրերով հաշվարկվող ժամանակահատված, որը տրամադրվում է աշխատողին հանգստանալու համար: Այդ ընթացքում պահպանվում է նրա աշխատատեղը (պաշտոնը), վճարվում է միջին աշխատավարձ: Ամենամյա **նվազագույն արձակուրդի** տևողությունը 28 օր է: Կան նաև ամենամյա երկարացված և լրացուցիչ արձակուրդներ:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք ինչ է

իրավազորություն / սեփականության օտարում / բացառիկ՝ գերակա հանրային շահ / շուկայական մենաշնորհ / գերիշխող դիրք շուկայում / մրցակցության սահմանափակում / հարկադիր աշխատանք / աշխատանքային պայմաններ / աշխատավարձ / գործազրկություն / գործադուլ / նախազգուշական գործադուլ / գործադուլի արգելք / ընդհանուր, լրացուցիչ և հատուկ ընդմիջումներ / ամենամյա արձակուրդ:

Պատասխանե՛ք հարցերին.

1. Ի՞նչ են տնտեսական իրավունքները և ո՞րն է դրանց նշանակությունը:
2. Ի՞նչ է սեփականության իրավունքը և որո՞նք են դրա ձևերը:
3. Որո՞նք են սեփականատիրոջ երեք իրավազորությունները:
4. Սեփականության իրավունքի ի՞նչ սահմանափակումներ են սահմանված:
5. Ինչու՞ և ինչպե՞ս է կատարվում սեփականության օտարումը հասարակության և պետության կարիքների համար:
6. Ի՞նչ է ձեռնարկատիրական գործունեությունը և որո՞նք են նրա եղանակները:
7. Ի՞նչ է ազատ տնտեսական մրցակցությունը և ո՞րն է դրա նշանակությունը:
8. Ի՞նչ է աշխատանքի ազատ ընտրության իրավունքը:
9. Որո՞նք են աշխատանքի ոլորտի այլ իրավուքները:
10. Ի՞նչ իրավունքներ ունեն աշխատանք փնտրող և գործազուրկ անձինք:
11. Ի՞նչ է հանգստի իրավունքը և հանգստի ի՞նչ տեսակներ են սահմանված:

Քննարկում.

«Ի՞նչ է անարդարությունը: Մեկի համար դա խայտառակ աշխարհն է, բզկտված հայրենիքը: Մյուսի համար պատերազմը: Մեկի համար ոտնահարված անցյալը, մյուսի համար խեղդամահ արված ապագան, ժողովրդի համար անհավասարությունը, ընտրյալների համար հավասարությունը: Գոյություն ունեն այնքան բազմատեսակ անարդարություններ, որ ամեն դարաշրջան առաջ է քաշում իրենը, այն, որի հետ նա պաքարում է և որին խթանում է» (Ռ. Ռոլան): *Որն է մեր ժամանակների ամենամեծ անարդարությունը Ձեր կարծիքով*:

Պատրաստեք զեկուցում «Ի՞նչ է ձեռնարկատիրական գործունեությունը» թեմայով:

§ 26. ՄԱՐԴՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Հասարակությունը քարերի շարվածք է,
որը կքանդվի, եթե մեկը մյուսին չպահի:
Սենեկա (Ք.ա. 4-65)

1. ՄԱՐԴՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Մարդու սոցիալական իրավունքների հասկացությունը: Մեզանից յուրաքանչյուրն ինքն է կրում պատասխանատվություն իր և իր ընտանիքի բարեկեցության համար: Դրա երաշխիքը մեր անձնական և հատկապես տնտեսական իրավունքներն են: Սակայն կյանքում երբեմն տարբեր պատճառներով (անաշխատունակություն, գործազրկություն, հիվանդություն և այլն) հնարավոր չի լինում սեփական գործունեությամբ և աշխատանքով ապահովել մեր և մեր ընտանիքի բարեկեցությունը: Այս դեպքերում մեզ օգնության են գալիս իրավական ամրագրում ունեցող և երաշխավորված սոցիալական իրավունքները:

Սոցիալական են մարդու և քաղաքացու այն իրավունքները, որոնք ապահովում են նրա սոցիալական բարեկեցությունը՝ հնարավորություն տալով պետությունից ստանալ որոշակի նյութական բարիքներ (օգնություն, ծառայություն):

Սոցիալական իրավունքները պետության վրա չեն դնում ուղղակի պարտականություն՝ բավարարելու մարդկանց բոլոր կենսական պահանջմունքները: Պետությունն ամենից առաջ պարտավոր է ստեղծել նպաստավոր պայմաններ այդ պահանջմունքները բավարարելու համար: Միայն այն դեպքում, երբ մարդը դժվարանում է դրանում, հասարակությունը և պետությունը օգնության ձեռք են մեկնում նրան՝ ապահովելով սոցիալական մի շարք հնարավորություններ, մասնավորապես՝ բավարար կենսամակարդակի, սոցիալական ապահովության, բժշկական օգնության և այլն: Այդպիսի պետությունն անվանում են սոցիալական (վերհիշեք § 3):

Իր և իր ընտանիքի համար բավարար կենսամակարդակի, կենսապայմանների բարելավման, բնակարանի իրավունք: Կենսապայմանների կառուցվածքը ներառում է սնունդը, հագուստը, բնակարանը, առողջապահական ու սոցիալական անհրաժեշտ ծառայությունները: Կենսապայմանների ապահովումը յուրաքանչյուր մարդու մոտ կարող է ունենալ տարբեր մակարդակներ: Մեկը ծփում է հարստության մեջ, իսկ մյուսը տանջվում սովի ճիրաններում: Հասարակությունն իր զարգացման այս փուլում չի կարող բոլորին դարձնել հարուստ: Ուստի երաշխավորված է միայն նվազագույն կենսամակարդակը, այսինքն՝ առողջության ու բարեկեցության համար նվազագույն կենսապայմանները: Բավարար կենսամակարդակի իրավունքի ամրագրումը չի նշանակում, որ մարդը հասարակությունից ու պետությունից կարող է պահանջել, որ իրեն անհապաղ տրամադրվեն վերը թվարկված բարիքները: Պետության խնդիրն է մարդու համար սեփական ուժերով իր կենսամակարդակն ապահովելու պայմաններ ստեղծել, վերացնել արգելքներն ու խոչընդոտները: Պետությունը օգնության է գալիս, երբ մարդն ինքնուրույն չի կարող ապահովել նվազագույն կենսամակարդակը: Պետությունը երաշխավորում է կենսաապահովման նվազագույն զամբյուղը և նվազագույն բյուջեն:

Կենսաապահովման կամ սպառողական նվազագույն զամբյուղը առողջ կենսագործունեության համար մեկ մարդուն մեկ ամսվա ընթացքում անհրաժեշտ սննդամթերքի և ոչ պարենային ապրանքների ու ծառայությունների նվազագույն քանակն է: **Կենսաապահովման նվազագույն բյուջեն** այն գումարն է, որն անհրաժեշտ

է և բավարար նվազագույն զամբյուղի մեջ մտնող բարիքներն ու ծառայությունները ձեռք բերելու համար:

Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և նվազագույն բյուջեի որոշումից է կախված բնակչության կենսամակարդակի վիճակի, այդ թվում՝ աղքատության շեմի գնահատումը, նվազագույն աշխատավարձի, թոշակի, նպաստի, չհարկվող եկամտի չափերի սահմանումը: ՀՀ կառավարությունը 2003 թ. հաստատել է Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ): Այդ ծրագրի մասին տե՛ս www.gow.am ինտերնետային կայքում:

Գործնական աշխատանք: *Պարզելով տարվա կենսապահովման նվազագույն բյուջեի պաշտոնական գումարը՝ համադրե՛ք այն Ձեր կողմից կազմված նվազագույն զամբյուղի իրական գների հանրագումարի, նվազագույն աշխատավարձի ու կենսաթոշակի գումարների հետ: Որքանո՞վ է իրական նվազագույն պաշտոնական բյուջեն:*

Կենսամակարդակի կառուցվածքում հատուկ տեղ է զբաղեցնում բնակարանը: **Բնակարանի իրավունքը մարդու հնարավորությունն է ունենալ բնակարան (սեփականության կամ վարձակալության իրավունքով), բնակարան ձեռք բերելու գործում (քաղաքացիների համար) ստանալ օժանդակություն պետությունից:**

Սահմանադրությունը անթույլատրելի է համարում բնակարանից զրկելը: Քաղաքացիների բնակարանի իրավունքի իրականացման համար պետությունը և տեղական ինքնակառավարման մարմիններն անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում: Առայժմ այդ իրավունքը երաշխավորված է եզակի դեպքերում, օրինակ՝ խիստ կարիքավոր խմբի քաղաքացիներին, աղետի գոտու բնակիչներին՝ նպատակային ծրագրերի, հիփոթեկային նպաստավոր վարկավորման միջոցով:

Սոցիալական ապահովության իրավունք: Մարդուն ապրելու համար անհրաժեշտ են գոյության միջոցներ: Ազատ մարդն իր աշխատանքի կամ սեփականության միջոցով ապահովում է իր գոյության նյութական միջոցները: Բայց որոշ մարդիկ տարբեր պատճառների ուժով չեն կարող հայթայթել իրենց գոյության միջոցները, ուստի ունեն հասարակության և պետության խնամքի կարիքը: Այդպիսի խնամքն անվանում են սոցիալական ապահովություն:

Սոցիալական ապահովությունը պետության կողմից մատուցվող գոյության բավարար միջոցների քանակն է այն մարդկանց, ովքեր լրիվ կամ մասնակի զրկված են հնարավորությունից աշխատել և ստանալ եկամուտ:

Սոցիալական ապահովության ծավալն ու ձևերը սահմանվում են օրենքով: Ծավալը, օրինակ՝ կենսաթոշակի գումարը, մեծապես կախված է պետության տնտեսական հնարավորություններից. շատ են պետության եկամուտները, մեծ՝ ապահովության ծավալը: Ըստ ձևի սոցիալական ապահովությունը կարող է լինել դրամական

(կենսաթոշակ, նպաստ՝ միանվագ և պարբերական) և բնամթերային: Վերջինս անվանում են սոցիալական ծառայություն կամ սպասարկում, որը մատուցում է պետությունը, օրինակ՝ սնունդ, խնամք, խորհրդատվություն, աշխատանքի տեղավորում և այլն:

Ինտերնետային այցելություն: *Այցելե՛ք ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության www.mss.am կայքը և ծանոթացե՛ք սոցիալական ոլորտում նրա գործունեությանը:*

Սահմանադրությունը երաշխավորում է սոցիալական ապահովություն հետևյալ հիմքերով.

1. Ծերության դեպքում: Ձևերն են կենսաթոշակը կամ սոցիալական ծառայությունը: Սահմանված տարիքին հասած անձանց կանոնավոր վճարվում է աշխատանքային կամ տարիքային կենսաթոշակ ցմահ: Սոցիալական ծառայության օրինակ է ծերերի խնամքով զբաղվող հիմնարկությունների ստեղծումը:

2. Հիվանդության դեպքում: Այս սոցիալական ապահովությունը կարող է լինել ժամանակավոր և մշտական: Առողջությունը ժամանակավորապես խախտվելու կապակցությամբ աշխատելու հնարավորությունից զրկված անձին կարող է վճարվել նպաստ: Եթե առկա է հաշմանդամություն, ապա նպաստը մշտական է:

3. Կերակրողին կորցնելու դեպքում: Եթե ընտանիքին հիմնական եկամուտ բերողը մահանում է, և մյուս անդամները անչափահասության պատճառով չեն կարող ապրել ինքնուրույն, ապա նրանց նշանակվում է նպաստ՝ մինչև չափահաս դառնալը:

4. Գործազրկության և օրենքով նախատեսված այլ դեպքերում: Գործազուրկներին երաշխավորվում է նպաստների վճարում զբաղվածության պետական ծառայության կողմից՝ 5, իսկ որոշ դեպքերում՝ մինչև 12 ամիս տևողությամբ: Նրանք ունեն նաև կրթաթոշակի իրավունք՝ վերամասնագիտացման և որակավորման բարձրացման դասընթացներին մասնակցելու համար:

Հանրօգուտ աշխատանք: *Դասարանով իրականացրե՛ք սոցիալական ծառայության միջոցառում անապահով խավի որևէ ներկայացուցչի նկատմամբ՝ ըստ հնարավորության օգնելով նրան կա՛մ նյութապես, կա՛մ խնամքով, կա՛մ նրա համար որևէ աշխատանք կատարելով:*

Բժշկական օգնություն ստանալու իրավունք: Առողջությունը կյանքից հետո մարդու համար ամենաթանկ բարիքն է, առանց որի մնացած իրավունքները որոշակիորեն արժեզրկվում են: Առողջությունն ունի ոչ միայն անհատական, այլև հասարակական նշանակություն: Սահմանադրությունը ամրագրում է. «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցանկը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով»:

Մտորումներ: *Առողջության ապահովման ուրիշ ի՞նչ ճանապարհներ ու միջոցներ գիտեք: Ի՞նչ է առողջ ապրելակերպը: Այդպիսի՞ն է արդյոք ապրելակերպը ձեր շրջապատում: Եթե ոչ, ապա ինչո՞ւ և ո՞ւմ մեղքով:*

Պետությունը ստեղծում է համապատասխան առողջապահական կազմակերպություններ մարդու բժշկական օգնության և սպասարկման իրավունքն ապահովելու համար: Շուկայական տնտեսության պայմաններում այդ իրավունքն իրականացվում է անձնական վճարումների, բժշկական ապահովագրական հատկացումների և այլ միջոցների հաշվին: Օրենքները սահմանում են նաև հիմնական բժշկական ծառայությունների շրջանակը, որոնք բնակչությանը մատուցվում են անվճար:

Ինտերնետային այցելություն: *ՀՀ Առողջապահության նախարարության գործունեության մասին տե՛ս www.armhealt.am կայքում:*

Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում: Շրջակա միջավայրն այն տարածքն է, որում ապրում և աշխատում է մարդը, ինչը շրջապատում և ազդում է նրա վրա, օրինակ՝ արդյունաբերական աղմուկը: Միջավայրը ներառում է ինչպես բնական, այնպես էլ արհեստական կամ սոցիալական միջավայրը (շինություններ, ձեռնարկություններ և այլն): Բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրը դրա այնպիսի որակն է, որում հնարավոր են մարդու արժանապատիվ և առողջ կյանքը: Մարդու հիմնարար իրավունքներից է, քանի որ շոշափում է նրա գոյության բնական պայմանները: Եթե կենսոլորտը բարենպաստ չէ մարդու գոյության և առողջության համար, ապա իմաստազրկվում են նրա բոլոր իրավունքները:

Այս իրավունքը, բացի առողջ բնությունից, ենթադրում է նաև բարեկեցիկ հասարակական միջավայր, ինչի ապահովումը պետության, տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունն է: Սակայն Սահմանադրությունը մեզ վրա ևս դնում է պարտականություն՝ «անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը»:

Մտորումներ: *Բարեկեցի՞կ է արդյոք ձեր շրջակա միջավայրը: Ունե՞ք դուք և ձեր ծնողները մեղքի բաժին շրջակա միջավայրի անբարեկեցիկության հարցում: Փորձե՛ք դասարանով մշակել և կենսագործել «Բարեկեցիկ դասարան և դպրոց» ծրագիր:*

Ամեն ոք ունի բնապահպանական տեղեկատվության իրավունք: Պետական մարմինները և պաշտոնատար անձինք պարտավոր են մարդկանց և հասարակությանը տեղեկացնել էկոլոգիական իրավիճակի մասին, հատկապես, եթե այն վնասակար է առողջության համար: Այդպիսի տեղեկությունները թաքցնելու կամ դրանց տրամադրումը մերժելու համար պաշտոնատար անձինք կրում են պատասխանատվություն: Տեղեկույթը մարդկանց հնարավորություն կտա ժամանակին ձեռնարկել իրենց առողջության, գույքի պաշտպանության միջոցառումներ:

Ինտերնետային այցելություն: *ՀՀ Բնապահպանության նախարարության գործունեության մասին տե՛ս www.mnpiac.am կայքում:*

2. ՄԱՐԴՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Մարդու մշակութային իրավունքների հասկացությունը: Մարդկային իրավունքների հիմնաքարը նրա կյանքն է: Սակայն մարդը հասարակ կենսաբանական էակ չէ, այլև բանական, հոգևոր-մշակութային: Այս բնական հատկությունների շնորհիվ մարդու գոյությունը հոգևոր-ստեղծագործական է: Օրինակ՝ բնությունից նրան տրված է մտածելու, երևակայելու, ստեղծագործելու հատկություն, որն անօտարելի է նրանից: Հետևաբար, մտածելը և ստեղծագործելը մարդու հիմնական բնական հավակնություններից են, որոնք պետք է բավարարվեն: Ուրեմն, մարդն ունի ազատ մտածելու և ստեղծագործելու իրավունք: Դժվար է

պատկերացնել առողջ գիտակցություն ունեցող անհատ, որը չմտածի: Այդ գործընթացը տեղի է ունենում սնվելուն, աշխատելուն, հանգստանալուն զուգահեռ: Մարդկային լիարժեք կյանքը միաժամանակ և՛ նյութական, և՛ հոգևոր պահանջմունքների բավարարման գործընթաց է:

Մարդու մշակութային իրավունքները հասարակական կյանքի բնական պահանջմունքները դրական օրենսդրության մեջ արտացոլող հնարավորություններն են, որոնք ապահովում են սեփական գործունեության հոգեմտավոր իմաստավորումը, գիտելիքների կուտակումը, դրանք փոխանցելը և ստանալը՝ կրթվելը:

Մշակութային իրավունքները երաշխավորում են մարդու հոգևոր զարգացումը և հասարակության առաջընթացը: Մշակութային իրավունքները օգնում են մարդուն դառնալ հասարակական կյանքի քաղաքական, տնտեսական, հոգևոր-մշակութային գործընթացների լիարժեք մասնակից: Օրինակ՝ մարդու կրթությունը կարևոր գործոն է, որը որոշում է նրա կյանքի բազում կողմերը՝ նրա աշխատանքի բնույթը, մասնագիտությունը, սոցիալական կարգավիճակը, եկամուտների քանակը և, որպես արդյունք, այդ մարդու կյանքի մակարդակն ու որակը, հասարակական ակտիվության աստիճանը և դիրքորոշումները: Սակայն մշակութային իրավունքները ոչ միայն մարդու, այլև ողջ հասարակության զարգացման գործոն են: Արդի գիտատեխնիկական դարաշրջանում կրթությունը, ստեղծագործությունը երկրի զարգացման ու առաջընթացի կարևորագույն գրավական են:

Կրթության իրավունք: Կրթությունը անձի, հասարակության, պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակամղված է գիտելիքները պահպանելուն ու նոր սերունդներին փոխանցելուն: Կրթվելը անհատի զարգացման գործընթացն է՝ ուղղված գիտելիքների, հմտությունների, ստեղծագործության տիրապետմանը, աշխարհի նկատմամբ արժեքային վերաբերմունքի ձևավորմանը: Կրթության հիմնական ուղիներն են ուսուցումը և ինքնակրթությունը:

Կրթությունը երկրի առաջադիմության, մշակույթի պահպանման, զարգացման անհրաժեշտ պայմանն է: Կրթական մակարդակը կարևոր է նաև ամեն մի մարդու կյանքում, նրա հասարակական դիրքի և նվաճումների համար: Ելնելով այդ կարևորությունից՝ Սահմանադրությունն ամրագրել է. «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»:

Կրթության իրավունքը երաշխավորված է կրթական համակարգով, ծրագրերով:



Ինտերնետային այցելություն: *ՀՀ Կրթության և գիտության նախարարության գործունեության մասին տե՛ս www.edu.am կայքում:*

Կրթության իրավունքի երաշխիքները: Հիմնական ընդհանուր կրթությունը պարտադիր է, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Օրենքները կարող են սահմանել պարտադիր կրթության ավելի բարձր մակարդակ:

Միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է: Պետական հանրակրթական դպրոցների առաջին դասարանների դասագրքերն անվճար են, իսկ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար՝ տարրական ընդհանուր կրթական ծրագրերով նախատեսված դասագրքերը:

Քաղաքացին ունի մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում կրթության իրավունք: Պետությունն օրենքով նախատեսված հիմքերով ֆինանսական և այլ աջակցություն է ցուցաբերում բարձրագույն և այլ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններին և դրանցում սովորողներին:

Մտորումներ: *Մատչելի՞ է արդյոք բարձրագույն կրթությունը բոլոր նրանց համար, ովքեր ընդունակ են սովորելու բուհում: Եթե ոչ, ապա ինչո՞ւ: Բավարա՞ր են պետական երաշխիքներն այդ հարցում: Ի՞նչ իրատեսական լուծումներ եք առաջարկում:*

Ստեղծագործական ազատության և գիտության նվաճումներից օգտվելու իրավունք: Ստեղծագործելը մարդու ընդունակությունն է իրականության ընձեռած նյութից արարել որակապես նոր, հասարակական բազմազան պահանջմունքները բավարարող նյութական և հոգևոր արժեքներ: **Ստեղծագործության տեսակներն են՝** գեղարվեստական, գիտական, հայտնագործություն, գյուտ և այլն:

Հասարակության խնդիրն է ապահովել մարդու ստեղծագործական ընդունակությունների, ստեղծագործության բոլոր տեսակների զարգացումը: Դրանից ելնելով Սահմանադրությունը երաշխավորում է. «Յուրաքանչյուր ոք ունի գրական, գեղարվեստական, գիտական և տեխնիկական ստեղծագործության ազատություն, գիտության նվաճումներից օգտվելու իրավունք»:

Ստեղծագործության արդյունքի նկատմամբ նրա հեղինակը ձեռք է բերում մտավոր սեփականության իրավունք: Մտավոր սեփականության տեսակներից են **հեղինակային և արտոնագրային իրավունքները:** Մտավոր սեփականության օբյեկտի (բալետի) նկատմամբ ստեղծագործողն ունի հեղինակային իրավունք, որն անօտարելի ու անփոխանցելի է, գործում է անժամկետ: Սակայն հեղինակի գույքային իրավունքը (հոնորար) գործում է հեղինակի կյանքի ընթացքում և նրա մահից հետո 50 տարվա ընթացքում՝ անցնելով ժառանգներին: Գյուտի, օգտակար մոդելի, արդյունաբերական նմուշի հեղինակի իրավունքները հավաստվում են արտոնագրով, որը գործում է ստանալուց հետո՝ 20 տարվա ընթացքում:

Մտորումներ: *Ստեղծագործության ազատությունը պետք է ունենա սահմաններ: Կարիք կա՞ զսպելու տաղանդն ու հանճարը: Կարո՞ղ են դրանք ի չարը գործադրվել: Ո՞րն է ազդեցիկ՝ արտաքին իրավակա՞ն, թե՞ ներքին բարոյական սահմանը:*

Հասարակության մշակութային կյանքին մասնակցելու իրավունք: Մշակույթը և մշակութային կյանքը բազմազան են և բազմաձև: Ուստի և զանազան ձևեր կարող է ունենալ մշակութային կյանքին մասնակցությունը: Այս իրավունքը յուրաքանչյուրի համար երաշխավորում է երեք հնարավորություն:

- **Մշակութային կյանքին մասնակցելու իրավունք:** Ամեն մարդ ունի հնարավորություն հաղորդակցվելու մշակույթին՝ լինելով մշակույթի տարածման կենտրոններում, ստանալու մշակութային կրթություն, անդամակցելու ժողովրդական համույթին, զբաղվելու ժողովրդական ստեղծագործության բանահավաքությամբ և այլն:
- **Մշակութային հիմնարկություններից օգտվելու իրավունք:** Յուրաքանչյուր ոք ունի հնարավորություն հաղորդակցվելու մշակութային արժեքներին՝ այցելելով պետական գրադարանային, թանգարանային, արխիվային ֆոնդեր, մշակութային գործունեության բոլոր այլ ոլորտներ (թատրոն, համերգասրահ և այլն):
- **Մշակութային արժեքների հետ հաղորդակցվելու իրավունք:** Մշակութային արժեքները բազմազան են: Օրինակ՝ բարոյաէթիկական իդեալները, լեզուները, բարբառները, ազգային ավանդույթները և սովորույթները, ժողովրդական բանահյուսությունը, գեղարվեստական արհեստները, մշակույթի և արվեստի գործերը, պատմամշակութային արժեք ունեցող շինությունները, առարկաները, տարածքները և այլն:

Պետությունը պարտավոր է իր հոգածության և պաշտպանության ներքո վերցնել պատմության և մշակույթի հուշարձանները, մշակութային այլ արժեքները:

Ինտերնետային այցելություն: *ՀՀ Մշակույթի և երիտասարդության նախարարության գործունեության մասին տե՛ս www.youthpolicy.am կայքում:*

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք՝ ինչ է

կենսամակարդակ / կենսապահովման նվազագույն զամբյուղ և բյուջե / աղքատության շեմ / հիփոթեկային վարկավորում / բարեկեցիկ շրջակա միջավայր / բնապահպանական տեղեկատվություն / կրթություն / ինքնակրթություն / կրթական ծրագիր / ստեղծագործել / մտավոր սեփականություն / հեղինակային և արտոնագրային իրավունք:

Պատասխանե՛ք հարցերին.

1. Ո՞րն է սոցիալական իրավունքների առաքելությունը:
2. Ի՞նչ է բավարար կենսամակարդակի իրավունքը:
3. Ի՞նչ է բնակարանի իրավունքը, և ինչո՞վ է այն երաշխավորված:
4. Ի՞նչ են սոցիալական ապահովությունը, դրա ծավալն ու ձևերը:
5. Ո՞ր հիմքերով է երաշխավորված սոցիալական ապահովությունը:
6. Ի՞նչ իրավունքներ ունեն գործազուրկները:
7. Ի՞նչ է բժշկական օգնության և սպասարկման իրավունքը, և որո՞նք են դրա երաշխիքները:
8. Ի՞նչ է առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրի իրավունքը:
9. Ի՞նչ դեր ունեն մշակութային իրավունքները մարդու և հասարակության համար:
10. Որո՞նք են կրթության իրավունքի երաշխիքները:
11. Որո՞նք են ստեղծագործական ազատության իրավունքի երաշխիքները:
12. Ի՞նչ կառուցվածք ունի մշակութային կյանքին մասնակցելու իրավունքը:

Լուծե՛ք իրավաբանական խնդիրը.

Հրատարակչությունը հրատարակել էր արդեն հինգ տարի մահացած գրողի պատմավեպը, առանց նրա անվան օգտագործման և ժառանգներին տեղյակ պահելու: Վերջիններս դիմեցին հրատարակչությանը, որը պատասխանեց, թե հեղինակի մահվանից հետո ստեղծագործությունը բոլորինն է, ուստի իրենք կարող են այն օգտագործել ցանկացած ձևով: Ժառանգները դիմեցին դատարան: *Կազմակերպե՛ք դատական նիստ և լուծեք վեճը:*

Մրցույթ.

Ամեն մեկդ հավաքագրե՛ք մարդու կյանքում կրթության դերի վերաբերյալ երեքական ասույթներ և կազմակերպեք հրապարակային մրցույթ: Հաղթողին որոշե՛ք դասարանային քվեարկությամբ:

§ 27. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ

«Մարդու իրավունք համարվող ամեն ինչ ոչ միայն իմ իրավունքն է, այլև ուրիշի. ուստի, ես պարտավոր եմ այդ իրավունքի կատարումն ապահովել և ոչ թե սոսկ օգտագործել այն ինձ համար»:

Թ. Պեյն (1737-1809)

1. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱՐԱՐ ԲՆՈՒՅԹԸ

Մարդու իրավունքները գերակա, բարձրագույն արժեքներ են: Գերակայություն նշանակում է անվերապահ առաջնայնություն, բարձրագույնություն, միշտ և բոլոր դեպքերում նախընտրելիություն: **Մարդու իրավունքների գերակայությունը** դրանց անպայման առաջնայնությունը, բարձրագույնությունը և նախընտրելիությունն է: Գերակայությունը համեմատական հասկացություն է: Մարդու իրավունքներն իրենց նշանակությամբ արժեք են մարդկանց, հասարակության, աշխարհի համար: Հետևաբար, մարդու իրավունքների գերակայությունը ենթադրվում է ինչ-որ այլ հասարակական արժեքների, շահերի հետ համեմատած: Օրինակ՝ օրենսդրության, պետության, տնտեսական և այլ շահերի, կրոնի, միջպետական հարաբերությունների:

Մտորումներ: *Կա՞ն արդյոք շահեր և արժեքներ, որոնք, ձեր կարծիքով, գերակա են մարդու իրավունքներից: Եթե այո, ապա ինչո՞ւ: Կառուցե՛ք հասարակական շահերի և արժեքների ձեր սանդղակը և համեմատե՛ք դրանք մարդու իրավունքների հետ:*

Մարդու իրավունքների գերակայության սկզբունքից ելնելով՝ Սահմանադրությունը հռչակում է. «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքներն ու ազատությունները բարձրագույն արժեքներ են»: Իսկ դա նշանակում է, որ հասարակական արժեքների սանդղակում գերակա են մարդու իրավունքները, որոնք կանխորոշում են այլ արժեքների էությունը և առաքելությունը: Իրենց հերթին այլ արժեքները ծառայում են մարդու իրավունքներին, դրանց կենսագործմանը: Մարդու իրավունքները չափանիշ են բոլոր հասարակական հիմնախնդիրների արժեքավորման և լուծման համար:

Եթե հասարակական հիմնախնդիրները լուծելիս կշեռքի նժարների վրա դրված են մի կողմից՝ մարդը, նրա իրավունքները, իսկ մյուս կողմից՝ ինչ-որ տնտեսական, դրամական և այլ արժեքներ, ապա քաղաքացիական հասարակությունը և իրավական պետությունը պետք է նախընտրեն մարդուն և նրա իրավունքները: Օրինակ՝ չի կարելի քաղաքական նկատառումներով նսեմացնել, ոտնահարել մարդու իրավունքները: Դա է միակ ճշմարիտ լուծումը:

Մարդու իրավունքները նախորոշում են օրենքների բովանդակությունը և գործադրման ոգին: Մարդու իրավունքների գերակայությունը արմատական, հիմնադիր նշանակություն ունի նաև ամեն մի երկրի ներպետական իրավունքի և օրենսդրության համար: Օրենսդրական կարգավորման նպատակը մարդու իրավունքների կենսագործումն է: Մարդու իրավունքներն օրենքների ոգին են: Մարդու իրավունքները հիմք են օրենքների ստեղծման համար, նախորոշում են դրանց բովանդակությունը: Մարդու իրավունքները չափանիշ են օրենքների իրավականության, ժողովրդավարականության, մարդասիրականության որոշման համար: Մարդու իրավունքները որոշում են նաև օրենքների գործադրման ոգին:

Պետության նպատակը մարդն է ու նրա իրավունքները: Մարդու իրավունքների գերակայությունը արմատապես ներազդում է նաև պետության բնույթի վրա: Դա նշանակում է, որ պետությունը հասարակական դաշինքի արդյունքում ստեղծված կազմակերպություն է, որի առաքելությունը մարդու իրավունքների անօտարելիության ու անքակտելության երաշխավորումն է, հասարակական կարգուկանոնի ու խաղաղության հաստատումը: Պետությունն ինքնանպատակ չէ, և ոչ էլ մարդը՝ նրա խոնարհ ծառան, որ պարտավոր է ապրել ու աշխատել պետության համար: **Մարդը միջոց չէ պետության համար, այլ նպատակ**:

ՀՀ Սահմանադրությունը հռչակում է, որ պետությունն ապահովում է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությունը: Մարդու արժանապատվությունը՝ որպես նրա իրավունքների ու ազատությունների անքակտելի հիմք, հարգվում և պաշտպանվում է պետության կողմից: Պետությունը սահմանափակված է մարդու իրավունքներով: Սա շատ կարևոր է Հայաստանի համար, քանզի խորհրդային իշխանության տարիներին մարդու կյանքի նպատակ էր հռչակվում հասարակությանը և պետությանը ծառայելը, ավելի ստույգ՝ անստույգ կոմունիզմի կառուցմանը ծառայելը:

Մտորումներ: *«Հայոց պատմություն» (նորագույն շրջան, 9-րդ դասարան) դասընթացից վերհիշեք խորհրդային պետությունում սոցիալիզմի կառուցման ծրագիրը և դրա իրականացման հետևանքները: Մարդու իրավունքների ինչպիսի՞ խախտումներ են թույլ տրվել այդ տարիներին: Ո՞րն էր դրա պատճառը:*

2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒՅԹԸ

Մարդու իրավունքները համընդհանուր են: Դա նշանակում է, որ մարդու իրավունքներն արտատարածքային են ու վերազգային: Դրանք պայմանավորված չեն քաղաքակրթական, պետատարածքային, կրոնական, ազգային առանձնահատկություններով: Ճիշտ է, պետությունները և ժողովուրդներն ունեն առանձնահատկություններ, սակայն ամենուր էլ առկա է ընդհանուրը՝ մարդն իր բնույթով, որ ամենուր ունի նույն բնական պահանջմունքները: Հենց դա է մարդու իրավունքների համընդհանրության հիմքը:



Մարդու իրավունքների համընդհանրությունն ունի մարդաբանական հիմքեր: Մարդը երկրագնդի ցանկացած մասում, ցանկացած քաղաքակրթության մեջ եղել և մնում է նույն էակը՝ մարդ (homo sapiens): Անկախ նրանից, թե որտեղ է գտնվում մարդը՝ արևելքում թե արևմուտքում, հարավում թե հյուսիսում, նա սպիտակ է թե սև կամ էլ դեղին, որպես մարդկային էակ նա ունի նույն բնական պահանջմունքները: Ուստի, անկախ ամեն ինչից, նա ունի կյանքի, ազատության, իր արժանապատվության հարգանքի և այլ իրավունքներ:

Մարդու իրավունքների համընդհանրությունն ունի գաղափարական հիմքեր: Արդի աշխարհում մարդկային քաղաքակրթության զարգացման աշխարհայացքային հիմքը ընդհանուր մարդասիրական գաղափարներն ու արժեքներն են: Մարդասիրությունն իբրև գաղափար ազդարարում է, որ մարդու իրավունքներն անհատը ձեռք է բերում ծննդյան պահից, որի համար պետք չէ ոչ քաղաքացիություն, ոչ էլ այլ փաստ: Ուրեմն, մարդու իրավունքների համընդհանրությունն ունի գաղափարական ընդհանրություն՝ ի դեմս մարդասիրական փիլիսոփայության:

Մարդու իրավունքների համընդհանրությունն ունի միջազգային իրավական հիմքեր: Մարդու իրավունքների միջազգայնացման համար հիմք են իրավունքների համընդհանրության մարդաբանական և գաղափարական հիմքերը: **«Մարդու իրավունքները մարդկության ընդհանուր լեզուն են»:** Ընդունելով և սովորելով այդ լեզուն՝ աշխարհի բոլոր ժողովուրդները կարող են հասկանալ իրար և համագործակցել՝ կերտելով սեփական բարգավաճ ու ներդաշնակ հայրենիքը: Արդի աշխարհում առկա է մարդու իրավունքների միջազգային իրավունքը, որն ամրագրել և ամբողջ աշխարհի գրեթե բոլոր պետությունների համար պարտադիր է դարձրել մարդու իրավունքները:

3. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Մարդու իրավունքների գերակայությունը չի նշանակում, որ մարդու իրավունքները բացարձակ և անսահման են: Մարդու իրավունքներն անհատի ազատության չափն են: Սակայն ամեն մեկի ազատությունը պետք է ներդաշնակորեն զուգադրվի այլոց ազատության հետ: Մարդու իրավունքները, լինելով հնարավոր վարքագծի տարբերակներ, ունեն իրականացման սահմաններ: Առանց այդ սահմանի իրավունքը կվերածվի կամայականության, իսկ հասարակական կյանքը՝ «բոլորի պատերազմ ընդդեմ բոլորի»: Մարդու իրավունքների իրականացման սահմանները որոշված են եռակիորեն:

Սահման առաջին

«Մի՛ արա այն, ինչը չես ուզում, որ քո նկատմամբ անեն ուրիշները»: Այս ոսկե կանոնը, ելնելով Ավետարանից, ձևակերպել է ուշ միջնադարյան բնական իրավունքի տեսությունը: Մարդու իրավունքների իրականացման այս սահմանի սկզբունքը Սահմանադրությունը ամրագրել է հետևյալ կերպ. **ամեն ոք պարտավոր է հարգել այլոց իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը**: Ձեր իրավունքները միաժամանակ իրավունքներ են ուրիշների համար, հետևաբար՝ ձեր պարտականությունն է հարգել ուրիշների իրավունքները, ձեռնպահ մնալ դրանք ոտնձգող գործողությունների կատարումից: Այսպիսով՝ ձեր իրավունքների երաշխիքը ուրիշների պարտականությունն է, և, հակառակը, ձեր պարտականությունը՝ այլոց իրավունքների երաշխիքը: Ուստի դուք ազատ եք մինչև այնտեղ, որտեղ սկսվում են ուրիշների իրավունքները:

Սահման երկրորդ

Մարդու յուրաքանչյուր իրավունքի իրավական բովանդակության շրջանակները ամրագրված են Սահմանադրությամբ և օրենքներով: Ուստի մարդու ամեն մի իրավունք ունի նաև իրականացման կոնկրետ սահմաններ: Օրինակ՝ համաձայն Սահմանադրության՝ «Յուրաքանչյուր ոք ունի օրենքով սահմանված եղանակներով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք: Յուրաքանչյուր ոք ունի անվճար հիմնական բժշկական ծառայություններ ստանալու իրավունք: Դրանց ցան-

կը և մատուցման կարգը սահմանվում են օրենքով»: Փորձե՛ք ինքնուրույն մեկնաբանել այս նորմը, և դուք կտեսնե՛ք, որ այս իրավունքի իրավական բովանդակությունն անսահման չէ, այլ դրա շրջանակները որոշված են Սահմանադրությամբ և օրենքներով:

Մտորումներ: *«Ազատությունն իրավունք է՝ անելու այն ամենը, ինչը թույլատրված է օրենքով: Եթե քաղաքացին կարողանար անել այն, ինչն օրենքներով արգելված է, ապա նա չէր ունենա ազատություն, քանի որ նույնը կարող են անել նաև մյուսները»: Մեկնաբանե՛ք Մոնտեսքիոյի այս միտքը:*

Սահման երրորդ

Արգելվում է իրավունքների չարաշահումը, այսինքն՝ իրավունքների օգտագործումը՝ դրանց նշանակությանը բացահայտ հակասելով, այդ իրավունքներն ի չար գործադրելով: Օրինակ՝ դուք ունեք մտքի, խոսքի ազատության և ձեր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք: Սակայն դա չի նշանակում, որ դուք կարող եք ասել և պնդել ամեն ինչ, որովհետև կան այդ իրավունքների ինչպես բարոյական, այնպես էլ իրավական սահմաններ: Եթե դուք օգտագործեք այդ իրավունքը ազգային, ռասայական, կրոնական ատելություն բորբոքելու, բռնություն կամ պատերազմ քարոզելու նպատակով, ապա դա կլինի իրավունքի չարաշահում, ինչն արգելված է:

4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ

Մենք իմացանք, որ մարդու իրավունքներն ունեն իրականացման սահմաններ: Սակայն, բացի այդ, մարդու իրավունքները ենթակա են նաև սահմանափակման: **Սահմանափակումն** օրենքով արդեն ամրագրված և սահմանադրված կոնկրետ իրավունքի բովանդակության նեղացումը, նվազեցումը, բացառումն է պետության կողմից՝ ինչ-ինչ կարևոր շահերից ելնելով:

Հասարակության զարգացումն անխուսափելիորեն ծնում է իրադրություններ, որոնք պահանջում են պետությունից սահմանափակել մարդու իրավունքները: Խնդիրը, սակայն, հանգում է նրան, թե ինչ հիմքերով, ինչ ժամանակով և ինչ շրջանակներում կարելի է և պետք է դա արվի: Այս ոլորտում չարաշահումներն անթույլատրելի են: Որպեսզի պետությունը չդիմի կամայականության մարդու իրավունքների սահմանափակման հարցում, մշակվել և կիրառվում են որոշակի սահմանադրական չափանիշներ.

1. Մարդու իրավունքները բաժանված են **սահմանափակվողների** և **չսահմանափակվողների**: Այսինքն՝ կան իրավունքներ, որոնք ընդհանրապես ենթակա չեն որևէ սահմանափակման ոչ մի դեպքում: Օրինակ՝ կյանքի իրավունքը, ինքնապաշտպանության իրավունքը և այլն:

2. Սահմանափակման ենթակա իրավունքների համար նախատեսված են մարդու իրավունքների սահմանափակման հիմքերը, եղանակները, կարգը (տե՛ս Սահմանադրության 43-44 հոդվածները):

3. Մարդու իրավունքների սահմանափակումները չեն կարող գերազանցել ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված շրջանակները:



Մարդու իրավունքների սահմանափակման երկու եղանակները

Եղանակ առաջին: Սահմանափակման ենթակա իրավունքների մի մասը սահմանափակվում է Սահմանադրությամբ ամրագրված հիմքերով և միայն օրենքով: Օրինակ՝ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը:

Սահմանափակման հիմքը պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների, պատվի և բարի համբավի պաշտպանության անհրաժեշտությունն է: Սրանք այն դեպքերն են, երբ իրավակարգին սպառնացող վտանգները հնարավոր չէ չեզոքացնել այլ կերպ, քան այդ իրավունքների սահմանափակմամբ: **Սահմանափակման ձևը** օրենքն է, որը պետք է հստակ ամրագրի այդ սահմանափակումների իրավական ձևակերպումը: Օրինակ՝ Սահմանադրությունը արգելում է մարդու կամքին հակառակ մուտք գործել նրա բնակարան, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի: Բնակարանը կարող է խուզարկվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ դատարանի որոշմամբ:

Եղանակ երկրորդ: Սահմանափակման ենթակա իրավունքների մյուս մասը սահմանափակվում է ժամանակավորապես, օրենքով ամրագրված կարգով: Օրինակ՝ հանրահավաքների իրավունքը: **Սահմանափակման հիմքերը** երկուսն են՝ ռազմական դրության ժամանակ կամ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում: **Սահմանափակման ձևը** գործադիր իշխանության մարմնի որոշումն է: Եթե առաջին եղանակը թույլ չի տալիս օրենքից բացի այլ ակտով սահմանափակում, ապա երկրորդ դեպքում դրա սուբյեկտներն են նաև գործադիր մարմինները, որոնք միայն կիրառում են սահմանափակումը՝ օրենքով սահմանված հիմքերով և կարգով:

5. ԻՐԱՎՈՒՆՔ, ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Պարտականություն» հասկացությունը: Անհատի հասարակական ազատության իրավական ձևը մարդու իրավունքներն են: Մարդու իրավունքներն օրենքով երաշխավորված հնարավորություններն են: Դա նշանակում է, որ մարդն իր վարքագծում ունի անձնական հայեցողություն, այսինքն՝ իրավունք-հնարավորություն, որը ցանկության դեպքում կենսագործում է: Մինչդեռ կյանքը, բացի հնարավորություններից, ենթադրում է նաև անհրաժեշտություն: Հենց իրենք՝ մարդու իրավունքներն ազա-

տության «չափն» են, քանզի դրանք ենթադրում են հայեցողության սահմանափակում, այսինքն՝ պարտականություն: Պարտականությունները հասարակական անհրաժեշտության արտահայտման իրավական ձևն են և կոչված են մարդու իրավունքների հետ միասին կյանքում ապահովել կարգուկանոնը, հավասարակշռությունը, կայունությունը, խաղաղությունը:

Իրավական պարտականությունը պետության կողմից անձի համար սահմանված իրավական անհրաժեշտությունն է, նրա վարքագծի պարտադիր չափն ու տեսակը: Մարդն այստեղ չունի ընտրելու հնարավորություն, այլ պարտադիր պետք է դրսևորի այն վարքագիծը, որը նրանից պահանջում է օրենքը: Չկատարելու դեպքում նրա նկատմամբ կկիրառվի պետական հարկադրանք:

Պարտականությունները ևս ունեն բնական արմատներ: Բնական իրավունքներին համապատասխանում են բնական պարտականությունները: Օրինակ՝ կյանքի իրավունքին՝ «մի՛ սպանիր», իսկ սեփականության իրավունքին՝ «մի՛ գողանա» պարտականությունը: Բնական պարտականությունները, ամրագրվելով օրենքով, վերածվում են իրավական պարտականությունների: Չկա մարդ, որ կրի միայն պարտականություն առանց իրավունքի, և կամ միայն իրավունք՝ առանց պարտականության: Ազատությունը միայն այն ժամանակ է իրական, երբ վերածվում է օրենքի վրա հիմնված կարգուկանոնի: Իսկ կարգուկանոնը հենց իրավունքների և պարտականությունների միասնությունն է:

Մարդու իրավունքներից բխող պարտականությունների հասցեատերեր են՝ պետությունը, նրա մարմիններն ու պաշտոնատար անձինք, անհատները, միջազգային կազմակերպությունները (օրինակ՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը):

Մարդու հիմնական իրավունքների ու պարտականությունների փոխկապվածությունը: Հասարակության մեջ մարդիկ գտնվում են որոշակի փոխադարձ կապերի մեջ: Մարդու իրավունքներ-հնարավորությունները կարող են իրականացվել միայն, եթե մյուսները կրում են այլոց հնարավորությունների ապահովման պարտականություն: Հետևաբար, յուրաքանչյուրն առանձին վերցրած պարտավոր է ապահովել և պահպանել ուրիշի իրավունքները: **Իրավունքը և պարտականությունը միասնական են**: Մարդու իրավունքներից բխում են մարդու պարտականությունները: Մարդը միաժամանակ և՛ իրավունքի, և՛ պարտականության սուբյեկտ է: Ամեն մի իրավունք անխուսափելիորեն ծնում է պարտականություն, իսկ պարտականությունները շարժառիթավորված են իրավունքով: Չէ՞ որ պարտականություններն իրավունքների ապահովման եղանակն են: Իրավունքը ներածված է պարտականությամբ, իսկ պարտականությունը իրավունքով: Դրանց միասնությունն անխզելի է: **Չկա իրավունք առանց պարտականության և պարտականություն՝ առանց իրավունքի**: Առանց պարտականության իրավունքները դատարկ հնչյուն են: Պարտականությունների բարեխիղճ կատարումը մարդու իրավունքների բարոյահիրավական նախադրյալն է:

Հանրօգուտ աշխատանք: *Շրջապատից որևէ մեկին սովորեցրե՛ք իրավունքների և պարտականությունների կապը, մարդու սահմանադրական պարտականությունները Հայաստանում:*

Մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունները: Իրավունքների և պարտականությունների միասնության սկզբունքն արտացոլված է նաև մարդու իրավունքներին վերաբերող միջազգային փաստաթղթերում: ՀՀ

Սահմանադրությունը բացի մարդու իրավունքներից ամրագրում է նաև մարդու հիմնական պարտականությունները, որոնցից միայն հայրենիքի պաշտպանությունն համարվում յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքը, իսկ զինվորական ծառայությունը զինված ուժերում՝ նրանց պատվավոր պարտականությունը: Դա բոլոր ժամանակներում էլ մեր ազգային գաղափարախոսության հիմնաքարն է եղել: Եվ այսօր, ավելի քան երբևէ, մենք պարտավոր ենք պատվով կատարել այդ պարտականությունը՝ դարերով կորցրած և նորից վերակերտած մեր պետականությունը պաշտպանելու համար: Ոստի իսկական զինվորական ծառայության հերթական զորակոչից խուսափողները, դասալիքները քրեորեն հետապնդվում են: Նրանք իրենց արարքի համար իրավական պատասխանատվության են կանչվում, իսկ ժողովրդի կողմից արժանանում՝ արհամարհանքի:

Հանրօգուտ աշխատանք: *Դասարանից կազմակերպեք հեռախոսազանգ ձեր դպրոցի շրջանավարտներից որևէ մեկին, ով ծառայում է ԼՂՀ-ում, և ողջունեք ու մեծարեք նրան հայրենիքի նկատմամբ իր պարտքը կատարելու համար:*

Դպրոց հրավիրեք զինկոմիսարիատի ներկայացուցչին: Խնդրեք, որ նա ձեզ ներկայացնի հայրենիքի պաշտպանությանը մասնակցելու պարտականության կատարման վիճակը ձեր բնակավայրում:

Քաղաքացիների պարտականությունները հավասար են՝ անկախ ազգությունից, սեռից կամ այլ դրությունից: Գործնականում դա նշանակում է, որ բոլոր քաղաքացիները կրում են օրենքով սահմանված բոլոր պարտականությունները:

Մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունների սխեմա



Իրականացրեք հարցում: *Ձեր շրջապատի հինգ մարդկանց ենթարկեք հարցման սահմանադրական պարտականությունների իմացության շուրջ՝ գնահատման երեք սանդղակով՝ լավ (գիտի բոլոր 5 պարտականությունները), միջին (գիտի դրանց մեծ*

մասը), վատ (ընդհանրապես չգիտի կամ գիտի կցկտուր): Ստացված արդյունքները քննարկեք դասարանում:

Մարդու պատասխանատվությունը

Մարդու իրավունքները ստեղծում են մարդու ազատությունը, իսկ ազատությունը ենթադրում է պարտականություններ և պատասխանատվություն: Եթե իրավունքներն արտահայտում են մարդու ինքնավարությունը, ազատությունը, ապա պարտականությունները իրավական սահմանափակվածությունը: Պարտականությունը չկատարելը, խախտելը հանգեցնում է պատասխանատվության: **Հիշե՛ք. հասարակական կյանքի ներդաշնակության աքսիոման է՝ «Իրավունքներ՝ գումարած պարտականություններ, ազատություն՝ գումարած պատասխանատվություն»: Դա բնական, բանական, արդարացի և ժողովրդավարական աքսիոմա է, որի խախտումը կտանի հասարակական աղետի:**

Իրավական տեսակետից պատասխանատվությունը իրավախախտում կատարած մեղավոր անձի նկատմամբ հարկադրանքի կիրառումն է: Պատասխանատվության հիմքն իրավախախտումն է այսինքն՝ արարքը, որն ամրագրված է օրենսդրությամբ՝ որպես արգելված: Օրինակ՝ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք, հետևաբար բոլորը պարտավոր են հարգել այդ իրավունքը: Դրա երաշխիքն այն է, որ սպանությունը համարվում է հանցանք, իսկ մարդասպանը պատժվում է:

Իրավական պատասխանատվությունը մարդու իրավունքների ամենից ուժեղ երաշխիքն է: Իրավական պատասխանատվության կիրառման նպատակը մարդու իրավունքների, հասարակական և պետական շահերի պահպանությունն է՝ իրավական հարկադրանք կիրառելու օգնությամբ: **Իրավական հարկադրանքը** կարող է լինել՝ խախտված իրավունքների վերականգնում (օրինակ՝ պատճառված վնասի հատուցում), հակահրավական վիճակների կանխում (օրինակ՝ մաքսային զննում), իրավախախտների պատժում (օրինակ՝ ազատազրկում), խախտումներին նպաստող պատճառների վերացում: Պատասխանատվության կարգը մյուս կողմից երաշխավորում է իրավախախտների իրավունքները:

Հարցեր և առաջադրանքներ

Գիտե՞ք ինչ է.

Գերակայություն / առաջնայնություն / նախընտրելիություն / միջոց և նպատակ / արտատարածքային / վերազգային / մարդաբանական / ազատության չափ / իրավունքի չարաշահում / իրավունքի սահմանափակում / պարտականություն / իրավական հարկադրանք / պատասխանատվության հիմք:

Պատասխանե՛ք հարցերին.

1. Ի՞նչ է մարդու իրավունքների գերակայությունը և ինչպե՞ս է այն արտացոլված ՀՀ Սահմանադրության մեջ:
2. Ինչպե՞ս է արտահայտվում մարդու իրավունքների գերակայությունը պետության հանդեպ:
3. Ի՞նչ է նշանակում մարդու իրավունքների համընդհանրությունը:
6. Բացատրե՛ք մարդու իրավունքների համընդհանրության հիմքերը:
4. Ո՞րն է մարդու իրավունքների իրականացման սահմանի «ոսկե կանոնը»:
5. Որո՞նք են ընդհանրապես չսահմանափակվող իրավունքները և ինչո՞ւ:
6. Որո՞նք են մարդու իրավունքների սահմանափակման երկու եղանակները:
7. Ի՞նչ է պարտականությունը և որոնք են դրա բնական արմատները:
8. Ինչպե՞ս են կապված իրավունքներն ու պարտականությունները:
9. Որո՞նք են մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունները:
10. Ի՞նչ է պատասխանատվությունը և որո՞նք են նրա կիրառման նպատակները:

Բանավիճեք.

Գրատախտակին գրեք մարդու և քաղաքացու սահմանադրական պարտականությունները և բանավիճեք, թե դրանցից ո՞րն է առաջնային և ո՞րոնք երկրորդական: Այնուհետև հերթով ըստ առաջնայնության համարակալեք պարտականությունները և ամփոփեք արդյունքները:

Ստեղծագործական աշխատանք.

Գրեք շարադրություն **«Մարդու պարտականությունների հռչակագիրը»** թեմայով:

Կողմորոշող նյութ. *չնայած հաջողություններին մարդու իրավունքների ոլորտում, արդի աշխարհում առկա են անհանգստանալու բազում պատճառներ: Օրինակ՝ գնալով աճում է անհատապաշտությունը, եսասիրությունը, մարդկանց ձգտումն ամեն գնով նվաճել իրենց իրավունքները: Մարդիկ զանգվածաբար անտեսում են իրենց պարտականությունները, կորցնում պատասխանատվության զգացումը: Շատ գիտնականներ առաջարկում են ընդունել «Մարդու պարտականությունների հռչակագիր»:*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

§ 1. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՐԺԱՆԻՔՆԵՐԸ 5

§ 2. ԺՈՂՈՎՐԴԻ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՁԵՎԵՐԸ 12

§ 3. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ 21

§ 4. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՀԵՆԱՍՅՈՒՆ 30

§ 5. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ՝ ԴԱՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՁՄԱԿԵՐՊՈՒՄ 41

§ 6. ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ 47

ԳԼՈՒԽ 2. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 7. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 58

§ 8. ՀԱՆՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑԱԿԱՐԳԸ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ 62

§ 9-10. «ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻ» ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ 66

ԳԼՈՒԽ 3. ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

§ 11. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 79

§ 12. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ 86

§ 13. ՔԱՂԱՔԱՑՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ 96

ԳԼՈՒԽ 4. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

§ 14. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ 101

§ 15. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 110

ԳԼՈՒԽ 5. ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

§ 18. ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ 117

§ 19. ՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 123

§ 20. ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՆ 127

§ 21. ԳՈՐԾՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ. ԸՆՏՐՎԱԾ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒՄ 133

ԳԼՈՒԽ 6. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 22. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ, ԲԱՐՈՅԱՅԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ, ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ 135

§ 23. ՄԱՐԴՈՒ ԱՆՁՆԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 141

§ 24. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 149

§ 25. ՄԱՐԴՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑՈՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 156

§ 26. ՄԱՐԴՈՒ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ 163

§ 27. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄԸ 171